Քրիստոնեության տարերային տարածման շրջանը բվագրվում է առաջին դարի կեսերից մինչև երրորդ դարի վերջը ընկած ժամանակաշրջանով: Նոր կրոնի զարգափարները ճառագելով Երուսաղեմից, տարածում էին գտնում ինչպես Հռոմեական կայսրության, այնպէս էլ Պարսկաստանի ազգաբնակչության մեջ¹: Նոր Կոսակարանի Սուրբ քրիստոնէ իսկ հայտնի է, որ Քրիստոփի առաջանակը առաջին և երկրորդ սերունդների (իմամ՝ տասներկու և յոթանասնից) իրենց բարոզությունը սկսելով Երուսաղեմում, շուտով կարողացան նոր կրոնի զարգափարները տարածել ոչ միայն Պաղեստինում, Ճարավային և Հյուսիսային Ասորիքներում, Միջազգետքում և Կիլիկիայում, այլ նաև բափանցեցին Բալկաններ, հասնելով Հռոմ, ինչպես նաև Եգիպտոս և Աֆրիկա: Մերձավոր Արևելքում քրիստոնեության տարածման հիմնական լեզուներին էին դարձել Մերձավոր Արևելքի հիմնական պաշտոնական լեզուներից մենք դարձած արամետերն - ասորերե-

¹ Պարսկաստանում Քրիստոնեության տարածման մասին տե՛ս՝ La-bourt 1904; Christensen 1944, p. 258 – 315; Пигуленская 1979, с. 185 – 195:

նը և հելլենիստական դարաշրջանից ժառանգություն մնացած հունարենը: Այս երկու լեզուներն էլ Հռոմեական կայսրության արևելյան ունեին lingua franca-ի կարգավիճակ, ի տարբերություն երկրի պաշտոնական լեզու լատիներենի: Նոր Կոսակարանի հայտնի է, որ Քրիստոսի խսակցական լեզուն իսկ արամետերենն էր: Բազմաթիվ փաստեր, ինչպես նաև Կոմիրական քարանձավլերի բազմաթիվ գտածոները (երրայերեն, արամետերեն և հունարեն) վկայում են, որ Հին Կոսակարանը Ք. հետո 70-ական թթ. հրեաների կողմից գրեթե ամբողջությամբ բարզմանված է եղել ինչպես հունարեն, այնպէս կարամետերեն²: Այդ բնագիրը բավական լայն տարածում են ունեցել Պարսից տիրապետության տակ գոնվող Պաղեստինում, Միջազգետքում և Ասորիքում³: Հայտնի է նաև, որ դեռև Ք.ա. Գ- դարում, հունական հրեաների կողմից Հին Կոսակարանը Եգիպտոսում առաջին անգամ բարզմանվել է հունարեն և ստացել Յորանասնից (Septuaginta) բարզմանություն և ալվանում⁴: Այդ բնագիրն անսահմանային ընդունելության է արժանացել Հռոմեական կայսրությանը պատկանող տարածքներում, սկսած Աֆրիկայից ու Գալիլեայից մինչև Փոքր Ասիա, Ասորիք և Պաղեստին: Հիշատակված երկու լեզուներն էլ, որոնցով արդեն գոյություն ուներ Հին Կոսակարանի բարզմանությունը, իմբ հանդիսացան առաջին դարերի

² Ամյսին 1964, с. 10 -16; Ամյսին 1971, с. 40-55:

³ Brock 1988, pp. 483-502:

⁴ Տե՛ս Lamarche 1997, с. 15-33; Scripture in Transition 2008, p. 163 - 170; Селезնéв 2008, с. 56 – 61. Դիտի շեշտել նաև, որ Յորանասնից բարզմանության բազմաթիվ բնագրերի հատվածներ և հայտնի են կոմիրական գտածոներից:

թիրացրում քրիստոնեական գաղափարախոսության մշակման ու նորաստեղծ կրոնի բարոզման համար:

Մինչև երկրորդ դարի կեսը քրիստոնեության հիմնական տարածողները հունական և արամեական հրեաներն էին, որոնք բնակվում էին հռոմեական կայսրության գրեթե բոլոր մարզերում, ինչպես նաև Արշակունյաց Պարսկաստանի հյուսիսային ու արևելյան գավառներում, հատկապես՝ Պաղեստինում, Ասորիքում և Միջազգետքում: Երկրորդ դարի կեսից քրիստոնեություն դաշտանդերի և տարածողների մեջ ըսկում են մեծ թիվ կազմել ազգությամբ հովաները, ասորիները, դպտիները, հայերը, լատինները և Հռոմեական կայսրությունում բնակվող այլ ժողովորդների ներկայացուցիչները, որոնք հետոքինուն դուրս են մղում հրեաներին գործունեության այս բնագավայից⁵: Հռոմեական կայսրության մեջ լինելով հայածին կրոն, քրիստոնյաներն ապրում էին փակ համայնքական կյանքով, նոր կոսակարանային սկզբունքներով կարգավորելով համայնքների ներքին փոխհարաբերությունները, որի հետագործման գործում կարևոր նշանակություն ունեն առարկական բրդերի հաղորդած տեղեկությունները⁶: Նորկոսակարանային բնագրերից կարելի է տեղեկանալ, որ Ք.հ. Ա - Բ դարերում քրիստոնեական համայնքներ էին հաստատվել Պաղեստինում, Ասորիքում, Եզիզունուս, Փոքր Ասիայում՝ Կիլիկիայում ու Կապարովիկայում, Ասորիքում, Միջազգետքում, Բալկաններում, Խոտայիայում և այլուր⁷: Դրան զուգահեռ վաղ քրիստոնեական մատենագրական գործունեու-

⁵ Տե՛ս Albert & 1993, p. 9 – 21:

⁶ Harnack 2004, p. 719 – 726; Harnack 1888², S. 304 - 328:

⁷ Болотов 1910, с. 249 – 300.

թյան ասպարեզում բավական հետաքրքիր տեղ էին գրադելուս նաև ուղղափառ քրիստոնյաների կողմից հերձված ճանաչված գնուտիկները⁸, որոնց ստեղծած գրական երկերի մի մասը բափանցել է նաև վաղ քրիստոնեական հունական, ասորական, դպտական, հայկական, արաբական, եթովպական և այլ մշակույթներ:

Քրիստոնեական նախնական համայնքը բավական պարզ կառուցվածք ուներ մինչև Ք դարի կեսերը: Այն բաղկացած էր համայնքի իրավահավասար ներկայացուցիչներից, որոնք իրենց միջից ընտրում էին երեցներ և սարկավագներ: Երեցները սարկավագների օգնությամբ բավարարում էին քրիստոնեական համայնքի հոգևոր կարիքները, իսկ վերջիններին հիմնական պարտականություններից մեկն էր ծեսի կատարումը, արդարության հաստատումը համայնքի ներսում և նյուրական բարիքների ու ուտելիքի հավասար բաժանումը համայնքի անդամների միջև, համայնքի ընդհանուր ուսեցվածքի պահպանությունը և գեկավարումը⁹: Համայնքի և կրաստացնորդների կարևորագույն խնդիրներից էր քրիստոնեության բարոյական նորմերի արմատացումն ու բոլոր անդամների հոգևոր կարիքների բավարարումը, քրիստոնեական արարողությունների տարեկան շրջանի կատարումը: Ակզենտական շրջանում համայնքներին հաճախ այցի էին զային նորաստեղծ կրոնի բարոդիչները (Քրիստոսի տառներկու և ապա յոթանասուն աշակերտները), բարոզում էին քրիստոնեության հիմնական գաղափարները, հաղորդվում էին համայնքի անդամների հետ, միասնաբար տունում էին Տերութա-

⁸ Болотов 1910, с. 169-235; Хօսրօւ -2016, с. 13 և сл.

⁹ Болотов 1910, с. 452 – 466:

կան տոները, պատարագ էին մատուցում, կիրում և թաղում էին համայնականներին, Տերութական օրերին կազմակերպում էին սիրո ընթրիքներ (այսոյ):¹⁰ Հիշատակելի է, որ առաջաները իրավունք չունեին երկարատև ժամանակով կանց առնել որեւէ համայնքում, նրանք անցնում էին քրիստոնեական բնակավայրից-բնակավայր, հոգալով համայնքի յուրաքանչյուր անդամի հոգևոր պահանջները¹¹: Ահա այս ժամանակներում, այն է երկրորդ դարի կետերին հետզհետև ամբողջացազ և եկեղեցում արմատավորվեց ու կանոնակարգվեց ինչպես Հին, այսպես էլ Նոր Կոստանդնովի գրքերի շարքը¹²: Նման համայնքների համատեղ կեցուրյունն է, համայնքի բոլոր անդամների ներգրավումով, այդ ժամանակներում անվանվում էր Եկեղեցի: Համայնականները դեռևս չունեին պաշտամունքի համար նախատեսնված հաստուկ շինություններ, տոների օրերին պաղեստինցիները հավաքվում էին տվյալ տեղունական իրավադալության հետ կապ ունեցող վայրերում, իսկ դրանցից հեռու համայնքներում՝ երեցների կամ սարկավագների տներում, կամ բոլորի կողմից ճանաչված սրբավայրերում¹³: Միաժամանակ, համայնքներում գրի էին առնելում համայնքների համակեցության սկզբնական կանոնները, որոնք երկրորդ դարի վերջին և երրորդ դարի սկզբներին հետզհետև հավաքվեցին մի ժողովածոյում, որը ստացավ Առաքելական կանոններ անվանումը (Ճաճակ տան

¹⁰ Égérie 1982, p. 120-196, հմնու. Թընու 1987, էջ 28-45:

¹¹ Болотов 1910, с. 452 – 460:

¹² Селезнеев 2017, с. 212-257 (տե՛ս նաև ինտերնետում) ; Անահանա 1987, էջ 2-9:

¹³ Renoux 1969, p. 19 -21, 34 –55 :

ձննեկա ձուոտձնուածուն): Այդ ժողովածուն տարբեր խմբագրություններով պահպանվել է քրիստոնեական տարբեր ժողովուրդների մատենագրությունների մեջ: Այդ հուշարձանի հևագոյն խմբագրություններից մեկը հայտնաբերվեց հունական մատենագրության մեջ և հրապարակվեց միայն Ժթ դարի երկրորդ կեսին¹⁴:

Երկրորդ դարի Բ կեսից քրիստոնեական կոմպակտ բնակավայրեր սկսեցին տարրապելով Հռոմեական կայսրության վարչական կառույցի մեջ, որը կարևոր տեղ էին գրադեցնում տարբեր զավաների զիմանքոր քաղաքները: Եպիսկոպոս (վերադիմուն) անվանվող աշխարհիկ պաշտոնաց գոյուրյուն ուներ դեռևս անորիկ հռոմեական պետության մեջն հոումեական կայսրությունում: Երկրորդ դարի ընթացքում Հռոմեական կայսրության տարածքում հռուսարձեն այդ տերմինը բռնորովն նոր իմաստ սկսեց սուանալ: Այսպես սկսեցին կոչել Հռոմեական կայսրության զավառական մայրաքաղաքների քրիստոնեական համայնքների կազմակերպիչներին, որոնք ժամանակի ընթացքում իշխանություն ձեռք բերեցին կառավարելու տվյալ զավատի կամ մարզի ներսում գրանվող բոլոր համայնքների հոգևոր-կրոնական գործերը: Առաջին եպիսկոպոսներն ընտրվում էին առարյաների ներկայությամբ, ձեռնադրություն ստացած երեցներից՝ համայնքի ակ-

¹⁴ Didascalia 1905; Liebedev 1905, с. 2 և հուն.; Gaudemet 1985, p. 24 – 28; Apostolic Canons, p. 141:

¹⁵ Նրանք Աթենքի ու Ապարտայի քաղաք-պետությունների, կամ Հռոմից կողմից ուղարկվում էին ենթական զարդերը ստուգերու կամ կարգի բերելու հապատակ ազգաբնակչության և տարածաշրջակի, մետրոպոլիայի անդամների կառավարելու հասարակական-քաղաքական գործընթացները: Տե՛ս Եղովան 1910, с. 455 և ուշ.

տիվ մասնակցությամբ. այս սովորույթն էլ ապահովում էր շնորհի անցումը սերլին-սերլին¹⁶: Ազգանական շղանում բավական ակտիվ էին մի քանի գյուղական համայնքների և բնակավայրերի վրա այցելու ընտրված հոգևորականները, որոնք անվանվում էին բորեալիկոպուսներ¹⁷: Քաղաքներում հաստատված այցելուները, որոնց իշխանությունը տարածվում էր նաև հարակից ողջ գավառի բնակավայրերի վրա, անվանվում էին եսիսկոպուսներ: Դ դարի եսիսկոպուսական տեղական ժողովների ընթացքում նկատվում է բորեալիկոպուսների իշխանության սահմանափակման միտում¹⁸: Ասիայում, Աֆրիկայում և Եվրոպայում Դ դարի ընթացքում տեղի ունեցած եսիսկոպուսական ժողովների որոշումները՝ նրանց իշխանությունը ստորադասվում էր քաղաքային եպիսկոպոսի գրադեյրած դիրքին, բացազում էր նրանց շնորհաբաշն մասնաշցությունը եսիսկոպոսի կոմ քահանայի ձեռնադրությամբ¹⁹:

Հետապյում, ըստ Գ դարի ընթացքում հաստատված եկեղեցական կանոնների, մայրաքաղաքային համայնքների երթեներից համայնքաները կարող էին եսիսկոպոս ընտրել, իսկ ըստ Շ դարում հաստատված կանոնների՝ համայնքաները հարեան գավառներից հրավիրված երեք եսիսկոպուսների վստահագործով և վերադաս մետրոպոլիտի հավանությամբ կարող էին եսիսկոպոս ձեռնադրել, ապահովելով շնորհի անցումը նիբրագետության աստիճան ստացող հո-

գնորականին²⁰: Այս արարողությամբ սրբացվում (սակրալիցացվում) էր ձեռնադրության արարողությունը: Հոռմեական կայսրության վարչական կենտրոններում էր հաստատվում տվյալ գավառի բոլոր համայնքների վերադիմող-եպիսկոպոսի նստավայրը, որն ընտրվում էր տվյալ քաղաքի և նրա վարչական տարածքում գտնվող քրիստոնեական բնակավայրերի համայնքների ժողովներում և հոգում էր տվյալ շրջանի քրիստոնեական կրոնական և համայնքային կարիքները²¹:

Սրբեն Գ դարի վերջին ստեղծված այս պարզ նվիրապետական համակարգն ավելի կատարելագործվեց, հարմարեցվելով՝ Դիոկետիխանոսյան պետական քածանման բարեփոխմանը (ռեֆորմին): Ըստ այս բարենորդումների, Հոռմեական կայսրությունը քածանվում էր երկու կեսի, որոնցից յուրաքանչյուրը կարող էր ունենալ էր իր կայսրը: Նրանցից յուրաքանչյուրի իշխանությունը՝ արևելյան միապետությունների նմանողությամբ համարվում էր պետական սատվածության մարմանավորում: Կայսրության յուրաքանչյուր մասնաւում էր երկուական կեսար (տետրարք), որոնց հպատակվում էին դիոցեզների կառավարչները: Ամբողջ Կայսրությունը բաժանվել էր 12 դիոցեզների, որոնց սահմանները միշտ չեն որ համբաւվում էին նախկին նահանգների (պրովինցիաների) սահմանների հետ: Դիոցեզներն իրենց հերթին

¹⁶ Гидулянов 1905, с. 1–24:

¹⁷ Այս ինստիտուտի մասին տե՛ս Métévier & Sylvain 2007, p. 344-347:

¹⁸ Лебедев 1905, с. 167-170: Տմւուն Métévier & Sylvain 2007, p. 344:

¹⁹ Այդ մասին տե՛ս և նաև Martirosian 2010, p. 269, 277, 293, 327-329:

²⁰ Կանոնագիրը Ա, էջ 119; Гидулянов 1905, с. 1-24, Martirosian 2010, p. 293 - 297, 299.

²¹ Եսիսկոպուսական իշխանության մասին տե՛ս և նաև Feissel 1989, p. 801 – 826:

բաժանվում էին մարզերի²²: Դրանք, որպես կանոն, համընկնում էին հոռմանական նվաճումից առաջ եղած անկախ կամ կիսանկախ դաշնակց (ֆելեքրատ) երկների տարածքների հետ: Պրինցիպատին փոխարինելու ենթադրության մեջ դրմինատի միասներ անկանակած կրել էր Սասակյան արքունիքի ազգեցուրյունը²³: Պետության այս բաժանումն ուներ իրենից բարձր պաշտոնյայի նկատմամբ ենթակայության ադմինիստրատիվ ռեսուրս: Հոռմանական կայսրության այս բաժանումն էրկրի վարչական կառավարումը և նմանեց մի բուրգի, որին արտացոլվեց արդեն իր ավարտման փուլին հասած եկեղեցական ավիրապետության համակարգի մեջ: Եզիզուսի, Աքրիկայի, Փոքր Ասիայի, Ասորիի և Պաղետանինի հիմնական մարզերի եկեղեցական պաշտոնական լեզուն հունարենն էր, երբեմն էլ՝ ասորերենը (արամետերն տարրերակոլ), դպրուերենն, Խոտալիայինն ու Եվրոպայի մյուս երկրամասերինը՝ լատիներենը: Կարելի է ենթադրել, որ դեռևս գրչություն չունեցող ժողովուրդները U. Գրիի բազմաթիվ հաւովածներ իրար էին փոխանցում բանավոր բարգմանուրյամբ անօդի անելով, որը նեղ շրջանակներում կարող էր գրի առնվել որևէ հայտնի այբուբենով: Այդ գրքերի մեջ պետք է առանձնացնել

²² Ըստ ակադ. Հ. Մանանցյանի՝ Ն. Աղոնցին և Կ. Գյուտերբորգին հակարգը կարծիքի, Վերոկյան ցանկում Պոնոտի դիօցեղի մարզերի շարքին են դասվում Մեծ և Փոքր Հայքերը, որից էլ կարելի է ենթադրել Հայոց Արշակունյաց թագավորության ստորակայական կախվածությունը Հոռմից (տե՛ս Մահանդյան 1941, էջ 5, մասնավուն ծառ. 1-ում Հ. Մանանցյանի համարակած սկզբանայութերը):

²³ *Обиорский 1898*, с. 235—238; տե՛ս նաև Մաշկին 1951, էջ 805-810; հիմն. <https://www.krugosvet.ru/enc/istoriya/DOMINAT.htm>:

Սաղմոսաց գիրքը²⁴ և Ավետարանները, որոնց բազմաթիվ կտորներ առկա էին ծիսական գրեթե բոլոր արարողակարգերում, Տերության տոների ծխարարարողական ընթերցվածներում, Պատարագի ժամանակ:

Արդեն Գ դարի վերջին և Դ դարի սկզբին ողջ Հոռմեական կայսրությունում իրենց ակտիվությամբ առանձնացել էին քրիստոնեական եկեղեցու չորս գլխավոր եպիսկոպոսական արքու (Հռոմ, Աղեքասնդրիա, Անտիոք և Երուսաղեմ), որոնք մյուսների մեջ առաջնը լինելու իրավական կարգավիճակ (ստատուս) ձեռք բերեցին Նիկոայի Առաջին Տիեզերական ժողովի կանոններում²⁵: Պատվով՝ իրենց առաջնի էր դիտվում Երուսաղեմի եպիսկոպոսաւրիունը, որը դիտվում էր իրեն Աստծո Որդու իշխանած քաղաք, և կայսրության մեջ ու քրիստոնեական աշխարհում ուներ սիմվոլիկ նշանակություն՝ առանց ադմինիստրատիվ ռեսուրսի: Կայսրության եկեղեցական կյանքում առաջներ էր մայրապատրում նաևոր Հոռմի եպիսկոպոսը, որին ենթարկվում էին Աքրիկայի և Եվրոպայի դիոցեզները և պրովինցիաների բազմաթիվ եպիսկոպոսները: Խնդրություն կարգավիճակ ուներ նաև Եղիպատու երկրամասի մայրաքաղաք Աղեքասնդրիայում նաևոր եպիսկոպոսը, որին ենթարկվում էին շուրջ 50 նահանգների (պրովինցիաների) եպիսկոպոսներ: Իրենց առանձնահատուկ կարգավիճակի

²⁴ Հայկական միջավայրում նման ընագրի գոյության մասին տեղեկացնում է Թովմա Արծրուելին: Խուելով խութեցիների մասին նա գրում է: “Եթ գիտես զապանուս զիին թարգմանեալս վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ուսին”, տե՛ս Թովմա 2006, էջ 137, հմտ. Անապան 1987, էջ 8:

²⁵ Կառուսազիրը Ա, էջ 120-121; Ղուլյան 1905, ս. 239-278 :

պատճառով, հետազոյս Հոռի և Աղեքսանդրիայի եպիսկոպոսները եկեղեցական գործերում առինքնեցին պապ կամ պատրիարք հորջորջում, որն հետզիտե տիտղոսի կարգավիճակ ստացավ²⁶: Եղիպոտոսում և հարակից երկրներում ծեսի և բարոգի հիմնական լեզուն հունարենն էր, թեպես լայն տարածում ունեին նաև տեղական՝ զատերենն ու երովակերենը (գենգ): Խրենազրիս մյուս եպիսկոպոսական աթոռը գտնվում էր Արեւելք դիոցեզի մայրաքաղաք Անտիոքում, որն իր բարոգական գործունեությունը տարածում էր ինչպես հոումական կայուրությանը ենթակա Կիլիկիայում, Ասորիքում և Միջագետքում, այնպես էլ փորձում էր իր բարոգիշներով ներխուժել Սասական քաջավորության տարածք²⁷: Հոռոմական Փոքր Ասիայում և Ասորիքում ծեսի և բարոգի լեզուն հիմնականում հունարենն էր, իսկ պարսկահպատակ Միջագետքում՝ ասորերենը: Այս երկու լեզուները լայն տարածում ունեին նաև Պաղեստինում, որը Տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում, հանձիւս Պաղեստինյան Կեսարիայի արռողի, կայսուն կարգավիճակ ստացավ միայն Դ դարի 20-ական թթ., հետազոյս իր իրավասությունները փոխանցելով Երուսաղեմի արքորդի:

Այս ժամանակ Փոքր Ասիայում գոյություն ունեին Անտիոքի և Աղեքսանդրիայի աթոռների կարգավիճակին մոտ կանգնած այլ եկեղեցական արքուներ են, ինչպիսիք էին օրինակ Եփեսոսը, Զմյուսիան, Պոլտոսը, Կապադովիլյան Կե-

²⁶ Гидулянов 1905, с. 199-222 :

²⁷ Տե՛ս Гидулянов 1905, с. 223-238 : Միևնու Դ դարի սկիզբը Անտիոքի նվիրապետության սահմաններում էր գտնվում նաև Պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոսությունը:

սարիան, Անկյուրիան ևն, որոնք ժամանակի ընթացքում կորցրեցին իրենց առաջնային նշանակությունը և Դ դարի վերջից սկսեցին ենթարկվել Արևելյան Հոռոմական կայուրության մայրաքաղաք դարձած Կոստանդնուպոլիս (Լոռ Հռոմ) նորաստեղծ եպիսկոպոսական աթոռին, որը վայելում էր կայսերական իշխանության հովանավորությունը: Միևնու Դ դարի կեսերը Փոքր Ասիայում բավական բարձր կարգավիճակ ունեին Եփեսոսի²⁸ և Կապադովիլյան Կեսարիայի²⁹ աթոռները: Վերջինիս նկատմամբ Հայոց Եկեղեցու և Այսրկովկասի բոլոր եկեղեցիների նվիրապետական կայլվածությունը շեշտում են վաղ շրջանի հայերեն և այլական սկզբանարդյունները³⁰: Խե՞ս վերաբերում է Եփեսոսի Տիեզերական եկեղե-

²⁸ Մեր մատևնագրության մեջ առաջինը, որ անդրադարձ կա Տիեզերական եկեղեցու համակարգում Եփեսոսի աթոռի գրանցեցրած դիրքին, Մաշոնց Եղվարդեցու թուղթն է (տե՛ս Մաշոնց 1902, էջ 748 – 753): Ըստ Վերջինիս աշակերտու, Ժ դարի պատմիչ Հովհաննես Պատախանակերտոց, Կոստանդնուպոլիսի բաղադրի կառուցումից հետո, Վերջինիս եպիսկոպոսին անցան Եփեսոսի նվիրապետական աթոռի բավունքները տե՛ս Յովիաննես Դասախանակերտի 2010, էջ 384-386: Հիշատակված երկու հեղինակների երկերի բնարական աղեքսուների մասին տե՛ս Սարգսյան 1991, էջ 117-124: Եփեսոսի եպիսկոպոսական աթոռի կարգավիճակի մասին տե՛ս ևս Եօլոտոս 1913, ս. 205-206:

²⁹ Ազարանցելովսի և Բուգանիշի պատմական երկերում ամրագրված էր, որ Դ դարի ընթացքում Հայոց Եկեղեցին ենթարկվում էր Կեսարիայի աթոռին: Այս մասին տե՛ս Garsoian 1988, ս. 253 – 285; Garsoian 1999, էջ 2-5 (այս գրքի մասին գրախսական տե՛ս ն Էջմիածնի, 2016, Բ, էջ 127 - 139):

³⁰ Բ – Դ դարերում մեծ է թիվը Կապադովիլյայի թամբին պատկանող Փոքր Հայրի եպիսկոպոսական աթոռները Սերաստիս և Սելիստեն քաղաքների հոումական գորամասերում ծառայող հայացի մարտիրոսների, որոնք հայուն են իրենց վարքերով իրեն տիեզերա-

ցու կարևորագույն աթոռներից մեկի մասին պատմական հիշողությանը, ապա այն բավական վար է պահպանված Հովհաննես Դրասիանակերտցու «Հայոց պատմութիւն» երկու և հայկական ավանդույթում³¹: Կոստանդնուպոլիսի կառուցումից և Գ Տիեզերական ժողովից հետո, Եփեսոսի այսորի Եջանակությունը բյուզանդական եկեղեցւուն հետօքիւտ մոռացվեց: Երուսաղեմի, Աստիորի և Աղեքսանդրիայի Եպիսկոպոսական աթոռները ժամանակի ընթացքում հորչորջեցին պատրիարքություններ և ողջ Միջնադարի ընթացքում հետեւցին բյուզանդական կամ Կ. Պոլսի եկեղեցու դավանաբանական գծին:

Հետևապես Կոստանդնուպոլիսի Երկրորդ Տիեզերական ժողովից հետո, Ե դարի սկզբին, բրիստոնեական աշխարհում ըստ եկեղեցական և հոռմեական կայսերական իրավունքի, ձևափորվեց հինգ գլխավոր Եպիսկոպոսական աթոռ, որոնք կոչվեցին պատրիարքություններ: Դրանք էին Հռոմը, Կոստանդնուպոլիսը, Աղեքսանդրիան, Աստիորը և Երուսաղեմը³²: Արդեն Քաղկեդոնի Տիեզերական ժողովի 28-րդ կանոնում և բյուզանդական կայսերական հրովարտակներով (նույնի) Կ. Պոլսի պատրիարքությունն իր կարգավիճակով հավասարեցվել էր Հռոմի աթոռին³³: Այս կարգավիճակն, ըստ Վ. Բոլոտովի, ձեռնուու էր Եփեսոսի ու Կեսարիայի մետրոպոլիտական աթոռներին Ենթակա Եպիսկոպոսներին, որոնք

³¹ Կան եկեղեցու սրբեր:Տե՛ս Տեր-Միհասեանց 1908, էջ 14-15, ինչպես ևս Բարթիլյան 2001, էջ 3 – 43, Շօմն 2013, էջ 3-10:

³² Տե՛ս Արօն 2016, թ. 408-414:

³³ Բոլոտով 1913, էջ 224:

³⁴ Բոլոտով 1913, էջ 228: Հմմտ. Բողոքան 2016ա, էջ 41-42:

բորափում էին մարգարին իշխանությունների ենթակայությունը և անմիջականորեն ստորադասվում Կ. Պոլսի պատրիարքական աթոռին³⁴:

Դ դարից հետո, Սասանյան Պարսկաստանում ևս փոխվեց պետական իշխանությունների տրամադրությունը սեփական տարածքում գտնվող որոշ քրիստոնեական ուղղությունների նկատմամբ, որոնք մինչ այդ արտաքին-քաղաքական հիմնեական իրադարձություններում կանգնում էին հոռմեական պետության կողքին: Ե դարի սկզբին, հատկապես Եփեսոսի ժողովից (431 թ.) հետո, հոռմեական կայսրությունում նզովի դատապարտված նեստորականների թեր Սասանյան Պարսկաստանի տարածքում սկսեց ստեղծել նվիրապետական կառույց, որի սահմանները տարածվում էին Մերձավոր և Միջին Արևելքում: Կարելի է ամրագրել փաստը. Սասանյան Պարսկաստանում հիմնվեց Հռոմեական կայսրության սահմաններում տաեցված եկեղեցական նվիրապետությանը գուգաղիք (ալտերնատիվ) կառույց, որը գրեթե 200 տարի, մինչև Սասանյանների անկումը՝ կարողացավ մրցակցել Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող Տիեզերական եկեղեցու թեմական կառույցների հետ, իսկ դրանից հետո բավական ամուր և կենսունակ ցանց ստեղծեց Միջին և Հեռավոր Արևելքում: Այդ կառույցի հիմնական ժողովուրդներն էին աստրիների և արաբների մի մասը, ինչպես ևս պարսկական ու հնդիկները: Մերձավորարելյան տարածա-

³⁴ Բոլոտով 1913, թ. 232-233: Պետք է սակայն նշել, որ հիշված՝ Կապադովիլիայի, Պետառուի և Եփեսոսի մետրոպոլիտական աթոռները մինչ այդ երբեք չեն ստորադասվել որևէ տեղական այլ աթոռի:

շրջանի եկեղեցական լեզուներն էին արամետերնն ու մասսամբ՝ հունարենը, որոշակի վայրերում առաջին քայլերն էին կատարում քարոզի լեզու դարձած բանավոր արաբերնն ու պարսկերենը։ Պարսկաստանի եկեղեցական նվիրապետության գլուխը նստառ էր Սասանյանների մայրաքաղաք Մելևիխ/Շիզրու քաղաքում, և ի տարբերություն Հռոմեական կայսությունում հաստատված պատրիարքների, կրում էր կարողիկոս պատվանուելը³⁵։ Խչափս Բյուզանդական կայսրության տարածքի բոլոր պատրիարքներն էին հաշվեստ կայսեր առջև, այնպես էլ Շիզրունում նստառ կարողիկոսն էր պատաժանանատու Սասանյան կայսեր իշխանության առջև, թեպես այդ երկրում պաշտոնական կրոնը շարտնակում էր մասաւորադիր բոլոր պատրիարքների հաշվեստ կայսեր առջև, այնպես էլ Շիզրունում նստառ կարողիկոսն էր պատաժանանատու Սասանյան կայսեր իշխանության առջև, թեպես այդ երկրում պաշտոնական կրոնը շարտնակում էր մասաւորադիր բոլոր պատրիարքների հաշվեստ կայսեր առջև, այնպես էլ Մարտինու քաղաքում Սասանյան Զազկերտ Բ արքան բոլոյ տվեց գումարել եկեղեցական ժողով, որտեղ էլ Վերջնականապես ձևափորվեց եկեղեցական նվիրապետական կառույցը Սասանյան Պարսկաստանում³⁶, որը հետզիտես անցավ նոր ձևափորված նեստորական հոգիուրականության ձեռքը³⁷։ Ինարկե Սասանյան Պարսկաստանում գործում էր նաև մեկ այլ գուգաղիք եկեղեցական նվիրապետական կառույց, որը զիխավորում էր Հայոց կաթողիկոսը։ Այս կառույցը սերտորեն կապված էր կայսերական եկեղեցու հետ, մասնակցում և կատարում էր Տիեզերական ժողովների որոշումները, մինչև որ Քաղկեդոնում վերջնական սեպ խրիստ Բյուզանդական եկեղեցու հավատացյալների և Եփեսոսի դավանաբանական հիմքերը ընդու-

³⁵ St. u van Esbroeck 1991, pp. 493-521:

³⁶ Labourt 1904, , p. 92 ect. :

³⁷ Synodicon 1902, p. 253:

նող՝ հայկական, ասորական և դպտական համայնքների միջև։

2. Հայոց եկեղեցն Տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում Ե դարի սկզբին

Հայոց եկեղեցին ևս, իրև հոգնոր կառույց սկսել է ձևափորվել ամենավաղ Ժամանակներից, ինչպես իր «Ազգապատում» մոնումենտալ մենագրության մեջ ցոյց է տվել Երանելիահիշատակ Մաղաքիա արք։ Օրմանյանը: Սկզբնավորվելով Թաղենու և Բարբորիմենու առաջալների քարոզության ժամանակներում, Հայոց եկեղեցական կառույցը Տիեզերական եկեղեցու կազմում իր ինքնազումի կարգավիճակին հասավ Գրիգոր Լուսավորչ Ժամանակներում³⁸: Մինչև պաշտոնական քրիստոնեության մուտքը Մեծ Հայր, Եղիշեայի և Կապարվկիայի ճանապարհներով, Ս. Գիրքը և քարոզությունը Հյուսիսային Ասորիից և Փոքր Ասիայից արդեն քափանցել էին Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները³⁹: Թաղենու առաջալի քարոզության մասին, ըստ հ. Պոլոս Անանյանի, պատմական հիշողություններ են պահպանվել Եկեղեցական գալառում, Աշուշատում և Արտագրում⁴⁰:

Սովորեն Խորենացին ու Եվսեբիոս Կեսարացին իրենց պատմագրական երկերում, այնպես էլ Վարքազրական մի շարք անանուն հուշարձաններ, նկարագրելով Փոքր և Մեծ Հայրերում Բ - Գ դարերի քրիստոնյաների հայածանքների մասին, հիշատակում են Հայաստանում քրիստոնեական եկեղեցու բազմաթիվ նվիրյալների։ Ուսկան և Սուրբայան

³⁸ Օրմանյան 2001, §§ 61-63:

³⁹ Տէր-Միհնասեան 1908, էջ 17 - 44.

⁴⁰ Անանյան 1979, էջ 22-24, 29-31, 33-44:

Նահատակների, Ալեքսանդրիայի Դիոնիսոս եպիսկոպոսի հետ Նամակագրություն պահպանող Սերուժան Եպիսկոպոսի անունները, անդրադառնում են քրիստոնեության բարոցի, հետազայտմ հերձվածող հօչավալած կանավոր աստրի մատնազիր Բարդայծանի գործունեությանը Հայաստանում⁴¹:

Դ դարի սկզբում Հայաստանը ստորակայական կախման մեջ էր Հռոմեական կայսրությունից, Տրդատ Գ Արշակունին ըստ Ազարանգեղոսի Դիվլիդեսի կայսեր դաշնակից (Քելերաս) կառավարողներից էր, իսկ Հայաստանը այդ պահին գտնվում էր Հռոմեական կայսրության ազդեցության ոլորտում: Հայոց Եկեղեցու առաջին կարողիկոսներն իրենց ձեռնադրությունը ստանում են Կեսարիայի արքունում, որը Տիեզերական Եկեղեցու համակարգում ուներ մետրապոլիտության⁴² կարգավիճակ: Կարելի է ենթադրել, որ Պարսկաստանի կազմում գտնվող (Մեծ Հայքի հարավ՝ Պարսպատունիք, Շիրական, Կորոնք, Արձակիք ևն.) հայկական միջավայրում քրիստոնեության քարոզի և տարածման պաշտոնական լեզուն արամեերեն-աստրեբենն էր, իսկ Փոքր Ասիայում (Փոքր Հայք, Կապաղովիխա, Վիլիկիս, Մեծ Հայք արևմտյան շրջաններ՝) հունարենը, մինչույն ժամանակ քահակության տեղական-խոսակցական կամ առօրեական հիմնական լեզուն մնում էր հայերենն՝ իր բազմաթիվ տեղական բարբառ-

⁴¹Տա՞ւ Անյուն Խորենացի 1913, էջ 201, 213; Եսէրին Կեսարացի 1877, էջ 517; Մարովանց արմենական թուղթ 628.8 տև Ս. Եսէբիոս 1909, Տ. 106; հիմք. Տեղ-Արևատան 1908, շ. 13, Ալանիան 1979, էջ 45-53, 54-66; Քարքիլյան 2001:

⁴² Гудулянов 1905, № 63 – 64, 96 – 97;

Ներով: Քրիստոնեությունը պատուական կրոն հոչակելուց հետո, Դ դարի սկզբից հայաբնակ շրջաններում հաստառված քարողիքները նոր կրօնը տարածելու առաքելությամբ գոնե բանավոր պիտի քարգմանեին Ս. Գրքի ամենաօգնագործելի հատվածները, իսկ ոմանք էլ իրենց իմացած այրութեներով փորձեին զրի առելե այդ կուրտերը⁴³: Այս նոյն խնդիրն ամենայն հավանականությամբ տարբեր ժամանակներում կանգնած է եղել նաև քրիստոնեություն ընդունող բոլոր ժողովուրդների՝ կ'ացիների, աղքանների, եթովպացիների, գորերի և այլոց առջև:

Հոռմ-բոլովանդիայից Հայոց քաջապերության կախվածությունը սկսեց բոլովանալ Հովհանոս կայսեր Կիլիկիայում կրած պարտությունից հետո, եթիւ նրա հաջորդ Հորիանոսը հաշոտության պայմանագիր կերպ Շապուհ Բ-ի հետ, դավաճանելով իր «մշտական բարեկամ և հավատարիմ դաշնակից» (amicus nobis semper et fidus) Հայոց Արշակունիներին⁴⁴, որոնք Դ դարի վերջից փորձեցին վարել ուրախ պետական և եկեղեցական բաղադրականություն։ Դրա արդյունքում, դարավերջին Հայաստանը բաժանվեց հիշատակված երկու գերտերությունների՝ Հոռմի և Պարսկաստանի միջև։ Ըստեմ պարսից Սասանյան բնաւահրաժեան Հայաստանի ճակա

⁴³ Այդ գործի համար ինձ թվում է հայրապետ օգոստոսի թիվ հունական ու աստրական, այսպէս է հայկական մէհենական, մէզ անհայտ գիրք: Այդ մասին իրենց մուտքայութերն են հրապարակել Ի. Խաչիկյանը և Գ. Սարգսյանը. Տե՛ս Խաչիկյան 1973, էջ 27-51; Կարսիկ 1980, էջ 15 - 20:

⁴⁴ Ammianus Marcellinus 1835, p. 352 : XXV, 7, 12 ; իլյուսկու և ալ թ. 278, XXIII, 2 և Amm.Marc. XXXVI, 4; Аммиан Марцеллин 2000, с. 278-279, 343, 361; հմտ. Մանանդյան 1941, եղ 6:

տագիրը միայնակ տնօրինող Արշակուսիները, կորցնելով արևմտյան դաշնակցիներ, պայքար էին մղուս քրիստոնեական արժեքների համար Զրադաշտականության դեմ մղվող անհավասար պայքարում: Այդ պայքարի ընթացքում ոչ միայն ավելվում էր քաղաքակրթական որոշակի բարձունքների հասած Հայաստանը, ամայանում էին միջազգային առևտության կենտրոններ դարձած Տիգրանակերտը, Արտաշատը, Դիլին ու Կարինը, այլ նաև ոչչացվում էին հոգևոր արժեքները՝ գերեզմանները, եկեղեցներն ու գրքերը⁴⁵:

Կործանման եզրին հասած Արշակունյաց պետությունը 387 թ. բաժանվեց Շապուհ Գ-ի և Թեոդոս Մեծի իշխանության տարիներին: Թեպես Մեծ Զայրի՝ երկու մասի բաժանմած թագավորությունները դեռևս որոշ ժամանակ դիմադրեցին արտաքին թշնամիներին, իրենց ներուժի շափով փորձելով պահպանել անկախությունն ու ազգային արժեքները: Հայաստանը կանգնած էր մայրենի լեզվի կրոստի և հավատքի կորսույան, ձևավանդական արքունիքում: Ուժացման սպառնալիքը կախված էր թե՛ բուզանդական, այսպէս էլ պարսկական տիրապետության ներք ապրող հայ ազգաբնակչության զլիխի: Դառակտման առարկա էր նաև քրիստոնյա հավատքի քարոզությունը, որը արևմտությից հրամցվում էր հունարեն լեզվով, իսկ հարավ-արևելքից՝ ասորերեն: Հայոց թագավորության պետական կառույցները ճանապարհներ էին փնտում ազգային կառույցները և մշակույթը փրկելու համար: Մասնավոր լուծումներից մեկը՝ այբուբենի ստեղծումն էր և

իսրանուրույն մատենագրության արարումը: Մյուսը մոտեցումը՝ հայոց կարողիկոսական և հոգևոր իշխանության ամբապնումն ու պետական կառույցների մեջ ներգրավումը, որը հիմք պիտի ստեղծեր հետազոյում, ավելի նպաստավոր պայմաններում, անկախության վերականգնան համար:

Այդ նույն ժամանակներում Հայոց եկեղեցին էլ փորձում էր իր ուրոյն տեղն ամրապնդել Տիգրեական եկեղեցու համակարգում, տատանվելով Բյուզանդիայի և Պարսկաստանի կայսերական պատվախնդրությունների (ամբիշիաների) միջև: Հայոց պետականության հետզիետև նվազող դերի հետ միասին եկեղեցու վարած հետևողական քաղաքականության հետուածքով, կաթողիկոսարանը մի շարք գործառույթների բնագավառում փորձում էր փոխարինել թագավորության շրացող ինստիտուտներին մշակույթի և ազգաբնակչության հոգևոր կառավարման բնագավառներում: Դրան հավանաբար նաև նպաստում էր այն փաստը, որ թե՛ կաթողիկոսական, և թե՛ պետական իշխանությունները գտնվում էին իրենց Արշակունյաց հարստության ուղղակի ժառանգներ համարող նախարարական ընտանիքների ձեռքում:

Դ դարի վերջին, Հայաստանի առաջին Մեծ բաժանումն Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, Հայոց պետության և եկեղեցու գործեր հարցուրամա կառույցն ենթարկվեց առաջին լորջ փորձության, բանի որ Մեծ Զայրի տարածքի ¼ -ը մտավ Սասանյան պետության կազմի մեջ: Թեպես Մեծ Զայրի 1/4-ը Հռոմեական կայսրության տարածքում էր մասնաւոր այնուամենայնիվ, չի կարելի նկատի չլունենալ Փոքր Հայրի ազգաբնակչությանը, որը բավական մեծ թիվ էր կազ-

⁴⁵ Տե՛ս Փատուս 1889, էջ 145 – 146, 153, 174, 176 – 178, 182 ևն, հմմտ. Մահանձն 1941, էջ 7:

մում⁴⁶ և հսկայական դեր էր խաղացել Հռոմեական կայսրության արևելյան նահանգներում քրիստոնեության հաղթանակի գործում⁴⁷: Դեռևս անտիկ ժամանակներում, մինչև Թեոդոս II (379-385) կայսեր զահակալությունը, Հայաստանից կտրված Փոքր Հայքի տարածքի վրա առաջացել էին երկու մարզեր՝ Մելիտենե և Սեբաստիա կենտրոններով⁴⁸: 387 թ. բաժանումով Հռոմի հովանավորության տակ անցան նաև Մեծ Հայքի Բարձր Հայք և Ծոփք նահանգները Կարին (Թեոդոսոսպոլիս) և Նիքոլոս (Մարտիրոպոլիս) կենտրոններով, որոնք առաջան Ներքին Հայք և Սատրապական Հայաստան անոնները: Հատ Ն. Աղոնիցի, Հռոմի և Պարսկաստանի միջև բաժանման առարկա դարձան հիմնականում Արշակունիների տիրույթները, որոնք իրենց ներքին ինքնավարությունը պահպանեցին մինչև Հռոտիինանու կայսեր իշխանության ժամանակները⁴⁹: Հիշյալ բաժանումով, Հռոմեական տիրապետության տակ անցան սատրապությունները՝ Ծոփք Շահունեաց, Անձխոր, Ծոփք, Հաշունեանք, Բալահովիս⁵⁰, ինչպես նաև Մեծ (Armenia Magna) կամ Ներքին Հայք (Armenia Interior) կոչված զավառները⁵¹: Հռոմեական կայրությունում Փոքր Հայքը և Մեծ Հայքից կտրված հատվածները Թեոդոս Մեծ կայսեր պետավաշխական բաժանումները: Առաջին և Երկրորդ Հայքերի էր բաժանվել

⁴⁶ Տե՛ս Ածոնց 1908, էջ. 66 – 89 :

⁴⁷ Այդ մասին տե՛ս Բաբրիկյան 2001, էջ 3-43; հմտ. Օրմանեան 2001, էջ 38:

⁴⁸ Ածոնց 1908, էջ. 90 :

⁴⁹ Տե՛ս Ածոնց 1908, էջ. 123 :

⁵⁰ Ածոնց 1908, էջ. 28 - 45.

⁵¹ Տե՛ս Ածոնց 1908, էջ. 46 – 65.

Փոքր Հայքը, իսկ Մեծ Հայքից կտրված տարածքի վրա ստեղծվեցին Ներքին Հայք (Interior) և Սատրապական երկների նահանգները (պրովինցիաները): Ամենայն հավանականությամբ Քյուզանական կայսրության տարածք անցած Ներքին Հայք պրովինցիայի մայրաքաղաքն էր Թեոդոսուպոլիս-Կարինը, իսկ Սատրապական Հայաստանինը՝ Մարտիրոպիլիս-Նիքոլետը (Մայաֆարկին):⁵² Հիշատակված բաղադրեները նաև բյուզանդական գորքերի գորակայաններ էին, ուր նստում էին կայսերական գորակամասատարները, որոնք կարևոր դեր էին կատարում Պարսկաստանի դեմ մղվող պատերազմներում:

Ամենայն հավանականությամբ պարսկական տիրապետության տակ՝ Վաղարշապատում և Ապա՝ Ե դարի վերջում Դիլի տեղափոխված Հայոց կարողիկոսը իշխանություն չուներ Բյուզանդիայի պատկանող բաղադրենում նստող եպիսկոպոսական արքոնների վրա: Սատրապական Հայաստանը, ուր իշխանության կրօնենքը տեղական նախարարական ընտանիքներն էին, նրանցից յուրաքանչյուրն ամենայն հավանականությամբ ուներ իր ավատական տանը կից հոգևոր ծառայություն, որոնք անվանվում էին դրան եպիսկոպոսություններ: Դրանք հոգում էին հսկայական տարածքներ ունեցող, և Երկրի կառավարման գործում մեծ կարևորություն

⁵² Լուն Զ Բնաստուսի (886-912) դարաշրջանի բյուզանդական եկեղեցու թեմերի ցանկում հիշատակվում են Ծորորդ Հայքում գրտվող՝ Ծոփքի, Հանձիի, Բալահովի ու Հաշունեարի աթոռները: Տե՛ս Parthey 1866, էջ 90 (հրուս լատ Գիտակրոզ 1914, էջ 71, ծան.2): Հմտ. նաև տարածաշրջանի եպիսկոպոսությունների արդյունական ցանկը. Dictionnaire 1848, էջ 808-809:

ունեցող նախարարական ընտանիքների և նրանց ենթակա տարածքների հոգևոր հոգսերը⁵³: Մեզ հայտնի են Սամիկոնյան, Սյունի, Արծրունի, Խոջխոռունի, Ամառունի և այլ նախարարական տներին կից եպիսկոպոսություններ: Այդ նախարարություններից շատերը հոդային տիրույթներ ունեին Հայաստանի ինչպես հոռմեական, այնպէս է սասանյաններին պատկանող մասերում⁵⁴:

Բյուզանդիային կցված տարածքների եպիսկոպոսական իշխանությունները ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ, հետզինեւ անցած բյուզանդական եկեղեցու նվիրապետական համակարգի տնօրինության տակ: Չի կարելի բացառել, որ ժամանակ առ ժամանակ դրանող ենթարկվել են նաև Հայոց կաթողիկոսին ենթակա Նվիրապետական կառույցին: Խնդիրը կայանում է կրանում, թե նախարարական տներին ենթակա դրան եպիսկոպոսությունները ի՞նչ իշխանություն ունեին, կամ ինչպիսի՞ն էր կրանց փոխարարերությունները իրենց կողմից սպասարկվող նախարարության և բյուզանդական եկեղեցական համակարգի հետ: Հայտնի է, որ Բյուզանդական կայսրությունում եպիսկոպոսական աթոռները անվանվում էին քաղաքացի կամ քեմերի անուններով: Ե – է դարերի հայկական սկզբնադրյութերում եպիսկոպոսական աթոռներն անվանվում են կամ նախարարական տան, կամ գավառի անունով: Հայաստանում որևէ բնակավայր, իրը եպիսկոպոսական աթոռ, չի հիշատակվում: Այս առանձնահատկությունը ամենայն հավանականությամբ

պայմանավորված է կրանով, որ երկարատև պատերազմների հետևանքով, Հայաստանում անկում էին ապրել քաղաքները, իսկ քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոններ էին դարձել նախարարական դրյակները, որոնց տերերը անսահմանափակ իշխանություն ունեին իրենց երկրամասերում:

Թեպետ Հռոմեական կայսրության կազմում էր զոնվում Մեծ Հայքի միայն քառորդ մասը, պիտի միշտ նկատի ունենալ, որ այդ երկրամասի թիկունքում էր զոնվում նաև Փոքր Հայքը, որը պարսկաբյուզանդական պատերազմներից հետո հաճախակի համարվում էր հայախոս ազգաբնակչությամբ: Բյուզանդական մասնենազրության մեջ պահպանվել են վաղ շրջանի եպիսկոպոսական աթոռների ցուցակներ, որտեղ հիշատակվում են Փոքր Հայքի երկու տասնյակից ավելի եպիսկոպոսություններ, որոնք համախմբված էին Մերաստայի և Մելիտենեի մետրոպոլիտական աթոռների շուրջ⁵⁵:

Ամենայն հավանականությամբ, դրան եպիսկոպոսությունները հետազոտում սերտաճեցին Սասական Պարսկաստանի տարածքում գտնվող Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի մեջ: Թե՛ բյուզանդական, և՛ թէ պարսկական մասում հայտնված եպիսկոպոսական աթոռները դեռևս որոշ ժամանակ շարունակում էին սերտորեն համագործակցել Վաղարշապատում հաստատված կաթողիկոսական աթոռի հետ:

⁵³Տե՛ս Markwart 1932, էջ 152 :

⁵⁴Տե՛ս Markwart 1932, էջ 152 , 225 ; Ածոնչ 1908, շ. 327-334:

⁵⁵Տե՛ս Notitiae 1981, թ. 208-209 և այլուր:

Հայոց եկեղեցին Դ դարում իր առաքելաշնորհ գործունեությունը սկզբցի ի վեր տարածում էր Վիրք, Աղվանք և Ասորպատական աշխարհներում, ինչպես նաև, հավանաբար, Կովկասյան լուսերից հյուսիս գտնվող Հնասա թագավորության տարածքներում⁵⁶: Հինգերորդ դարում Հայոց եկեղեցին հանձիս Մեսրոպ Մաշտոցի գործունեության լուծեց նաև հիշատակված տարածքների քրիստոնյա ազգաքանակցության այրութենքի խնդիրը. Նրանց էլ լիիրավ անշամ դարձնելով հարավկովկասյան քրիստոնեական մեծ ընտանիքի: Այդ նախաճենությունը բացի քրիստոնեությունը տարածելու գլխավոր միտումից՝ մեկ այլ կողմ ևս ուներ. Հայոց եկեղեցին փորձում էր իր քիչութեանը՝ ընդուն հիշատակված կայսրություների, դաշնակից ժողովուրդներ ձեռք բերել, որոնց հետ հետո կիներ պայքարել գերտերությունների դեմ սպասվելոր «մենամարտերում»:

Ըստ գերմանացի բյուզանդացին Հ. Գելցերի Հայոց եկեղեցու առաջնորդն, ինչպես հարևան Վիրքում և Աղվանքում, ուներ կարողիկոս պաշտոնական պատվանանը, սակայն նրանց միջավայրում, նա առաջին էր հավանաբերի մեջ⁵⁷: Ավելի հաճախ Հայոց հոգերը առաջնորդին Փախտուսն անվանում է քահանայապետ, եպիսկոպոսապետ և հայրապետ: Այնպես որ, ըստ Հ. Գելցերի հայրապետ բարը Դ դարի ընկալմամբ, պետք չէ հասկանալ ուստիարχության եկեղեցափառչական նորամուծությունների իմաստով, քանի որ

⁵⁶ Տեր-Պետրոսյան 1981, էջ 108 և շարունակ.:

⁵⁷ Gelzer 1895, էջ 138: Կարողիկոս պատվանական հիշատակությունը, հաւոյիսուն է նաև Եվելինս Կեսարաց Եկեղեցական պատմությունը, տե՛ս Գելցեր 1896, էջ 81, ծան. 2:

«պատրիարք» և «պապ» գաղափարների իմաստը դեռևս կանոնական գրականության մեջ էլ հստակեցված չէին, դրանք չունեին վարչական ռեստրու և առաջնություն կամ հարզանքի պատվանուններ էին միայն⁵⁸: Փավստոսի կողմից «կաթողիկոս» տերմինի հիմնական հասկանմանը Գելցեր նաևնեցնում է իրեց քահանայապետի կարողություն հատկության՝ ժառանգականության հետ, քանի որ այդ իշխանությունը բացառապես կապվել է Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ՝ անպայման Սուրբեայան ճյուղի (Կապերով Արքահամբ կիս Քետուրի հետնորդների հետ): Քահանայական այդ ընտանիքի անդամները գործ են առանց բացառության ամուսնացած են եղին⁵⁹: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ կաթողիկոս տիտղոսով Փախտուսը և Ազգաքենալոսը պատվում են նաև Կապադովիայի կամ Գամիրքի հոգևոր առաջնորդին⁶⁰: Ըստ գերմանացի հետազոտողի, «կաթողիկոս» տիտղոսի օգտագործումն ավելի վաղ է հասկապում Հայաստանում, քան նրան սահմանակից այլ երկրներում, ինչպիսին է Սասանյան Պարսկաստանը⁶¹: Ե դարից սկսած այդ տիտղոսն օգտագործվում է լայն տարածում և ստանում նաև ասորական գրականության մեջ:

Ըստ Ազգարակենոսի, Գրիգոր Լուսավորչի կողմից ձեռնադրված եախսկոպոսներից անվանապես հիշատակվում են

⁵⁸ Պատրիարք, պապ տերմինների մասին տե՛ս Գելցեր 1896, էջ 82, ծան. 1:

⁵⁹ Գելցեր 1896, էջ 84-93: Արքակուսինների հիշատակված ճյուղի մասին տե՛ս Թողոյան 2016, էջ 48-60:

⁶⁰ Գելցեր 1896, էջ 81-82, ծան. 3:

⁶¹ Գելցեր 1896, էջ 81, ծան. 3, հմտ. van Esbroeck 1991:

տասներկուսը, որոնցից՝ օր. մեկը Եփրատացոց, խև մոռաք՝ Բասեի Եպիսկոպոսն է⁶²: Դրանցից առաջինն ամենայն հավանականությամբ՝ Դ դարի վերջին գտնվում էր Հայաստանի հոռոմեական մասում, խև Երկրորդը՝ Սասանյան Պարսկաստանի Ենրակայության գոտում: Դ դարում Հայոց Եկեղեցու Նվիրապետական համակարգում հիշատակվում է նաև բորեալիսկոպոսության ինստիտուտը: Եկեղեցական Նվիրապետության այս պաշտոնի ամենանշանավոր կրողը, Գրիգոր Լուսավորչի աշակերտ Դասիել Ասորի բորեալիսկոպոսն է⁶³, որի գործունեության անդամանում են Մովսես Խորենացին և Բուզանդը: Խորենացու մոտ եղակիաբար օգտագործվում է նաև «հիւպերեսո» պաշտոնանունը⁶⁴, վերաբերով այդ նույն Դասիել Երեցին: Լուսավորչի տանը գուգահետաքար ե-

⁶² Ազարանձեռն 1909, էջ 441 - 442:

⁶³ Փատոս 1889, էջ 36, 39, 42:

⁶⁴Տէ՛ Մովսես Խորենացի 1913, էջ 272, որի տարրընթերցումներում թերված են նաև «հիւպերեսո», «հիւպերեայ», «հիւպերետ» ընթերցումները, առկա են նաև «պէրերուս» և «պէրետոր» բառաձևերը: Խորենացու քարզմակիցները հիմնականում բարդ քարզմանում են «սպասակիր» եշանակությամբ (տե՛ս Մովսես Խորենացի 1940, էջ 184): Ա. Եմինի իր ուսուերեն քարզմանության մեջ օգտագործել է «служитель» տերմինը (Մուսեյ Խօրենսկի 1893, ս. 153 որում, 379): «serviteur» (սպասակիր) տերմինն է օգտագործել Ժ.-Պ. Ասհել (Moïse de Khoréna 1993, թ. 260): Գ. Սարգսյանի իր ուսուերեն քարզմանության մեջ (Մուսեյ Խօրենսկի 1990, ս. 156), այդ տերմինը չի քարզմանել: Կանոնագիրը Հայոց «Հարաւի հենետողաց կանոնակարգում «պէրետուս» տերմինը համազոր է բորեալիսկոպոս պաշտոնին (Կանոնագիր Ա, 1964, էջ 111): Ամենայն հավանականությամբ, Մովսես Խորենացու մոտ և Կանոնագիրը Հայոց խորս գտնվում է տարբեր եշանակություն ունեցող տերմինների մասին:

պիսկոպոսական ձեռնադրություն են ստանում և Աղբյանոսի տան ներկայացուցիչները, որոնք անվանվում էին նաև «արքունական դրան վերակացուելու», ինչպես նաև Սանագետությունները: Սուկրատ Սրբաւորիկոսի Եկեղեցական պատմության մեջ հիշված Ասորիքի ժողովական թղթի տակ, որի ուղղված է Ցովիանոս կայսերը (363-364) պահպանվել է Մեծ Հայրի Կախիկոպոս Խանակի ասորագործությունը, որին Հ. Գելցերը նոյնացնում է Ներսես Մեծի որդի՝ Սահակ Պարփիկի հետ (387-439)⁶⁵: Ամենայն հավանականությամբ 372 թ. Ներսես Մեծ կաթողիկոսն է Արեւելի 32 Եպիսկոպոսների հետ ստորագրել Բարսեղ Կեսարացու ժողովական մի թղթի տակ՝ ուղղված Արևմտացի Կախիկոպոսներին, ուր կոչ է արվում Իտալիայի և Գալլիայի եպիսկոպոսներին նզովել Արիսոսի աղանդը⁶⁶: Այս պարագան, ինչպես նաև 325 թ. Արիստակեսի մասնակցության ֆիբումը Նիկայի Տիեզերական ժողովին, ցոյց է տալիս Հայոց Եկեղեցու ներգրավվածությունը Տիեզերական եկեղեցու գործերին: Սաղարիա Օրմանյանը Ներսես Մեծի ժամանակներով է թվագրում նաև Հայոց Եկեղեցու Կիրապետական կառույցի դեկապարի առաջին խօսքը Կեսարիայի առօղիք⁶⁷, որը Տիեզերական եկեղեցու Նվիրապետական կառույցի անբաժանելի մասն էր կազմում: Այս խօսքն ամենայն հավանականությամբ ուներ քաղաքական բնույթ, բայի որ դրա նախաձեռնողը Հայոց քաղաքական իշխանությունն էր, Պապ քաջավորի զիսավորությամբ:

⁶⁵ Տէ՛ Գելցեր 1896, էջ 42, համ. Gelzer 1895, էջ 122:

⁶⁶ Օրմանեան 2001, էջ 151:

⁶⁷ Օրմանեան 2001, § 160:

Հայոց Եկեղեցու պատմաբանը կարողանում է ցոյց տալ, որ Հայոց Եկեղեցու ինքնուրույնության տեսական կովաններն առկա են Մաշտոց Եղվարդեցու թղթում, որից անցել են Հովհաննես Դրասիանակերտցի պաշտոնական պատմիչի աշխատության մեջ⁶⁸: Դրանք ենսագայում, ամենայն հավանականությամբ անցել են պատմագրական և Եկեղեցագիտական բնույթի այլ աշխատություններ⁶⁹: Այնուամենայնիվ, որքան կ ուշ կազմավորվեին Հայոց Եկեղեցու նվիրապետական արողի ինքնազլության տեսական հիմքերը, ակնհայտնի է, որ Ներսես Մեծից հետո հայոց միջնադարյան պատմագրությունը չգիտե մի դեպք, եթե կարողիկուներից որևէ մեկը դիմել է Կապադովկիայի կամ որևէ այլ արողի եպիսկոպոսապետի, Հայոց Եկեղեցու հովանական ձեռնադրելու ինտերակտով: Այս իսկ պատճառով, կարելի է պնդել, որ Ե դարի սկզբին, Սահակ Պարթևի իշխանության տարիներին, Հայոց Եկեղեցին արգել ինքնազլու Եկեղեցի էր և ինը էր որոշում սեփական Եկեղեցական կառույցի փոխարարերությունները Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հոգեոր և աշխարհիկ կառույցների հետ: Կարևոր փաստարկ է նաև այն, որ Հայոց Կաթողիկոսի դեկապարած միևնույն նվիրապետական համակարգում էին գոնվում նաև Այսրկովկասի մյուս արողությը՝ Վիրքու ու Աղվանքը, հավասարագոր Եկեղեցական կառույցների իրավունքը⁷⁰:

⁶⁸Տե՛ս Յովիաննես Դրասիանակերտցի 2010, էջ 384-388:

⁶⁹Տե՛ս Սարգսյան 1991, հիմն. Յօզոյան 2016, թ. 407 &.

⁷⁰Այս մասին, երբեմն ակնարկային տեղեկություններով վկայում են նաև ժամանակի թե՛ հայկական, և թե՛ ասորական, ինչպես նաև

Ինչպես ասվեց, 387 թ. Մեծ Հայքի թագավորությունը երկու մասի բաժանվեց: Հայաստանի հոռոմեական հատվածում իշխում էր Արշակը, իսկ Պարսից պետության ենթակա մասում՝ Խոսրովը: Այսուամենայնիվ, Եկեղեցական կառույցը, որը Հայաստանի Արշակունյաց թագավորության բաժանման ժամանակներից կրկին անցել էր Գրիգոր Լուսավորչի ժառանգների իշխանության տակ, ուշագայգանում էր Ներսես Մեծի որդին՝ Սահակ Պարթևը: Այս պայմաններում, Պարսից պետության տիրապետության ներք, Հայոց Եկեղեցական կառույցը հետզինեւ ինքնավար կարգավիճակ է ստուգում Սասանյանների հովանավորության ներք, քանի որ զիսավոր եպիսկոպոսական արքուն հաստատված էր սկզբում Կաղարշապատում, իսկ Ե դարի վերջերից՝ մարզպանի նախավայր՝ Դվինում: Կ Պոլսի Աստիկոս պատրիարքի իշխանության տարիներին (406-425), որն ըստ հայկական սկզբնադրյությունների նախավագրական կասի մեջ է եղել Սահակ Պարթևի և Մաշտոցի հետ⁷¹, Կ Պոլսի հոգենոր իշխանությունը Ե դարում տարածվում էր ողջ Փոքր Ասիայի վրա՝ բացի Վիլիկիայից⁷², և հասնում էր մինչև իսկ Պոլսոսի և Կապադովկիայի արևելյան սահմաններ⁷³: Կարծես զարմանալի չէ այն հանգամանքը, որ Սահակը և Մաշտոցը դիմում են ոչ թե Կապադովկիայի մետրապոլիտին, այլ՝ Կ Պոլսի եպիսկոպոսին, Հայոց գիրք Փոքր Հայքում և Մեծ Հայքի արևմտյան զալա-

⁷¹ ուշ ժամանակների վրաց պատմագրությունը: Տե՛ս Յօզոյան 2016, թ. 402-421:

⁷² Grumel 1972, թ. 63, № 78 :

⁷³ Վերջինս՝ Ե դարից Աստիկի պատրիարքության կազմում էր: Տե՛ս Harnack 2004 (1902, Տ. 559-468):

⁷⁴ Բոլոտի 1913, ս.227: Տե՛ս Harnack 2004, Տ. 559-487:

Ներում տարածելու համար, թեպես Դ դարի սկզբին Գրիգոր Լուսավորիչը իր ձեռնադրությունը ստացել էր Կեսարիայի աթոռոից: Հավանաբար խնդիրը նրանում է, որ Հայոց մատենագործարքն իիմաստիրները փորձել են խնդիրը լուծել Բյուզանդական կայսերական իշխանության և Կոստանդնուպոլիսի պատրիարքական աթոռի շրջանակներում:

Армянская церковь в иерархической системе Вселенской церкви (V век)

Резюме

Ազատ Բօզօյն

В 387 г. Армянское царство было разделено между Восточноримской империей и Персии, а в 428 г. страна потеряла царскую власть и формальную независимость. В этот момент армянский католикосат был одним из известных диоцезов вселенской церкви. Армянская церковь довольно деятельно участвовала в духовной жизни Малой Азии, Северной Сирии и Кавказа. До нас дошли церковно-литургические произведения католикоса этой эпохи Саака Партеаса, некоторые его письма с церковными деятелями того времени. В статье автор восстанавливает место армянской церкви в иерархической системе вселенской церкви V века.

ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ազգարանքնու 1909 - Ազգանկեզայ Պատմութիւն Հայոց / Աշխատասիրութեամբ Գ. Տեր-Սկրուչեան և Սոյ. Կանայեանց, Տիղիս ; Աճանեան 1979² - Հր. Աճանեան, Հայերեն արմատական բարորան, Դ հու., Երևան, ԵՊՀ հրատարակություն :

Աճանեան 1979 - Դ. Աճանեան, Քրիստոնեութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեան առաջ, Վենետիկի, Ս. Ղազար;

Աճանեան 1987 - Հ. Աճանեան, Սանր Երկեր / Ներածութեամբ պրոֆ. Ա. Գ. Ասենեանի, Լու Անշէնեւ;

Բարթիկան 2001 - Հր. Բարթիկան, Քրիստոնեությունը Փոքր Հայութ։ Ազգային-կրոնական և սոցիալ-քաղաքական իրավիճակը նահանգում III դարի երկրորդ կեսին (Ծառ IV դարի սրբոց վկայաբանությանց) . - Պատմ-Բբանասիրական հանդես, 3 (Ըստյան),

Հայ-բուզանդական հետազոտություններ, հու. Ա, Երևան 2002, էջ 739-779);

Բողոյան 2016ա, Ա. Բողոյան, Քաղկեդոնի ժողովի կանոնների միջանաբարյան հայկական բարգմանաւոյնունը . - Եջմանին, Ը;

Բողոյան 2016 - Ա. Բողոյան, Արշակունիների հարստությունը քրիստոնեական արժեքների համակարգում. - Հայաստանը և արևելաքրիստոնեական բաղադրակրթությունը. Մշագցայի զիտաժողով՝ Խիլքիս ՀՀ ԳԱԱ Սրեկափառության հիմնախոսությունը Քրիստոնյա Արևելք բաժին ստեղծման 40-ամյակին և նրա հիմնադիր, պրոֆ. Դ. Սուրայանի մահվան 5-րդ տարեկիցին, Երևան, 12-13 դեկտեմբերի 2016: Զեկուցումներ և գեկուցումների դրույններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակություն, էջ 48-60 ;

Գեղեր 1896 - Հ. Գեղեր, Փաստու Բիւզանդ կամ հայկական եկեղեցյալ վկայանարութիւններ, Վենետիկ, Ս. Ղազար ;

Գիտերքը 1914 - Վ. Գիտերքը, Հովովեական Հայաստան և Հովովեական սաստրապությունները Դ-Զ դրակրուն. իրավապատմական ուսումնասիրութիւն / գերմաներէնէ թարգմանեց Հ. Մկրտիչ Նորշտան Միխիլ Պիշտէ, Վիեննա, Միխիթրեան տպարան [Ազգային մատենարան, 24] ;

Եսերիս Կեսարացի 1877 - Պատմութիւն եկեղեցւոյ, յեղեալ յատրույն ի հայ ի հինգերորդ դարու / Պարզաբանակ նոր բարգմանութեան ի յոյն բնագրներ ի ձեռն հ. Աբրահամ Վ. Ճարեան ի Միխիթրեան, Վենետիկի ;

Թովման 2006 - Թովման Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեան / Քննական թագիդը, առաջարար և ծանրթազորյանները Ս.Հ. Դարբինյան-Եւլիյանի, Երևան;

Խաչիկյան 1973 - Լ. Խաչիկյան, Օստարակեզր հայ գրականությունը յորորոյ դարու. - ՊԲՀ, 3, էջ 27-51 (Ըստինի, Աշխատություններ, Ա, Երևան 2012, էջ 31 - 52);

Կանոնագիր Ա - Կանոնագիր Հայոց, Ա / աշխատասիրությանը՝ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964;

Մաշկին 1951 - Ն. Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, Երևան;

Մաշուոց 1902 - Թուխտ Երանելյան Մաշուոց, նախ բան կարողիկոսութիւն, առ Տեր Գեորգ Հայոց կաթողիկոս վասն՝ Միւնեա Խաչիկյան, թէ Է՞ր աղազա տուա. - Արարատ, Է-Ը, էջ 748-753;

Սովորեացի 1913 - Պատմութիւն Հայոց / Քննական ընագիրը և Ներածութիւնը Ա. Աբեղեանի և Ա. Թարութիւնեանի, Տիրիս; Սովորեացի 1940 - Հայոց պատմություն / քարգանություն, Ներածություններ դրանոր Առ. Ասլանայանի, Երևան, Հայպետհրան;

Յովհաննես Դրասխանակերտցի 2010 - Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցոյն, Պատմութիւն Հայոց (հրատ. Գեղրդ Տէր-Վարդանեան) - Սատենազիր Հայոց, Խո. ԺԱ, Ժ դար. Պատմագործիւն, Ալրիջիան-Լիքանան;

Ծանու 2013 - Ս.-Լ. Ծանու, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը Կասպիաում և մկրտութիւնը Բագավանում - Հայուս Ամսօթայ, (ՃԷ. Տարի);

Ռըլու 1987 - Ը. Ռըլու, ճաշոց զրի ծաղումն ու զարգացումը - ՊԲՀ, 2, էջ 28-45 (հայերեն բարգանաւորությունը՝ Ա. Բողոքյանի);

Սարգսյան 1991 - Ս.Բ. Սարգսյան, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» և Սովորեացին, Երևան, ՀՀ ԳԱ հրատարակչությունը;

Տէր-Միհանեան 1908 - Ե. Տէր-Միհանեանց, Հայոց եկեղեցու յարաբերությունները աստրուց եկեղեցիներ հետ, Ա. Էջմիածինի;

Տէր-Պետրոսյան 1981 - Լ.Հ. Տէր-Պետրոսյան, Մաշտոցյան ավանդները և Հայոց պատքերությունը Հռուց աշխարհում - Պատմաբանական համեմատական համեմատ, 1;

Փաւսոս 1889 - Փաւսոսի հիմանաւոյն Պատմութիւն Հայոց ի շորու դպրութիւնս, Վենետիկի²;

Օրմանեան 2001 - Ս. Օրմանեան, Ազգապատում. Հայության եկեղեցու անցքեղ սկզբն մինչև մեր օրեղ յարակից ազգային պարագաներով պատմած, Խո. Ասյ Արքու Ա. Էջմիածինի³;

M. Albert & 1993 - R. Beylot, R.-G. Coquin, B. Outier, Ch. Renoux, Christianismes Orientaux. Introduction à l'étude des langues et des littératures / Introduction par A. Guillaumont, Paris;

Ammianus Marcellinus 1835 - Quae supersunt. Accedunt auctoris ignoti De Imperatoribus excepta. Editio steryotypa, Lipsiae, Sumtibus et typis Caroli Tauchnitii ;

Ammianus Marcellianus 1983 - Römisch Geschichte / Lateinisch und deutschen und mit einem Kommentar versehen von Wolfgang Seyfarth, I.-V. Teilen, Berlin : Akademie-Verlag⁴;

Apostolic Canons - Apostolic Canons & Apostolic Constitutions. – The Oxford Dictionary of Byzantium / ed. A. Kazhdan, N.Y., Oxford: Oxford University Press, 1991, t. 1;

Bozoyan 2016 - A. Bozoyan, L'Église et l'identité Arménienne dans le Caucase et l'Empire Byzantin aux IX^e-X^e siècles. – L'Arménie et la Géorgie en dialogue avec l'Europe. Du Moyen Âge à nos jours / Ed. I. Augé &, Paris : Gauthner ;

Brock 1988 - S.P. Brock, The Peshitta Old Testament between Judaism and Christianity, Cristianismo nella Storia, vol. 19, pp. 483-502 ;

Christensen 1944 - A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagen ;

Dictionnaire 1848 - Dictionnaire de géographie sacrée et ecclésiastique / par M. Benoist..., tome I, Paris ;

Didascalia 1905 - Didascalia et Constitutiones Apostolorum / ed. F.X. Funck, vol. I - II, Paderborn;

Էցերի 1982 - Journal de Voyage (Itinéraire) / Introduction, texte critique, traduction, notes, index et cartes par Pierre Maraval, Paris, Les Éditions du Cerf [Sources Chrétiennes, № 296];

Eusebius 1909 - Werke, zweiter Band. Die Kirchengeschichte / Herausgegeben im Auftrage der Kirchenväter-Commission der königl. Preussischen Akademie der Wissenschaften von Dr. Eduard Schwartz, die lateinische Übersetzung des Rufinus bearbeitet im gleichen Auftrage von Dr. Theodor Mommsen, dritter Teil: Einführungen, Übersichten und Register, Leipzig, J.C. HINRICHS'sche Buchhandlung ;

van Esbroeck 1991 - M. van Esbroeck, Primaute, Patriarcats, Catholico-sass, autocéphalies in Orient", in: M. Maccarrone (a cura di), Il primato del Vescovo di Roma nel primo millennio. Ricerche e testimonianze. Atti del symposium storico-teologico, Roma, 9-13 ottobre 1989, coll. «Atti e documenti» 4 (Città del Vaticano, Libreria Editrice Vaticana), pp. 493-521 ;

Garsoian 1988 - N. Garsoian, Some preliminary Precisions on the Separation of the Armenian and Imperial Churches: I. The Presence of "Armenian" Bishops at the first five Oecumenical Councils. – Offprint from KAΘΗΓΗΤΡΙΑ Essays presented to J. Hussey, Porphyrogenitus, p. 253 - 285 ;

Garsoian 1999 - N. Garsoian, L'Église Arménienne et le grand schism d'Orient (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 574, Subsidia, tomus 100), Lovanijs in Aedibus Peters ;

Gaudemet 1985 - J. Gaudemet, Les sources du droit de l'église en occident du IIe au VIIe siècle, Editions du CERF / Editions du C.N.R.S. ;

Grumel 1972 - Les Regestes des actes du patriarcat de Constantinople, vol. I : Les actes des patriarches, fasc. I : Les regestes de 381 à 715 / par V. Grumel, Paris, Institut français d'études byzantines ;

Gelzer 1895 - H. Gelzer, Die Anfänge der armenischen Kirche. – Sonderabdruck aus den Berichten der Sächs. Gesellschaft der Wissenschaften. Sitzung vom 4. Mai ;

Feissel 1989 - D. Feissel, L'évêque, titres et fonctions d'après les inscriptions grecques jusqu'au VII^e siècle. In: Actes du XI^e congrès international d'archéologie chrétienne. Lyon, Vienne, Grenoble, Genève, Aoste, 21-28 septembre 1986. Rome : École Française de Rome, pp. 801-828 ;

Արևելքի խաչակրաց պետությունների հետ հարաբերությունների հստակեցման և Քրիստոնյա Արևմտությի, մասնավորապես Սրբազն Հռոմեական կայսրության համար Արեվելուում քաղաքական ու մշակութային հենարան դառնալու Կիլիկյան Հայաստանի ձգությամբ հասկանալու համար հարկ է վերլուծել Բյուզանդական կայսրության թուլացմանց զատ ԺԲ դ. վերջին քառորդին Մերձավոր Արևելյում տեղի ունեցած մի շարք այլ ուսագրաքարական գործընթացներ ևս:

Դարի 70-80-ական թթ. դեռևս վերջնականապես պարզ չէր Արևելյանից երկրածովյան ավագանում Եղիպատոսի սովորություն-խաչակրաց Արևելք հակամարտության ելքը: Սալահ աղ-Դինի տարածքային նվաճումները դեռևս սուկ թույլ

¹ Grousset 1949, էջ 391 :

² Շուրեն Գ-ն գրավեց Դաշտային Կիլիկյանում Բյուզանդիայի վերջին տարածքները՝ ներառայ Արևմտան և Տարսուն քաղաքները: Տե՛ս Տեղ-Պետրոսյան 2005, էջ 395: Միջինկեֆալիկի ճակատամարտի մասին տե՛ս Lille 1977, էջ 257-275, հմտ տե՛ս Բողոքյան 1988, էջ 130, հմտ տե՛ս և Der Doppeladler 2014, էջ 25 :

Եին տալիս ենթադրել, որ սուլթանը կկարողանա ֆրանկների դեմ պայքարում հասնել հաղթանակի³: Թերևս նաև վերոնք-յալ հանգամանքով պետք է բացատրել այն, որ Կիլիկյան Հայաստանի դեկափառերը չնայած հաճախ դրսնորում էին լատինամետ դիրքորոշաւմ, սակայն միևնույն վերջ չէին հակփոխ որևէ բաղարձական ուժի կողմէը՝ ջանալով Եզիզուս-Խաչակրաց Արևելք հակամարտության ցանկացած ելք ծառայեցնել Կիլիկյան Հայաստանի շահերին: Դեռևս Ռութեն Գ-ի օրոք նման բաղարձակամուրյան դրսնորում էր այն, որ չնայած Հայլավի գրավումից հետո Սալահ ալ-Դինն անմիջական վտանգ էր ներկայացնում Ծուրփիյանների համար, սակայն կողմերը չսրեցին իրենց միջև առանց այն էլ լարված իրադրությունը և 1180 թ. հոկտեմբերի 2-ին կերեցին զինադադար (թեկուզի հայերի համար ծանր պայմաններով)⁴: Սուլթանը հեռացավ Կիլիկյայից՝ պայմանով, որ հայերն ազատ արձակեն հակառակորդի գերիններին: Այս գիտադադարը որոշ ժամանակով ապահովագրեց հայոց իշխանությանը եզիզուսկան բանակի հարձակումներից: Ըստ Իրև ալ-Ասիրի, հայերը հայտնվեցին սուլթանի ուշադրության կենտրոնում Կիլիկիա թափանցած «քուրքմենների» հետ առաջացած ուզմական հակամարտության պատճառով. «Բան այն է, որ հայազգի Լուսնի որ-

դին⁵ մի խումբ թուրքմենների հրավիրել էր իր երկիրը, դրամական նվերներ տվել և հրամայել, որ իրենց հոտերն արածեցնեն իր երկրում...: Սակայն հետո նա դավաճանեց կրած, կանանց գերեվարեց, ունեցվածքը խլեց, իսկ տղամարդկանց՝ տարիքավորներին կցոտրելոց հետո, մի մասին գերեվարեց: Սալահ ալ-Դին իջազ Սսուադ (Սև) գետի մոտ և սկսեց նրա երկիրը ասպասակել»⁶: Ըստ Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ադ-Դին իրն էադրացի. «Այս անգամ դեսպան եկավ Կիլի Արալանից նրա հետ հաշտության պայմանագրի և դաշինքի մասին բանակցություններ վարելու, ինչպես նաև հայերից բռղորդու համար: Նա որոշեց անհապաղ գրոհել Լուսնի որդու երկիրը և դրանով սատարել Կիլի Արալանին»⁷: Իրականում սրանք սուսկ ատիթներ էին Կիլիկյան Հայաստան արշավելու համար: Հայոց իշխանության նկատմամբ սուլթանի ցուցաբերած ուզմական հետաքրքրության պատճառը թերևս այն էր, որ բաղարձական մեծ ինքնուրույնության հասած Կիլիկյան Հայաստանը խոշլնոտ էր սուլթանության՝ համամահմեղական տերություն ստեղծման ճանապարհին: Ինչ վերաբերվում է հայ-եզիզուսկան զինադադարին, ապա սուլթանի առջև կային անհապաղ լուծում պահանջող խնդիրներ, ուստի, թեկուզ գիտակցելով Կիլիկյան Հայաստանի հետ հարաբերությունների որոշակիացման կարևորությունը թե՛ նաշակրաց Արևելք, թե՛ Քրիստոնյա Արևմտացի հետ հա-

³ Այս հարցը որոշ շափուկ հստակեցվեց միայն 1187 թ. Հաբբինի ճակասամարտից հետո: Սակամասն տե՛ս Տեր-Ղուլույան 2017, էջ 79:

⁴ Այս մասին մակրամասն տե՛ս Իրև Ալ-Ասիր 1981, էջ 266, ինմուն տե՛ս Տեր-Ղուլույան 2017, էջ 76-77 :

⁵ «Լուսնի որդի» կամ «իրե Լուսն» դիմելածին մասին մակրամասն տե՛ս Թուրքական/Ենոքական/Տեր-Ղուլույան/Ղասիկեյան 2016, էջ 131-132 :

⁶ Իրև Ալ-Ասիր 1981, էջ 266 :

⁷ Բախա ադ-Դին 2009, էջ 54 :

կամարտության լուծման հարցում, սուլթանը նախընտրեց հետաձգել այս խնդրի լուծումը, առավել ևս որ հայերի հետ կնքել էր շահավետ հաշտություն:

Կիլիկյան Հայաստանի համար մյուս բարդ խնդիրը հարաբերությունների հաստակեցման անհրաժշտությունն էր Ռումի սելջուկյան սուլթանության հետ: Ռումի սուլթանները չին դիտարկում հայոց իշխանության հետ դաշինքի հնարավորությունը և Կիլիկյանին վերաբերվում էին որպես խոչընդոտ՝ իրենց ռազմական նվաճումների ճանապարհին: Ազելին, առիթի դեպքում սելջուկները ընդդեմ Կիլիկյայի ուղղորդում էին նաև տարածաշրջանի այլ քաղաքական ուժերի, ինչպես դա փորձեցին անել 1180 թ. Եզիզուսի սուլթանության պարագայում: Ուշագրավ է, որ դարձայի Իրման Շաղադի հադրդմամբ՝ երբ Սալահ ադ-Դինը հեռանում էր Կիլիկյան Հայաստանից, ևս իրեն փոխանորդ է կարգում Ղազ Արսանին՝ դեսպանների հետ դաշնագիր կնքելու համար⁸:

Ինչպես Եզիզուսի սուլթանության, այնպես էլ Ռումի սուլթանության դեպքում Ռումիկանների հետ ունեցած հակամարտությունն ուներ ոչ միայն քաղաքական, այլև մշակութային ակնություն: Սելջուկները ի դեմք Կիլիկյան Հայաստանի տեսնում էին լուրջ հակակշխ տարածաշրջանի մասնական քաղաքակրթական միջավայրին, ուստի Ռումիկանները մշտապես զգուշանում էին սուլթանության ռազմական և դիվանագիտական ձեռնարկումներից⁹:

⁸Տե՛ս նոյն տեղում:

⁹Թողոս Բ-ի օրոք 1153 թ. Աստուդ Ա-ն, իսկ 1155 թ. Ղիճ-Արսան Բ-ն արշավակրներ կազմակերպեցին դեպի Կիլիկյան Հայաստան: Տե՛ս Սմբատ Սպարապետ 1956, էջ 171, 173:

Կիլիկյան Հայաստանի համար անհետևանք չին մնում նաև Սալահ ադ-Դինի նվաճումների հետևակրով Մերձավոր Արևելիքի քաղաքական քարտեզի կրած փոփոխությունները, մասնավորապես՝ Զանգիների պետության թուլացումն ու վերացումը¹⁰. Զայած գելսն ԺԲ դարի կեսերից Ռումիկանները զերազատում էին տարածաշրջանում համագործակցել ֆըրանկների, քան Զանգիների պետության հետ, վերջիններս ի սկզբան դրական վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ: Ու Գրուսն նշում է. «Զանգին Եղեսիան թողել էր նրա ընիկ բրիստունյա բնակչությանը՝ կազմված մասամբ հայերից և մասամբ հակոբիկ ասորիներից», ապա ավելացնում է, որ «...հայերը, ընդհակառակը, համակրում էին ֆրանսներին, որոնք միշտ էլ թիշ թե շատ իրենց իշխանությանը նրանց մասնակից էին դարձել»¹¹:

Այսպիսով, ԺԲ դ. Վերջին քառորդին Բյուզանդական կայսրության դիրքերի թուլացման, մի շարք մասնակտական իշխանությունների թուլացման կամ վերացման, Ռումի սելջուկյան և Այ յ ու բ յ ան սուլթանությունների հզորացման պայմաններում Կիլիկյան Հայաստանի համար կարևորվեց Արևելիք խաչակրների հետ հարաբերությունների կայունացումը: Ստեղծված իրավիճակում Կիլիկյան Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու անհրաժշտություն առաջացավ նաև խաչակրաց պետությունների համար:

¹⁰ Զանգիների պետության տարածքը 1181 թ. և վաճեց Սոսոսի արքակության կողմից, իսկ 1183 թ. միացվեց Եզիզուսի սուլթանությանը: Տե՛ս Եախա աճ-Ճին 2009, էջ 60-61:

¹¹ Groussset 1935, էջ 198:

Պատահական չէ, որ որոշ հեղինակներ փորձում են Կիլիկյան Հայաստանը ներկայացնել ընդհուպ որպես խաչակրաց պետություն կամ որպես պետություն, որև իր կառուցվածքով գրեթե չի տարբերվում Արևելյան խաչակրաց պետություններից: Ռ. Գրուտեն, անդրադասնայրվ Երուսաղեմի թագավոր Ամորի Ա-ի և Ռուբիկյան իշխան Թորոս Բ-ի մրջու 1168 թ. կամ 1169 թ. տեղի ունեցած հասկապման ժամանակ քննարկված ծրագրին հայ գործականներին Երուսաղեմի թագավորության զուտերում բնակեցնելու վերաբերյալ¹², նշում է. «Հայերի մի ստվար հատվածի վերաբնակեցումը կարող էր փրկել ֆրանկների տիրապետությունը»¹³, նկատի ունենալով, որ միայն այսպես հնարավոր կյիսեր Երուսաղեմի թագավորությունն ապահովագրել այստեղ մեծամասնություն կազմող մահմեդականների կողմից սպառնացող վտանգից: Հեղինակը երկու բաղադրական ուժերին դիտարկում է որպես Խաչակրաց արևելյան գրեթե համարժեք ներկայացուցիչներ:

ԺԲ դ. 70-ական թթ. վերջին Ռուբեն Գ-ը ձեռնամուխ եղավ Արևելյան խաչակիրների հետ դաշնակցային հարաբերությունների վերահաստատմանը, որնք ընդհանուր էին Սլեհի իշխանական տարիներին: Նշված ժամանակահատվածում Կիլիկյան Հայաստանի համար խաչակիրների հետ դաշ-

¹² Թորոս Ամորիին առաջարկում է, որ Երուսաղեմ ուղարկի 30 հազար մարդ, որպեսզի բրիսոնայսերը կազմեն մեծամասնություն, իսկ մահմեդական թագավորությունը դրւու մնի՝ այդպահվ ամրապնդելով Երուսաղեմի բրիսոնայսական թագավորության դիրքերը: Մանրամասն տէ ս Groussset 1935, էջ 603:

¹³ Նոյն տեղում, էջ 604: Արևելյան խաչակրաց պետությունների ռազմաքարարական կայսրում հայերի ունեցած դերակատարման մասին տէ ս Dédéyan 1997, էջ 153-163:

Խակցային հարաբերությունների պահպանման կարևորության մասին վկայում է նաև 1177 թ. դեկտեմբերից մինչև 1178 թ. մարտ ամիսը խաչակիրների կողմից Անտիոքից դեպի արևելյան գտնվող Հարիմ ամրոցի պաշարմանը հայկական ուժերի մասնակցությունը: Միքայել Ասորին գրում է. «Բայց յետոյ զրոյացաւ բրինձն, և ստեաց երդմանն, և երեք աղաչանօք զնորքն Կիլիկյան իշխանն, և զնաց ի վերայ Հերմին. և ոչ եւս Տէր ՚ի ձեռւ նորա վասն ստորեան նորա, այլ բազումը անկան ՚ի զօրացն Փոանզաց և դարձաւ ամօռով, և զշերին դարձուցն ՚ի Հալպ՝ առեալ երդումն ՚ի նոցանե»¹⁴: Խաչակիրների համար այս ամրոցի գրավումը կարևոր էր իրենց պայեցությունը Հրուսակային Ասորիում մեծացնելու համար, մինչդեռ Կիլիկյան Հայաստանի համար Հարիմից գրավումը մեծ կարևորություն չուներ: Հայերը, հաշվի առնելով Սերձավոր Արևելյում տեղի ունեցած ռազմաքարարական փոխությունները, փորձում էին նաև ձևով խաչակիրների հետ դաշնակցային հարաբերությունները դնել ավելի լուրջ հիմքերի վրա:

Խաչակրաց Արևելյան և Քրիստոնյան Արևմտաւրի բարյացակամությանն արժանանալու ուղղությամբ Ռուբեն Գ-ի հաջորդ քայլը նրա «քաղաքական» ամուսնությունն էր. «Ռուբեն իշխանական, եթե իր նորակազմ պետությունը քրիստոնյա

¹⁴ «Եւ վասն այս յադութեան ամիրայն որ կայր ՚ի Ներիմն, դարձաւ ՚ի Թուրքայ և ենել ընդ Անտարու հեազանդութեամբ. և երդուաւ նմա Քրիստու քողով գրերզն առ նմա. և յեսոյ առեաց երդմանն համ ընդ ինքան զնորքն զիշխանն Կիլիկեցոց, և զնաց առնում զշերին, և ոչ մատենաց զնա Տէր ՚ի ձեռւ նոց, բազի ստեաց Բրինձն երդմանն», Միքայել Ասորի 1871, էջ 485:

պէտությանց բարյացակամ ուշադրության առարկա դարձնելու մտադրությամբ իր հայացքը լատիններուն կողմը դարձուց ու 1181-ին Երուսաղեմ ուխտի գեաց, հոն ինամուրյուն հաստատելով լատիններուն հետ, ամուսնացալ Քարաքայ և Թորոնի իշխան Հիմքինին նզապել առջկան հետ»¹⁵: Այս բարյացականությունը շարունակեց ևս Լևոն Բ իշխանը (բարյացությունից հետո՝ Լևոն Ա բազավոր)։ «...Լեվոն լատիններուն հետ սկսված բարեկամությունն ամրապնդելու հոյսով ամուսնացալ Անտիոքի Բյոյեմոնդոս իշխանի աներորդուն աղջկան հետ, որպեսզի տիկինը իր ազգականներուն ուժով Լեվոնին պաշտպան դառնա»¹⁶:

Նոյն տրամաբանությամբ իր կառավարման ընթացքուն Լևոն Բ իշխանը վերականգնեց ֆրանկներին պէտության կարևոր պաշտոններում, առավելություններ տվեց եկրոպական առևտրականներին, կապեր հաստատեց հոգևոր-ասպետական միաբանությունների հետ՝ «ցանկանալով հայկական Կիլիկիան վերածեավորել Արեւելի լատինական պէտության»¹⁷: Բյուզանդական կայսրության բռուզացանը և Սալահ աղ-Դինի սկազառներին զրուակեո խաչակիրների համար ևս կարևորվում էր տարածաշրջանում վստահելի քրիստոնյա պէտության առկայությունը ի դեմս Կիլիկյան Հայաստանի, որը կարող էր դասնալ հենարան՝ նախապատրաստվող խաչակրաց արշավանքի ժամանակ տարածաշրջանի մահմերական ուժերի դեմ պայքարում:

¹⁵ Սյուրմայան 1945, էջ 21:

¹⁶ Նոյն տեղում:

¹⁷ Mutafian 1993, էջ. 36:

Քննարկվող ժամանակաշրջանում Կիլիկիայի հայոց պէտության համար օրակարգի հարց էր ևս Անտիոքի իշխանապետության հետ հակամարտության հանգուցալումը, որն առանձնապես սրբէլ էր ԺԲ դարի 80-ական թթ.՝ Ռուբեն Գ-ի իշխանակարման տարիներին¹⁸: Անտիոքի իշխանները մշտապես փորձում էին օգտվել հայ-բյուզանդական ռազմական հակամարտությունից և իրենց իշխանությանը միացնել Դաշտային Կիլիկիան: Բացի այդ, Կիլիկյան Հայաստանի համար կարևոր էր ելքը դեպի Սիցերկրական ծով: Երկու պէտությունների միջև առկա էին ոչ միայն տարածքային, այլև քաղաքական գերակայության խնդիրներ: Ակսած 1187 թվականից՝ Լևոն Բ իշխանի իշխանակարման տարիներին, Կիլիկյան Հայաստանը սկսեց բացահայտ հավակնություններ դրսերել Անտիոքի նկատմամբ՝ ցանկանալով ոչ միայն իր գերիշխանությունը հաստատել այստեղ, այլև հնարավորության դեմքում իր գերակայության ներքո ստեղծել հայ-անտիոքյան միություն:

Անտիոքի իշխանապետության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններում շրջադարձային նշանակություն ունեցավ Երուսաղեմի անկումը, որից հետո Սալահ աղ-Դինը զրավեց Անտիոքի իշխանապետությանը և Տրիպոլիի կոմունանը պատկանող մեծ թվով բերդեր և բաղադրներ¹⁹: 1188 թ.

¹⁸ Ռուբեն Գ-ի օրոք հայ-անտիոքյան դիվանագիտական հարաբերությունների հանգամանալից վերլուծությունը տե՛ս՝ Stev-Tenryanus 2007, էջ 133:

¹⁹ Եզիդական զորքերը 1188 թ. ընթացքում զրավեցին Անտիոքի իշխանությանը պատկանող Զարալան, Լարաքիան, Սահյունը, Բայատունը, Ֆիհան, Բակասը, Ծուլը, Բուրգեն, Բագրատ և Դարասակը: Մահմանասն տե՛ս՝ Cahen 1940, էջ. 428-429:

տարածքային կորուստները բռվացրին խաչակրաց պետության հիմքերը, և Կիլիկյան Հայաստանի համար ստեղծվեց հնարավորություն՝ քննարկվող հակամարտությունը վերջանականացես հանգուցալութելու համար. «Հյուսիսային Սիրիայում (Հյուսիսային Ասորիի, Լ.Ա.) Սարահ աղ-Դինի Նվաճումը կատարելապես շրջեց ուժերի հավասարակշռությունը Անտիոքի և Կիլիկիայի միջև. «Խնչպես Կիպրոսը սիրիական (ասորիյան, Լ. Ա.) կողմից, այժմ Կիլիկիան էր, որն ավելի ուժեղ էր, և որը նշանակված էր՝ ծառայելու համար որպես քրիստոնեական նահանջի գիծ»²⁰: Արյունքում Անտիոքի իշխանապետությունն իր հետագա գոյության ողջ ընթացքում ստիպված էր պայքար մղել Կիլիկյան Հայաստանի դեմ:

Անտիոքի դեմ պայքարում Անոն Բ իշխանի առաջին գրձնական բայլերից էր 1191 թ. Բարյան ամրոցի գրավումը, որը թեև այլևս չէր պատկանում Անտիոքի իշխանապետությանը, սակայն սագմավարական կարենը նշանակություն ունեցող այս ամրոցի գրավմամբ ընդգծվում էր խաչակրաց պետության նկատմամբ Կիլիկյան Հայաստանի առավելությունը: «Սարահ աղ-Դինը հրամայեց քանդել բերդը և իրոք քանդեցին: Իսկ սա մեծ վնաս էր մահմետականերին, քանզի Հայոց տեր (Սահիր աղ-Արման) Անոնի որդին (իրն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց նրա կառուցվածքը, կատարելագործեց և այսուեղ նշանակեց իր զիվորների մի խոսք, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը և սրակից շատ տուժեց Զալեսի շրջակայի ժողովուրդը: Այն

միև օրս նրանց (հայերի) ձեռում է»²¹: Իրն Ալ-Ասիրի վկայությունը ցույց է տալիս, որ Անոն Բ իշխանի կողմից ամրոցի գրավումը կարևոր էր ոչ միայն Անտիոքի իշխանապետության, այլև տարածաշրջակի մահմետական ուժերի դեմ պայքարում:

Կիլիկյան Հայաստանի համար միջազգային իրավունքուն էլ ավելի նպաստավոր դարձավ Ղաջ Արսանի (1192 թ.) և Սարահ աղ-Դինի (1193 թ.) մահից հետո, երբ գրեթե վերացավ մահմետական ուժերի կողմից առկա վտանգը: «Սարահ աղ-Դինի մահը 1193 թ. փրկում է հայկական Կիլիկիան, քանի որ հզոր սուլթանն արդեն հասել էր Ամանոսի ստորոտին»²²:

Հաջորդող երկու տարիների ընթացքում Անոն Բ իշխանը գրեթե լիովին հանգուցալուծեց հայ-անտիոքյան հակամարտությունը՝ հօգուս Ռութիկյան իշխանության: 1193 թ. Բաղրասում գերեւարելով Բնիեմուն Գ-ին՝ Անոն Բ իշխանը ոչ միայն լուծեց եղբայրը, այլև բռափեց Անտիոքի իշխանապետությունից ունեցած ստորակայական կախվածությունը²³: «Այժմ արդեն Կիլիկիան էր ավելի հզոր...: Ուստի Ան-

²¹ Իրն Ալ-Ասիր 1981, էջ 273

²² Սուլթանիա 2001, էջ 403: [1193 թ. ուզմարշավի մասին ավելի մանրամասն տե՛ս Տեր-Անոնյան 2017, էջ 121-126 – խմբ.]:

²³ Անոնը ստորակայական կախվածությունը ժամանեցէ Եղբայրն Գ-ից: Ըստ միշտապարայն քայլաբարական ընկալումների՝ իր գերակային հավատարմատան երդում տված ստորական չէր կարող այս երդումը չեղալ հայուսարդել: Ուստի Կիլիկյան Հայաստանի ստորակայական կախվածությունը Անտիոքի իշխանից իր ուժը կվորցներ այս ժամանակ, երբ Վերջինս անձամբ չեղալ համարել այս: Անտիոքի իշխանապետությունից Կիլիկյան Հայաստանի ստորակայական կախվածության մեջ ընկենու հան-

²⁰ Նոյն տեղում, էջ. 582:

Նը վճռել էր օգտվել այդ իրավիճակից...: Եվ լիովին ազատվել ֆրանկների գերիշխանառյան վերջին նշուլներից, ու, ինչու ոչ, հաստատել իր գերակապությունը (Անտիռքի) դրսության վրա»:²⁴ Հենց այս իննդիրներին էր փորձում վերջնական լուծում տալ Լևոն Բ իշխանը 1194 թ. Բնիեմունց Գ-ի հետ Ստում կնքված համաձայնագրով²⁵, ըստ որի Կիլիկյան Հայաստանը ոչ միայն թորագում էր իր ստորակայական կախվածությունը Անտիռքի իշխանապետությունից, այլև նրա նկատմամբ ձեռք էր բերում քաղաքական գերակապություն. «...Երբեմն ոդրով և երբեմն բողոքով, երբեմն գեներով և երբեմն ճարտարութեամբ կը ջանայ Անտիռքի իննդիրը վերցանել...»²⁶: Մեր կարծիքով, Ուրիշինա իշխանի այսպիսի մոտեցումը սոսկ տեղի ունեցած իրադարձությունների տրամաբանական պատասխանը չէր, այլ հստակ կշռադատված քայլ:²⁷

Այս փաստը, որ ջնայած ուժերի հարաբերակցությունը տվյալ պահին հօգուտ իրեն էր, սակայն Լևոն Բ իշխանը իր նպատակին հասնելու համար օգտագործեց զահաժառանգման կարգը, և ոչ սոսկ գեների ուժը. պայմանավորված էր հայոց իշխանի իրավացի համոզմամբ, որ Անտիռքի իշխանա-

գամաների մասին մանրամասն տե՛ս Տեր-Պետրոսյան 2007, էջ 161-162:

²⁴ Cahen 1940, էջ 582:

²⁵ Համաձայնագրի կետերի մասին տե՛ս Սմբատ Սահարապետ 1956, էջ 441; Հմմուն տե՛ս Ernoul/Bernard le Trésorier 1871, էջ 321:

²⁶ Օրույնական 2001, պահանջ 1851:

²⁷ «Լեռներ արյ ժամանակ, իրոք, այնան հզոր էր, որ ցանկության դեպքում ի վիճակի էր Կիլիկյան և Անտիռքի միավորման խնդիրը լուծել գուտ ուազմական ճանապարհով»: Տեր-Պետրոսյան 2007, էջ 234:

պետության հետ բացահայտ ուազմական առճակատումն իր դեմ կհանենք Քրիստոնյա Արևմտաքին, ինչն էլ կիսանգեցներ հայոց պետության մեկուսացմանը տարածաշրջանում:

Բարդ և հաճախ հակասական հարաբերությունները վերը հիշատակված պետությունների հետ խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Կիլիկյան Հայաստանի համար անհրաժեշտություն առաջացրին որոշակիացնել հարաբերությունները նաև Սրբազն Հոռմեական կայսրության հետ: Բյուզանդական կայսրության բուլացման, մահմեդական պետությունների և Անտիռքի իշխանապետության հետ առկա հակամարտության պայմաններում, եթե Սրբազն Հոռմեական կայսրությունը հանդես էր զայիս որպես առաջիկա արշավանքի գլխավոր դերակատարներից մեկը և Քրիստոնյա արևմտությի հավաքական խորհրդանիշը, Ռուբինյանների համար ավելի պարզուց էր դառնում գերմանական կայսրության հնարավոր օգտակարությունն հայոց բազավորության վերականգնման հարցում: Առավել նաև, որ ԺԲ դպրի վերջին քառորդին զնալով ավելի իրատեսական էր դառնում Կիլիկյանում հայոց բազավորության վերականգնման խնդրի հանգուցալումը: Լևոն Բ իշխանին հաջողվել էր Արևելյան Միջնաբերդ ամբի ստեղծել արդեն բավականին ամուր պետական կառույց, որն ավելի ու ավելի էր հզորանում թե՛ քաղաքական և թե՛ ուազմական առումներով. «Լևոնը երիտասարդ պետությանը բերեց լիակատար ներքին զարգացման և վիճակարույց արտաքին ինքնավաստահության»²⁸:

²⁸ Eickhoff 1977, էջ 150:

Անշուշտ, իրադարձությունների նման ընթացքը ձևուսուի էր նաև Սրբազն հովութեական կայսր Տիգրանի Շիկամորուսին, քանզի միջնադարյան իրավաբանական գիտակցության մեջ քաղաքությունը ենթադրելու էր նաև որոշակի քաղաքական կողմարոշում²⁹: Հետևաբար կայսրության թագով Լիոն Բ իշխանի քաղաքության և Կիլիկյան Հայաստակի ստրակայական կամսվածության հնարավորությունը, և, առավել ևս, տարածաշրջանում Հռոմի պասպի և կայսեր կողմից ճանաչված բրիտանեական թագավորության ստեղծման հետանկարը կարող էին դառնալ մեծ գործեական քայլ՝ սրբազն կայսեր՝ համարքիստոնեական գաղափարախոսության կենսագործման ճանապարհին³⁰:

Kilikisches Armenien in den militärpolitischen Prozessen des Nahen Ostens im letzten Viertel des 12. Jahrhunderts Liana Aghabekyan

Die Zusammenfassung

Im letzten Viertel des 12. Jahrhunderts haben die militärpolitischen Veränderungen einen großen Einfluss auf die Beziehungen der christlichen und muslimischen Kräfte, auch auf die weitere Entwicklung der Osten-Westen Beziehungen. Kilikisches Armenien wurde von der byzantinischen Herrschaft schon befreit, hat die Beziehungen mit den muslimischen und Kreuzfahrerstaaten der Region präzisiert und die politische Vorherrschaft über das Fürstentum Antiochia gewonnen. So ist das armenische Fürstentum allmählich ein Teil des christlichen Systems im Kreuzfahrerosten geworden. Das hat den Rubenidischen Fürsten eine Möglichkeit gegeben, um sich auf die Hauptfrage - auf die Frage der Wiederherstellung des armenischen Königreichs - einzustimmen.

²⁹ Սրբազն Հռոմեական կայսրությունում Լիոն Բ-ի թագավորության նշանակության մասին տես՝ Halster 2007, էջ 137:

³⁰ Ծառավելս-հայկական դիվանագիտական հարաբերությունների գործացման կարևոր նախադրյաների մասին տես՝ Halster 1995, էջ. 208:

nigreiches zu konzentrieren. Die Methoden der Lösung dieser Frage müssen auf die äußere Orientierung des Staates nach ostchristlichen oder westchristlichen Umgebungen beeinflussen.

Die Fürsten des Kilikischen Armenien haben im letzten Viertel des 12. Jahrhunderts gekonnt die Diplomatie des armenischen Staates vollständig entsprechend der neuen militärpolitischen Situation der Region zu machen. Die Bestätigung der diplomatischen Beziehungen mit dem Christlichen Westen (mit dem Heiligen Römischen Reich) wurde einer der Schwerpunkte der Außenpolitik des Rubenidischen Fürstentums.

Սառեւանագիտություն

Թողոյան 1988 - Թողոյան Ա., Քյուզանիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատ. :

Թողոյան/Շուրովով/Տեր-Անոնյան/Դավիթյան 2016 - Թողոյան Ա., Շուրովով Ռ., Տեր-Անոնյան Վ., Դավիթյան Գ., Կիլիկյան Հայաստանը ասհմանակից պետական միավորների ընկայումներում, Ե., «Գյուղություն» հրատ. :

Իրբ Ակ-Ասիր 1981 - Իրբ ալ-Ասիր. - Օւար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11., Արարական աղբյուրներ, Բ., Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ. :

Միքայելյան 2007 - Միքայելյան Գ., Կիլիկյայի հայկական պետության պատմություն, Ե., ԵՊՀ հրատ. :

Միքայէլ Ասորի 1871 - Միքայէլ Ասորի, Ժամանակագրություն Տեառն Միքայէլի Ասորիոյ պատրիարքի հանելալի ի հնագոյն գրչագործ, Երևանեան, Սրբյան Յակովիքանց հրատ. :

Մորաֆյան 2001 - Մորաֆյան Կ., Կիլիկյան կայսրությունների խաչերուկում, Ե., Նայերի հրատ. :

Միքան Սպարապետ 1956 - Միքան Սպարապետ, Տարեգիր, Վենետիկ, Ս. Ղազար, ՀԲՀՍ Խորեն Վոր. Լազարեակի հիմնադրամ:

Մյուրմեյան 1945 - Մյուրմեյան Ա., Հայ-լատին հարաբերությունները հոյել-լատին հարաբերությանց լույսով, «Էջմիածին», հունվարի առաջին, էջ 16-23:

Տեր-Անոնյան 2017 - Տեր-Անոնյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Այուբյան պետությունները, Եր., «Տիր» հրատ. :

Տեր-Անոնյան 2005 - Տեր-Անոնյան Լ., Խաչակիրելը հայերը, հս. Ա., Ե., Նախազնի Տեր-Դեռարույանի արխիմիլ և գրադարանի հիմնադրամ:

Տեր-Պետրոսյան 2007 - Տեր-Պետրոսյան Լ. , Խաչակիրները հայերը, հն. Բ. , Ե. , ՀՀ առաջին խախազայի արքին:

Օրմանյան 2001 - Օրմանյան Ա. , Ազգապատռություն: Հայ ուղղափառ եկեղեցու անցերը սկզբեն մինչդեռ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութ, հն. Ա. Եջմանին, Մայր Արքոն:

Բախ առ-Դին 2009 - Բախ առ-Դին, Սալադին. Պուրածություն կրոսունք, ԸՆԲ., „Դիլա”.

Cahen 1940 - Cahen C., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, Librairie orientaliste Paul Geuthner.

Dédéyan 1997 - Dédéyan G., Le rôle politique et militaire des Arméniens dans les Etats croisés pendant la première partie du XIIe siècle, Die Kreuzfahrerstaaten als multikulturelle Gesellschaft Einwanderer und Minderheiten im 12. und 13. Jahrhundert, herausgegeben von H. E. Mayer, Oldenbourg Verlag, München, p. 153-164.

Der Doppeladler 2014 - Der Doppeladler, Byzanz und die Seldschuken in Anatolien vom späten 11. bis zum 13. Jahrhundert, Mainz, Verlag des Römisch-Germanischen Zentralmuseums.

Eickhoff 1977 - Eickhoff E., Friedrich Barbarossa im Orient, Kreuzzug und Tod Friedrichs I, Tübingen, Wasmuth Verlag.

Ernoul/ Bernard le Trésorier 1871 - Ernoul et de Bernard le Trésorier, Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, publiée par M. L. de Mas Latrie, Paris.

Grousset 1949 - Grousset R., L'empire du Levant. Histoire de la question d'orient, Nouvelle édition, Paris, Payot.

Grousset 1935 - Grousset R., Histoire des croisades et du royaume franc de Jérusalem, II, Monarchie franque et Monarchie musulmane, Paris, Plon.

Halfter 2007 - Halfter P., Corona regni Armeniae. Aus der Spätzeit der staufisch-armenischen Beziehungen, Le Muséon, Bd. 120, S. 131-161.

Halfter 1995 - Halfter P., Die Staufer und Armenien. Von Schwaben bis Jerusalem. Facetten staufischer Geschichte (Veröffentlichungen des Allemannischen Instituts 61), Sigmaringen, S. 187-208.

Lilie 1977 - Lilie R., Die Schlacht von Myriokephalon, (1176). Auswirkungen auf das byzantinische Reich im ausgehenden 12. Jahrhundert, Revue des études byzantines, t. 35, pp. 257-275.

Mutafian 1993 - Mutafian C., Le royaume arménien de Cilicie: XII^e-XIV^e siècle, Paris, CNRS.

Շուշան Կյուրեղյան
ԵՊՀ, արարագիտության ամբիոն
ԻԲՆ ԱԼ-ԶԱՈՒՔԻՒ «ԹԱԼՔԻՒ ԻԲԼԻՒ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՎԵՐԱՌՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ Հանրապիտականություն, Իր ալ-Զաուզի,
«Աստանայի խարդավանքները», սուֆիականություն, գիտելիք, Սուննա

اعلم ان الباب الأعظم الذي يدخل منه ايلمن وهو الجبل
«Իմացի՝ իր, որ ամենամեծ դուռը, որով սատանան զախէ է
մարդկանց մոտ, տղոտությունն է»:

ԺԲ դարի սուննիական խալաֆի հանրապիտական¹ մազհարի հետևորդ, կրոնակրավագետ և քարոզիչ Իր ալ-Զաուզիի² «Թալքի Իրլիս» (Աստանայի խարդավանքները) աշխատության բավանակային կազմի և կառուցածքի վերլուծությունը հետարակություն է տախի հասկանալ տվյալ ժամանակա-

¹ Հանրապիտականությունը կամ հանրապիտական մազհարը սուննիական կրոնակրավագետական ջրս դպրոցներից մենք են, որի հիմնադիրն է աստվածաբան և իրավագետ Ահմադ իր Հանրապը (780 – 855թթ.): Այս ուղղության երեկայացուցիչները մուտքամասական իրավունքի առաջնային աղբյուրներ են համարում Կուրանը, Սուննան և մարգարի գինակցների իրավական կարգադրությունները: Տե՛՛ Laoust 1986, որ. 158-162.

² Իր ալ-Զաուզին (արքունական անունը՝ Զամալ ալ-Դին Արք ալ-Խանաց) ալ-Խանաց Արք ալ-Խանան իր Ալի իր ալ-Զաուզի Արք ալ-Խանաց Արք ալ-Խանան իր Ալի իր Սուննամազ Արք ալ-Զաուզ, 1116-1200 թթ.) սուննիական խալաֆի հանրապիտական ուղղության ականավոր գործիչներից էր, Բաղրամի հանրային կառավագիր առաջնորդ, վայելուս էր ժամանակաշրջանի ազգեցիկ պետական գործիչների հովանավորությունը, քարոզության պալատական մզկիթում: Մանրամասն տե՛՛ McAuliffe 1988, որ. 102.

հատվածում մուսուլմանական աշխարհում առկա գործնքացները, այդ աշխարհին հայտնի և հասանելի գիտելիքը և այդ գիտելիքի գնահատումը հեղինակի և առավել լայն ընդգրկմամբ՝ հանրայիշական ուղղության կողմից: «Թափիս Իրշիր» հանրայիշական մագիստրի հիմնարար աշխատություններից է, որում հեղինակը քննադատում է այլ կրոններ դպանղեների, հայամի ներում ձեավորված տարրեր ուղղությունների, մուսուլմանական համայնքի գրեթե բոլոր՝ թե՝ աշխարհիկ, և թե՝ հոգևոր շրջանակների պատկերացումները՝ ներկայացնելով կրաց որպես սատանայի խարեւորյուններին ենթարկված գործեր:

Աշխատությունը³ բաղկացած է 13 զյուի և ենթադրված ներից (ընդհանուր ծավալը՝ 396 էջ), որուր ոչ համաշափ ծավալով, շարադրանքի տարրեր բնույթով և բովանդակյալին առանձին ուղղվածությամբ ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի՝ հանրայիշականությանը հակառակող ուղղությունները և ձևակերպված գիտելիքը: Գրքի առաջին չորս գլուխությունը կարելի է համարել ընդհանուր ներածական: Դրանցում հեղինակը շնորհած է անդրադառնում Իրշիս՝ սատանայի կոնկրետ խարեւորյուններին, այլ ներկայացնում է ընդհանուր տեղեկություններ կրա հնարքների և մարդկանց խարելու մեթոդների, դրանցից զգուշանալու անհրաժեշտության և հնարավոր ձևերի մասին: Սառը ներկայացվում են աշխատության առաջին չորս գլուխությունը՝ իրենց էջային ծավալով:

³ Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է «Սատանայի խարդավանքները» գրքի հետևյալ հրատարակությունը՝
الحافظ الإمام الدين أبو الفرج عبد الرحمن بن الموزي البغدادي المتوفى في سنة
٥٩٧، تلبيس إيلين، دار القلم، بيروت، لبنان، ١٩٨٢، ص ٣٩٦

1. Սուննային և Զամաային հետևելու անհրաժեշտությունը/հավատարմությունը (8-13)
2. Նորարարության և նորարարների դաստապարտումը (13-24)
3. Սատանայի զայթակությունից և հնարքներից զգուշանալը (24-38)
4. Նարդավանքի և մոլորության նշանակությունը (38-39)

Իրն ալ-Զաուզիի աշխատությունը սկսվում է «Սուննային և Զամաային հետևելու անհրաժեշտության» զյուվ: Գրքի այս զյուվում ներկայացվում են այն կարևոր սկզբունքները, որոնց հետևելով հնարավոր է խուսափել սատանայի խարդավանքներից: Ըստ այդ հարկավոր է հետևել մարգարեի սուննային՝ Սուննամար մարգարեի ասածները, արարքները և լուր համաձայնությունը ամփոփող պատումներին, և հավատարիմ լինել «Զամաային», ինչն այս պարագայում մատնաշրջում է հավատացյալների ողջ խումբ (jama'at al-mu'minin) կամ խամանական համայնքը (jama'a islamiyya): Այս առումով տերմինը գրեթե նոյնական է ումնա (մուսուլմանական համայնք) տերմինին: Ումնա տերմինը քանից հանդիպում է Ղուրանում, մինչդեռ Զամաան Սուրք Գրքի բառապաշարում շնորհած ավելի հաճախ այլ հանդիպում է Սուննայում: Ումնան կրոնա-իրավական ընդհանուր հիմքի վրա ձևավորված համայնքն է, մինչդեռ զամանակ հավատացյալների ամբողջությունն է՝ միավորված ընդհանուր հավատով⁴: Այս սկզբունքների ճշմարտությունը հսկատվում է մարգարեին վերագրվող տարաբնույթ մեջքերումներով, օր՝ փոխանցվում է, որ Օմար իրն ալ-Խատուտարը Զարիյայում քարոզելիս ասել

⁴ Laoust 1986, p. 411.

է, որ մի անգամ մարզարեն իրենց դիմելով նշել է՝ «Զեզսից ով ցանկանում է արժանանալ դրախտի ամենալավ բարիքներին՝ պետք է մնա ջամանակի հետ, որովհետև սատանան ավելի մոտ է մենքին, քան երկուսին»⁵:

Սուննային հակառակում էր նորարարությունը (bîd'a), որն ամփոփում էր արագ փոփոխվող իրավանության պայմաններում առաջացող այն «նորությունները», «նորամուծությունները», ընդ որում հանքայիների պնդմամբ վնասայար, որոնց նախադաշը չկար հայիսներում: Ուստի, զարմանայի չէ որ Իրն ալ-Զատուգի գրքի հաջորդ գլուխը նվիրված է վնասակար նորարարության և նորարարների դատապարտությանը: Որպես նորարար էին դիտարկվում ազատ կամքի և բացարձակ կանխորշվածության, մեծ մեղք գործած մուտավակի կարգավիճակի, Նուրակի արարված լինել-շլինելու, Ալ-լահի քնույթին և աստրիքուտներին առնչվող հարցերի շուրջ տարբեր տեսակետներ արտահայտող մուրազիները⁶, կա-

դարիները⁷, մուրջիները⁸ և այլն: Իրն ալ-Զատուգի մերժողական դիրքորոշումը խւամում ցանկացած նորարարության և նորարարների հարցում բնականորեն պայմանավորված էր Աբրասյան խալֆայության անկման և խալֆայությունում մշտական մրցակցության մեջ տարբեր ուղղություններից մեկն ու մաքրուր պահպանելու անհրաժեշտությամբ:

Այսպիսով, աշխատության առաջին երկու գլուխները մեր դիտականից պատասխանում են «փեղ անե» և «փին շանել» հարցերին՝ իրական ուղղահավատ մուսուլման լինելու համար:

Աշխատության երրորդ գլուխը վերաբերում է սատանայի խարդավանքներից խուսափելուն ու զգուշանալուն: Պետք է խմանալ, որ սատանան, որը խարդավանքների է ենթարկում այլոց, առաջինն է, որ խարդավանքի է ենթարկվել: Այս զիլում մեջերկում է Սուհամանաց մարզարեի կնոջը՝ Ախշային և մարզարեին վերագրվող այն հայիսը, որի համաձայն յուրաքանչյուր մարդու ուղեկցում է սատանան: Փօխանցվում է, որ Ախշան ասել է, թե Ալլահի մարզարեն մի զիշեր դրւու է եկել նրա մոտից և նա (Ախշան) խանդի է: Ապա մարզարեն վերադառնել է և տեսել Ախշային այդ վիճակում և հարցել: «Ի՞նչ է կատարվում թեզ հետ Ախշա, խանդո՞ւ՞մ ես»: Ախշան

⁵ Տէ՛ ս 9 օս +1982, «الجواب، يزيدي».

⁶ Սուրավիլիականությունը քայլամի (ռացիոնալիստական սատվածարանության, տուններական խալամի սատվածարական տեսական համակարգ, որը կրունական ուսմունքի հիմնավորման նպատակով է տրամադրության փաստարկներ, քանականությունից բխող պարագայցներ) ուղղություններից է, ձևավորվել է Ը դարում և հսկայական դեր է կատարել Ը-Թ դարերի Դամակոսի և Բաղդադի կրօնարարական կյանքում: Ուղղության զադադարախոսության հիմնաժողորն է Վասիլ Իրն Արան: Սուրավիլիների ուսմունքի հիմնարար զադադարական դրսյթները հենց կին քանականության և տրամադրանության փաստարկների վրա: Խելամ: Հնակլոպեդիկ հայության մեջ՝ 175-176:

⁷ Կաղարիները (արար, կադար՝ նախախեամություն) մարդու կամքի բացարձակ ազատության տեսարժան կողմանակիցներն են: Ի տարբերություն իրենց հակադրված շաբարիների կամաց համարում են, որ հենց մարդը է իր արարքների ստեղծողը: Մարդական տես և նոյն տեղում, էջ 125:

⁸ Սուրջիները (արար, հետաձգել քատից) հետաձգում էին մեղք գործած մարդու կարգավիճակի վերաբերյալ դատողության կացումը մինչև Անեղ դատաստակի օրը: Տէ՛ ս նոյն տեղում, էջ 172:

պատասխանել է. «Բնչակե⁹ ս կարող է իմ նման կինը շխանդել քո նմանին»: Նա (մարզարեն) պատասխանել է. «Քո սատանան է եկել»: Արջան հարցրել է. «Արյոց՝ ինձ հետ սատանա կա»: «Այո»: «Եվ բոլոր մարդկանց հետ է»: «Այո, նա, բոլոր մարդկանց հետ է», ասել է Մարզարեն: «Քեզ հետ նոյսակէ ս», -հարցնում է Արջան: «Այո՝ սակայն իմ տերն օգնել է ինձ և նրան մուտքաման է դարձել¹⁰», -եզրափակել է մարզարեն:

Այսպիսով, Սատանան ուղեկցում է բոլորին, սակայն Ալլահի կողմից պատգամված միջոցներով՝ Նորան ընթերցելով և Ալլահին հետևելով հնարավոր է խուսափել խարդավանցից: Այս բամենում տրվում է «ինչպես խուսափել Սատանայի խարդավանքներից» հարցի պատասխանը:

Տառկանշական է, որ «Սատանայի խարդավանքները» աշխատության միայն չորրորդ զինում է հեղինակը պարզաբանում, թե ի՞նչ է խարդավանքը և ի՞նչ է մողրությունը: Այստեղ միայն սահմանվում է, որ խարդավանքը (tahib) կեղծիքը ճշմարտության տեսքով ներկայացնելուն է, իսկ մողրությունը (gurur) տպիտության մի տեսակ է, որի արյուներում կեղծիքը ընդունվում է ճշմարտության, վատը լավի փոխարեն¹¹:

Ըստ այդմ, սրան հաջորդող զույգներն արդեն անդրադառնում են կոնկրետ անձանց, կոնկրետ խմբերի նկատմամբ սատանայի խարեւություններին: 5-13 զույգներում մասնամասն վերլուծվում են նրա խարեւությունների հիման վրա ձեւավորված խալամական համայնքի տարբեր շերտերն ու ըն-

⁹ Muslim, Sahih, 2815, Book 52, Hadith 64.

¹⁰ سَعِدُ بْنُ عَبْدِ الرَّحْمَنِ الْخَوَافِيِّ، مُؤْلِفُ الْجَوَزِيِّ، ص 38-39، 1982.

դունված արատավոր պոակտիկաները, որոնք կներկայացնեն հաջորդաբար:

5. Կրոնների և հավատալիքների հարցում նրա (սատանայի) խարդավանքների հիշատակումը (39-109)

Այս զինում ներկայացվում են հիմնականում այլ կրոնների և հավատալիքների հարցում սատանայի խարեւությունները, դրանք թնարկվում են աշխարհիկ անձանց, արարջի գոյությունը հերքողների, հորուկովներին հավատացողների, կոտորերը երկրապազդների, կրակը երկրապազդների, ինչպես նաև նախախամական շրջանի արաբների՝ ջահիլիայի, մարզարեւությունը մերժողների, հրեաների և քրիստոնյաների, զրաքաշականների, ինգու վերակենտանացմանը հավատացողների թնադատության օրինակով: Նոյն զինի վերջին երեք ենեթաբաժինները վերաբերում են խալամական համայնքի տպացին Ճեղուսների արյուներում ձևավորված ուղղությունների՝ խարիշների¹², ուժիղինների¹³ և բատինիների¹⁴

¹¹ Խարիշները (արար. խարաջ՝ դուրս գալ, լրել) խալամական հիմնական ուսմանից մի շարք պատճառներով (կրոնական, զաղափարական, քայլարական) առաջինց դուրս եկած, առանձանացած մուտքամաններն են 657 թ. տեղի ունեցած Միջֆինի ճակատամարտից հետո 12 000 մուտքաման լրեց Այի իր Արի Տալիբի ճամբարը մեղարեկով նրան, ինչպես նաև նրա հակառակորդ Մուավյա իր Արու Սուլիմանի Ալլահի կամքը շնորհնելու և հետևաբար հավատացալ լինելուց հարածովկեր մեջ Խարիշները հենվելով «Միայն Ալլահին է դաստասանը» սկզբունքի վրա մահվան դաստապարտեցին Ալի իր Արի Տալիբին և Սուլիմային, ինչի արյուներում 661 թ. Ալին սպասելց, իսկ Սուլիմային վիրավորվեց: Սակայն սույն տես՝ Պետրով 1966, с. 30-62.

¹² Իր ալ-Զաուզին ուսիփի (արար. ուսիփան՝ հերքի) է անվանում շիաներին, որոնք անօրինական են համարում ուղղահավատ խա-

քննադատությանը: Սատանայի անմիջական խաբեռթյուն-ներին վերաբերող այս հատվածում նկատում ենք ժամանակագրական որոշակի տրամաբանության պահպանում:

6. Գիտության տարրեր ճյուղերի գիտնականների նկատմամբ սատանայի խարդախների հիշատակումը (109-128)

Գրքի այս բաժինը վերաբերում է գիտնականների, որոնց թվում Նուրանը ընթերցողների, հադիսի հետևորդների (Ասհար ալ-հադիս)¹⁴, ֆակիհների, քարոզչների և պատմչների, լեզվի և ադարի մասնագետների, պոետների քննադատությանը:

Այս հիշատակումը ևս ժամանակագրական տրամաբանության սահմաններում է. Ը դարից սկսած հավատացալների կտրուկ աճին զուգահեռ, ամրագրված գիտելիքի համակարգման, գիտական և գոման անհրաժեշտությունից

լինենք՝ Արու Բաբրի, Օմար, Օսմանի իշխանությունը: Մահրամասն տե՛ս 95-94 մ, 1982 թ, Ան. الجوزي.

¹³ Իրն ալ-Զատուղին բատիկն է անվանում այն մարդկանց, որոնք ձևացնում են, թե մուտքամատ են, հաստատում են Ալլահի ճշմարտությունը և ըլլուսում երա մարզաք Սուլհամմադին, սակայն պերուն են, որ Նուրանի այսակեր ունեն նաև ներքին թաքված իմաստներ, որոնց իմացությունը միայն ընտրյաներին է հասանելի: St' u 99, 1982, Ան. الجوزي, 95-94 մ.

¹⁴ Ասիար/Անլ ալ-Հադիս («Հաջիսի հետևորդները»/հի ալ-հադի) Ը դարսն իսամամում ձևալորված ուղղություն է, որի հետևորդները մերժում էին կրոնահավական հարցերում ցանկացած նորարարության կիրառում և հետևում էին միայն Ալլահի գրքին (Նուրան) և Ամրագրեկ Սուլհամմադին: Նուրանց հակադրվում էին «Կարծիքի հետևորդները» (հիշեալ-բայ), ովքեր իրավական հարցերում հետևում էին սեփական կարծիքի և տրամաբանական դիտարկումների վրա: Մահրամասն տե՛ս Ա. Իսլամ, Էնցիկլոպեդիческий словарь, 1991, ուշ. 24-25.

ելնելով, գիտելիքի ընդհանուր համակարգից սկսվում է առանձին գիտական ուղղությունների ձյուղագրման գործընթացը, որը շարունակվում է մինչև ժԴ դարը:

Իրն ալ-Զատուղին այս գլուխ հիշատակում է սատանայի որոշ մերժեայրություններ՝ գիտնականներին խաբելու համար օգտագործված: Հաջիսի հետևորդներն, ըստ Իրն ալ-Զատուղի, դադարել են գիտելիք վնարել, իրենց ողջ կյանքի ընթացքում ձամփորդում են հայդիսներ լեզու և հավաքելու, երկար փոխանցման շղթաներ և հետաքրքիր տերսուր գտնելու համար, ինչի արդյունքում չեն կարողանում բացատրել դրանց իմաստը: Նրանք չեն կարողանում տարբերակել հավասարի և ոչ հավասարի փոխանցումները¹⁵: Ֆակիհներին (կրոնահարավագետներին) սատանան խաբել է, թե ֆիկիր (կրոնահարավական գիտությունների համարի) միակ կրոնական գիտությունն է, և ֆակիհները հայդիս գիտնականներին համարում են մարդիկ, որ ոչինչ չեն հասկանում: Նրանք մոռանում են, որ հայդիս ֆիկիր հիմքերից է: Մեկ այլ խոնդիք է այս, որ ֆակիհները կրոնահարավական որոշումներ են արձակում առանց համապատասխան գիտելիք տիրապետելու: Նոյն կերպ սատանան խաբել է թերականներին և լեզվաբաններին, որոնք հավատում են, թե խայտի ամենաեղինակավոր գիտնականներն են, քանի որ արաբերենը և դրա բերականությունը Նուրանը հասկանալու միակ միջոցն են¹⁶: Ըստհանուր առմամբ այս բաժնում Իրն ալ-Զատուղին ներկայացնում է ընդհանուր գիտելիքից ձյուղագրված կրոնական գիտությունները:

¹⁵ St' u 111, 1982, Ան. الجوزي, 95-94 մ.

¹⁶ St' u 122, 1982, Ան. الجوزي, 95-94 մ.

րի և այն կրողների հավասարությունը: Հեղինակը կարևորում է, որ Շուրաք ընթերցելը, հայիսներ հավաքագրելի կամ Փերփաներ (կրոնախրապական կամ ծիսական որևէ հարցի վերաբերյալ առաջարկված լուծում կամ հրահանց) արձակելը չվերածվեն մեխանիկական աշխատանքի և ավելի շատ ուշադրություն դարձվի այս գիտակարգերի բովանդակությանը, այլ ոչ դրանց տեխնիկական կամ քանակական բնութագրիչներին:

7. Կառավարիչների և սովորանների նկատմամբ սատանայի խարդավանքները (128-130)

Իրն ալ-Զառուզին կառավարիչներին և սուլթաններին ևս ներկայացնում է որպես սատանայի ծուղակում հայտնվածների. սատանան նրանց հավաստիացրել է, թե Ալլահը տիրում է իրենց, ուստի շնորհել է այդ դիրքը: Իրն ալ-Զառուզին գոտում է, որ երանք սեփական կարծիքի հիման վրա որոշումներ են կայացնում և կործանում կրոնեց, ոչ գիտակ մարդկանց նշանակում են մարդկանց կառավարելու կարևոր գործին, սպանում նրանց, ում պետք չէ սպանել, չափից դուրս շատ գումար ծախսում, այցելում ուղղամիտ մարդկանց և խնդրում նրանց աղոթել իրենց համար՝ կարծելով թե այդպէս իրենց մեղքերը նվազում են¹⁷:

Այս դրվագները ներկայացնում են անկման փուլում զբանվոր և մասնատված Աբբասյան խալիֆայության ճշնաժամը:

8. Սատանայի խարդավանքները երկրպագողների նրկատմամբ՝ պաշտամությաին հարցերում (130-145)

Այս զիսում ավելի մանրամասն քննվում են իսլամի հիմքորվ պահանջնող գործողությունների ժամանակ մուտավանների կողմից թույլ տրվող սխալները, աղոթքի, Շուրաքի ընթերցման, հաջի, լվացման, պասի և այլ հարցերում սատանայի խարդավանքները: Սատանան նրանց համոզել է, որ երկրպագությունը և ծեսերը ավելի կարևոր են, քան գիտելիք վնասորելը:

9. Սատանայի խարդավանքները ասկետների (zāhid) և երկրպագողների/ճգնավորների ('âbid) նկատմամբ (145-155)

10. Սատանայի խարդավանքները սուֆիների¹⁸ նկատմամբ (155-365)

Գրքի իններորդ և տասներորդ բաժինները վերաբերում են խալամում միստիկական ուղղության հետևողների գործողությունների նկարագրմանն ու քննադատությանը: Հեղինակն ասկետներին, երկրպագողներին/ճգնավորներին և սուֆիներին անդրադասում է աշխատության առանձին զլուխներում՝ այդպիսով չնույնացնելով զահիյներին և արդիներին սուֆիների հետ: Ներկայացնելով ասկետներին և երկրպագողներին Իրն ալ-Զառուզին նշում է, որ սատանան նրանց հետապնդյամբ խարստ է՝ իրենց գիտելիքի պակասի պատճառով, ինչի արդյունքում վերջիններս հրաժարվում են անզան-

¹⁷ Համաձայն «Թարիխի»՝ «սուֆի» տերմինը պատել է կիրառութ շարում, սուֆիզմ (tasawwuf) նշանակում է ինքնակտարարացործում (riyâdâ an-nafs), դիմադրություն ընույթանը (mujaddada), ինչը սուխանում է զափէ արասները և պարտարում ասկետականություն (zuhd), համերություն (şabır) և այլ որակներ, որոնք արժանի են գովասանից այս աշխարհում և այլ պարզեցների հաջորդ կյանքում: Մասրամասն տե՛ս ս 157, 1982, ին الجوزي، ص 129:

աշխարհիկ կյանքի այն բարիքներից, որոնք բույլատրված են: Սովորականությունն, ըստ Իրն ալ-Զաուգիի, ծայրահեռ ասկետականությունն է, որը դրսություն է խւամում անընդունելի պրակտիկաների կիրառմամբ¹⁹:

«Թարիխ Իրլիս» աշխատության ժ զլուխը, որը ծավալային առումով գրքի կենցից ավելին է (210 էջ), ևվիրքած է սովորելի և նրանց գործողությունների դատապարտմանը: Գրքի հեղինակի առավել մեծ շեշտադրումը սովորականության վրա պայմանավորված է այլ հանգամանքով, որ ժք դարում այն դարձել էր սունիհականության հիմնական «մրցակիցը»²⁰: Ի տարբերություն գրքի մյուս զլուխների, որտեղ պարզապես նշվում է տվյալ կրոնական ուղղության անվանումն ու հևարքները, որի միջոցով սատանան խարի է նրանց, այս զլուխը յուրօրինակ աղբյուր է սովորված տեսության և պրակտիկայի վերաբերյալ: Գլխում կա մեծ տեսական նյութ սովորական ծիսակարգերի, սովորելի հազուսությունների և այլին մասին: Հեղինակը հաստուկ անդրադարձում է այն խնդրին, որ սովորական զրականության

¹⁹ Անընդունելի գործողություններից են համարված առվը, աղբատությունը, զայթակդրությանը տրվելը, խւամանական ծեսերում սովորելի ներմուծած անհարկի փոփոխությունները, բրյու պատառության հագուստ կրելը, երածշոտություն լսելը, ծիսական պարերը և այլն: Նույն տեղում, էջ 158-160:

²⁰ Ամերիկացի արևելագետ Ջորջ Սակոյիսին հրաժարվում է հանքավայրի անհաջող հակասություրը: Նոր պատմամաք թէ՝ հանքավայրականությունը, թէ սովորված ձևափորվել է Նորանի տերատը խորը ուսամասիներու արդյունքում, երկու ուղղությունների հետնորդներն էլ մուսուլմանական ավանդույթի տառին և ոգուն խստըն հետևելու կողմանակիցներ են: Տե՛ս Makdisi 1974, pp. 60-62.

մեջ անզամ չորս ուղղադավան խալիֆներն են ներկայացվում որպես միատիկներ, ինչն արփում է, անշուշու, սովորելի հեղինակությունը մուսուլմանական համայնքում բարձրացնելու համար: Այս մերողի կիրառման արդյունքում որոշ աշխատություններում հենց սովորված հակառակորդ Իրն ալ-Զաուգին է հայտնվել սովորելի հեղինակությունների շարքում²¹:

Իրն ալ-Զաուգին կորուկ ընադատում է սովորելի հեղինակավոր զիտնականների, անզամ շափավոր սովորելի դիրքորոշումները, մեղադրում նրանց ավանդական զիտնակարգերի անտեղյակության մեջ, դատապարտում նրանց պրակտիկան նրանց սովորույթներն ու ծեսերը հայտարարելով խալմին հակասող վնասակար նորարարությունն, ընսադատում նրանց աշխարհիկ կյանքի բարիքներից և զիտությունից հեռանալու համար²²:

11. Սատանայի խարդավանքները բարեպաշտ մարդկան նկատմամբ՝ հրաշքների առնչությամբ (365-375)

12. Սատանայի խարդավանքները հասարակ մարդկանց նկատմամբ (375-389)

13. Սատանայի խարդավանքները բոլորի նկատմամբ՝ հույսը երկարացնելու միջոցով (389-393)

Գրքի վերջին երեք բաժինները մասնավոր դեպքերի օրինակով ներկայացնում են սատանայի խաբեությամբ հրաշքներ տեսնելը, կամավոր սկզբունքով ոչ պարտադիր արարությունների առաջականացումը:

²¹ Կհոմ 1985, cc. 173-174.

²² «Երբ ևս (սատանան) մարեց նրանց (սովորելի) համար զիտելիքի լոյսը, նրանք ընկած մոլորության մեջ: Այս մարդկանց նպատակներն, իրապես, լավն են, անկայի նրանք շեղվել են ճշմարիտ ուղղուց:» Տե՛ս 159-158, ս. 1982, լույս ալ-ջոզ̄ي, ص 61.

դուրյունների մասնակցելը և պարտադիմները բաց թողնելը, և այն խարեւոքյունները, որոնց միջոցով աստանան համգում է մարդկանց հետաձգել իրենց այս կամ այն անելիքը և ծովանալ իրենց պարտականությունների կատարման մեջ:

Այսականվ, զրի 13 բաժիններն ու ենթաբաժիններն անդրադառնում են մուտքամանական գրեթե բոլոր ավանդական զիստակարգերի, մասնավորապես կրոնահիմքական դպրոցների վեճերի և աստվածաբանական ուղղությունների զարգացման տարրերությունների արդյունքում ձևափրկված զիստելիքը ու այն կրողեների քննադատությանը: «Թալբի Իբլիսի» կառուցվածքի ընտրությունը լավագույնս արտացոլում է այն ժամանակաշրջանը, ոտքիալ-քաղաքական իրավիճակը և այն խնդիրներն ու վտանգները, որ զգում էին համբայինները իշխամական համայնքում ԺԲ դարում: Անկախ զլուխների բովանդակային առանձին ուղղվածություններից զրի բոլոր բաժիններում Սատանայի խարեւոքյուններին ենթարկվելու դյուրինությունն ու անհնարինությունը քննվում է տղիսություն-զիստելիք հակադրությամբ:

Structural Analysis of ‘Ibn al-Jawzi’s “Talbīs Iblīs”

Shushan Kyureghyan

Abstract

The article presents a structural analysis of the book *Talbīs Iblīs* (The Devil's Deceptions) by the 12th century jurisprudent, traditionalist, historian and preacher 'Ibn al-Jawzi'. In 13 chapters and subsections of the book, the author discloses Iblīs's tricks and deceits against Muslim communities, as well as criticizes the knowledge formed as a result of disputes between schools of jurisprudence and ideological differences of Muslim sects. In order to understand the content-logical sequence of the mentioned sections, the criticized communities and actions presented in each chapter are examined.

The structure of the book reveals the knowledge framework available to the Islamic community at that time, shows the peculiarities of the processes existing in the Muslim world and the dangers threatening that community according to the Hanbalis.

Մատենազիոնություն

- Laoust 1986 - Laoust H., "Djamā'a", The Encyclopedia of Islam, Vol. 2, Brill E. J., Leiden, pp. 411-413,
 Laoust 1986 - Laoust H., "Hanabila", The Encyclopedia of Islam, Vol. 2, Brill E. J., Leiden, pp. 158-162,
 Makdisi 1974 - Makdisi G., "The Hanbali school and sufism", Humaniora Islamica, vol II, pp. 61-72,
 McAuliffe 1988 - McAuliffe J. D., *Ibn al-Jawzi's Exegetical Propaedeutic: Introduction and Translation // Alif: Journal of Comparative Poetics*, No. 8, Interpretation and Hermeneutics, Cairo, pp. 101-113,
 Muslim - Muslim, Sahih, 2815, Book 52, Hadith 64,
 Ислам, Энциклопедический словарь, 1991, Отв. Ред. С. М. Прозоров, «Наука», Главная редакция восточной литературы, Москва,
 Кныш 1985 - Кныш А. Д., "Ханбалитская критика суфизма" (по материалам «Талбис Иблис» Ибн ал-Джаузи), Письменные памятники и проблемы истории культуры народов Востока, XVIII годичная научная сессия ЛО ИВ АН СССР (доклады и сообщения), Часть 1. Москва, сс. 170-175,
 Петрушевский 1966 - Петрушевский И. П., Ислам в Иране в 7-15 веках, Издательство Ленинградского Университета,

ابن الجوزي، 1982، تلبيس إبليس، دار القلم، بيروت، لبنان، ص ٣٩٦

Գագիկ Հանիելյան
Սատենադարձարան
ՀԱՅԵՐԸ ԺԴ ԴԱԻ ՄԱՍԼՈՒՔՅԱՆ ԿԱՄԻՐԵՈՒՄ.
ԽԻԶԱՆԱԹ ԱԼ-ԲՈՒՆՈՒԴ (HIZĀNAT AL-BUNŪD)
ՀԱՅԱԲՆԱԿ ԹԱՂԱՄԱՍԸ

Քանայի բատր. Կոյիլյան Հայաստան. Մամրայան սուվանություն, ուազմագերիներ. Կահիրեի միջնարքը. Խիզանաթ ալ-Բունուդ մամրայան պատմագրություն և ալ-Մակրիզի, ալ-Ցուսուլի:

Ֆարիմյան խայիֆա ալ-Ջաֆիրի կատավարման տարիներին (կառ. 1021-1036 թթ.) ֆարիմյան մեծ պարարքի կողմուն՝ «Տոնական Շարպասի» (Bab al-Id) և al-Sawāk պալատի միջև կառուցվել է Ահշան ալ-Բունադ («Հրոշների պահեստարան») անոնք կրող զինատուն-զինապահետոր: Տարածքը մարտական զինաշանների, զենուզուահի, սպառազինության պահեստ և «արտադրամաս» է ծառայել մինչև 1068 թ.: Մամլուքյան պատմիչ Սոլիհ ալ-Հին Իբն Արդ ալ-Ջահիրը Կահիրեի պատմաաշխարհագրական նկարագրությանը նվիրված իր երկում, հիշյալ թվականին պահեստի հետ պատահած մասին զում է. «Այս պահեստոց զինապահետ էր «Եզիզուական» պետության՝ օրոք: [Հշշրայի 4/61

¹ Բնագրում՝ *al-Dawla al-Misriyya*: Բացի «Եզիզուու» նշանակությունից, միջնադարյան արաբական աղյուսիելում *Misr* տեղանունը գործածվել է նաև «Հին Կահիրե» նշանակությամբ՝ նոյնն է, թե «Յուստաս», որը եղել է Ֆարիմյան խայիֆայության մայրաքաղաքը: 970 թ. Յուստասի հյուսիսարևելյան կողմում կառուցվել է Ֆարիմյան խայիֆաների նոր վարչական մայրաքաղաքը՝ Կահիրեն, որը՝ ընդարձակվելով և ծաղկելով, ասահճանաբար յուրացրել է նաև նրա՝ ֆինանսական և տնտեսական մայրաքաղաքի գործառությունը: Հետևաբար, *al-Dawla al-Misriyya* արտահայտության տակ այսունի պետք է հասկանալ Ֆարիմյան խայիֆայությունը:

թվականի Սաֆար ամսի 6-ին (1068 թ. դեկտեմբերի 5) ալ-Սուսրանիի [թի-Լ-Խախ] իմամը Սաադ ալ-Խաւային, ով հայտնի էր «ալ-Սաւամ պայյը» (բառացի՝ «խաղաղություն թեզ», «ողջուն») անունով որպես սուլռ նվիրարքերց Խանաթ ալ-Բունադ-ում եղած զենուզերից: Նա ամրողաց վերցրեց 1700 ուկեզօծ վահան, ինչպես նաև ոսկյա և արծաթյա զավազաններ, ուազմամիջերոց: [Բայց] այդ միջոցներ սպասավորներից մեկի ձեռքի մումից կայծ բռավ վուշով լի պարկի և ասպաներների մեջ, և արվեց: Պահեստն ամրողությամբ հրկվագեց, և ոչ միայն պարագաները ուղղվեցին Կահիրեի բնակչությունն զախեցական այդ հրդեհից²:

«Հրոշների պահեստարան»-ի վերաբերյալ ամենաընդարձակ հաղորդումն արաբ հեղինակներից գտնում ենք ալ-Մակրիզիի (մահ. 1442 թ.)՝ Կահիրեի պատմաաշեղազրական նկարագրությանը նվիրված երկում՝ *Al-Mawâdî ՚z wa-l-i ՚tibâr bi-dikr al-hiṣṭat wa-l-aṭār-ում* («Հորդողներ և խրատներ քաղաքամասերի և հոլչարձանների նկարագրության համար»)³, որը

² Ibn 'Abd al-Ẓāhir 1996, ս. 46: Իբն Արդ ալ-Ջահիրի այս հաղորդման աղյուսը ալ-Ղաշիդ իրեն Զուբայրի (ԺՇ դար) *Kitâb al-dâḥâ'ir wa-l-tâhâf* երկու է, ով ներկայացնում է, թե ինչ զանձնի ու հարստություններ են ամբարված հրո ճարակ դարձած «Հրոշների պահեստարան»-ում: Հման: Ibn Zubayr 1959, ս. 251-252:

³ Բացի ամրողական տարբերակից, մեզ են հասել այս երկի ինքնափր սեպագի (musaqawada) երկու հասորեր: Ըստ որում սեպագր տարբերակի շատ հասկածներ, խիստ արժեքավոր լինելով, դրու են մասցի վերջնական խմբագրությունից: «Ալ-Խուսաս»-ի վերջնական խմբագրությունն առաջին անգամ հրատարակվել է Կահիրենում դեռ ԺԹ դար կեսերին: Տե՛ս Al-Maqrizî 1853/1854: Այսան Ֆուադ Ասյիլիի պատրաստել է կահիրյան հրատարակության նոր ճշորդտված տարբերակը՝ ամրողացնելով այս ինքնափրի

մասնագիտական գրականության մեջ ավելի շատ հայտնի է «Ալ-Խիտատ» անունը⁴: Ալ-Մակրիզին հիշալ տարածքի

մասերի հրատարակությամբ: Տե՛ս Al-Maqrizi 2002-2004 և Al-Maqrizi 1995: Թակի որ երկի իմրեազիր մեզ հասած մատերիալ պահպանված է «Խիգանարա ալ-բունույ»-ի վերաբերյալ հատվածի ավելի ընդարձակ տարրերակ, ուստի հետագա շարադրակում առաջին հերթին ձեռքի տակ կունենանք հենց *tusawwada*-ի հրատարակությունը, իսկ մոտ երկու հրատարակությունները գույահետ կիրարկենք:

* *Խիգանարա ալ-բունույ* վերաբերյալ ալ-Մակրիզին «Ալ-Խիտատում» եղած եղած հարորդման վրա մեզանից առաջ ուշադրություն են դարձել եզիզանարա պատմաբան Գերզ Մըրկեաթը, Պաուլինա Լիցելան, Ժուլիեն Լուազըն և Գարի Լեյզերը: Բայ Նրանցից Գ. Մըրկեաթը հայերն է թարգմանել «Ալ-Խիտատ»-ի համապատասխան հատվածը, թեև առանց պատմական մեկնաբանության Տե՛ս Մըրկեաթ 1947, էջ 128-130: Ալ-Մակրիզին «Ալ-Խիտատ»-ից քաղվածական թարգմանություններ ներկայացնող իր այս արժեքովը աշխատությունը գրեին Գ. Մըրկեաթը հիմնվել է Դ դարի սկզբի մի հրատարակության (1908 թ.) վրա: Աշխատության հրատարակության ժամանակ «Ալ-Խիտատ»-ի իմրեազիր մասերը դեռ հայտնի չեին գտնությանը, իսկ վերջնական տարրերակից, ինչպես նշեցինք, ալ-Մակրիզիի խմբագրական աշխատանքի արդյունքում ընդարձակ և խիստ կարենք հաստվածներ են դուրս մնացել: Մրանում մեեք կիամնովենք ներքում:

Ժուլիեն Լուազն մամլության Կահիրեաւ ֆրանք գերիների ներկայության վերաբերյալ առանձին հոդված ունի, որում, հիմք ընդունելով «Ալ-Խիտատ»-ի տեղեկությունները, «Խիգանարա ալ-բունույ»-ը ներկայացրել է որպես բացատական ֆրանքան ընակատեղի՝ ինչպես ինքն է ձևակերպում «Կահիրեաւ վաղուց հաստատված» հայերի մասին միայն մի տեղ հարեանցի հիշելով՝ պարզա-

մասին գրում է, որ «այնտեղ բոլոր արհեստերում փայլող լշորջ 3000 արհեստավոր կար»⁵:

Կրաքազիր հեղինակների հաղորդմանը՝ այս հրդեհից հետո «Հրոշների պահեստարան»-ի շինույթունները վերածվել են բանահի, որտեղ սովորաբար կալանքի տակ էին պահվում նախկին բարձրաստիճան պաշտոնյաները՝ վեզիրները, եմիրները և այլն⁶: Եզիզանարա Այլուրյան և հետո ևս Սամլության դիմաստիաների սուլթանների իշխանության օրոք տարածքը շարունակել է բան ծառայել ընդհանուր մինչև ԾՌ դարի առաջին տասնամյակը, երբ այն բնակեցվել է հայ և այլ բրնձունյան ռազմագերիներով: Հարկ է, որ այստեղ կանգ առնենք համառոտապես ներկայացնելու, թե ինչ հանգամաներներում էին հայ գերիները հայտնվում Սուլթանության մայրաքաղաքում:

ԾՌ դարի սկզբներին Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի և Ասորիի Մամլության տուպանության բաղադրական և դիվանագիտական հարաբերությունները շարունակում էին

պես որպես «Խիգանարա ալ-բունույ»-ի գինետների այցելուներ: Հետաքրոջի այս ներառությունների պատճառը «Ալ-Խիտատ»-ի տեղեկությունների թերի վերլուծությունն է և անտեղյակությունն այլ սկզբնալբրությունների (օրինակ, ալ-Յուսուֆիի) հաղորդումների: Տե՛ս Loiseau 2011, էջ 37-52: Այս բացը մեեք կիորդենք լրացնել հետագա շարադրակում: Վերջինս է Գ. Լեյզերն է օգոստոսին՝ «Ալ-Խիտատ»-ի տեղեկությունները միջնադարյան մերձավորաբնեյան հասարակություններում մարմավաճառության և հասարակաց տերի թեման ուսումնաշիրելիս: Տե՛ս Leiser 2017, էջ 140-142: Բայ Ա. Լիցելայի հողմածները տե՛ս ներքում՝ ծիրզը, 27:

⁵ Al-Maqrizi 1995, էջ. 141.

⁶ Տե՛ս Ալու, էջ. 144:

լարված լինել: Արդեն շուրջ կես դար շարունակվող հայ-մամլության հակամարտությունը չէր դադարում: Սովորաբանական իշխանություններին վճարվող տարեկան հարկից բացի, հայոց պետությունը ստիպված էր դիմանալ նաև տարբեր առիթներով մամլութների կողմից կազմակերպվող հրուժից արշավանքներին, որոնց հետևանքով ավերվում ու թալանվում էին քաղաքներն ու գյուղերը, բնակչությունը ենթարկվում էր ահարկու սպանիլ և գերեվարության, բգիտվում էր տնտեսությունը: Հայ-մամլության թշնամինի հիմնապատճառը, անշուշտը, Իրամի մոնղողական իշխանության հետ հայոց թագավորության դաշնակցային-գործակցային հարաբերություններն էին և արևմտավերապական տերությունների հետ շարունակվող բանակցությունները՝ նրանց նոր խաչակրության զարգարով տողորելու նպատակադրությամբ: Օրինակ, հայոց Տերում Բ արքան (կառ. 1289-1307 թթ. ընդհանումներով) ակտիվ մասնակցություն ունեցավ Ղազան խանի 1299 թ. և 1300 թ. և 1303 թ. ասորիյան արշավանքներին: Այսուամենայնիվ, մոնղոլների յուրաքանչյուր արշավանքի ձախողումից և նահանջից հետո Մամլության իշխանություններն սկսում էին հարմար առիթ և ժամանակ վենտրել հայոց թագավորության հետ հարաբերություններ պարզելու հայանության ուղարկան ձեռնարկություն հայերի բերած գործուն մասնակցության համար: Այսպես, 1302 – 1306 թթ. ընթացքում մամլութները, ինչպես վկայում են արարագիր ժամանակաշիները, ավարառուական նպատակներով առնվազն երեք անգամ հայկական պետության տարածք են ներխուժել: Հայ-մամլության հակամարտության այս յուրահատկությունը լավագույնս բացատրել է մամլության մատնանգիր ալ-Ռումարին, ով իր *Masālik al-abṣār* երկուու

գրում է. «Նրա («Սսի Էրլորի») արքան հավատարիմ է «Իրարի և Պարսկաստանի տիրոջը» (իմա՞ իլլանին-Գ.Դ.) և ծառայության մեջ է երա մուս (տունաշամ ի սիլկիի): Ամեն անզամ, երբ վերջինս գորքերն Ասորիք էին եկան Եզիդոսոսի տիրոջը սպանելու, նա էլ երաւից հետ էր գրու զայիս: Նրա գորքերի բազմությունն աստիճանաբար շատացավ. ահազնացավ նրանց չարությունը (ուկայա) իրամի և երա «Ժողովրդին (մուտուլմանների) նկատմամբ Դրա հետ մեկտեղ են շղողորորություն էր Եզիդոսոսի տիրոջը և թենում՝ ամենամյա սահմանափառ հարկ վճարելով: Ամեն անզամ, երբ Եզիդոսոսի և Ասորիքի գորքերն ալ-Բիրայով (թեազրում վորք-ինչ անհասկանայի և այլ ալ-Բիրա) այնուեղ են արշավում զրավում են երկիրը, գերենարում կանանց և երեխանների»⁷:

Ամեննին էլ պատահական չէ, որ արաբակեզու պատմական սկզբնադրյութներում մամլութների գրեթե ոչ մի արշավանքի նկարագրություն գերծ չէ մեծարանակ հայ ընակշության՝ այդ թվում երևելի ազնականների գերեվարության մասին իշխատակություններից: Հիշատակությունները մամլության պատմագրության մեջ բազմաթիվ են, որոնցից ընտրենք մի քանիսը: Օրինակ՝ ալ-Մայիր ալ-Զահիր Բայրարս սուլթանի 1266 թ. արշավանքի արդյունքում գերի են ընկել անզամ Տերում Ա արքայի որդի Լուն արքայազեր՝ ապագա Լուն Բ թագավորը, Սմրատ Սպարապետի որդի Վասիլ Թաթարը և մի թանի այլ իշխաններ⁸: Մամլության սովորական

⁷ Al-'Umārī 2010, ս. 316.

⁸ Բնըը՝ Սմրատ, իր «Տարեգրում» այս դժինի արշավանքի մասին այսպես է արտահայտվում. «Կուտորեցին զայերան բազմութիւն, որ և ասէին թէ բ դիրս (20.000) սպանաւ անդ յանմ ատուր. Եւ

թյուն գերության քշված հասարակ բնակչության թիվը հայ հետինակները 30-40 հազարով են հաշվում: Թվերը գույք ուղացված են, բայց պարզ են արտահայտում հայոց քաջափորությանը պատուհասած աղետի հետևակները: Հասլանշական է, որ եթե ազնվականները երեմն գերության մեջ են հայտնվում պատաժի կարգավիճակով, և որոշ դեպքերում դիմանագիտական շաների շնորհիվ հնարավոր էր լինում նրանց ազատել գերությունից և հայրենիք վերադարձել, ինչպես վերօնիշյալ դեպքում, ապա հասարակ բնակչությունը, եթե չէր ենթարկվում կոտորածի, ապա մեկնադիշու ստիպված էր կրել գերության և ստրկության լուծը Սուլթանության տարբեր քաղաքներում:

Ըստ արար պատմիչների՝ 1292 թ. կարողիկոսական Հոռմկայի գրավումից հետո սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆը գերեվարել է բերդի բնակչությունը՝ շուրջ 1200 հոգու: Կարողիկասը շղթայակապ Կահիրե է տարվել և մահացել գերության մեջ՝ բաղվելով Կահիրեի բանուում⁹:

Մեկ այլ օրինակ՝ ժամանակագրական առումով ավելի մոտ սույն հետազոտության թեմային առեջակից դեպքերին, որոնց ներքում կանոնադատակարը՝ Քայքարս ար-Մանսուրի անունով մասմության պատմիքը, ով, ըստ որում, նաև քարձաստիճան եմիր էր, 1303 թ. (հիջրայի 703 թ.) տեղի ունեցած մի արշավանքի մասին գրում է. «Հարծակվեցին, ամարտ-

⁹ Մեցեալսի ի սրոյ գերի տարան զիմի իրեանց և ոչ եկին ընդ որ մոյին, այլ դրտն Ալեյիորո զեացեալ ելին ամենայն աւարաւեն: Տե՛ս Սմբատ Սպարապետ 1956, էջ 247:

⁹ Այս դեպքերի մասին մասրամասն տե՛ս Դասիեյան 2016, էջ 276, 281-283:

ցին այն, ինչը ցանկացան, թալանեցին այն, ինչը պատահեց, և ողջ առողջ վերադարձան»¹⁰: Ալ-Մակրիզին է նոյն այս դեպքերի մասին գրում է, թե «կրակի տվեցին Սահ [Երկրի] ցանքները, ավերեցին շենքն ու գերեվարեցին կրանց քեակցությանը»¹¹: Արաբագիր հեղինակների հաղորդմամբ մակրութեար ըստ պաշարի են թել Համրուն բերդը, որտեղ մեծաքանակ հայ բնակչություն կար: Բավական երկար և հյուծիչ պաշարումից հետո Զոր ալ-կադա ամսի 13-ին (հունիսի 18, օրը՝ հինգշաբի) Թել Համրունի բնակչությունն անձնատոր է լինում և «անվտանգության երաշխիք» (առան) խնդրում, ինչպես ալ-Մակրիզին, ալ-Յունիկին, ալ-Ֆիրզային և ալ-Նուվայիրին են գրում¹²: Ինչ Բասիրի բնութագրմամբ՝ «բերդը հանձնվեց բոլի ուժով» (‘awatanat)¹³, ավելին, ըստ Արու ալ-Ֆիրզայի՝ մակրութեար ները հիմնահատակ քանդեցին բերդը¹⁴: Ըստ ալ-Յունիկիի՝ հունիսի 14-ին «աղավնու փոստով» (waṣala al-tā’ir wa-fī ḡanā-

¹⁰ Baybars al-Manṣūrī 1987, §. 174.

¹¹ Al-Maqrizī 1939 (շ. 1.3), §. 949.

¹² Տե՛ս Ալպ, §. 949; al-Yatnīnī 2007 (շ. 2), §. 768; Al-Birzālī 2006 (շ. 3), §. 259; Al-Nuwārī 2004 (շ. 32), §. 52: Իր ալ-Ղավարին բերդի առաւմը թվագրում է Զոր ալ-կադա ամսի 23-ով (հունիսի 28): Տե՛ս Ibn al-Dawādārī 1960 (շ. 9), §. 111: Ալ-Այնի պատմիք բերդի՝ ‘առան-ով’ հանձնվելու մասին տեղեկությունը մեջերում է ալ-Յուսուֆիի *Nuzhat al-nāṣir* երկը (կոչում է զահիբ *al-Nuzha*, այսինքն՝ «ալ-Նուզհայի հեղինակ» - Գ.Դ.), որից, ինչպես վերևուն ենք նշել, պահպանված է լոյ 1332-1338 թթ. ընդգրկող հատված: Տե՛ս Al-‘Ayn 2010 (շ. 4), §. 302:

¹³ Ibn Katīr 1998 (շ. 18), §. 35.

¹⁴ Տե՛ս Abū al-Fidā’ 1907 (շ. 4), §. 51, ինչպես նաև Նալբանդյան 1965, էջ 245: Հման. Ibn al-Wardī 1868 (շ. 2), §. 253:

հիմ երգա) բերդի առման լուրը Դամակու է հասել, և բաղրում «հաղթության նվազարաններ» են հնչեցվել (*մազգա՛ ալ-բաշ նր*¹⁵):

Հետաքա իրադարձությունների վերաբերյալ մամլության մատենագիրների հաղորդած պատությունները փոքրիչնչ տարբերվում են իրարից, ավելին՝ տեղ-տեղ հակասական են: Մասնավորապես ըստ ալ-Մակրիզի՝ բերդի գրավումից հետո մամլութների ձեռքն են ընկել բերդում գտնվող վեց հայ իշխաններ (ընազրում՝ *տունկ*, այս է՝ «արքաներ»): Հայոց արքա Տերումը խիստ փառվեց՝ խմանալով, որ իշխանները (ինքնազրուխ կերպով) հանձնել են բերդը, մտադրվեց նրանց պատճել: Նա նամակ գրեց Հայեավի «Փոխարքային»՝ ասելով, որ գերի ընկած իշխաններն իր այս բերդատերերն են, որ հրաժարվում են իր հարկ (իշաց) վճարելուց, չնայած որ ինքը «երակցից առավել վճարուեակ իշխաններ չունի»: Սա լսելով՝ Շամս ալ-Դին Կարասունկուրն իրք վճռել է զիլաւտել ագուլականներին: Փրկվել է միայն մեկը՝ Նուջայմա (*al-Nuğayma*, բարացի՝ «Փոքր աստղ»-Գ.Դ.) ամրոցի տերը, ով իր կյանքը խնայելու դիմաց իր խլամ է ընդունել և խոստացել օգնել՝ գրավելու Սիսը: Այս դեպքերից իր մամլուք էմիրներու ու սուլթանիր շատ են ուրախացել և հարգանքի են արժանացրել Նուջայմայի տիրոջը՝ նրան Եզիզոսու տեղափոխելով¹⁶:

Հասլանշական է, որ մամլության պատմիչներից ալ-Յունիին մեջերում է ասորիցան զորքերի հետ արշավանքին մասնակցած մի «հայտնի անձնավորության» (*հայտ մարիք*) վկայությունը, ում անունը հարկ չի համարում իիշտանակել:

¹⁵ Al-Yâni 2007 (ը. 2), ֆ. 768: Հմմտ. Ibn Katîr 1998 (ը. 18), ֆ. 35.

¹⁶ Al-Maqrizî 1939 (ը. 1.3), ֆ. 949.

Այս տեղեկատուի (ինֆորմանի) հաղորդմանը շատ նման պատում է տալիս ալ-Նուվայրին: Ինչնե, ըստ այս երկու պատմիչների՝ հայոց արքան իրականում խորամանել է և հնարք (*hîla*) բանեցրել իր յոր (այլուր՝ ուր) իշխանների դեմ: Ինմանով հակառակորդ բանակեների առաջիւղացման մասին՝ նա նրանց հավաքել է տվել թե Համդունում իբր ոռձիկ վճարելու, որպեսզի գնան և ամրացնեն իրենց բերդերը: Բայց երբ վրա հասած մամլուքները պաշարել են ամրոցը և գրավել, ժամանել են Սիի տիրոջ դեպանները և հայոններ, որ այդ իշխաններն անհետազն են եղել արքային և մշտապես խանգարել են, որ ինքն իր հաստակությունը հայտնի սուլթանին կամ խուսափել են սուլթանին տրվելիք հարկերը վճարելոց (*irṣâl al-humâyîl*): Հասկանալով, որ Տերումը խորամանել է, Նուջայմայի (ալ-Նուվայրիի մոտ սխալով՝ *Buṣhayma - Գ.Դ.*) տերը, որի անունն ալ-Սարմակ (ալ-Նուվայրիի մոտ՝ *al-Sarmasâq - Գ.Դ.*) էր, տեսելով մյուս բերդատերերի մահը՝ խլամ է ընդունել՝ խոստանալով «երկու հազար հեծյալով և Հայեսի գործով սուլթանի համար գրավել Զահան գետից մինչև Կարամանների (*İbrâkîrlî* լեռները (*gîbâl ibn Qaramân*)), որպեսզի Սիի երկիրն ու Ուսմի երկիրն հայամին և սուլթանին պատկանեն»¹⁷: Ճիշտ է՝ Կահիրե տեղափոխված իշխանին նույնա-

¹⁷ Տե՛ս *al-Yâni* 2007 (ը. 2), ֆ. 768: Հմմտ. Al-Nuwayrî 2004 (ը. 32), ֆ. 53: Հմմտ. Al-'Aynî 2010 (ը. 4), ֆ. 303: Ալ-Այսիին այս իրադարձությունների մի տարբերակ էլ մեջբերում է ալ-Յուսուֆիի երկից, ըստ որի՝ «ուր բերդատեր իշխանները» (ընազրում՝ *տունկ*) թել Համդում էին եկել եկեղեցի ացելելու, և երբ մուստամանների գործը պաշարել է բերդը, սուլթանը են եղել այս հանձնել *ամân-*ով: Երբ Սիի տերն իմացել է իր համար շատ կարևոր այդ բերդի կո-

կանացնել չի հաջողվում, քայ 1303 թ. արշավարքին նկարագրությունը բացատրում է այս հանգամանքները, թե ինչպես էին հայերը ոպամազերու կարգավիճակով հայունվում Մամլուքյան սուլթանությունում:

բայց ամափն դեպքան է ուղարկել Հայեաի փոխարքային, և տեղի է ունեցել այս, ինչ մըս աղբյուրների են հաղորդում: Տե՛ս անդ, §. 303-304: Սամլուրան աղբյուրները ոչինչ չեն հաղորդում ևս ալ-Սարմալի հետազո՞ւ ճակատագիր մասին: Այ-Ցումիիիի տեղեկատոմի վկայությամբ՝ ևս «գեղեցկացէն էր, առենարարահանակ տղամարդկանցից մեկը, ինչպես լեզու (al-tawd)...»: Տե՛ս Al-Yāmīn 2007 (թ. 2), §. 770 (ձեռագիր վասավա լինելու պատճառը իրատարակիչը դժվարացնել է վերականգնել հայուածի):

Գերիներից ունակը է, անշուշն, հայտնվում էին սոր-
կավաճառական շուկաներում և սորկացվում: Գեղեցիկ կա-
նայք հայտնվում էին մասկուր մեծամեծերի հարեւներում¹⁹:

¹⁸ Ibn al-Furāt 1942 (g. 7), §. 197: Հիշյալ հուշազրին Խվիրված մի հետազոտություն կա: See also Fernandez 1988, pp. 81-91:

¹⁹ Ռասուլյան Նմեկի պատմիչ ալ-Խազրախի (մահ. 1410 թ.) մոտ մի շատ հետաքրքիր վկայություն կա, թե ինչպես են Եղիպտոսում գունդող հայ ստրկուիիները՝ որպես ընծա Եղիպտոսի սույցանից ուղարկվել Նմեկի սուլամին։ Նա մասնավորապես գրում է՝ «Հշրոայի 800 թվականի» Սաֆար ամփին (1397 թ. Խոկսեմբեր / Խոյսեմբեր) ալ-Հարդայի (al-Harda) ափ ներ ստացել Եղիպտոսից Եղիպտոսի արդ մասին լուրը սույցանին հասավ, ևս շարդիկ դեկի Զարդիդ։ Նվերը Զարդի հասակ հիշալ Սաֆար ամփի 24-ին (Անդիքք-րի 15)՝ հինգամայք օրը։ Դա հիսարքան նվեր էր, ու ընդգրկում էր

Մասկահասակ երեխաները, կրոնափօխ էին արքում, ստանում ուղմական կրթուրյուն և դաստիարակություն՝ ժամանակի ընթացքում համալրելով մամլուրյան բանակի կամ ռազմավարչական համակարգի կազմը²⁰: Խստմաշած բարձրաստիճան հայազգի մամլուր Եմիրեների մասին հիշատակությունները, ինչպես որ Ֆարիխան և Այյուբյան դարաշրջաններում եր, մամլուրյան արաբալեզոր պատմական սկզբնադրյաններում նույնպես թիշ չեն²¹:

Մի առանձին դիպքի համար արաբազիր հեղինակների երկերում ուշագրավ տեղեկություններ են գտնվում Կահիրենում հայ ռազմագերիների վերաբնակեցման և գործունեության մասին: Խոսքը վերոհիշյալ *Աչծոնատ ալ-խոնդ* կոչվող տարածքի մասին է, որն արաբ պատմչների վկայությամբ Եղիպտոսի սուլթան ալ-Մայխր ալ-Նասիր Սուլհամմադ իբն Կալավունը (կառ. 1293-1294, 1299-1309, 1310-1340 թթ.) իր կառավարման երրորդ շրջակի սկզբունքուն որոշել է բնակեցնել քրիստոնյա գերիներով՝ իհմնականում հայերով²²: Քանի որ

մոտ երեսուն թուրք մամլուրներ, տասներկու զրոխի թնդիր եժուցներ զարդարում թամբքով և [այլ] գեղեցիկ հարմաքալերով թիզան և ան մի խոմք խոյն և հայ ասորինեիներ և մի արինասավարժ քիշիկ Եղիպտոսի հրեաներից: Տե՛ս ալ-Ազրաք 1914 (էջ. 2), չ. 294:

²⁰ Արար պատմիչների երկերում վկայություններ կան, որ հայերը Նշանակալի թիվ են կազմել *ալ-խոնդ* (արաբ. *խոջ*՝ «աշուտակ», բարից, այս է՝ «աշուտակախիններ», Կահիրերի միջնաբերդի աշտարակների վրա տեղակարգածներ) մեծամասամբ չերեզներից բարեկացած մամլուրյան խմբավորման մեջ:

²¹ Տէր-Միջայիկան 1980, էջ 189; Ապյուսձնան 1923, էջ 372:

²² Մինչև քաղաքասի վերաբերյալ մամլուրյան հեղինակների պահպանած տեղեկությունները ներկայացնելը, հետագա շարադրյան-

1307-1310 թվականների միջակայքում Կիլիկյան Հայաստան ուղղված մամլուրյան արշավանքներ տեղի չեն ունեցել ենթադրելի ե, որ խորը այստեղ, ըստ էության, առանձնապես 1310 թ. գերեվարված հայերի մասին չե, այլ արդեն իսկ գերության մեջ գտնվողներին մեկ վայրում կենտրոնացնելու, վե-

րի արամարանությունը հասկանալու համար հարկ ենք համարում շատ համառուսակի անդրադառնալ այն բաղադրական անցքերին, որ տեղի ունեցան 1309-1310 թթ.: Բան այն է, որ 1309 թվականին իր գահակալման երկրորդ շրջանում գտնվող երիտասարդ սույած ալ-Մայխր ալ-Նասիրը, անկարող լինելով դիմանալ իր երկու ազգեցիկ Եմիրեների՝ Բայրարս ալ-Զաշնաբիրի և Սայֆ ալ-Դին Սալահի և նրանց մերձավոր մամլուրյան խմբավորմաների ձևավանդ, հայուարեց, որ հաջ կատարելու նպատակով գտնվ է Մերքա, բայց իրականում ճանապարհին իջևանեց Բարար թերդամբում՝ հայտնելով զահից հրաժարվելու մասին: Որոշ ժամանակ անց Բայրարս ալ-Զաշնաբիրն իրեն Կահիրենում սույածն հոչակեց (1309-1310 թթ.), իսկ Սալահը գրանցեցրեց փոխարքայի պաշտոնը Սակայն պարզէց, որ Սուորիք մենելու ալ-Նասիրի նպատակն իրականում գոյն այստեղ իրեն հավատարիմ ուժեր և բաղադրական հեեւարան գտնելու եր, ինչը հաջողվեց: 1310 թ. սկզբներին ալ-Նասիրը բռուց Բարարը և վերադարձավ Կահիրե: Բայրարս Զաշնաբիրը հրաժարվեց զահից և փախուստի դիմեց, ալ-Նասիր Սուլհամմադը կրկն գրանցեցրեց Սուլյանության զահի՝ առաջին երրին պատմելով բռուր այն Եմիրեներին, ովքեր անհավատարիմ էին գտնվել իր նկատմամբ: Ալ-Մայխր ալ-Նասիրը ռազմավարչական բարեկախտմաներով ամրապնդեց իր իշխանությունը, և երա կառավարման երրորդ՝ շուրջ երեսունամյա փուլը դարձավ Սամլուրյան սույածնության պատմության ամենածագկուն շրջաններից մեկը: Այս մասին մասրամասն տե՛ս *Levanoni* 1995:

բարիսակեցման մասին է: Որպես, այսպես ասած, «գետող» ստեղծված թանգարակը ժամանակի ընթացքում վերածվել է բրիտանունեաբնակ՝ հիմնականում հայաբնակ քաղի, որտեղ, ինչպես ներքեւում ենք տեսնելու, նաև եկեղեցի կար:

Ալ-Մակրիզին «Դրոշների պահեստարանի» մասին «ալ-Խիտատից» բացի տեղեկություններ է հայտնում իր մյուս երկում՝ «Քիթար ալ-Սուլուք» վերնագրով ժամանակագրության մեջ: Նախ թարգմանաբար ներկայացներ «ալ-Խիտատ» ի հարդրումը, որը որոշ տարբերություններ ունի «Քիթար ալ-Սուլուք»-ում արձանագրված պատումի հետ: Կարողում ենք: «Խիզանաթ ալ-Բունուդ: Յանձն եշանակում է դրոշներ, լզինայի եշաններ, որոնք հավանաբար համապատասխանում են մեր ժամանակների «սուլթանական զինանցեներին: Այս Խիզանաթ ալ-Բունուդն իր տեղադրությամբ դուրս էր Պալատից բայց կրա ենթակայության տակ էր: Այն հարում էր կրան «Ալ-Շաուքի ապարանք» դարպասի կողմից Այն կառուցել էր ալ-Զամիր յի-Խզազ Դին Ալլահ Արու ալ-Հասան Ալի իրն ալ-Հարիմ բի-ամր Ալլահ Արի Ալի ալ-Մասուդ իրն ալ-Ազիզ իրն ալ-Սուլզզը Ալեսու 3000 արհեստավոր կար՝ բոլոր արհեստներում փայլող ինչպես որ Իբր Արի Տայլը²³ է եղած տակել իր «Պատմության» մեջ: Ալ-Զամիրի օրոր այնուեղ լուս էր և հազարություն, տեղի գրամմունքներն էին ուստե՞լինելը զվարձությունը, երգեր ունկնդրելը: Նրա ժամանակ հին և նոր

²³ Խոսքը հալեացի պատմիչ Իբր Արի Տայլ (մահ. 1229-1233 թթ. միջակայրում) մասին է: Ծիծու է՝ Վերջինիս երկը մեզ չի հասել, բայց կրանք բազմաթիվ արժեքավոր հատվածներ իրենց երկերում պահպանել են Արու Շաման, Իբր ալ-Ֆուրաթը, ալ-Մակրիզին: Պատմիչին և կրա մասին տե՛ս Cahen 1986, p. 693:

Կահիրեների բնակչությունը հետաքրքրություն ցուցաբերեց երգ ու պարի հանրեակ, և դրանից զարմանալի գումարներ սուացվեցին: Այնուեղ սենյակներ առանձնացվեցին մասնութերի համար, որտեղ երաց տարատեսակ գիտելիքներ էին տալիս, ծանոթացնում էին տարբեր զինանշանակների, դրանց օգտագործման նրբություններին նետաձգությանը, եկամագությանը, սուերամարտին և այլն: Իբր Արի Տայլը սա հիշատակել է Իիջրայի 427 թվականի (1035/1036 թ.) ներքո:²⁴: Այնուեղուն ալ-Մակրիզին բաղվածաբար ներկայացնում է հատվածներ Սուլիմ ալ-Դինի իրն Արդ ալ-Զահիրի և ալ-Էմաշիդ իրն Զուբարիի երկրից Խիզանաթ ալ-Բունուդին պատուհասած հրենիի վերաբերյալ պատումներից, որոնց մենք արդեն ծանոթ ենք: Ապա վերադառնում է իր խորին: «Այս Խիզանաթ ալ-Բունուդը շարունակել է մնալ բանտ, որտեղ կալանավորվում էին Եգիպտական պետության էմիրները ու վեհրեները, մինչև որ վերացավ այդ պետությունը: Եկալ Այուրյան պետությունը և վերացավ, ապա Թուրքական պետությունը (իմա՝ Մահմուդյան սուլյանությունը), որոնց օրոր այնուեղ բանտարկվում էին մամլուքները գորականները և այլը: Այնուեղուն այնուեղ բնակեցվեցին ֆրանկների ընտանիքներ, որոնք գերեվարվել էին ասորիյան երկների զրավման ժամանակ: Նրանք իրենց զավակներով այնուեղ էին բնակվում ընդունակ մինչև սուլյան ալ-Մայխը ալ-Նասիր իրն Կալավունի ժամանակները: Նրանք այնուեղ ամեն տնակի մերքեր էին գործում՝ զինի վաճառելը, պոռենությունը, վաշխառուներին հանցագործներին իրենց պաշտպանության տակ մերց-

²⁴ Տե՛ս al-Maqrit 1995, s. 141 և հմատ. al-Maqrit 2002-2004 (լ. 2), s. 395-396:

նելք և այլն: Իսկ սույրանն այց էր փակում նրանց վրա, բանի որ դրա մեջ իրեն ձեռնուու հեարամուսություն և բաղաքականություն էր տեսնում, որը նա փառում էր ֆրանկ արքաների և իր միջն կերպա զինապարի ժամանակ:

Ալ-Հուսային մեշհենդից ոչ հեռու ապրում էր Էմիր ալ-Հաջը Ալ Մայիր ալ-Ջուքանյարը: Նրա տունը գտնված էր Խիզանար ալ-Բունուրի մերձակայքում: Նա երան (իմա՞ սուլթանին) պարքերաբար տեղեկացնում էր, թե ինչ արատուավոր արարքներ են գործում գերիները, և ինքը չի կարողանում հերքել դա: Արևամասի բարձրամայնեց սույրանին, հաճախացած բողոքները նրանցից բայց նա անուշադրության էր մատնում դրանք: Բայց երբ պատեց իր բողոքը, սույրանը նրան ասաց «Օ՛, Էմիր, դու իերզ տեղափոխվիր նրանց մոտից: Այդում Էմիր Ալ Մայիրը տեղափոխվեց իր հիշալ տնից ալ-Հուսայինյայում գտնվող իր տուն այնուն կառուցելով ախոռ, բաղիքներ, կրպակներ, մզկիթ: Նրա շարունակեց այնտեղ ապրել մինչև ալ-Նասիր Սուլհամմադի մահը 741 թ. վերջերին: Քշիանությունն անցավ նրա որդիներին, մինչև որ զանն անցավ սույրան ալ-Մայիր ալ-Մայիր Իմադ ալ-Դին Խումալի իր Նասիր Սուլհամմադին: Վերջինն Էմիր Մայիր նշանակեց Եղիսաբոսի փոխարքուն նրան այդ առիթով պատվու զգեստներ հացցելով: Նա, փոխարքայի հագուստները նացին, իշակ Պալաայ ալ-Զաքարի Խիզանաթ ալ-Բունուու և հրամանց գերիներին հանել այնուղից, քանդել տվեց այս նոյն ժամին: Նա սա արեց նախքան իր տուն գնալը: Այն հիմնահատակ ավերվեց, և ժողովուրդն ազատվեց կրակից: Աղանձ ազատեց նրա շարիքից: Այս արարքը շատ գեղեցիկ արարք համարվեց: Սա տեղի ունեցավ 744 թվականի Սուլհարրամ ամսի 12-ին: Մարդիկ վարձակալեցին նրա

տարածքը և տներ կառուցեցին: Մինչ օրս էլ այս թաղը հայտնի է Խիզանաթ ալ-Բունուու անունվ»²⁵:

Ինչպես տեսնում ենք, ալ-Մակրիզին իր վերոբերյալ հաղորդման մեջ պեղում է, որ «Դրոշակների պահեստապահեց» բնակեցված է Էղել ֆրանկ գերիների ընտանիքներով, և սուլթան ալ-Մայիր ալ-Նասիրն իրը այց է փակել այնտեղ տիրող իրավիճակի վրա, բանի որ կաշկանդված է Էղել ֆրանկ արքաների հետ կնրած զինապարի պայմանագրերով: Սա, մեղմ ասած, տարօրինակ է, բանի որ Լևանոնի խաչակրաց պետություններն ալ-Նասիրի սուլթանության երրորդ թօջանից դեռ երկու տասնամյակ առաջ էին դադարեցրել իրենց գոյությունը: Ֆրանկներին պատկանող վերջին տիրություն՝ Արքան, ընկել էր դեռ 1291 թվականին: Հետևաբար ալ-Մակրիզին այստեղ ինչ-որ բան շիփում է: Եթե հաշվի առնենք իրն ալ-Յուրաբի երկու պահպանված «հուշարձից» վերևում մեջբերված հատվածը, ապա գուց այնտեղ նաև ֆրանկ ռազմագերիների բանությունն անել: Այն, որ սա խկացեն շիփրությունը հետևաել է, հենց ալ-Մակրիզին է ապացուցում հետազա շարարդանքում, եթե մեջբերում է վերոհիշյալ դեպքերի ժամանակակից մեկ այլ պատմվյալ երկից:

Խոսքը եզիստացի պատմիչ ալ-Յուսուֆիի (մահ. 1358 թ.) և նրա *Nuzhat al-nâzir fî sîrat al-Malik al-Nâsîr* («Ալյանատեսի գրուսակը ալ-Մայիր ալ-Նասիրի կյանքի ընթացքով») վերնագիրը կը ըստ ժամանակագրության մասին է: Ցավոք, այս կարևոր երկից մեզ հասել է 1332-1338 թթ. ընդգրկող

²⁵ Տե՛ս Al-Maqrizî 1995, էջ 144-145 և al-Maqrizî 2002-2004 (էջ. 2), էջ. 395-396:

մի հատված միայն²⁶: Ալ-Չուսուֆիի պատմությունը, սակայն, լայնորեն օգտագործվել է ինչպես ժամանակակից (ալ-Չուզջա՞ի, մահ. 1356 թ. հետո), այնպես էլ հաջորդ սերնդի պատմիչների՝ մասնավորապես ալ-Սյնիի (մահ. 1451 թ.), ինչպես նաև ալ-Մակրիզիի կողմից, ովեր բազմաթիվ մեջքերումներ են կատարել նրանից: Ալ-Մակրիզին շարունակում է: «Մուսա իրն Սուհամադ իրն Յահյան իր «Ականատեսի գրուսանը ալ-Մայիր ալ-Նասիրի և նրանից հետո Կառավարած որդիների կամքի ընթացքով» գրուս: Այն հրաշայի զիրը է որի ձեռագրից համառոտաքար մեջքերում են: «Ալ-Հաջ Ալ Մայիրի փոխարքայությունը (վերնագիր՝ Գ.Դ.): Սուլթանը այսինքն ալ-Մայիր ալ-Մայիր Իմադ ալ-Շիր Խսմալի իրն ալ-Նասիր Սուհամադ իրը Կապավունք խորհրդակցություն հրավիրեց որոշելու թե ու է լիենու իր փոխարքան իշխանության գործերը կարգավորելիս Մատոնանշեց նիմք Բարդ ալ-Շիր Զանքայի իշխն ալ-Քարայից, բայց վերջինս հրամարվեց դրանից ապա առաջարկեց եմիր Ալ Մայիրին ով ուրախացավ՝ ասելով: «Ես մի քանի պայմաններ ունեմ, որոնք առաջարկել եմ սույնակին, և եթե քավարարեց կանեմ այն իշխ հրամայում է: Այն է՝ որ Սուլթանությունում որևէ քան չար առանց երա կարծիքի որպեսից արգել դրվի ողելից խմբչների վրա շարժական մինարեր կանգնեցիլ, և որ ջննդիմանս երան ինչ որ կանի: Համաձայնություն ստացավ դրա համար և հազար փոխարքայի հանդերձ մզկիթում Մուհարրամ ամսի 12-ին: Շաբաթ օրվա առավոտը բացվելուն պես երա համար բացեցին փոխարքության պատուհանը և սկսեց իշխել: Առաջին ինչից սկսեց հրամայեց Կահիրեկ կառավարչին, որ Խիզանաթ ալ-բունուդ իշխի է արգելանքի տակ առնի այնտեղ եղած ոգելից խմբչները, անքարոյական կանանց հանի այն-

²⁶ Պատմագրի մասին կենսագրական տեղեկությունների և կրթակի մասին մանրամասն տե՛ս Little 1974, pp. 42-54; Little 1998, pp. 426-427 և Al-Yāsufī 1986, §. 39-57:

տեղից ուսումագերիներին և հիմնահասուակ ավերի: Այն հայերին պատականող զինուուներից մեկն էր (ըստգում մերն է - Գ.Հ.): որտեղ մինչ այդ բանարկվում էին Էմիրները, գորականները և այլ խականարկում բանարկվում էին հանցարքները: Երբ ալ-Մայիր ալ-Նասիրի իշխանության վեջապես գարաքի ժամանելուց հետո բուն բանկուրույն ունեցան գլխարքության: Ուստի նա գերիներ վերցրեց բերեց երանց և երանցից մի մեծ խմբի իշխան տվեց (Կահիրեկի միջնաբերդում, մի խմբի կը Խիզանաթ ալ-բունուդում, որտեղ երանք ընթարքություն սկսեցին: Բանուարկումն այնուեղ արգելվեց: Օրեր անցան, երանք զավակներ ունեցան, բազմացան: Նրանք սկսեցին այնուեղ զինի պատրաստել և պահեստավորել, մինչ ինչ մեկ տարվա ընթացքում երանց պատրաստածը 32 հզ. կարաս էր կազմում, որը բացեիրաց վաճառում էին: Նրանց մոտ տեղեր կային անառակների կանանց և երիտասարդների սեռական հարաբերությունների համար ենախտուելած: Դրա պատճառով բազմաթիվ մարդկանց տիկնայր, երանց զավակները, սպասավորներ և մասլուքներ այլասերկեցին, և երանց մասին բազմաթիվ լուրեր տարածվեցին: Երբ ալ-Հաջ Ալ Մայիրին տեղեկացրին, որ երան մասլուքներից ունանք զինի են խմում այնուեղ նա էլ ալ-Նասիր Սուհամադին բազմությունություններից երանցից մինչև որ վերջին զայրմություն ասաց: «Օ, Հա ջօ: Խիզան ն ես բոլորում երանցից: Եթե երանց հարանաւորումն այդքան զարմացնում է թեզ, ինըզ տեղափոխվիր երանց մոտից: Այլև դադարեց խոսել երանց մասին, թենի զա շատ բարդ էր: Նա ալ-Հուսայինյայի ջրակայրում իր համար բաղնիք, սկլիթ և բազմաթիվ այլ շինուարքուններ կառուցեց: Խիզ երբ սուանձեց փոխարքայությունը, այնտեղ իշխեցիլ տվեց կառավարչին և ներքինուն իր կողմից մի խմբի հետ: Նրանք հարձակվեցին այնուեղ եղանձերի վրա և դրս հանեցին բոլորին: Նրանք կարեցին զինուունները բոլորը կարասները, որը ծայրահեղ մեծ ծավաների էր հասնում: Դա, հիրավի հիշարժան օր էր՝ համարվելով Ար-

բայի կամ Տրիպոլիի գրավման աես կարտոր օր քանզի այն-
քան շատ էին այնուհե եղած մերքին ու ալատերումը Ասս
քանզից և նրա հողը սովորակից գետ էին Սայֆ ալ-Դին
Կուսարի ալ-Ռաքադարը հայուարավից նրա մասին մաս-
սավորեցվեց և կառուցապատվեց: Մարդու նրա տեղում ջրա-
դացներ բնակելի տներ և այլ շենքեր կառուցեցին դարձնելով
ամենահրաշայի վայրերից մեկը:

Այսուհետև կառավարիչը տագմագերին հանեց եւս
և Կահիրեի միջնաբերդից ջարդելով նրանց մոտ եղած զի-
նու կարասները: Նա երանց բորբին հրամացէ և իշեցրեց ալ-
Նաֆիսայի մեշհեդի մերձակայքը Հին Կահիրեի հնդարդոր-
ների (բնագրում՝ Կոման Միշր) հարևանությամբ որտեղ հաս-
տատված էն միջն օրս: Միջնաբերդում էլ երանք նույն կերպ
այլասերում էին մասկութերին ինչպէս որ Խիզանաթ ալ-բու-
նուրում: Դրան վերջ տրվեց ալ-Հաջը Ալ Մալիքի ճեռորդ Ալ-
լահի օրինի երան: Վերջ:

Այսու ալ-Ֆիզա Բամահի իբն Ահմադ իբն ալ-Խիտրան ինձ
տեղեացրել է ասելով: «Դատավորների դասավոր Ազա ալ-
Դին ալ-Թուրքանինին ինձ հայսնել է, որ Խիզանաթ ալ-բունու-
րում մասավատի սեղանին խոյի մին էր վաճառվում բոլոր
ցանկացներին համար, ինչպէս որ ոյխարի մին է բացեկ-
րաց վաճառվում շուկաներում: Խոկ գինու ամեն ուսար վա-
ճառվում էր երկու ֆաւսով՝ ամեն եղրդոր ուսար հաշվերով ¼
դիրհման: Ազահիր գիտի, թէ ինչն է մեր ասածից անսուրոյց»:

Ալ-Մակրիին այսուեւ ավարտում է ալ-Յուսուֆիի երկ-
ից իր մեջբերումը: Խնչպէս տեսնում ենք, վերջինիս հավաստ-
մամբ «Դրոշակների պահենատարանը» հայերին, այլ ոչ թէ
ֆրանկներին պատկանող զինետուն էր²⁷, որտեղ ինչպէս ա-

րար հեղինակներն են պեղում նաև հասարակաց տներ են
գործել: Հայերի նկատմամբ ունեցած ատելությունը գուցե և
արար հեղինակների նկարագրության ակներն չափազան-
ցություններ է հաղորդել, այնուամենայնիվ, ինչ էլ որ ինի,
պարզ է, որ Խիզանաթ ալ-բունուրում հայ գերիների գործու-
նելությունն իրականացվում էր սովորան ալ-Նախիրի հովա-
նավորչության պայմաններում՝ կարելի է անօամ ասել՝ սով-
որանկան վերենախավի «կարիքները» բավարարելու համար: Ամենին էլ պատահական չէ, որ ըստ արար հեղինակների՝
հայերին պատկանող զինետների և հասարակաց տների մը-
տական այցելուներից էին մամլության վերենախավի բազմա-
թիվ ազդեցիկ էմիրներ: Հովանավորչության հանգամանքը ա-
կնհայտ է թեկուզ այս միջադեպի օրինակով, եթե մամլության
ամենաազդեցիկ էմիրներից մեկը՝ ալ-Հաջը Ալ Մալիքը, խսդ-
րում է սուլթանին վերջ տալ Խիզանաթ ալ-բունուրի գործու-
նելությանը, բայց մերժում է սուսանմ, ավելին՝ հորդոր սուս-
նալով անձամբ փոխել բնակության վայրը:

Ալ-Յուսուֆիի վկայությունից պարզ է նաև, որ հայերը
Խիզանաթ ալ-բունուրի պես զինետներ են ունեցել նաև Կա-
լասար ալ-Զաքարլում՝ այսինքն Կահիրեի միջնաբերդում: Դժ-
վար է պատկերացնել, թէ ինչպէս պիտի քիատուներներն
ազատորեն ոգելից խմիչքներ պատրաստենին և դրանց վա-
ճառորվ գրադաւին հենց սուլթանական ապարանքի մերձա-
կայքում, եթե ոչ առանց իշխող վերենախավի բռնտվության:

²⁷ Լեռ հետազոտող Դատուխն Լիքիլան, ինչպէս վերևում ենք նշել,
մի քանի հոդված ունի մամլության Կահիրեում ալկոհոլի օգուա-
գործման վերաբերյալ, որոնցում նաև անդրադարձէլ է Խիզանաթ

²⁷ Լեռ հետազոտող Դատուխն Լիքիլան, ինչպէս վերևում ենք նշել,
մի քանի հոդված ունի մամլության Կահիրեում ալկոհոլի օգուա-
գործման վերաբերյալ, որոնցում նաև անդրադարձէլ է Խիզանաթ

Մասնավոր ուշադրության է եկրակա ալ-Յուստիֆի հայորդած այս տեղեկությունը, որ սովորան ալ-Նասիրի՝ հայերին Կահիրեկի միջնաբերդում և Խիզանաթ ալ-Բունուրում քակեցնելու որոշման շարժադիմերից մեզը եղել է այնտեղ շինարարական աշխատանքների կատարել²⁸: Սա պատահական չէ. չէ՝ որ հայերը միջնադարում հայտնի էին իրենց շինարարական տաղանքով, և սա ամենին է առաջին դեպքը չեր. երբ Եգիպտոսի մուսուլման տիրակալը կառուցապատման աշխատանքներ էր վստահում հայազգի փարպետներին²⁹:

²⁸ Արարական աղբյուրներից հայտնի է, որ Կահիրեկի միջնաբերդի հարավ-արևմտյան կողմը պարսպապատվել է հետո տուքան ալ-Նասիրի կողմից:

²⁹ Հայունի է, որ Բայր ալ-Զամալիի օրոր Կահիրեկի երեք դպրապաների՝ Բայ Ջուվայայի, Բայ Հութունի և Բայ ալ-Լասրի կառուցման աշխատանքները նեկավարի են Եղեփակայից Կահիրեկ երավիրքավաճ երկու հայ շինարար երաբյերը։ Այս շինարարական ձեռնարկի ծավալները պատկերացնելու համար բավական է Նշել, որ հիշյալ դպրապաների կառուցման շուրջ հինգ տարի է տևել՝ 1087-1092 թթ.: Այս մասին ավելի մակարմանն տես՝ Մըսրին 1947, էջ 32; Տեր-Սիրայկեան 1980, էջ 242; Dadoyan 1997, p. 146 և Dadoyan 2013, pp. 120-127:

Վերին Եղիպատոսի Սոհազ ըսկալպայրից ոչ հեռու գտնվոր Ճերմակ վասիքի խորակի որմանապրոյումներ ու պահպանված արձակագործությունները Քետունի շրջանից ծագող հայ վարպետների կողմից ևս մի փայլուն օրինակ է: Տե՛ս Mutafian & Ouzounian 2013, թ. 112; ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՐՈՓԱՆ արքեպիսով՝ [Գուշակեան] 1923, էջ 374-380; Dadoyan 1997, թթ. 103-105: Տայկական ճարտարապետության էլեմենտների առկայության անհերքելի է ևս Տաթիվան շոանի

Առաջ անցնելով Խշենք, որ իր մոտ երկուս՝ «Քիթար ալ-Սուլյութում», ալ-Մակրիզին արդեն հետևել է ալ-Յուսուֆիի պատումին և մեզ հայտնի դեպքերը ենթակայացնելիս մի քանի անգամ շշշում է, որ Խիզանայր ալ-բունուլի հիմնական թակությունը հայեր էին: Նա գրում է. «Այդ թվականին Էմիր ալ-Հաջջ Ալ Մայիթը տիրացավ փոխարքայությանը, և առանձնելով այն դատավարություններ սկսեց Առաջինը, ինչից սկսեց իրամայից Կահիրեկ կատավարչին որ Խիզանայր ալ-բունուլը զնա, պահականիքի տակ առնի այնտեղ եղած ոգեկեցի խմբչները, պոռկիկներին, ապա հայերի այնտեղի ըրիստուխա գերիներին քափի այնտեղ եղած ոգեկեցի խմբչները և ավերի այն, մինչև որ հիմնահատակ քանդի: Մրց պատճառի այն էր, որ Խիզանայր ալ-բունուլը այն ժամանակ զինեառն էր, ապա բան էր, որտեղ բանտարկվում էին էմիրները, գորակաները և մասնութերը, ինչպես որ Խիզանայր ալ-շամախին էր ծառայում որպես հանցագործների զողերի և եղուզակների բան: Երբ ալ-Մայիթ ալ-Նասիր (Մուհամմադ իբր Կալվալին) եկավ իշխանության, Քարաքիջ վերադառնարուց հետո, կառուցելու հայտն ցուցաբերեց: Ուստի ևս գերիներ վերցրեց Հասոր Երկրից և այլ տեղերից (ընդգրում մերև է-Գ.Դ.) և բրեց Ծփառուս: Նա մեծ բանակությամբ տեղամայրեց Կարաք ալ-Զաքարում, մի մեծ խումբ է Խիզանայր ալ-բունուլու մուխանայր ալ-Ջաբրիլ ալ-Խալիք ալ-Խալիք հայերով (ընդգում մերև է-Գ.Դ.), որ բանան այնտեղ զարդարեց գործել: [Սովորակ ալ-Նասիր այնտեղ ներանց համար] Կացարաններ կառուցեց, որտեղ որ զավակներ էին ունենալու, ոգեկեցի խմբչները էին պատրաստում: Մեկ տարվա ընթացքում երանք 32 հազար կառաս, որոնք քացենիքաց վաճառում էին: Անգամ խորի միրը էր երանց մոտ մասնաճանի սեղանին՝ վաճառվելով առանց որևէ ամոթի: Լրաւ տեղեր է-

բազմաթիվ մուսուլմանական կրոնական կառույցների պետական դիմագծում:

ին առանձնացրել որտեղ մարդիկ հանդիպում էին արգելված բաների համար: Նրանց մոտ էին այցելում անառակ մարդիկ՝ օրեր շարունակ տրվելով հարթեցողությանը, պառնիկեների հետ սեռական հարաբերություններին, այլ առասապր զբաղմունքների: Մամուռներն այնուղ շատ արգելված բաներ էին անում՝ շատերն իրենց առլաճ-ների և էտիրների մասլությունների հետ Եվ նույնիսկ եթե կինը բռնել էր իր ընսանիքը կամ ամուսնուն, կամ եթե հարճ հեռացել էր իր տիրոջից կամ եթե պատասխն բռնել էր իր հորը և համերի մոտ (ընդգծումը մերն է-Գ. Դ.) մոտել Խիզանաթ ալ-բունութ, այնու ոչ որ չեր կարող հետ վերցնել երան նրանց մոտից ով էլ որ լիներ:

Էմիր ալ-Հաջջ Ալ Մայիրը [Խախիլինում էլ] ձեռնամուխ էր եղել երանց հարցին և [սույօթա] ալ-Մայիր ալ-Նասիր Սուլիմանայ իրն Պալավունի հետ քանից բանակցել էր երանց ամբարդույան վերաբերյալ: Նա այդ հարցն անպատճանան էր բռնություն, բայց եթե սկսեց հաճախ հարցենել ։ [սույօթանը] զայրացազ երա վրա ասելով «Օ՛, Հաջջ: Ինչը ան է ես դրույում երանից: Եթե թե՞ այդրան շատ է ապշեցնում երանց հարժանալունը, սեղափոխվիր երանց մոտից: Սա վիստեցրեց երան, և ես ձի հեծեց և ալ-Հուսանիյայի մերձակարը գնաց, այնտեղ տեղ վերցրեց և իր համար տուն կառուցեց կողքին մզկիր կանգնեցրեց, կացարան, բանիք և կրպակներ շինեց: Սակայն երա սրուտ մաս թշնամնոր միջն որ կարող կինեներ երանց հետ հաջիվերը-մաքրել: Նա երանց նկատմամբ ձեռքերի ազատություն ստացավ՝ սույօթնի փոխարքա դառնալով: Եկան Պահիրեի կառավարիչը ներքինին, փոխարքայի որոշ ներկայացուցիչներ հարձակվեցին Խիզանաթ ալ-բունութի վրա տարիանելով՝ սարող քնակցությանը որից հետո զարդեցին զինու տարաները որոնց բազմաքանակությունը հնարավոր չէ նկարագրել, փշեցին: Էմիր Կումարին զինեց երա տարածքը զանձարանից և տրամադրեց վերատեսությն, որ վերջինս հայտարարի երա մասնակիցներն մասին: Մարդիկ ցանկացան տարածք ու-

նենայ այնտեղ, վարձակալեցին, տեղ կառուցեցին ցրադացներ և այլն:

Խիզանաթ ալ-բունութին մենք անդրադարձել ենք նաև «Խրատներ և հորդորներ թաղամասերի և հուշարձանների նկարագրության համար» գրքում՝ նշելով, որ երա ավելումն ամենահիշարժան օրերից մենքն են: Նրա բաներումը հավասար էր Տրիպոլիի և Աքրայի զրավմանը հաշվի առնելով, թե ինչ-րան մեղքը էին գործվում այնուհետ Ալլահի առաջ:

Ճետ փոխարքան Կահիրեի կառավարյաց պահանջեց և երան պարսավորեցրեց նույն անել միջնաբերդի գերիների տների հետ: Նա այնտեղ գնաց, կտորեց այնտեղ եղած զինու կարասները, իշեցրեց երանց միջնաբերդից և Խիզանաթ ալ-բունութի բրիստունյաների հետ մեկտեղ տեղափոխեց ալ-Բասիր մերձակայքում զանվոր մի տեղ՝ Իրն Տուլոնի մզկիրի և Կահիրեի միջն: Նրան իշնանեցին այնուհետ այսուեղ կացարաններ ստացան և մինչն օրս էլ շարունակում են այնտեղ լինել:

Միջնաբերդում եղած գերիները երևելի մարդիկ էին, որոնց վրա [սույօթանը] ալ-Մայիր [ալ-Նասիր Սուլիմանայ իրն Պալավունը] հենվում էր իր շինարարական գործերում: Նրանք իխսու արատավոր կապերի մեջ էին մամկուների և միջնաբերդի կանաց հետ: Եվ [Ալլահի] ազատեց երանց ից³⁰:

Կաբերի մյուս ժամանակակիցն ալ-Շուջանին է, ում պատումը շատ նման է ալ-Շուտափիի պատումին այն տարբերությամբ, որ նրանում ակնարկ չկա Խիզանաթ ալ-բունութի բնակչների ազգային պատկանելության մասին: Թեև երա հաղորդաւմից մեզ արդեն հայտնի տեղեկություններին կարող ենք նաև որոշ լրացումներ կատարել: Օրինակ, այն, որ «Դրոշակների պահեստարանը» իր կառավարիչը ու դրան-

³⁰ Al-Maqarzi 1958 (լ. 2.3), ս. 640-642.

պաներն ուներ: Մազմագերիներին հաջողվել է շահել տուբանի բարեհաճությունը և հասնել կրան, որ այլս ոչ ոք չի բանուարկվել և փառացար ալ-բունուդում: Այնուամենային, Ալ Հաջջի պաշտոնավարման օրոք յուրաքանչյուր շուկայի համար իմաստ և մուեզզին է նշանակվել, խստացվել է հսկողորդումը հարեցողության նկատմամբ: Եվ եթե գտնում էին զինված մեկին, ծեծի էին ենթարկում և զինին լցում զիյին: Նա պատում է, թե ինչպես են մի անգամ տասնապետ հմբ Իբ ալ-Առևադիին զինի խմելիս են գտել և տարել Ալ Հաջջի մոտ: Վերջինս զանահարել է նրան և կտրել հմիրության ոռձկը³¹:

Արաբագիր հեղինակներից «Դրոշների պահեստարակ» դեպքին իր երկուս անդրադարձել է նաև Իբն Կառի Շուհրան (մահ. 1448 թ.): Նրա հաղորդումը, սակայն, հիմնված է ալ-Շուջայիի վերը բերված պատումի վրա և առանձին հիշատակման արժանի մանրամասներ չի պարունակում³²: Նույնը, բերլան, կարելի է ասել Իբր Թաղրի Բիրդի (մահ. 1470 թ.)³³ և Խալի իին Շահին ալ-Զահիրի (մահ. 1485 թ.) մասին: Վերջինս, գովարանելով Էմբր Հաջջ Ալ Մալիքին, նրա ամենամեծ գործերից է համարում «հայերին և հոռոմներին (բաւգում՝ al-rûm) և փառացար ալ-բունուդուից հանելլը՝ ավելացնելով, որ վերջինիս տարածումը իր ապրած ժամանակում եղել է ալ-Սարիկիյա կրոնաբարձրական դպրոցը (al-Madrasa al-Sâbiqiyâ)³⁴:

³¹ Al-Şugga'î 1977, §. 255-256.

³² Ibn Qâdî Şuhba 1994 (շ. 2), §. 352-353, 488.

³³ Հման. Ibn Taqîrî Birdî 1992 (շ. 10), §. 72-73:

³⁴ Al-Zâhirî 2002 (շ. 1), §. 79.

Ալ-Մակրիզիի «Ալ-Խիտատ»-ը ևս մի խիստ հետաքրքրական տեղեկություն է պարունակում հայաբնակ քաղաքի մասին: Բանն այն է, որ 1322 թ. կրօնական հորի վրա մուսուլմանների և քրիստոնյաների միջև արյունավի բախումներ սկսվեցին Կահիրեռում և Եղիպսոսի մյուս շրջաններում: Արդյունքում բազմաթիվ քրիստոնեական վանքեր և եկեղեցիներ հարձակման և ավերածության ենթարկվեցին: Հետաքրքիր է, որ Կահիրեռում բանդաված եկեղեցիների շարքում ալ-Մակրիզիին հիշատակում է նաև «Դրոշակների պահեստարակ» տարածքում եղած մեկը³⁵: Եթե հաշվի առնենք, թաղի բնակչության երկիրական կազմում հայերի ունեցած գերակշռությունը, ապա այս եկեղեցին էլ հավանաբար հայկական է եղել, թեև նրա մասին այլ աղբյուրներում որևէ այլ տեղեկություն գտնել չի հաջողվում³⁶:

Ուստի այսպիսի ճակատագիր ունեցավ և փառացար ալ-Բունուդ թաղի և Կահիրեռի միջնաբերդի հայությունը: Վերսում ալ-Յուսուֆիի երկից ալ-Մակրիզիի կատարած բաղվածքի մեջ կարդացինք, որ ուզմագերիների ընտակիթները, «Դրոշակների պահեստարակ»-ից տեղահանվելուց հետո

³⁵ Al-Maqrizî 2002-2004 (շ. 4), §. 1076.

³⁶ Մյասն Սպարապետի շարունակողը հիշարժան տեղեկություն է տախու հայոց Կոստանդինուպոլիսի (1323-1326 թթ.) կարողիկուի Կիլիկան Հայստանի և Մամլուքան սուլթանության միջև հաշության պայմանագիր կը եղու նպատակով 1323 թ. Կահիրեռ կատարած այցելության վերաբերյալ: Ըստ նրա հայոց հայրապետը, լավ ընդունելություն գտնելով սուլթանի մոտ, Կիլիկիան է վերադարձել երեք ասպետների և մի խոմք այլ ձիավորների ուղեկցությամբ, ովքեր գերության մեջ էին գտնվում այստեղ: Տե՛ս Մյասն Սպարապետ 1859, էջ 141:

բնակություն են հաստատել Հին Կահիրէի հողարքութերի (ընագրում՝ *Kīmān Mīṣr*) հարևանությամբ, որտեղ, ինչպես երևում է, հաստատված են եղել ընդհուաց նաև մինչև ալ-Մակրիզիի ապրած ժամանակները այսինքն առնվազն մինչև ԺԵ դարի դարի 30-ական թվականները, եթե նա ավարտին է հասցրել իր երկի երկրորդ խմբագրությունը: Սրա վառ ապացոյցն այն է, որ այլուատ նոյն հելինակը Բու-Մինայի (սր. Մինա) անունով մի եկեղեցու մասին խուսելիս զում է: «Այս եկեղեցին մոտ է պատվարին» Հին Կահիրէ տաևող ճանապարհի հողարքութերի միջն: Այն բաղկացած է իրար հարակց երեք եկեղեցիներից մեջը հակոռիկներին պատկանող մուսու աստրիներին մուսու հայերին: Այն ամեն տարի եշտող տոն ունի, որի ժամանակ քրիստոնյաներն այնուել են հավաքվում³⁷: Հայերը, ինչպես երևում է, իրենց նոր բնակավայրում ավելի հիմնավոր են հաստատվել շրջանը հայտնի էր և մինչ օրս էլ հայտնի է *Kām al-Armān* («Հայերի հողարքություն») անվանմամբ: Ճիշտ է, որ Մինա եկեղեցին չի պահպանվել և նրա պահպաներն էլ գտնված չեն, բայց նոյն այս շրջանում մինչ օրս պահպանվել են հայկական գերեզմանատունները և սր. Մինա անունով մի մատուռ:

Կահիրէի հայ ուզմագերիների մասին շատ հետարքիր տեղեկություն է հայտնում Կիլիկիո վերջին արքա Լևոն Ե Լուսիյանի (կատ. 1374-1375 թթ.) խոսովանահայր և կենսագիր Ժարդելը: Ըստ նրա, եթե մամինութերի կոլպից գերեփարփած հայոց թագավորին սովորանի Սայֆ ալ-Դին Տաշ-Թիմուր ալ-Խավադար անունով էմիրը հարցում է, թե Ասուլանության որ քաղաքում կուգենա բնակվել, նաև պատասխանում է, որ Կահիրենում, բանից տեղյալ էր, որ միայն այնուել կարող էր իրեն անհրաժեշտ բան գտնել: Դարդելը շարունա-

³⁷ Տե՛ս *al-Maqrizi* 2002-2004 (գ. 4), Տ. 1063, ինչպես նաև Մըսրենան 1947, էջ 165:

կում է, որ այդժամ Տաշ-Թիմուրն իր մոտ է կանչում Կահիրէում բնակվող հայ մեծամեծերին և երսելիներին, որ սովորակի սուրուկներն են, և հարցնում, թե արդյոր պատրաստակամ են երաշխավոր լինել թագավորին և նրան սովորանի մոտ տանել, եթե վերջինս այդ պահանջի: Գերիները համաձայնում են ընդունել արքային և նրան տուն են տրամադրում: Խակ սովորան ել պատվիրում է զահագործք արքային պարենի համար ամեն օր 60 արծաթերամ հատկացնել³⁸:

Դարդելն արծերավոր վկասություն է տայիս նաև մասնաւոր ժամանակում ծառայությամ մեջ գտնվող խալամացած հայերի, ինչպես նաև Կահիրենում բնակվող հայ բնականաների վերաբերյալ³⁹: Հատկանշական է, որ Լևոն Ե-ի կինը՝ Մարզարիտ Սուտանը, մահացել է գերության մեջ և ըստ ամենայնի թաղվել վերոհիշյալ սր. Մինան եկեղեցում:

Աղբյուրագիտական տվյալների բացակայության պատճառով, հիմնվելով սույն Դարդելի հայտնած տեղեկությունների վրա, հայագիտության մեջ տարածվել է տեսակետ, որ Լևոն Ե-ին եկեցավայրը է տրվել Կահիրէի միջնաբերդում, որտեղ նա անցագործ է իր գերության տարիները: Բայց մամլության աղբյուրներում հատակ վկայություն կա, որ հայոց վերջին արքան բնակվել է հենց վերոհիշյալ ալ-Քում թաղամասում:

³⁸ Տե՛ս Jean Dardel 1906, պ. 86-87, ինչպես նաև Յովիան Դարդել 1891, էջ 152-153: Տե՛ս նաև Բասմանան 1908, էջ 57:

³⁹ Մեզ է հասել և այժմ Մատենադարանում է գտնվում 1352-1354 թթ. Կահիրենում («Ի բաղադրի Մոր կոչեցելոյ») գրված մի ձեռագիր (թիվ 2233), որի գրից Մատուց անունով մի բահանա էր, իսկ ստացողը՝ Միհրայ կուսակրու բահանա: Ձեռագիրը Բարբորինենու Մարաղացու «Բարողիքը»-ն է: Տե՛ս Սայր ցուցակ 2012, էջ 557-566: Տե՛ս նաև Տեր-Միհրայիկան 1980, էջ 227:

Իրն Դուլմակ (մահ. 1407 թ.) անունով պատմիչն այս մասին իր երկում գրում է. «Վերացավ Հայոց քաջալորությունն, և Աղահին փառը: Սուլթանը Սահի փոխարքա նշանակեց Յակոբ-Շահին: Խոկ թաքֆուրը՝ Սահի տէրը, բերվեց Բարձր Դուռ: Նրան հրամայվեց բաւկին՝ այ-Քումում՝ Միհրի (իմա՝ Հին Կահիրէ) և Կահիրէի միջն երա համար ոռմիկ նշանակելով»⁴⁰:

Ալ-Քումիր հայության վերաբերյալ երկու խիստ հետաքրքրական վկայություն ենք գտնում նաև մասմուրյան ադրբյունում: Պարզվում է՝ հիջրայի 784 թ. (1384 թ.), եթե արքա Լուս Են արդեն մոտ երկու տարի էր, ինչ Արագոնի և Կաստիլիայի միապետութիւն միջնորդությամբ ազատվել էր գերություննեց, Սուլթանության մայրաքաղաք Սահի հայերի կողմից ուղարկված բանագնացներ են եկել՝ իրենց մահացած կառավարյալ փխարքներ մեկ ուրիշին նշանակելու խնդրանքով⁴¹: Դեսպի մասին հաղորդում են այ-Մակրիզին, Իրն Հազար ալ-Ասկալանին⁴², Խալիլ իր Շահին ալ-Զահիրին⁴³ և Իրն Իյասը⁴⁴: Նրանցից ալ-Մակրիզիի «Քիբրաք ալ-Սուլուքում» կար-

⁴⁰ Ibn Dūqmāq 1982, §. 430.

⁴¹ Սամուկ Անեցու շարունակողելերից մեկը հաղորդում է, որ 1382 թ. (մեկ այլ ձևողում՝ 1381 թ.) եզիպոտու է վասելի հայոց Թեղորոս Բ Կիլիկիի (1382-1392 թթ.) կաթողիկոպը՝ առվ ընդունելություն գոնելով նրա մոտ: Գոնե տեսականորեն լիովին բացառիկ չէ, որ խորս արար պատմիշների արձանագրած նոյն միջադեպի մասին է, ինչ տարեթվերի տարբերությունը հետաքար է զբացական պատճի հետևած ինչի: Տե՛ս Սամուկ Անեցի և շարունակողներ 2014, էջ 282: Խոկ այլպես կարծելու հիմքը կան, քանի Հայոց արքան գերությունից ազատվել է 1382 թ. սեպտեմբերին, ինչ Բարիլուկ սուլթանական զահին նատել է 1382 թ. սույնեմբերին:

⁴² Ibn Ḥaġār al-Asqalānī 1969 (էջ. 1), §. 256 □

⁴³ Al-Zāhirī 2002 (էջ. 1.2), §. 193 □

⁴⁴ Ibn Iyās 1974 (էջ. 1.2), §. 307 □

դում ենք. «Միս քաղաքի քրիստոնյաները հանդես եկան իրենց հարցով քաղաքելու խնդրանքով քանի որ իրենց կառավարչը մահացել էր: Նրանց համար ընտրվեց մեկն Իրն Տուլիսի և Հին Կահիրէի միջակայրում զունվոր ալ-Կոմ-ում թակվող գերիներից Նա⁴⁵ նրան և Սահի եկաներին պատվու հապուսներ հացցրեց, զրեց երա եղանակնան կարգադրությունը (տալիճ): [Այսպէս] առավոտյան զինեցրոք եղած լինելով երեղոյան հայոց արքա դարձավ ուս իշխանությունը տարածվում էր մեծաքանակ մարդկանց վրա»⁴⁶:

Արքա պատմագիրները խոսում են հիջրայի 791 թ. Զումար ալ-Խիլիքա ամսի վերջին (1389 թ. հունիսիս) տեղի ունեցած ևս մի գետքի մասին: Ըստ ալ-Մակրիզիի՝ Մթափակման մեջ են ատել գերիների տները, հանել զինիների տակառները և կոտրվել միջնաբերդի պատերի տակ: Արքա պատմիշի հաղորդումից հասկանալի չէ, թե ինչ գերիների մասին է խոսքը, բայց մեկ այլ հետինակ Իրն Հազար ալ-Ասկալանիի վկայությունը պարզություն է մտցնում այս հարցում: «Չումադա II ամսի վերջին ալ-Ռումեյյայում զինու տակառներ կոտրվեցին, որոնք բերվել էին ալ-Քումում՝ Տուլումյան մզկիթի մոտակայրում ասպող քրիստոնյան հայերի տներից»⁴⁷:

⁴⁵ Նկատի է առևլած սուլթան ալ-Մայիր ալ-Զահիր Սայի ալ-Դին Բարկուլը (կառ. 1382-1289, 1390-1399 թթ.):

⁴⁶ Այս արժեքավոր վկայությունը, անշուշտ, նաև կարևոր փաստ է, որ քաջալորդայակ կործանումից հետո հայերը երկրամասում դեռ մի ինչ-որ ժամանակ ինքնիշխանության որոր մակարդակ էն պահպանել: Այս վկայությունը, անշուշտ, նույտօրինակ այլ վկայությունների հետ մենտել, առանձին հետազոտության թեմա է: Տե՛ս ալ-Մագրիզ 1970 (էջ. 3.1), §. 237:

⁴⁷ Տե՛ս Իbn Ḥaġār al-Asqalānī 1969 (էջ. 1), §. 370: Հավանաբար նոյն այս միջադեպի մասին է խոսում նաև Իրն Իյասը, բայց չի հիշում

Այս վկայություններից մակածելի է, որ նախ հայերը Կահիրեի հողաբուժների շրջանում են եղել առևտնակ մինչև ԺԴ դարի վերջերը և, որ ամենահետաքրքիրն է, շարունակել են զբաղվել կրանք, ինչի համար վտարվել էին Կահիրեի միջնաբերդից «Հրոշակների պահեստարանից», այն է զինորոժությամբ:

THE ARMENIANS IN THE 14TH CENTURY MAMLUK CAIRO. ՀԻԶԱՆԱԼ-ԲՈՆՈՒ

G. Danielyan

Summary

In almost every description of Mamluk military expeditions against Cilician Armenia, found in Armenian and Mamluk historial sources, there is a reference to enslavement of large numbers of Armenians, including distinguished nobles and barons. But if the noblemen were often given a status of political captives, and diplomatic efforts or ransoms were enough to liberate them from slavery and to return to their homeland, the prisoners from common people were henceforth to accept the heavy burden of slavery in various cities of the Sultanate.

Mamluk sources rarely give details on the further fate of Armenian military prisoners. Supposedly, some of them appeared in slave markets of the Middle East and were enslaved. Beautiful women were taken to the harem of Mamluk sultans and emirs. Children were converted to Islam, educated and trained in the arts of warfare. After manumission some of them even reached high positions in the military and administrative system of the Mamluk Sultanate.

But for a single case, Arabic sources give interesting evidence regarding the daily life of Armenian war prisoners in Cairo. According to them, sultan *al-Malik al-Nāṣir Muḥammad ibn Qalawūn* (1293-1294, 1299-1309,

ոչ հայերին և ոչ էլ ալ-Քուսիր, քաղի այդ գրում է, որ դեպքը Ռազար ամսին և եղել. «Ռազարին Արաբկի Յայրուղա ալ-Ղասիրին հրամաց քափել ողելից խմիչքները, որից շուրջ 5000 սակառ շարդվեց Շասվարում (պետք է լինի՝ Շասվար), միջնաբերդի տակ: Շրջափակվեցին այն բարամասերը, որտեղ խմիչք էր վաճառվում, և այդ ամենը հրաշալի կատարվեց»: Տե՛ս Ibn Iyās 1974 (ը. 1.2), տ. 410:

1310-1340) in the beginning of his third reign decided to inhabit the location known as *Ḩizānat al-bunūd* (literally “storehouse of banners”) with Christian war prisoners, generally with Armenians and Franks. This place had previously served Fatimids as an arsenal and a military treasury. During the Ayyubid and the early Mamluk period it had been used as a prison where former high-ranking military and civilian officials, such as viziers and emirs, were usually kept. Another group of Armenians was settled in the Cairo Citadel.

The Arabic sources report that the Armenian prisoners were mainly employed in public, mainly construction works. But over the years, *Ḩizānat al-bunūd* transformed into a small quarter, where some “semi-legal” businesses, like winemaking industry, flourished. Beside wine-selling, dwellers of the “getto” were also accused of pig meat- and prostitution-businesses. In spite of its notorious reputation in Muslim eyes, the activities in *Ḩizānat al-bunūd* were tolerated by sultan *al-Nāṣir*. But after his death, the new authorities decided to raze the inns and the taverns of the quarter to the ground. The Armenians, who lived in the Cairo Citadel, were also punished. The Armenian population was evicted from these two places and moved to the outskirts of Cairo.

ՄԱՍԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Abū al-Fidā' 1907 - *Abū al-Fidā'*, 'Imād al-Dīn Ismā'īl, Kitāb al-Muhtaṣar fī al-abhār al-baṣār, ғ. 4, al-Maṭba'a al-Husayniyya al-Miṣriyya, al-Qāhira;

Al-'Aynī 2010 - *Al-'Aynī*, Badr al-Dīn, 'Iqd al-ğumān fī tārīħ ahl al-zamān, ғ. 4, bi-taħbiq Muḥammad Muḥammad Amin, al-Hay'a al-miṣriyya al-āma li-l-kitāb, al-Qāhira;

Baybars al-Manṣūrī 1987 - Baybars al-Manṣūrī, Rukn al-Dīn al-Dawādār, Kitāb al-Tuhfa al-mulukiyah fī al-dawlā al-turkiyya, bi-taħbiq 'Abd al-Hamid Salīh Ḥamdān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira;

Al-Birzālī 2006 - *Al-Birzālī*, 'Alām al-Dīn al-Qāsim [ibn Muhammād ī]bñ Yusuf, Al-Muqtasī li-tārīħ al-shayh Šihāb al-Dīn Abī Šāma al-ma'rūf bi-tārīħ al-Birzālī, ғ. 3, bi-taħbiq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Aṣriyya, Ṣaydā-Bayrūt;

Cahen 1986 - Cahen Cl., "Ibn Abī Ṭayyi'", in *EI²*, vol. III (H-IRAM), E.J. Brill, Leiden, p. 693;

Dadoyan 2013 - Dadoyan S.B., *The Armenians in Medieval Islamic World: Paradigms of Interaction Seventh to Fourteenth Centuries*, vol. 2 (*Armenian Realpolitic in the Islamic World and Diverging Paradigms Case of Cilicia: Eleventh to Fourteenth Centuries*), Transaction Publishers, New Brunswick - London;

Dadoyan 1997 – Dadoyan S.B., *The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East*, Brill, Leiden-New York-Köln;

Fernandez 1988 - Fernandez L., "On conducting the affairs of the state: a guideline for the fourteenth century", *Annales Islamologiques*, t. 24, pp. 81-91;

Al-Hazrağt 1914 - Al-Ḥazraqī, 'Alī ibn al-Ḥasan, *Kitāb al-‘uqūd al-lu’lu’yya fī tārīḥ al-dawla al-rasūliyya*, g. 2, bi-taḥqīq Muhammed Basyūnī 'Asal, Dār al-Hilāl, al-Qāhira;

Ibn 'Abd al-Żahir 1996 - Ibn 'Abd al-Żahir, Muḥī al-Dīn, Al-Rawḍa al-baḥriyya al-zāhiра fī ḥijāt al-mu’izziyya al-Qāhira, bi-taḥqīq Ayman Fu’ād Sayyid, al-Dār al-‘arabiyya li-l-kitāb, al-Qāhira;

Ibn al-Dawādārī 1960 - Ibn al-Dawādārī, Abū Bakr ibn 'Abd Allāh, *Kanz al-durār wa-ǵāmī'* al-gurār, g. 9, al-Qāhira;

Ibn al-Furāt 1942 - Ibn al-Furāt, Muhammed ibn 'Abd al-Rahīm, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, g. 7, bi-taḥqīq Qustantīn Zurayq, Bayrūt;

Ibn al-Wardī 1868 - Ibn al-Wardī, Zayn al-Dīn 'Umar, *Tatimmat al-Muḥtaṣar fī ahbār al-baṣār*, g. 2, al-Qāhira;

Ibn Duqmāq 1982 - Ibn Duqmāq, Șārim al-Dīn Ibrāhīm, Al-Ğawhar al-tāmīn fī siyar al-hulafā' wa-l-mulūk, bi-taḥqīq Sa'īd 'Abd al-Fattāh 'Aşür, Ğāmi'at Umm al-Qurā, Makkah;

Ibn Hağar 1969 - Ibn Hağar, Șīhāb al-Dīn al-Asqalānī, *Inbā' al-ğumr fī abnā' al-'umr*, g. 1, bi-taḥqīq Hasan Habaşı, al-Qāhira;

Ibn İlyās 1974 - Ibn İlyās, Muhammed ibn Ahmad, *Badā'ī' al-zuhūr fī waqā'ī' al-duhūr*, g. 1.2, bi-taḥqīq Muhammed Muşṭafā, Dār ihyā' al-kutub al-‘arabiyya, Franz Şteynez, Fıstäbin;

Ibn Katīr 1998 - Ibn Katīr, Abū al-Fidā' 'Abd Allāh, Al-Bidāya wa-l-nihāya, g. 18, bi-taḥqīq 'Abd Allāh ibn 'Abd al-Muhsin al-Turki, Dār Hağar;

Ibn Qaḍī Şuhba 1994 - Ibn Qaḍī Şuhba, Taqī al-Dīn, Al-Tārīħ, g. 2, bi-taḥqīq 'Adnān Darwīš, Dīmaşq;

Ibn Taġrī Birdi 1992 - Ibn Taġrī Birdi, Ġamäl al-Dīn Abū al-Mahāsin Yūsuf, Al-Nuġum al-zāhiра fī muluk Miṣr wa-l-Qāhira, g. 10, bi-taḥqīq Muhammed Husayn Šams al-Dīn, Dār al-kutub al-ilmīyya, Bayrūt;

Ibn Zubayr 1959 - Ibn Zubayr, Al-Qaḍī al-Raṣīd, *Kitāb al-dājā'ir wa-l-tuhaf*, bi-taḥqīq Muhammed Ḥamīd Allāh, al-Kuwayt;

Jean Dardel 1906 - "Chronique d'Arménie par Jean Dardel", Recueil des historiens des croisades. Documents arméniens, t. 2, Paris, p. 1-109;

Leiser 2017 - Leiser G., *Prostitution in the Eastern Mediterranean world: the economics of sex in the late antique and medieval Middle East*, I.B. Tauris, London;

Թեմուրյան ժամանակաշրջանի նշանավոր պալատական պատմագիր Հափեգ-Ե Աբրուի «Թարիխ-Ե Հափեգ-Ե Աբրու» պատմաաշխարհագրական երկը, որն ավելի շատ հայտնի է «Ջորջաֆիա» անվամբ, թեև համարու բայց պատմական, քաղաքական և աշխարհագրական բնույթի արժեքավոր տվյալներ և հաղորդում Հայաստանի վերաբերյալ որոնք թեպես իրենց որոշ կումպիյատիկ բնույթին, կարևոր են հայոց պատմության որոշ հարցերի համակողմանի և խորքային ուսումնասիրման համար:

Հափեգ-Ե Աբրուին (որոշ աղբյուրներում նաև՝ Նուր-Էդդի կամ Լուրֆուլլահ, նոշան Նուր-Էդ-Դին, Աբր ալ-Խաչի Բեկհանինի¹) վերաբերող կենսագրական մանրամասները սույն են: Ծննդյան թվականն անհայտ է: Ականավոր արևելագետ Բարտոլոմ Աբրուին նվիրված իր արժեքավոր ուսումնասիրության մեջ, վկայակոչելով ԺԵ դարի մեկ այլ պատմագրի, նշում է, որ նա ծնվել է Հերաքում, կրթություն է ստացել Համարանում և մահացել Զենջանում իհօրի 834 թվականի Շա-

¹ Browne 1920, էջ 424, ինչպես ևս՝ Charles 1879, թ. 421: Ավելի ուշ Բարտոլոմի հացողութել է ճշգրտել Հափեգ-Ե Աբրուի ամբողջական անունը, այս է՝ «Շիհար աղ-դին Աբրամիան Լուրֆուլլահ ալ-Խաչի» (Բարտոլու 1973, ստ. 241.)

վալ ամսին (1431թ. հունիս/հուլիս): Հափեգ-Ե Աբրուն, լինելով Թեմուրյան կայսրության հիմնադիր Լենգ Թեմուրի մտերիմս ու «հովանավորյալ», հետագա վորություն ունեցել ոչ միայն առավել մոտիկից ծանոթանալու պայմանական կյանքին, այլ ևս Թեմուրի հետ մասնակցելու ռազմական դրոշ արշավանքներին և ականատեսք լինելու տարբեր շրջաններում ծավալվող պատմական և քաղաքական իրադարձություններին: Թեմուրի մահից հետո Աբրուն ծառայության է անցելու վերջինիս որոն 1397 թվականից Խորանանում հոր գահը ժառանգած Շահրուին մտն: Վերջինիս արքունիքում է գրում է իր պատմական և աշխարհագրական երկերը²:

² Եարտուն 1973, էջ 74-97.

«Ջորջաֆիա» աշխատությունից գատ, Հափեգ-Ե Աբրուի գրքին են պատկանում նաև հետևյալ պատմագրական երկերը

- Հայութ Հասիր ալ-Թավարիի» (Շահը ալ-Դինի «Ջամիր ալ-Թավարիի շարունակությունը»), որն ընդորում է 1304-1335 թթ.:

- Հայութ Հավաքառամե-Ե Շամիր» (Շամիր «Ջաֆարեամե-Ե շարունակությունը»), որը նվիրված է Լենգ Թեմուրի կյանքի վերջին տարվա՝ 1404-1405 թթ. պատմությանը:

- Հայութ Հավաքառամե-Ե Հափեգ-Ե Աբրու» (Հափեգ-Ե Աբրու ժողովածու, այեկերազիստական բնույթի կումպիյատիկ աշխատություն է որը Հափեգ-Ե Աբրուն գրել է 1417-1418 թթ. Շահրուի պատմվերով: Այս երկն ընդորում է Թարարիի Շահը ալ-Դինի ու Շամիրի հատվածները և շարունակում երանց պատմությունները:

- Հայութ Հավաքառամե-Ե Հափեգ-Ե Աբրու» (Տարեգործությունների ժողովածու, գրվել է 1426 թվականին և նվիրված է Շահրուի որդի Բայսուլետիրի: Աշխատությունը բաղկացած է չորս հասողորդ Աղյուրագիստական աղժեք երեսի չորրորդ մասը որը վերացրված է «Ջորջար ալ-Թավարիին և Բայսուլետիրի» (Բայսուլետիրի տարեցրությունների ժողովածու): (Պայրէջ)

«Զողրաֆիա» աշխատությունն ուսումնասիրողների ուշադրության է արժանացել դեռ ԺԹ դպրում: Աստմաշխարհագրական այս երկի՝ մեզ հայտնի միակ ձեռագիր օրինակն անգլո-աֆղանական առաջին պատերազմի (1838-1842թթ) ընթացքում՝ 1842 թվականին, նվիրաբերվում է անգլիացի դիվանագետ և արևելագետ Հենրի Ռուփինանին⁴ Հերաթի կառավարիչ Յար-Սուհամմեդ խանի կողմից: Այդ ձեռագիրը, որ հայտնի է իրեն «Շոուշիի հայոցի ձեռագիր», ներկայում պահպան է Քրիստոնական թանգարանում (B.M. 1577) և մասնամասն նկարագրված է Չ. Ռինդի կողմից⁵:

«Զողրաֆիա» աշխատությունը Հաֆեզ-է Աբրուն սկսել է գրել Շահրոխի պատվերով՝ 1414 թվականի՝ հետևելով արաբերու աշխարհագրության ավանդույթներին: Աշխատության հիմքում արաբերեն աշխարհագրական երկի է, որ կրկին Շահրոխի պատվերով Աբրուն նախ քարգմանում է պարսկերեն, այսուհետև համարում այլ արյուների տվյալներով, որոնցից հետինակը հիշատակում է Իրեն Խորդադեհի «Քիթար ալ Մասալիք վա մասմալիք» (ԺԹ դար), Սուհամմեդ իրն Նաջիր Բարրանի «Զահան Նամն» (ԺԹ դար), Նասէր Խուրուլի

<http://www.iranicaonline.org/articles/hafez-e-abru> (Վերջին դիտում՝ 06. 04. 2020):

⁴ Հենրի Կրեվիի Ռուփինան (1810-1895թթ.), անգլիացի դիվանագետ և արևելագետ, աստրախանության հիմնադիրներից: 1840-ական թվականներին եղել է Ղանջահանում Անգլիայի կառավարության հասուլք՝ ներկայացրուելիք: (Կայրէ՛՛ <https://www.britannica.com/biography/Henry-Creswicke-Rawlinson> վերջին դիտում՝ 15.07.2020)

⁵ Charles 1879, էջ 421:

«Սաֆայր Նամն» (ԺԹ դար) և «Կամուն վա Բուլղան» (անհայտ հեղինակ) աշխատությունները: «Զողրաֆիա» աշխատությունը ստվարածավալ է, աղբյուրագիտական արժեք ունեն և մեծ հետարքություն են ներկայացնում Ֆարս, Քերման, Խորասան և անանգներին վերաբերող հատվածները, որոնց նկարագրության աշխատության մեջ բավական ընդարձակ տեղ է հատկացված: Կառուցվածքային առումով՝ աշխատությունը բաղկացած է երկու հատորից: Երկին առաջին և ամբողջապես պահպանված միակ հատորն ունի կառուցվածքային հետևյալ նկարագիրը: Միենքը բարդապահական ընույթի ներածական ծավալու հաստվածին հաջորդում է ծովերի, լճերի, գետերի և լեռների նկարագրությունն ընդգրկող բաժինը, հաջորդիլ առաջին զյուսում, ամփոփված է տարբեր երկների և շրջանների բաղարական և աշխարհագրական նկարագրությունը՝ արևմուտքից արևելյան երթականությամբ, երկրորդ և երրորդ զյուսները վերաբերում են համապատասխանարար Ֆարսի, Քերմանի, Խորասանի աշխարհագրական, ապա նաև՝ պատմական բաղարական իրադարձությունների նկարագրությանը⁶: Երկրորդ հատորն ամբողջությամբ նվիրված է Խորասանի և Մավերաննահրի մասնամասն նկարագրությանը: Երկրորդ հատորի ամբողջական տարբերակը չի պահպանվել⁷: Աշխատության առաջին հատորը Սադեր Սաջաղիի

⁶ Ե. Ոինուն աշխատության առաջին հատորին է վերաբրում նաև Խորասանին վերաբերող հատվածը, մինչդեռ ըստ Բարտոլդի, Խորասանի նկարագրությունն ընդգրկող բաժինը վերաբրված է աշխատության երկրորդ հատորին: (Charles 1879, էջ 421, հմտ. նաև՝ Բարտոլդ 1973, ս্তր. 83).

⁷ Charles 1879, էջ 421:

իմբագրությամբ և աշխատասիրությամբ լոյս է տեսնում Արեգակնային հիշքի 1375 թ. (1997 թ.)⁸: Հատկանշական է, որ զիտական ոլորտում գերակշռում են հատկապես «Զողորաֆիա» երկի՝ Ֆարս, Քերման և Խորասան նահանգների նկարագրությունն ընդգրկող հատվածներին վերաբերող տարբեր հրատարակությունները⁹:

Սույն հոդվածի առանցքային նպատակն է ուսումնասիրողների ուշադրությանը ներկայացնել «Զողորաֆիա» աշխատության՝ «Հիշատակություն Արմենիայի և Ֆարանշաուանեաի մասին» խորագիրը կրող ենթագլուխը¹⁰, որտեղ, ինչպես արդեն եշից, Հայաստանին առնչվող թեև հակիմք, բայց արժեքավոր տեղեկություններ կան ամփոփված: Հարկ ենք համարում նշել, որ «Զողորաֆիա» աշխատության մեջ Հայաստանին առնչվող հաղորդումների սակավությունն ու որոշակի առումով կումպայատիվ ընույթը թերևս պայմանավորված է Թեմուրյան պետության մեջ Հայաստանի ընդգրկված շինելու հանգամանքով: Համեմատության համար նշենք, որ աշխատությունը մանրամասն ու հարուստ տվյալներ է պարունակում Թեմուրյան պետության կազմի մեջ ներառված շրջանները՝ Խորասանի, Ֆարսի, Քերմանի վերաբերյալ, որոնք բարձր են գնահատվել ուսումնասիրողների կողմից և անզամ դարձել առանձին հետազոտությունների աղյուր:

⁸ 1375 مکتب میراث ایران: تهران: چاپخانه ایرانی مجلد 2، 1 تهران: چاپخانه ایرانی (այսուհետ «Զողորաֆիա»):

⁹ • Mayer R. Heravi, 1349 ſ/1970.

• Krawulsky 1982-84.

(կայք՝ <http://www.iranicaonline.org/articles/hafez-e-abru>, վերջին որոշում (06. 04. 2020)):

¹⁰ «Զողորաֆիա» 1375, էջ 19:

«Զողորաֆիա» երկի՝ Հայաստանին վերաբերող տվյալների նախնական վերլուծության և համեմատության արդյունքում խել պարզ դարձավ, որ հաղորդվող տեղեկությունները մեծամասնությունում կումպայատիվ ընույթ են կրում և այլ հեղինակից փոխառած վկայություններ են: Հատկանշական է, որ Հաֆեզը և Արրուն մեծապես ներշնչվել է հատկապես Շ դարի պարսկալեզու պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ Ռաշիդ եղ-Դին Ֆազլ-Ալլահ Թաքիր ալ-Համադանիի «Թաքիր-ալ-Աֆրանց» («Ֆրանկների պատմություն») պատմաշխարհագրական երկից¹¹, և նաև հանդիշանալով տվյալ երկի՝ 1416 թվականի գրքություն համարվող ձեռագրի ընդօրինակողը, «Զողորաֆիա» աշխատության մեջ փոխառել և շարադրել է Ռաշիդ եղ-Դինի վերոհիշյալ երկի՝ Կիլիկիան Հայաստանին վերաբերող պատմաշխարհագրական ընույթի արժեքավոր հաղորդումների գերազին մասը:

Սույն կիրորձն քենության ենթակել Հաֆեզ-և Արրուն աշխատության՝ Հայաստանին վերաբերող որոշ հաղորդումներ՝ համարյելով դրանք ժամանակաշրջանի այլ աղբյուրներ, և զիտակավագն Ռաշիդ եղ-Դինի «Թաքիր ալ-Աֆրանց»

¹¹ 1301 թվականին Ղազան խանի խանձեարարությամբ Ռաշիդ եղ-Դինը ձեռնամուխ է լինում «Զամե-ալ-թ-թավարին» աշխատության շարադրմանը, որուն ի պկաբատ պետք է ընդգրկված լիներ ևս քրիստոնյաց աշխարհի պատմությանը վերաբերող տեղեկությունները: Սակայն, հիշքը 705թ.-ին (1305-1306 թթ.), Ռաշիդ եղ-Դինը որոշում է քրիստոնյաց աշխարհի վերաբերյալ տեղեկությունները ամփոփել առանձին «Թաքիր ալ-Աֆրանց» վերագրով գրում: (Այս մասին մանրամասն տե՛ս Փափացյան 1978, էջ 130):

երկի հետ՝ իբրև Հաֆեզ-է Արքուի կողմից անմիջականորեն օգտագործված ադյուքի¹²:

«Զողորաֆիա» աշխատության մեջ Հայաստանին վերաբերող հասունական մասունքում է հետևյալ նախադասությամբ՝ «Հայոց երկիրը գտնվում է ֆրանկների երկիր առջևում և նախասրահի դեր է կատարում»¹³: Ակնայսում է, որ խոսքը վերաբերում է Կիլիլյան Հայաստանին, և որ նմանօրինակ ձևակերպմամբ հասունական շեշտվում է Կիլիլիայի հայկական թագավորության առավել շահեկան և առանձնահատուկ կարգավիճակը՝ ի համեմատություն իլիսանության սահմաններում գտնվող ստորակա (վասայ) այլ պետությունների: Սոյս հաղորդումն, անկասկած, բավական արժեքավոր է, սակայն, չենք կարող չներգծել, որ այս թե՛ բռվանդակային և թե՛ կառուցվածքային առումով «Թարիխ-ալ-Աֆրանջ» երկիր կիլիլյան Հայաստանին վերաբերող հասունական առաջին խոյ նախաստության ճշգրիտ ընթօրինակումն է: Հ. Փափազյանը, ով ուսումնասիրի է «Թարիխ-ալ-Աֆրանջ» աշխատության կիլիլյան Հայաստանին առնչվող պատմաաշխարհագրական տեղեկությունները և ներկայացրել հոդվածի հետքով (տե՛ս ծիր. 12), անդրադառնալով վերտարապերյալ հաղորդմանը,

¹² Մեզ համար ուղեցողությունը դեռ է կատարել և մեծապես օժանդակել Հ. Փափազյանի «Թաշիդ-Եղ-Դինը Կիլիլյան Հայաստանի մասին» վերսագրված հոդվածը, որով հետիւնակը ոչ միայն զիտական շրջանառության մեջ է դրել Ռաշիդ Եղ-Դինի «Թարիխ ալ-Աֆրանջ» երկիր Կիլիլյան Հայաստանին վերաբերող քաղաքային հասունական հայերեւ հարգմանաւորությամբ, այլ նաև ադրբարագիտական մակարածան վերլուծության ներարկել հաղորդվող տվյալերը (Փափազյան 1978, էջ 129-139)

¹³ «Զողորաֆիա» 1375, էջ 19:

նշում է, որ տվյալ տողերում «հստակորեն արտահայտված է ոչ միայն այն ժամանակ իսլամ ընդունած Ղազան խանի իլ-խանական պետության, այլ ամբողջ Ասոցավոր Ասիայի իլ-խանական տէրությունների վերաբերմունքը Կիլիկիայի հայկական պետության նկատմամբ»¹⁴:

Հաղորդվող տվյալների շարքում հաջորդիվ Արմենիա վարչատարածքային միավորի նկարագրության առնչվող տվյալներն են: Հեղինակն անդրադառնում է Մեծ և Փոքր Արմենիա (Հայաստան) աշխարհագրական հասկացություններին տվյալներ ներկայացնում դրանցից յուրաքանչյուրի սահմանների (Կայք, Երկայնք) վերաբերյալ:

«Եղին Արմենիա (Հայաստան) կա Մեծ (Արմենիա ալ-Քուբրայ և Փոքր (Արմենիա ալ-Ասուրայ): Մեծ Արմենիայի երկայնքը ձգված է Երկեկայի սահմաններից միենց Սալմասայ սահմանները, իսկ լայնը՝ Կրաց երկիր սկզբից միենց Վահեն և Ռոտանի վերցը: Փոքր Արմենիայի երկայնքը Ասորիից միենց Ռումի երկրի վերը է որ Ուզ¹⁵ է կրցվում իսկ լայնը Սալմասայից միենց Ռումի Ալթարիայից սահմանը»¹⁶.

Աշխարհագրական բնույթի սույն հաղորդումն է, նախորդի նման, «Թարիխ ալ-Աֆրանջից» փոխառված տեղեկություն է: Դատելով հատկապես սահմաններին վերաբերող տվյալները

¹⁴ Փափազյան 1978, էջ 132:

¹⁵ «Ուզ» բռութերնից քարզմանաբար նշանակում է ծայրամաս: Մեջալյան տէրություններում այդպէս էլիս կոչվում այն տիբրութերը, որոնց տրիւմ էլիս երկրի ծայրամասերում հաստատված սահմանապահ զորքերի հրամանատարներին: Ուջ-Եղեկին Այդային տիբրությունը է եղել նաև Ռումի տպանաւորյան կիլիկիան Հայաստանի սահմանին գտնվող Ուզը: (Փափազյան 1978, էջ 137, ծիր. 2):

¹⁶ «Զողորաֆիա» 1375, էջ 19:

րից, եզրակացնում ենք, որ ինչպես «Թարիխ-ալ-Աֆրանց» երկում, և հետևապես նաև ընկող՝ «Զոռյաշխա» աշխատության մեջ ներկայացվում է ԺԴ դպրանկոր վարչապարակական պատկերը, և փաստորեն «Մեծ և Փոքր Արմենիա» աշխարհագրական համացուրժունները համապատասխանում են իլինանական ժամանակաշրջանի «Մեծ և Փոքր Հայր» հասկացուրժուններին, իսկ վերևույթայի եզրույթներով բնորոշվում են համապատասխանարար՝ Արևմտյան Հայաստանի տարածքը՝ Խարի Շահ-Արմենների պետության սահմաններով և Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Ինչպես իրավացիորեն նկատել է Փափազանը, վարչապարական նույն պատկերն է արտացոլվում նաև ինչպես Ռաշիդ եղ-Դինի մյուս աշխատություններում, այնպես և իլիսանական ժամանակաշրջանի պարսկական պատմագիր Համբալան Ղազվինի¹⁸ 1340 թվականին վերագրվող «Նուզհար ալ-դուլուր» (թրգմ.՝ «Արտերի խրահմաներ») պատմաշխարհագրական երկում, միայն մեկ տարբերությամբ, որ ի հակադրություն Ռաշիդ եղ-Դինի և Հաֆեզ-ե Արրուի, Ղազվինին նկարագրում է «Մեծ և Փոքր Արմենիաների» չորս սահմանները¹⁹։

Կրկին հիմնավելով Ռաշիդ եղ-Դինի վկայությունների վրա՝ Հաֆեզ-ե Արրուն հաջորդաբար տվյալներ է հաղորդում երկրի՝ լեռներով շրջապատված լինելու, մեծ ու հայունի քաղաքների, անվանի վայրերի ու գյուղերի, ամրակուռ ամրոցների և դժվարանցների ճանապարհների վերաբերյալ՝ «Այս Երկիրը բոլոր կողմերից շրջապատված է լեռներով։ Այսուեղ կան խոշոր ու շենք քաղաքներ՝ Այս, Սիս, Տարսոն, Աղանա և Մսիս, մոտ 20000 շենք ու անվանի գյուղ, ամրակուռ ամրոցներ

¹⁷ Փափազան 1978, էջ 132, տե՛ս նաև Ղազարյան 2018, էջ 162-178:

և դժվարանցանելի ճանապարհներ»¹⁸։ Դժվար չէ նկատել, որ վերոշարադրյալ տվյալներն ամբողջությամբ վերաբերում են Կիլիկյան Հայաստանին, ինչն առավել հստակ է դատում հատկապես թվարկված հինգ քաղաքների անուններից։ Հադրույթով տվյալները թեև կրկին փոխառված, բայց այս դպրում մասնակիորեն ձևափոխված և համառոտված ընդորինակություններ են։ Ինչպես նկատում ենք, վերտիշյալ տվյալների շարքում, ի թիվս հայտնի քաղաքների, անվանի վայրերի ու գյուղերի, Արրուն հիշատակում է նաև ամրակուռ ամրոցների մասին, իհարկ առանց մանրամասնող տեղեկությունների։ Հարկ է նկատել, որ «Թարիխ ալ-Աֆրանց» երկի համապատասխան հատվածում նմանօրինակ վկայություն առհասարակ չկա։ Մինչդեռ նույն հաղորդման մեջ, անդրադարձնալով ճանապարհներին և խուելով միայն դրանց դժվարանցանելիության մասին, Արրուն, փաստորեն, «մոտացության է մատնում» Ռաշիդ աղ-Դինի արժեքավոր և մանրամասնող վկայությունները Ռումի սուլթանությունից Կիլիկիա ձգվող չորս զիսավոր ճանապարհների վերաբերյալ¹⁹։

Առանձնակի կարևորություն են ներկայացնում հատկապես այս տողերը, որտեղ խոսվում է մահմետական զորքերի կողմից Հայոց երկիր կատարած արշավանքների և դրանց դի-

¹⁸ «Զոռյաշխա» 1375, էջ 19:

¹⁹ Փափազանի հոդվածից պարզ է դառնում, որ Ռաշիդ եղ-Դինը մակրամասնող տվյալներ է ներկայացնում Ռումի երկրից դեպի Կիլիկյան ձգվող չորս ճանապարհների մասին։ Դրաեցից առաջին նուօնորի կամ Դավալուի ճանապարհն է, երկրորդը՝ Լուլուայի, երրորդը՝ Միջերկրական ծովից Այս քաղաք ձգվող ճանապարհն է, որ կոչվում է Կարամանի ճանապարհ, և վերջինը, ինչպես որ նշում է Փափազանը, Սալաթիայից, Ասորիցից, Հայեայի կողմից դուրս եկող ճանապարհն է (Փափազան 1978, էջ 136-137):

մազրավելու, բերդաբաղների պաշտպանական բացառիկ կարևորության ու նշանակության և նաև արշավանքների հետևանքով կրած նյութական վնասների մասին: «Երբ որ մահմեղական գործերը արշավում են Հայոց երկիրը. Ֆրանկների հարիմ պատճառ է ուղարկում Հայոց երկիր հարիմն և առում. «Դու մեծ երկիր ունես, երեք հեծայա հանիր յուրաքանչյուր գոտող մահմեղականների դեմ պատերազմիր, որպեսզի երանք չփախչեն»: Հայոց երկիր հարիմ պատասխանում է որ «կողմանական մեծ կարողություն է հարկավոր այդքան հեծայա պահելու համար: Երբ մահմեղականները ասպատակում են մեր երկիրը, 10000 դիմարից ավել վեսա չեն պատճառում, և մեր ամսուր բերդերի շնորհիվ երանց ձեռքը բան չի ընկենամ»²⁰:

Հատկանշական է, որ «Թարիխ ալ-Աֆրանջ»-ից փոխառված բովանդակ այս վկայության մեջ կրկին առկա են ինչպես փոփոխված, այնպես էլ կրատված որոշ հատվածներ, ինչն էլ այս պարագայում հանեցերել է հաղորդումների ճշգրիտ բովանդակության որոշակի աղավաղման: Այսպես, վերոշարադրյալ պարբերության սկզբուն, Հաֆեզ-է Աբրուն, անդրադառնարով Հայոց երկիրի ասպատակություններին, միայն ընդհանրական նշում է, որ դրանք կատարվել են մահմեղական գործերի կողմից: Մինչդեռ Շաշիդ Էդ-Դինը մատնանշում է կոնկրետ Ասորիի և Եզիդոսով մահմեղական գործերին²¹: Այդ կերպ, ինարկե, հատակեցլում է, որ խորը վերաբերում է մամլութերի արշավանքներին: Աբրուն հաղորդվող տվյալներից դուրս է թողնում «Թարփուրը, որ Փոքր Հայաստանի

արքան է, թողնում է երկիրը և նավով գնում է ծովը» կարևոր բովանդակությամբ նախադասությունը²²: Իսկ պարբերության հաջորդ հատ-վածում, որ երկխոսական քնույթ ունի, «Թարփուր» (Հայոց երկիր թագավոր) և «Ույ-դը Ֆրանս» (Ֆրանսիայի թագավոր) տիտղոսանունները փոխարինում են «հարիմ»²³ տերմինով, որը մեծամասամբ վերագրվում էր մուսուլման տիրականներին, իմաստային առումով համարժեք չեր վերոնշյալ տիտղոսներից ոչ մեկին, և, մասնավորապես, «թարփուր» (takfir) տիտղոսին, որը Հայոց արքայի պաշտոնական անվանում լինելուց զատ, միջևադարյան մուսուլմանական մատնեազրության մեջ «Bilad-e takfir» ձևակերպմամբ գուգահետաքար կիրառուի էր «Կիլիկիա», «Հայոց երկիր», «Սսի երկիր» անվանումների հետ²⁴:

Հետաքրքրական են այս առումով Փափազյանի դատողությունները «Թարիխ ալ-Աֆրանջ» երկի համապատասխան հաղորդման առնչությամբ: Մեկը, համակարծիք լինելով երա դիտարկման հետ, հարկ էնք համարել մեծերեկ այս՝ իրև դիպուկ և լավագույն բնորոշում վերոհիշյալ տվյալների՝ «Երկխոսության սեղմ տողերում արտահայտված են մամլութերի օրբառոր սասակացոր զիշատիչ արշավանքներին ենթակա կիլիկյան հայկական պետության ծանր վիճակն ու հայ թագավորների համար ու դժվարին պայքարն ու դաշնակիցներին²⁵:

²² Փափազյան 1978, էջ 137:

²³ Հարիմ- հմա- - զավառապետ, քաղաքացիական դատավոր (Փափազյան 1956, էջ 111):

²⁴ Դասիելյան 2016, էջ 163-198:

²⁵ Փափազյան 1978, էջ 134:

²⁰ «Զողովաֆիա» 1375, էջ 20 :

²¹ Փափազյան 1978, էջ 137:

Հատկապես կարևորում ենք սոորյ շարադրված տեղեկությունները՝ պայմանավորված այն հաևամանըով, որ ի տարբերություն նախորդ հաղորդումների, դրանք «Թարիս ալ-Աֆրանջ»-ից փոխառած ընդորինակություններ չեն: Մինչու ժամանակ հավաքած ենք կարծելու, որ Արքուն սույն տվյալները քայլել է ավելի վաղ ժամանակաշրջանի, ենթարքար արարագեզու որու աղբյուրից: «Հայկական քաղաքները մէծամասամբ նվաճել են մոտովմանների կողմից: Այն քաղաքները, որոնք որ զունվում են Ասորիի հետ սահմանին, դեռևս Բարեպաշտ խայիթների օրոր են նվաճել: Բայց լրադարձներից որոշները [հետազոտում] կրկին [ընկել են] քրիստոնեադրէ ձեռքը, այժմ Ասորիի [ենթակայության] տակ են հարիսը մուտքաման է բայց բնակչության մէծամասնությունը հայեր են նշացան վճարում»²⁶.

Մեջբերված տվյալները ընդհանրական են, մասամբ՝ կը կոստ ու ոչ լիարժեք: Սակայն, բավարար են դատողություններ անելու համար առ այս, որ հակիմը պարբերության մէջ արտացոլում է նախ՝ Հայաստանի քաղաքական իրավիճակն օտար պետությունների ենթակայության ներքոն սկսած դեռևս «Բարեպաշտ խայիթների»²⁷ ժամանակներից, ապա նաև օտար տիրապետության քաղաքականության բացասա-

²⁶ «Ջողրաֆիա» 1375, էջ 20:

²⁷ Բալմանկան առաջին պետության պատմության առաջին շրջանում կառավարել են չորս «Բարեպաշտ» խայիթներ (արքը,՝ «Ալ-Խայաթ» պարբերական աշխարհական առաջնորդություն): Նրանք են՝ Սուհամմատ մարզպարի գլուխկիցեր և բարեկամներ Արք Բաքրը (632-634), Օմար իր խնաւութը (634-644), Օւան իր Աֆֆանը (644-656) և Ալի իր Աքի Տալիբը (656-661): Առաջին երեր ժամանակ մայրաքարտարը շարունակում էր մասը Սադինա, իսկ Ալիի ժամանակ դարձել էր Մեքքան, թեև բաղադրական կենտրոնը համարվում էր Միջազգային (Բրաբ): (Այս մասին տե՛ս Հովհաննեսիս 2003, էջ 51-56):

կան հետևանքները հայ ժողովրդի համար՝ ընդգծված հատկապես հարկապահանջության ազդեցությամբ, ինչն ուղղակիորեն պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանում նրանց զիմմի (հովանավորյալ)²⁸ իրավական կարգավիճակով:

Հեղինակն իրավացի է՝ նշելով, որ Ասորիի սահմանին գտնվող քաղաքները նվաճվել են դեռևս Բարեպաշտ խայիթների օրոք: Է - Ծ դդ. ընդգրկող ժամանակահատվածում Կիլիխայի տարածքն այս կամ այս շափով արարական պետությունների մաս է կազմել²⁹: Նախ նվաճվել է Օմար և Օւան խայիթների կողմից, ապա հաջորդարար մտել Օմայան, Աբրասան խայիթայությունների, ապա նաև Համբայանների պետության կազմի մեջ³⁰: Հատկանշական է, սակայն, որ խայիթայության քրանում միայն Դաշտային Կիլիխայի տարածքն է ներառված եղել արարական «Բիլադ ալ-Շամ» (Ասորի) քարչական միավորի կազմի մեջ, Լեռնային Կիլիխայի տարածքը դուրս է եղել «Բիլադ ալ-Շամ»-ի կազմից³¹, ուստի սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ Արքունի այս վեյտությունը, թե «Հայկական» քաղաքները այժմ Ասո-

²⁸ Տեսականորեն զիմմի էին համարվում միայն ս. Գրքի (Հին և Նոր Կոսակարաններ) ժողովուրդը, այսինքն՝ հրեաներն ու քրիստոնյաները, բայց ժամանակի ընթացքում ինքնաբերաբար այս խմբի մէջ են մտցվել նաև զրադաշտականները, սարբերը (Խառնակի հերթանունները) և սամարացիները: (Այս մասին տե՛ս Տեր-Անոնշյան 1975, էջ 74):

²⁹ Տեր-Անոնշյան 2017, էջ 41:

³⁰ Նոյն տեղում:

³¹ Նոյն տեղում:

բիթի [Եկթակայության] տակ են», վերաբերում է Դաշտային Կիլիկիայի քաղաքներին:

Հարկ է և կատել, որ հաղորդված տվյալների մեջ ըստ-
գծվում է հարիմի (Կառավարիչ) մահմեդական լինելու և հայ
ժողովովի կողմից զիանահարկ (ջիզյա³²) վճարելու հանգաման-
քը. ինչը մեր կարծիքով հեղիսակի ժամանակաշրջանի իրո-
դության, մասնավորապես՝ այսաբավաների և կատամար
Շահրուխի անհանդուրժողական վերաբերունքի և վերջինին
փարած հավատափոխության քաղաքականության դրսու-
րութ էր³³:

Իրավական տեսանկյունից զիմիրի առևապասար վիճակի ցայտուն դրսերում էր նաև հարկապահանջությունը՝ ի դեմս զիանահարկի (ջիօյա), որը բալոր ժամանակներում բրիստոնիա հպատակներից զանձվոր ամենածանր հարկատեսակներից մեեւն էր: Թե՛ հայկական, և թե՛ օտարալեզու աղբյուրներում առկա թվական տվյալները հնարավորություն են տալիս եղանականելու, որ զիանահարկը, որը դեռևս արարական խայիքայության տիրապետության ժամանակաշրջան-

¹² Գյուղահարկը (Կոչվում է ջիջայ, երբեմն նաև՝ խարաց), գանձելում էր հիմնականում ոչ մահմերական չափահան արական հպատակներից՝ ըրբառույսներից և հրեաներից: Գյուղահարկներն որոշակի տարիք սահմանված չեն: Դարգելու համար, թէ տվյալ պատասխներուն է հարկված լինելու դեպքում:

³³ Այս մասին մասերամբան տե՛ս Երանեան 2016, էջ 52:

ում հայ շինակակի դրույթունն առավելապես վատթարացնող հարկատեսակն էր³⁴, անհամեմատ բարձր չափերի էր հասել հատկապես ԺԵ դարի ընթացքում՝ պայմանականորված թուրքմենների իշխանության վարած «կրկնակի հարկապահանության բաղադրականությամբ»³⁵:

Հայաստանը ԺԵ դպրում ընդդրկված էր Կարա-Կոյունլուների և Ակ-Կոյունլուների պետությունների կազմի մեջ, որոնց նվիրված պարսկերեն պատմաշխարհագրական երկեր մեզ հայուին չեն, իսկ Հայաստանի՝ նշված ժամանակաշրջանի պատմական աշխարհագրությանն առնչվող տեղեկությունների բացք հնարավոր է լրացնել այդ պետության պատմության սկզբանդրյութերից և Մատենադարանի վակերագրական նյութերից:

Այսայիտվ, «Զորյաքիա» աշխատության՝ Հայաստանին վերաբերող հաղորդումների վերլուծության և քննության արդյունքում կարող ենք փաստել, որ հաղորդվող տվյալները հիմնականում կոմպիլյատիվ թվույթ են կրում, և խիստ սակագիր են այն հաղորդումները, որտեղ դրսերվում է հեղինակի ինքնուրույնությունը։ Սույն հոդվածի շրջանակներում մեզ համար հետաքրքրական տվյալների համեմատության հիմնա վրա արված դատողությունները հիմնավորում են մեր նախնական այն եզրահանգումը, որ Հաֆե-է Աբրուն լայնորեն օգտվել է Շահը Եղ-Դիլի «Թարիխ ալ-Աքբար» երկից, ինչի օգտին է խոսում պատմաաշխարհագրական եր-

³⁴ Іншамерја 2010, № 58:

³⁵ Նոյն տեղում:Տե՛ս Խաչ Փափազյան 1956, էջ 103-123, Խաչ Պետրոսևսկի 1960, էջ 90-193:

կու երկերի՝ համապատասխան հատվածների ընդգծված նմանությունը: Ինչպէս, պահպան կինոնք, եթե միայն Հայաստանին առնչվող տվյալների հիման վրա պետքնը, թէ «Ջողրաֆիա» աշխատությունն ամբողջությամբ կումպիլատիվ բնույթ է կրում, բանզի, ինչպես արդեն նշվեց, աշխատությունը թեմուրյան պետության տարածքում ընդգրկված որոշ շրջանների վերաբերյալ բացադի արժեքավոր տեղեկություններ է պարունակում, որոնք չեն հանդիպում այլ աղբյուրներում:

The reports of Hāfez-e Abrū's „Joğrāfiā” on Armenia Kazarian Elina

Summary

The historico-geographical work „*Tārikh-e Hāfez-e Abrū*” (more commonly referred to as „*Joğrāfiā*”) of famous Timurid historian Hāfez-e Abrū contains brief historical, geographical and political information about Armenia. His historico-geographical work „*Joğrāfiā*” Hāfez-e Abrū wrote by the order of Shârok in 1414. The work was originally intended as a translation of an Arabic geography, supplemented by other written sources, among which Hāfez-e Abrū himself names Ebn Kordâbîh's „*Masalek al-mamalek*”, Nâṣir Khusrâw's „*Safar Nameh*” and etc.

The article contains a comparative research of the part in „*Joğrāfiā*” on Armenia and reveals its coincidences with the corresponding parts of the historico-geographical work „*Tārik al-Afranj*” of Rashîd al-Dîn Fâdilullâh Hamadânî and also its importance for the comprehensive research of the issues referring to the history of Armenia.

Սառեւազիոնություն

Դավիթյան Գ. 2016, «Թագավոր/թաքուր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ // Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն:

Երանեան Գ. 2016, Հայերի բոլի իշխամացման և մահմետականություն ընթանելու դեպքերը XIV-XV դդ. (Հայաստանի հարա-

վային շրջանների օրինակով), Պատմա-բանասիրական հանդես (1), էջ 43-59:

Խաչատրյան Ա. 2010, Հայաստանի հարկային համակարգ. Իրավաբանարական և պատմատեսական ակնարկ (Հին շրջանից մինչև 1918թ.), Պատմա-բանասիրական հանդես, (հ. 2), էջ 53-69:

Հայ Ժողովորի Պատմություն, 1972, հ. 4, Հայ Ժողովորոց ֆեռային վայրեցքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., (Խմբ. կոլ. Գ.Ա., Երեսման Ս.Տ., Խաչիկյան Լ.Ա., Հակոբյան Ս.Ս., Հովհաննեսյան Ս.Գ., Ներսիսյան Ս.Գ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հովհաննեսյան Ն. 2003, Արարական երկրներու պատմություն, Հատոր Ա, Արարական VII դարից մինչև 1516թ., Երևան:

Ղազարյան Է. 2018, Հայկական թականավայրերի ըստ Համբարձակ Ղազիկիի «Ըուզիաց ալ-դուլուր» աշխատության, «Հայաստանը և Արևելարիաստոններին բաղաբակրությունը», Գ, Հայերապետական գիտաժողով նիխրած Պ. Շոբակյանի ծննդյան 70 ամյակին, Զեկունություններ ու զեկունությունների դրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. :

Վանինյան Ա. Ն. 1975, Հայ Ժողովորի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության ներքո, Երաբեր Հասարակական Գիտությունների, # 4, էջ 74-88:

Վանինյան Վ. Ա. 2017, Կիլիկյան Հայաստանը և Այլոյրան պետությունները (1171-1260), Երևան, «Տիր» հրատ. :

Փափազյան Հ. 1978, Ուշին Եր-Մին Կիլիկյան Հայաստանի մասին, Պատմա-բանասիրական հանդես, # 2, էջ 129-139:

Փափազյան Հ. 1956, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1 Հրպանակներ, պարկ 1 (ԺԵ-ԺԶ դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Бартольд В.В. 1973, Сочинения, том VIII, Работы по источниковедению, Москва. Наука;

Хафиз-и Абру и его сочинения // Бартольд В. В., Сочинения, Том VIII. Работы по источникниковедению. Москва, Наука, 1973, сс. 74-97;

Петровианский И.П. 1960, Землемерие и аграрные отношения в Иране XIII-XIV веков, М.-Л.: Изд. АН СССР:

Browne E.G. 1920, A History of Persian literature under Tartar dominion (A.D. 1265-1502), Cambridge;

Charles R. 1879, Catalogue of the Persian manuscripts in the British museum, (4 vol. 1879- 1895), vol. I, London;

Krawulsky D. 1982-84, هجرăن zur Timuridenzeit nach dem Târīħ-e Hāfez-e Abrū, 2 vols., Wiesbaden;
Māyel R. Heravi, 1349 Š./1970, Joḡrāfiā-ye Hāfez-e Abrū, qesmat-e rob'-e Korāšān: Herāt, Tehran;
چغراقیا ی حافظ ابرو . تصحیح من سجادی جلد ۱ ۲ نهان : میراث مکتوب ۱۳۷۵
<http://www.iranicaonline.org/articles/hafez-e-abru>

<https://www.britannica.com/biography/Henry-Creswicke-Rawlinson>

Իվեր Ն. Թաջարյան
Անդ Շ. Ավետիսյան
Սատենադարան

**ԱՐԵՎԵԼՑԱՆ ԶԵՂՈԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿԵՂԾԱՐՄԱԿԱՆ ԱՐՎԵՆԱՏ ՀԱՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՀՄՐ 137 ԶԵՂՈԱԳԻՐ-ՕՐԻՆԱԿԻ**

Բանալի բաներ. Արարատառ ձեռագրերի հովաքածու, օսմաներին ձեռագրեր, Ֆուղովի, Լեյլի և Մեջլուն, կեղծարարական արցեստ:

Յուրաքանչյուր ձեռագրի ուսումնասիրությունը յուրովի է: Զեղոագիրն ինքն է թելաղրում, թե ինչ տեսանկյունից պիտի այն ընկի կամ ուսումնասիրիլի:

ԺԹ - Ի դարերում Արեկյան ձեռագրերի ուսումնասիրության մեթոդներին, տեսակներին և զիտական հետազոտական մոտեցումներին ավելացել է ևս մեկը՝ կեղծված ձեռագրերի ուսումնասիրությունը, հավաքագրումը և ձեռագրացուցակների կազմումը:

Իրանի Խալամական Հանրապետության իրավաբանների ասոցիացիայի խորհրդի նախագահ, քրեագետ, դոկտոր Ալի Նազաֆի Թավանան երկար տարիներ գրադվերով կեղծված փաստաթղթերի ու ձեռագրերի ուսումնասիրությամբ և հետազոտությամբ նկատում է, որ կեղծարարությամբ գրադվերով փաստերը հատկապես աշքի են ընկնում թղթի հայտնագործումից ի վեր: Վերջինիս բնորոշմամբ կեղծարար է այն անձը, որը փորձում է փոխել իրական փաստաթղթի կամ ձեռագրի բովանդակային իմաստը՝ դարձնելով այն անվավեր

կամ վավեր: Ըստ նրա՝ կեղծումը ցանկացած պարագայում դիտարկվում է որպես հանցանք¹:

Հարկ է նկատել, որ ձեռագրագիտության որորում կեղծ ձեռագրերի ընտակիումը գործել չի կարևորվում, եթե կան կ' փոքրիկ անդրադարձներ են, իսկ աշխարհում այն արդիական է և որոշ ձեռագրագիտուների համար՝ նեղ մասնագիտական:

Այնուամենայնիվ, մեր այս համեստ նյութով պատճին անգամ փորձել ենք մուտք գործել տվյալ դաշտ, ուստիմասիրել ոլորտը և տալ կեղծարարության դրդապատճառների նկարագիրը: Ուստի հնարավորինս սեղմ անդրադարձել ենք կեղծարարական նկատումներին՝ առանցքային համարելով մի ձեռագրի արվեստաբանական և ձեռագրագիտական հետազոտությունը՝ բնակ շցանկանալով արժեգրելով ձեռագրի կարևորությունը:

Առհասարակ, ընդօրինակված յուրաքանչյուր ձեռագրի կարևոր է, քանի որ վերջինին միջոցով պահպանվում և տարածվում է ամենի վաղ շրջանների մշակութային ժառանգությունը: Պատմությունը դրա լուր վկան է. քիչ չեն օրինակերր, երբ նախապատճառ օրինակը մեզ չի հասել, իսկ ընդորինակվածը պահպանվել է:

Ընդօրինակման համար հաճախ ընտրվել են այնպիսի գրական ստեղծագործություններ, որոնց թեմատիկան բույլ է

տվել ունենալ նաև նկարագարդ էջեր: Այդ ձեռագրերը, ըստ եւրյալ ընթերցողի համար զուտ տեքստեր չեն, այլ ակնահաճն, զարդարուն առարկաներ:

Իսլամական շրջանի գեղանկարչությունը փոխկապակցված է կայիկական առասպեկտների, փիլիսոփայական ու միտուկ մտարումների հետ: Նմանատիպ աշխատանքներն իրենց աշխարհներամբ, թեմատիկայով, ոճով և մոտեցմամբ կախվածություն են ունեցել ժամանակի բարերից, հավատից և ընդունված նորմերից:

Սակայն եղել են դեպքեր, երբ գրիչը կամ ծաղկողը հակառակ է Արևելյան դասական մանրանկարչության ընդունելի կանոններին և կորցրել է իր աշխատանքը, քանի որ անհատական մոտեցումներն ու նորարարությունները չեն խրախուսվել:

Դեպքեր են եղել, որ հետազգած գրիչը կամ ծաղկողը, առանց Ալյահի կողմից պատճելու մոտավախության, արդեն դրսում, մասնավոր պատվեր կատարելով՝ փորձել է իր գործով ինքնահաստատվել կամ նոր կարգավիճակ ձեռք բերել:

Եղել են նաև նորարարությամբ աշխի ընկալու մանրանկարիչներ կամ գրիչներ, որոնց գնահատել է արքունիքը, քայլ միայն իրենց կենդանության օրոք և հետազոտում չեն արժանացել երեւմնի տրված գնահատականին:

Երբեմն է արդեստանոցից դրւու մնացած գրիչները կամ ծաղկողները զբաղվել են նաև կեղծարարությամբ: Կեղծարարները տարբեր նպատակներ են հետապնդել՝ Ա. փորձել են միտումնավոր, ձեռագրի վաստ ընդօրինակումով արատավորել որևէ հայտնի գրչի, ծաղկողի, անգամ կազմարարի հեղինակությունը, Բ. խաղալ թիֆարինաների (զրշատան կամ

1 اسناد به چه معنیست و راههای پیشگیری از این جرم کاملند: <https://www.yasa.co/blog/ways-to-prevent-forgery/> (16.05.2019):

դպրոցի անվան հետ, Գ. Երբեմն միայն կեղծ հիշատակարաններ գրելով՝ փորձել են բարձրացնել ձեռագիր-մատյանի արժեքը, Դ. ի վերջո, նոր ձեռագիր ստեղծելը՝ մասնավորապես նկարազարդ, շահավետ աշխատանք էր:

Իրենց հերթին հայտնի լեզվաբան, պատմաբան, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, հավաքորդ, կեղծարարության մասին բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Ռիշարդ Նելսոն Ֆրայը (1920-2014 թթ.) և իրանցի պատմաբան, իրանագետ, ձեռագրագետ Իրազ Աֆշարը (1925-2011 թթ.)՝ տալիս են ընդհանրական բնորոշում, ըստ որի իշխամական աշխարհում ժօ դարից սկսած նկարազարդ ձեռագրերի կեղծումը անվորդ գրիչների և մանրանկարիչների համար եղել է ողնորիշ, քանի որ դաշալը (միջնորդը) բարձր է վարձատրել կատարողին: Նաև հավելում են, որ միջնորդները մշտական ունեցել են իրենց ձեռքի տակ ձեռագրեր, որոնք ծառայել են կրկնօրինակման արյուր սկսնակ գրիչ կամ ծաղկող համար:

Կեղծ կրկնօրինակման կանոնների մեջ եղել է հիշատակարանի նույնությամբ շարտագրելու պահանջը, որովհետև անհիշապես կրացահայտվեր կեղծարարությունը: Այսուամենայնիվ, ձեռագրին իրական և համոզիչ տեսք տալու համար այլ ձեռորդ ստեղծագրության ավարտի էջում, լրացուցիչ հորինված անուններ են գրվել, ներկայացնելով որպես բնագրի գրիչ:

Ձեռագրագետ Խաչիկ Հարությունյանն իր «Հայերն ձեռագրերի հիշատակարանները» խորագրով աշխատության մեջ բազմաթիվ հիշատակարանների վկայությամբ նույնականացնում է, որ հայերն որոշ ձեռագրերում հիշատակագիր-

ները խնդրել են չեղծել իրենց հիշատակարանները, չկտրել դրանք ձեռագրերից, շփոխել չշեցել դրանցում արձանագրված իրենց կամ իրենց հարազանաների, կրոնակից եղբայրների և այլոց անունները²: Հեղինակը, երբեմն, հիշատակարանների կամ նրանցում վկայված անձնանունների եղծումների մեջ մեկ այլ ուշագրավ երևույթ է նկատել, որը կարելի է բացառություն որպես հիշատակված անձի նկատմամբ բացասական վերաբերմունքի արտահայտություն: Այս պարագայում անոն ջնշողը փորձել է մոռացության մասնել, կյանքի մասնակից անհետ ջնշել հիշատակարանում գրանցված անձի անունը³:

Այսպիսի կեղծարարական արվեստի նմուշ է Մատենադարանի Արաբատառ հավաքածուի ՀՊ 137 ձեռագիրը: Այն նախկինում եղել է Էջմիածնի մատենադարանի Արաբատառ հավաքածուի հիմնական կազմի մեջ (1880 թ., թվով՝ 201 ձեռագիր), որի հիմքի վրա է հետազոտման մասնիկի կողմէն պահպանված Արաբատառ հավաքածուն⁴:

Ձեռագրի արտաքին և բովանդակային առաջին անդրադաներն ընդգրկված են Մատենադարանի 1940-ական թվականներին կազմված Անոնից ձեռագրացուցակում⁵ և 1948 թ. կազմված ցուցակում⁶: Վերջինիս նկարագրությունում ձեռագրի վերնագիր նշվել է Ֆուգուլիի «Լեյլի և Սեղնուն»-ը: Լեզուն համարվել է «ազերբայջաներեն» (այսիքև, աղբբեջան-

² Հարությունյան 2019, էջ186:

³ Նույն տեղում, էջ191:

⁴ Եզակյան 1965, էջ 188:

⁵ ՄՄ, ԱԶ, ՀՊ 17:

⁶ ՄՄ, ԱԶ, ՀՊ 2:

ներեն), իսկ գրչության թվական՝ պայմանականորեն ԺԸ դար, գրչի անուն՝ Մուհամմադ Յուսուֆ Զիհան Շահի: Հիշատակվել է և այս, որ ձեռագրուն նկարների քանակը՝ 18-ն են և պատկերված են Լեյլիի, Մեջնունի, նրա հոր՝ Նոփելիի և Իրնե Սալամի նկարները: Ձեռագրից ցուցանուուշ ընդգրկվել է արվեստաբան Ռախիս Ամիրբեկյանի կազմած “Կալլիգրաֆիա և Մինիատուր Վոստօկ” (Կոլլեկցիա Մատենադարան, Ալբոմ) ալբոմում, որը ձեռագրի գրչության թվական նույնագեն համարվել է ԺԸ դարը⁷:

Ձեռագրի ՀՎ 137 ունի “هذا الكتاب لبلى و مجنون” («Ճազա ուլ Քիրար Լեյլի վե Մեջնուն», թթվ.՝ «Սա գիրքն է Լեյլի և Մեջնունի») վերնագիրը (Իթ): Հեղինակի անունը ձեռագրում հիշատակված չէ: Միայն բնագրից պարզվում է, որ այն պատկանում է ԺԸ դարի միջնադարյան թյուրքալեզու գրականության դասական Ֆուզուլի Բադրադիին (Մուհամմեդ իբն Սուլեյման Մեհմետ, 1493-1557 թթ.)⁸:

Ձեռագիրը բաղկացած է 111 թերթից, ունի չգրված էջեր՝ 1ա, 110թ, 111ար: Երկայն գրությամբ է, գիրը՝ նասի, տողերի քանակը՝ 14, քանարը՝ սև: Ձեռագրի յուրաքանչյուր թերթի Բերեսի ստորին ձախ անկյունում կամ հիշագրելու:

Ֆուզուլի լեզուն համախ նկարագրվում է, որպես աղբեցաներեն, իսկ օտարալեզու ձեռագրացուցակներում՝ որպես «Թյուրքի» («Türki»), որի լեզվական ժառանգներն են համար-

⁷ Ամիրեկյան 2012, սր 82 :

⁸ Ֆուզուլին «Լեյլի և Մեջնուն» մեսներն գրի է առել 1535 թ. կամ 1537 թ.: Այն բաղկացած է 3096 թերթից: Նա հավատարիմ մնալով մեսների ավանդական կառուցվածքին՝ ընդգրկել է զագելներ, որոնք հեշտու են հերոսների շուրջերից:

վում թուրքերենը, թուրքմեներենը և աղբեցաներենը: Այն նկարագրվում է նաև «Օթօման Թյուրքիշ» (“Ottoman Turkish”), այսինքն օսմաներեն, իսկ թուրքերենով իրատարակված ներկային ուսումնասիրություններում՝ «Թյուրքէ» (“Türkçe”), որը թուրքերենն է՝ բացարձակ տարրերականմեր չմտցնելով ժամանակակից և օսմանյան թուրքերենի միջև: Բնի Ֆուզուլին իր «Դիման»-ի («میوان فضولی») նախարարում անդարապանալով իր լեզվին՝ նշում է, որ լեզուն օսմաներենն է (այսինքն՝ *Osmancı, Osmanlı Türkçesi*) և նոյնացնում չաղաքայիրենի հետ (այսինքն՝ *Çağatay Türkçesi*) և իրեն հասկանալը դյուրին է:

Ինչպես տեսանք՝ նախկինում ձեռագրի թվական նշվել է ԺԸ դարը և գրչի անուն՝ Մուհամմադ Յուսուֆ Զիհան Շահի: Պեսր է նշենք, որ ձեռագիրը իրապես չունի գրչության ժամանակի հիշատակարան՝ միայն բնագրի ավարտին այլ ձեռորով և բանարով, բնագրից տարրերվող գրով (այսինքն, մասի նասրայիլով) կա գրություն, որն իր կառուցվածքով նմանեցվել է գրչության ժամանակի հիշատակարանի՝ նախքան անվան անվան («كِتَبَةُ مُحَمَّدٍ يُوسُفٍ جَهَنْ شَاهِي», թթվ.՝ Գրիշ Մեհմետ Յուսուֆ Զիհան Շահի) հիշատակումը գրված է՝ «Ով որ կարդա խնդրում եմ օրինի/ Որովհետու [ես] մեղավոր ծառան եմ», իսկ անվանը հաջորդող տողում գրված է միայն „...لَنْ“ («սէնիտ...», այսինքն՝ տարի) բառ առանց թվականի հիշատակման (110ա) (հն. I):

Նոյն էջի (110ա) արտարին լրաւացքում կա բառանկյուն, սև բանարով անձնական կերպուշմ (ստացողի կամ տիրոց), որը նշված է Արդ ալ-Հուսեյնի Ֆարազի անունը (عبد الحسيني) (الحسيني الله الواتي العني يا فرج:

Զեռագրի գրչության ժամանակի հետ համաձայն չենք միանշանակ և այս հավելյալ թնության կարիք չնենք, քանի որ թուղթն արդեն իսկ հերքում է այդ թվականի: Թուղթն արևմտյան է՝ լուսագծերով և լուսադրոշներով՝ «բոլորչի միջնամասում լատինատառ «RA», լատինատառ «GB», «AG», «VD» (անգլ.՝ *countermark*) գրութուններ, «զույգ երերություն», «սնկանման պատկեր» (անգլ.՝ *watermark*), որոնք հիմնականում պատկանում են ԺԹ դարին (նկ. 2):

Մեր համոզումների գրափոր ապացույցն է նաև Սիջլաբնի համալսարանի պրոֆեսոր, ձեռագրագետ Փառլ. Ս. Լավի լուսադրոշներին վերաբերող ուսումնասիրություններ⁹:

Կազմը նոր է (Ի դար), ժամանակին նորոգվել և փոխարինվել է այս կազմով: Այս պեղման հիմքում ընկած է ձեռագրի թերերի (21.2x15.5 սմ) և կազմի (21x15 սմ) չափերի անհամապատասխանությունը: Զեռագրի վիճակը զնահասում ենք բավարար¹⁰:

⁹ Love 2016, pp. 1-35:

¹⁰ ՍՍ, Արք. ձեռ. Հմբ. 137. ԹԵՐԹ՝ 111. չգրված՝ Իա, 110ր, 111ար: ԹՈՒՂԴ արևմտյան թուղթ՝ լուսագծերով և լուսադրոշներով՝ «բոլորչի մեջտեղում լատինատառ RA», լատինատառ «GB», «AG», «VD» (*countermark*), «զույգ երերություն», «սնկանման պատկեր»: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 21.2x15.5: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկայն (16x10): ԳԲՌ՝ և այլ անուններ: ՀԱՇՎԱԳՐ՝ յուրաքանչյուր թերթի Բ. երեսի ստորին ձախ անկյունում: ՏՈՒ՛ 14: ԹԱՆԱՔ սեւ: ԿԱԶՄ՝ Արք. կազմ. բաց շազմանակառյա կաշի եղբերք՝ դրվագազարդ (21x15): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Բ. վեցը, այլ համաչ բուլը, զգրված:

ՄԱԼՄԱՆՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ 12ա, 19ա, 22ա, 25ա, 29ա, 31ր, 34ա, 35ր, 41ր, 44ա, 47ա, 48ր, 49ը, 51ը, 52ա, 54ր, 106ա: ՎԻՃԱԿ՝ բաշարար պրակերն իրարից են կազմի մեջքից առանձնացած:

Այժմ անդրադառնակը թնագրային որոշ մակրամասներին: Զեռագրի-օրինակի թնագրի համեմատվելի է Ֆուգալիի «Լ.Եյլի և Մեծուն» մեսնեի Մատենադարանի Արաբատար հավաքածուի երկու ամբողջական, կանոնավոր կառուցվածքով ձեռագրի-օրինակների հետ (Հմբ. 1035 (50ր-89ը)¹¹, Հմբ. 2058¹²):

Ձեռագրիր պատրաստվել է թնագրային կրծառումներով (սկիզբ, միջից, վերջ), ամբողջական զրոխների բացակայություններով, նույնիսկ ձեռագրում ընդգրկված զրոխների հաջորդականության խախոռմներով, բեկորի ետքումներով (օրինակ՝ հմտ. Հմբ. 2058-ի էջ 48ը սկիզբը Հմբ. 137-ի էջ 38ը հետո): Սակայն պահպանվել է թնագրային կաղապարի օրինաչափությունը, այսինքն յուրաքանչյուր էջում 14 տող, գրադաշտուր՝ 16x10 սմ:

Անզեն աշըռվ անեզան նկատվում է թնագրի զրման հասաձեապուրյունը, զրի ոչ վարպետուրյունը: Եթե մեր ձեռիք տակ չնունայինք այլ ձեռագրի-օրինակներ և թնագրային ամբողջականությունը ստուգեինք ձեռագրագիտուրյան մեջ ընդունված կանոնով, որ է՝ հիշագրերի համապատասխանությունը հաջորդող էջի սկզբնաբարի հետ, ապա միայն երկու տեղում (2ը, 10ը) պիտի արձանագրեինք թնագրի պակասավոր լինելու հանգամանքը:

¹¹ ՍՍ, Արք. ձեռ. Հմբ. 1035 թուղթ 1094/1681-1682 թթ., առանց զրի և գրչության վայրի հիշատակման (հիշատակարան, 89ը):

¹² ՍՍ, Արք. ձեռ. Հմբ. 2058 թուղթ լիլի մշոն «Հա». Գրիչն է Արդու Բաղրի ալ Շուրբին, իսկ գրչության թվականը՝ Հմբ. 1264/1847-1848 թթ. (հիշատակարան, 109ը):

ای نشہ حسني عشقہ تغیر قلن (قلن)

شقیله بنای کونکلی | تعمیر قیلن(قلن)...

սկսվածքով (հմտմ.՝ Հմբ 2058, էջ 1ր, Հմբ 1035, էջ 50ր), որևէ անվերեսագիր ձեռագիր-օրինակների համար բնացրային պատկանելիությունը գտնելու բանահի է ծառապամ¹⁵:

Թե ինչո՞ւ է ձեռագրում բաց բռնկվել բուն նախարարը, այսինքն *Բշխութեան* (Միաստվածության փառաբանությունը), ներքողերին ուղղված Սուլթան Սուլեյմանին, Բաղդադի կառավարչին: Թե ինչո՞ւ և ինչպէս է որոշվել մեսսենջի ըստօրինակումը սկսել հետո 7-րդ և դրան հաջորդող «Աեբերի թելիք» (թրգլ). «[Ստեղծագործությունը] գրելու հանգամանքը») զիս-ից մոտածերու տեղիք է տալիս:

Ենթադրությունները մի քանիսն են. Ա. փորձել է կոծկել ընտրինակության բուն առարկան. Բ. պահպանել կոճակները

¹⁴ UU, Upp. &kn. Z^{dp} 1035, k₂ 54p-55p; Z^{dp} 2058, k₂ 9p-11w
چون فیض وجود کیله ای پاک
و شکن نلک اولذی عرضه خواه

¹⁵ Տես այլ ձեռագիր-օրինակ ըստ ձեռագրացուցակի, Rieu 1978, pp. 206b-207a:

է բնագիրը, Գ. ձեռքի տակ ունեցել է բնագրային անհաջող պակասավոր կամ թերի օրինակ:

Այսուամենայնիվ, նկատում ենք, որ զիջը նախապես մտադրված է եղել բնագիրը կազմել ըստ Ենթագոլիսների, քանի որ վերևագրերի համար նախապես հատկացրել է հատվածներ (Յա-ճա), սակայն մի քանի էջ հետո (Երկ-ից սկսյալ) մտադրությունը փոխել է և մնացյալ գլուխները գրել են իրար կցելով:

Թեև հետազոտմ լուսանցքներուն ոչ կանոնավոր, այնուամենայիկ լրացվել են զոլոտիների վերնագրերը¹⁶. Եթեևս էլ զոլոտիների բաց թողնված սկզբանողները:

ՍԵՆՆԻՔի զագելները, մոռաբաները (հմաց ողբայի, քայլակ), մյուսաջարները (աղերս), որոնք ցատ բան կառուցվածքի առանձին բաժիններ են՝ ձեռագրու և կազմու են որևէ զիփի մաս (Վերևագրերը նոյնակա լրացված են լրասացըթուում): Իսկ ձեռագիր-օրինակից դուրս մնացած զագելները լրացվել են չկատարված մակրանկարների հատվածներում (այլ ձեռք եւ թանաք) (եկ. 5)¹⁷, երեւն էլ նախորդող էջում իիշագրի ավելացմամբ՝ հատվածի ծզգիս տեղում լինելու վաստր հաստատելու համար (օր. 71բ):

Բացառություն են միայն 84ր, 92ա էջերի մասնաև կարեների համար և ախտաւելիք հատվածներում լրացված գրվածքները, որոնք բնագրային նույը չեն, լեզուն պարսկերեն և արա-

¹⁶ UU, Upp. Åtn. Z^{dp} 137' 11p, 12w, 13w, 14p, 16w, 17w, 18p, 19w, 20p,
26w, 29w, 30p, 31w, 33w, 34p, 36w, 37wp, 38p, 39wp, 41w, 43wp,
47p, 49w, 52p, 54w:

¹⁷ УУ, Упп. докн. 2^{нр} 137' 20ш, 24ш, 27шп, 33п, 42п, 45п, 46ш, 50п, 56п, 84п, 92ш, 107п:

բերեն են՝ առաջինի դեպքում տարրեր միջնադարյան հեղինակների (Մէջլանա (Ձելյալերդին Թումի), Սասդի և այլը) գագելներից բաղված թէյթեր, իսկ երկրորդի՝ բառակապակցություններ, առանձին բառեր: Սա կրկին խոսում է ձեռագիրն ամբողջական տեսքի բերելու մտադրության, չկատարված մակրանկարների կոճկման, բնագրում հենարավորինս ավելի թշբ բաց թողիված հատվածներ ունենալու մասին:

Զեռուազիր Հմբ 137-ում մէսեների ավարտը («Խարթիմ») նույնական կրածառաված է¹⁸: Սակայն այս դեպքում պիսի Նշենք, որ երկու այլ թագրերի ավարտները ես տարրեր են¹⁹:

Այժմ անդրադառնանք ձեռագրի գեղագիտական կողմին. Մակրանկարները բավական պարզունակ են: Նկարազարդ էջը 17-ն են, նախկինում նշված 18-ի փոխարեն:

Ինչպես հայտնի է, ԺԳ դարի վերջ և ԺԴ դարի սկզբում Իրանի Շիրազ քաղաքում գործել է Շիրազան մակրանկարչական դպրոցը, որի մակրանկարները հայտնի են եղել իրենց պարզունակությամբ: Եթե այդ դպրոցում ստեղծված ցանկացած մակրանկար համեմատենք մեր ձեռագրի գործերի հետ, կարող ենք վստահաբար ասել, որ այստեղ ոչ թե գործ ունեն վարպետ մակրանկարչի, ում ոճը պարզունակ է, այլ սիրողական մակրադակի նկարչի հետ:

¹⁸ ԱՍ, Արք. ձեռ. Հմբ 137 Վերջ՝ 110ա բնու طبع اتهه فکر صاب
الحالية دور سوزيم مناسب
الخط باقى المعر ثانى
شاعر لغى افني راديب سك 89р
ذكر ابى اوز ياكى شعار اينب سك
في الجملة بور هم كه اولدى مسطور 109
بر مشوقله ذوقن دكل دور

¹⁹ ԱՍ, Արք. ձեռ. Հմբ 1035 Վերջ՝ 89р
ԱՍ, Արք. ձեռ. Հմբ 2058 Վերջ՝ 109р

Մակրանկարներում օգտագործված նյութը չոր. Տերտավոր ջրաներկ է: Գոյսերը դրվել են շերտերով: Նկարիչը սկզբում դրել է ավելի բաց երանգները, ապա աշխատանքի ընթացքում ըստ անհրաժեշտության հետզիւտ մզացրել է համապատասխան հատվածները: Ենելով ներկապնակի երանգներից և գոյսերի կիրառության ժամանակային անհամապատասխանությունից, կարող ենք ասել, որ ներկերը բնական հումքից չեն պատրաստվել: Այսինքն, մակրանկարներում մի քանի երանգներ կան: Դրանք են կանաչավունը, կապույտը, դարչնագույնը, սեր և շաղանակագույնը: Կանաչը, ինչպես նաև թվարկած այլ երանգները հեռու են ավանդական և բնական ներկապնակի գոյսերից:

Արվեստաբանական տեսանկյունից նույնական նյաղրում ենք, որ ձեռագրիր բավական կարճ ժամանակում է պատրաստվել: Մենք նույնական կարծում ենք, որ ձեռագրի վրա սկզբից աշխատել է գրիչը: Վերջինս որոշ հատվածներում նկարելու համար ազատ տարածքներ է բռնել: Սակայն տեսնում ենք նաև, որ ձեռագրում լրացվել են ոչ բոլոր բաց թղթաված հատվածները: Մակրանկարների համար նախատեսված էջերի լուսանցքներում, նկարներին կից կան հուշող թեմատիկ վերնագրեր՝ մակրանկարչին ուղղորդելու նպատակով (նկ. 3):

Կարճ ժամանակի մեջ տեղավորվելու և ամբողջական ձեռագրի տպակիրություն թղթներու նպատակով՝ նկարիչը մինչև ձեռագրի 54ր էօք պարբերաբար նկարել է: Հետազոտություններում նկարները ենք, որ բնագրի միջնամասաւմ (54ր-106ա) նկարելու համար նախատեսված էջերը բաց են թղթների (նկ. 4) և հետո միայն վերջում՝ նկարիչը ընդամենը մեկ նկար է արել (106ա)

և ավարտել իր աշխատանքը: Այս կերպ փորձել է քողարկել միջնամասում դաստիք մնացած հատվածները:

Նկարչի մասնագիտական փորձի (հմտությունների) բացակայության և կեղծման միտումն մասին է վկայում մատնահետքերով դիմանելարներից պատճենելը և նոյն էզում արտացոլելով քայլը: Որպես օրինակ կարող ենք մատնանշել ձեռագիր 48թ էջի մանրանկարը: Մեկ այլ մանրանկարում (էջ 49թ)՝ նկարիչը նոյն փորձն է կատարել: Այսուղեւ սպասավորի դեմքից աջ, տեսանելի են երեք ոչ հստակ, բայց նոյն սպասավորի դեմքից պատճենները, որոնք արված են մատնահետքերով: Այդ քայլի պատճառով սպասավորի դեմքի գոյնները ճապարվել են (նկ. 3 էջ):

Մեր համոզմամբ՝ նկարիչը, որը գործ ունի ներկի հետ, չեղ կարող այսպիսի ոչ մասնագիտական մոտեցում ցուցաբերել իր աշխատանքի նկատմամբ՝ առավել ևս մանրանկարիչը, որի պատճառապես արված ավելի մեծ էր, չեղ կարող իր անփությամբ վտանգել գրչին և ի վերջ դպրոցին, որի ներկայացուցիչն էր հենց ինքը: Սա միտումնավոր ձեռագրին հնության տեսք տալու փորձ է:

Նմանատիպ մեկ այլ դրսերում տեսնում ենք ձեռագրի 54թ էզում, որը պատկերված էրկու կերպարների դեմքերը նկարիչը մրտումնավոր, դեռ ներկը չարացած ձեռով տարրալուծել է էջի երկայնքով: Սա մենք պատճառականությունն չենք համարում և կրկին համոզվում ենք, որ նկարիչը տարրեր հնարքներով փորձել է ձեռագրին հնության շունչ տալ:

Ձեռագրի արվեստաբանական թեսությունն ամբողջանում է ձեռագրի կեղծարարական մրտումներով պատրաստված լինելու հանգամանքը:

Նման հետազոտական ուսումնասիրությունները վաղուց ընդունված են հայտնի գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում: Այս աշխատանքը մեզանում այդ բացը լրացնելու առաջին քայլերից է, որը հարասացվելու է նորանոր նյութերով և կրելու է շարունակական ընույթ:

THE ART OF SPOTTING FORGERIES OF THE ORIENTAL MANUSCRIPTS ON THE EXAMPLE OF THE MATENADARAN MS. 137

Yvette N. Tajarian
Ani J. Avetisyan

Summary

In this article, we will discuss the Ms. № 137 from the Matenadaran's Arabic script collection. The manuscript was formerly in the main collection of the St. Etchmiadzin's Matenadaran on the basis of which the actual Matenadaran's Arabic script collection was formed. Initially, in the manuscript description lists of the Matenadaran this manuscript was mentioned as a work of *Fuzuli - Leyla and Majnum*, and thus attributed to 18th century. The language was considered to be "Azeri" (that is, Azerbaijani).

Being a collaboration of an art historian and a codicologist, our study spreads light on the inconsistencies and suspicious aspects of this manuscript and its previous descriptions. Thus our article consists of two sections: codicological analysis and artistic analysis. At first the general circumstances and purposes of counterfeiting Oriental manuscripts are examined. Then the previous descriptions have been added and adjusted in order to show their incompatibility with the manuscript of our study. The deviations and interventions made in the original were examined as well. The connection between the text and the miniatures were studied thoroughly.

Based on the facts presented in this article, we have concluded that the manuscript of our study is not just a copy but a counterfeit of 19th century.

ՄԱՏԵՆԱՐԱՆԻ ԹՅՈՒՆ

Եղանակ 1965 - Սատենադարական ձեռագրական հավաքածուները, Ցուցակ Ձեռագրաց Աշոցողի անվան Մատենադարական, Հասոր Ա. (Կազմեցին Եղանակ Օ., Զեյթունյան Ա., Ալթարյան Փ.), Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակություն:

Հարությունյան Խ., 2019, Հայերէն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, Սատելադարան:

Մաշտոցի անվան Սատելադարան (ՍՍ), Անտիպ ձեռագրությակ (ԱԶ), Հմբ 17:

Մաշտոցի անվան Սատելադարան (ՍՍ), Ցուցակ պրաբանա ձեռագրերի (ՑԱԶ), Հմբ 2:

Մաշտոցի անվան Սատելադարան (ՍՍ), Արաբատառ ձեռագրերի հավաքածու (Արք. ձեռ.), Հմբ 137:

Մաշտոցի անվան Սատելադարան (ՍՍ), Արաբատառ ձեռագրերի հավաքածու (Արք. ձեռ.), Հմբ 1035:

Մաշտոցի անվան Սատելադարան (ՍՍ), Արաբատառ ձեռագրերի հավաքածու (Արք. ձեռ.), Հմբ 2058:

Ամիրեկյան 2012 - Ամիրեկյան Բ., Կալլիգրաֆիա և Մինիատորա Վոստօք, Կոլլեկցիա Մատենադարան, Ալբոմ, Երևան, Հայրի:

Love 2016 - Paul M. Love, Ibadî Manuscripts at the Bibliothèque Nationale de Tunisie: Descriptions, Watermarks and Implications, Journal of Islamic Manuscripts, vol.7, Num. 1, Leiden-Boston, Brill;

Rieu 1978 - Rieu Ch., Catalogue of the Turkish Manuscripts in the British Museum, Osnabrück, O. Zeller;

جعل استناد به چه مختصات و راهنمای پیشگیری از این جرم کاملاً
[Զայ-է ասևադ թէ չէ մասնաւր լա ունա-յէ փիշզիրի ազ ին ջորմ բրաման], բրզ.
Ինչումն է փաստաբանի կերծան ինասոր և այդ հանցաւրդ
կանխելու եղանակները], <https://www.yasa.co/blog/ways-to-prevent-forgery/> (16.05.2019):

Քրիստին Կոստիկյան
ՀՀ ԳԱԱ ԱԻ

ՖԱԶԼԻ ԲԵԿ ԽԱՏԱՀԱՆԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԷ
ԴԱՐՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՉ

Բանալի բառեր. Սեֆյան, Իրան, պատմություն, շահ Արքա Ա, հայ, մելիք, Ֆազլի Խաֆահանի, աղբյուր, Արցախ-Ղարաբաղ

Սեֆյան Իրակի պատմության վճռորոշ փուլը նշանափորող շահ Արքա Ա-ի իշխանության ժամանակաշրջանի (1587-1629 թթ.) պատմության պարսկերեն աղբյուրները մեծ թիվ չեն կազմում: Այդ ժամանակաշրջանի պատմության արժեքավոր սկզբանադրյուններից է շահ Արքա Ա-ի պալատական պատմագիր Բաբանդար Բեկ Թորբեմանի (Սունշի) «Թարիխ-է Ալամ առա-յէ Արքասի» (Արքասի աշխարհակալության պատմություն) աշխատություններ, որն ընդգրկում է Իրանի Սեֆյան պետության պատմությունը մինչև շահ Արքա Ա-ի զահակալման վերջը 1629 թ.: Այս աղբյուրի սուլ տեղեկությունները Արարատյան նահանգի ու կրա հայ ընակչության պատմության հարցերի վերաբերյալ իր հետազոտության մեջ լայնորեն ընդգրկել է Հ. Փափազյանը, որն այդ տեղեկություններն ու հայոց պատմության հարցերը քննել է՝ համադրելով Սատելադարանի պարսկերեն վավերագրերի ու հայկական աղբյուրների տվյալների հետ¹: Բացի այս, Հ. Փափազյանը

¹ Հողվածը իրատարակվելու է ՀՀ գիտության կոմիտեի N 18T-6A179 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

¹ Փափազյան 1977, էջ 29-44:

ուսումնասիրելու կատարակել է շահ Աբբաս Ա-ի հրավարակները Մատենադարանի պարսկերեն հրովարտակների երկրորդ պարակում՝ բացահայտելով նրանց կարևորությունը հայ ժողովրդի իրանակառատակ հատվածի այդ շրջանի պատմության հարցերի ուսումնասիրության հասար²:

Նոյն ժամանակաշրջանի պատմությանն է նվիրված նաև Ֆազլի Բեկ Խաֆահանի Խուզանիի «Աֆզայ ալ-Թաւարիխ» (Տարեգրություններից լավագույնը) վերնագիրը կրող աշխատությունը՝ բաղկացած երեք հատորներից: Առաջին հատորն ընդգրկում է Սեֆյան շահ Խամայի Ա-ի ժամանակաշրջանի պատմությունը, երկրորդը՝ շահ Թահմասպ Ա-ի, շահ Խամայի Բ-ի ու Մուհամմադ Խուզարանիերի ժամանակաշրջանինը, երրորդը՝ շահ Աբբաս Ա-ինը: Հատորներից յուրաքանչյուրը պահպանվել է եզակի ձեռագրային օրինակով, որոնցից առաջինը պահպանվում է Քեմբրիջի գրադարանում (Էքսոն-Պուսի հավաքածու, ձեռ. 278), երկրորդ հատորի առաջին մասը, որը ենթիսակի ինքնագիր օրինակն է՝ Քիրսանական գրադարանում (ձեռ. 4678), իսկ երկրորդ մասը համարվում է կրոած³: Աշխատության երրորդ հատորը հայտնաբերվել է 1993 թ. իրանագետ Զարյադ Մելիքի կողմից Քիրսան բոլեղի գրադարանում, որտեղ գրանցված է որպես ձեռագիր հ. ՁՃ 5.6՝ նախապես ցուցակարված լինելով որպես Խաբանդար Մունշիի «Թարիխ-ե ալամ առա-ե Աբբասի» (Աբբասի աշխարհակալու-

թյան պատմությունը) աշխատությունը բովանդակող ձեռագիր, քանի որ նրա սկզբնի է ընդորինակված եղել իր առաջին էջին⁴: Այս երրորդ հատորի պարսկերեն ընացիքը հրատարակվել է 2015 թ. Քայումարս Քերերընի ընթերցմամբ ու խմբագրությամբ Մեծ Քիրսանակայում Գիրքի հիշատակին նվիրված շարքում: Դեռ նախքան այս հատորի հրատարակությունը, սկզբնաղյուրի Կովկասի տվյալ ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող որոշ տեղեկությունները առանձին հոդվածներով ուսումնասիրել ու ներկայացրել է ճապանացի արևելագետ Հ. Մաեդան՝ մատնանշելով դրանց կարևորությունը շահ Աբբասի կողմից տարածաշրջանում իրականացրած վարչատևեսական⁵ ու էթերիկ բաղադրականության հետազոտության համար⁶: Ուսումնասիրողը բարձր է գևահատում Ֆազլի Խաֆահանիի տեղեկությունները շահ Աբբաս Ա-ի մոտ ծառայության մեջ գումար մահմերականացած հայ, ազգեցիկ դրամ Կարչանայ խանի կյանքի ու գործունեության մասին՝ իր հոդվածում ընելով դրանք⁷:

Ֆազլի Բեկ Խաֆահանին, ծագումով հայտնի ազնվականական տոհմից էր: Նրա պապը՝ Մասիհ ալ-Շին Ռուհալլահ Խուզանին Սեֆյան պետության ժամանակակից գրադարանին նահանջային պաշտոնյա էր: Հեղինակը ծնվել և մեծացել է Ասրաքանականում: Նա իր պաշտոննեական առաջխաղացումը սկսել է 16 տարեկանում՝ եղբոր՝ Գան-

² Փափազան 1959, վայ. 1-18:

³ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ XXXIV-XXXV.

⁴ Նոյն տեղում, էջ XXXIII, XXXVII:

⁵ Maeda 2015, էջ 109-110:

⁶ Maeda 2012, էջ 471-489:

⁷ Maeda 2015, էջ 112:

ձակի վեզիր Մուհամմադ Բեկի վարչական անձնակազմում: Երկուսը այսուհետև տեղափոխվում են Ղարսալ (Քարրաբ), որը կառավարում էր Իզիրմիդորտի կառավարիչ Փեյշար խանը: 1617 թ. շահ Արքաս Ա-ի հրամանով նա նշանակվում է Փեյշար խանի վեզիր, որի հիմնական պարտականությունն էր նախ Ղարաբաղի, ապա՝ Արևելյան Վրաստանի հարկատվությունը⁸: Հենց այս շրջանում էլ Ֆազլի թեկը սկսում է գրել իր «պատմությունը»: Նրա պատահանասուլության տակ էր «Ղարաբաղի, Մողանարի, Թուման-և Մեշրինի, Ղաֆանարի ու Չոլխոր Սաադի» ցեղերից չորսանեղի հարկի գանձումը: Նա միաժամանակ նաև Ղարաբաղի ու Ասրպատականի հյուսիսային շրջանների խալիս հողերը⁹ ֆինանսական վերահսկիչ էր¹⁰: Փեյշար խանն իր պաշտոնաների հետ այդ շրջանում հաշվառման են ներարկում Ղարաբաղի որսորդության ու բազեների բուժման հարկերը: 1620 թ. նրան են համձնարարվում նաև «Մոլանարի ու Թուման-և Մեշրինի» հարկամատյանների ճշգրտումը: Ապա 1621 թ. որպես հարկային տեսուչ նա այցելում է Բարու և Շիրվան¹¹: «Ազգալ ալ-Քավարիխում» նաև կան հասուլենտ նշում-

⁸ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ XXI.

⁹ Խալիս (առաջ) ԺԷ դարի փաստաթյուրի տվյալների հիման վրա 2. Փափազյանը հանգել է այս եղբակացությանը, որ այդ շրջանում «խալիս» հողերը պետական սեփականություն էին համարվում, առաջայն կրած տվյալ վկայութիւնը տօնօրինության տակ էին և նրաց եկամուտներն ամբողջին պատկանում էին խաներին ու թեկարքեկերին (Պազար 1972, էջ 106):

¹⁰ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ XXI:

¹¹ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ XXII:

ներ Ֆազլի Բեկի թիֆլիս, Վրաստանին սահմանակից շրջաններ ու Դաղստան գնալու վերաբերյալ: 1719-1724 թթ. Ֆազլի Բեկը վարում էր Կախեթի վեզիրի պաշտոնը: Այդ ժամանակաշրջանում թեժ պայքար էր ընթանում Կախեթի ժառանգական տիրոջ Թահմուրասի ու Սեֆյան իշխանությունների միջն, որի արդյունքում, կապված այս տեղ ծագած ապստամբության ու դրան ուղեկցող խժդությունների հետ, Ֆազլի Բեկն իր ընտանիքով հեռանում է Բարդայից Արաստար ու Արդեկի:

1624-5 թթ. Ֆազլի թեկը վարում էր Քերմանի վեզիրի պաշտոնը¹²: Իսկ շահ Սեֆի Ա-ի իշխանության շրջանում (1629-1642) նա հեռանում է Իրանից Մողոլական Հնդկաստան, որտեղ Ֆազլի թեկին տեսնում ենք իր մի քանի այլ ազգականների հետ պաշտոնեական աստիճանակարգում բարձր պաշտոններ զբաղեցնելիս¹³:

Ֆազլի Խսխահակին իր երկը սկսել է գրել այն ժամանակ, եթե Խորանար Մուսչին արդեն ավարտել էր շահ Արքա Ա-ի պատմությանը ևվիրված աշխատության երկրորդ մասը: 1616 թ: Երկու հետինակները միմյանց ակնհայտ կերպով ճանաչի են և Ֆազլին անզամ նրան է ներկայացրել իր որոշ ստեղծագործություններ¹⁴: Ֆազլի Խսխահակին իր երկը սկսել է գրել նպատակ ունենալով ճշգրտել ու բարեխավել Խորանար Մուսչու պատմությունը և այս գրել է լիովին անզամ ու ինքնուրպով շարադրանքով՝ հենված իր անձնական դիտարկումների, իր

¹² Նոյն տեղում, էջ XXIV:

¹³ Նոյն տեղում, էջ XXIX-XXX:

¹⁴ Նոյն տեղում, էջ XLV:

բարձրաստիճան հորեղոր՝ Ասադ Բեկի ու Եղոր՝ Մուհամմադ Բեկի սշումների վրա: Թեև թէ Խարանդար Մուսչին և թէ Ֆազլի Բեկը անդրադառնում են գրեթե նոյն իրադարձություններին, այնուամենայնիվ Ֆազլի Բեկը շատ անզամ լրացնում ու ավելի մաքրամասնում է որոշ դեպքերի նկարագրությունը, հատկապես Կովկասին վերաբերող մասերում: Ֆազլի Բեկի տեղեկությունները Ղարաբաղի, Ասրաքատականի ու Արևելյան Վրաստանի տարածքների վերաբերյալ լույս են սփոռում իրաևական տիրապետության ու վարչարարության մեթոդների ու մակրամասների վրա: Ֆազլի Խսֆահանիի պատմությունում ասդրադարձներ կան Արևելյան Հայաստանի հայոց մելիքներին ու տեղի հայ բնակչությանը, նաև Նոր Չուլայի հայությանը, որոնք երբեմն հաստատվում են այլ աղյուսուներով, լրացնում երանց տվյալները, երբեմն էլ եզակի են և նրանց վերաբերող նոր, դեռևս անհայտ փաստեր են արձանագրում:

Աշխատության հրատարակված երրորդ հատորն ունի հետևյալ կառուցվածքը. առաջին 20 թերթերում հակիմաց տարեգրության ձևով շարադրված են շահ Արքա Ա-ի ողջ զահակալման պատմությունը. Խանակումները տարբեր պաշտոնների և պատերազմական իրադարձությունները, ճակատամարտերն ու ոսկամբաշվերը տարբեր ուղղություններով: Այնուհետև հեղինակն այս իրադարձությունները մակրամասնում է ավելի ընդարձակ շարադրանքով:

1577-1590 թթ. բուրք-իրանական պատերազմի արդյունքում Հայրավային Կովկասում հաստատվում է Օսմանյան տիրապետությունը: Առաքել Դավթիթեցին հետևյալ կերպ

է բնութագրում տեղի բնակչության դրույյունը. «Ճանք հարկապահանջուրեամբ, և կեղերմամբ զրկեին և կողոպտէին, և հաւատոց կուտէմութիւն առնեին (խասություն էին բանեցնում), և այլ բազում տառապանօք չարչարէին ոչ միայն զազզ Հայոց, այլև զազզն Վրաց և զՄահմետականաց», որի համար տեղի ազնվականները սուսյզ գիտենալով շահ Արքա Ա-ի Կովկաս արշավէլու մտադրության մասին՝ գլուխ են, ներկայանում երան և իրենց պատրաստակամությունը հայտնում երան ծառայելու հարցում: Նրանց թվում Առաքել Դավթիթեցին նեղում է Արցախ-Ղարաբաղի հայ մելիքների ու ազեղցիկ հոգնորականների անոնները: «Ունկանապատի Սարուխան ու Եղբայր Նազար, Հաթերքից Օղլան թեշիշ (քահանա) և Եղբայր Ղարաբեկ, Խաչենի Զալալ Բեկ, Դիզակի Սելիք Սուլում, Քոչիզի Սելիք Փաշիկ, Բրեսիս զուտից Սելիք Բարեն, Քաշարաղի Խանանածան զյուղի Սելիք Հայկաց»¹⁵:

Հաստատելով Առաքել Դավթիթեցու այս հաղորդումը Ֆազլի Խսֆահանին նշում է, որ այս մելիքներից մի քանիսն իրենց ցոկատներով ակտիվորեն աջակցում են շահ Արքա Ա-ին Այսրկովկասում երա կողմից ձեռնարկված ուղարկան գործողությունների ժամանակ և համագործակցում պարսից գործերի հետ օմանեյան բանակի դեմ մարտերում:

Ըստ նրա՝ հիջրայի 1013 (1604/5) թ. Հուսեյն խանի զինավորած պարսկական զորքի Արցախում գտնվելու ժամանակ նրա մոտ են զայիս «Հայկական Առանի Սելիք

¹⁵ Առաքել Դավթիթեցի 1990, էջ 63:

Հայկակի ու Օղլան թեշիշը 500 քրիստոնյա հրացանակիրներով» և «համատորեն կովում [Հուտելի խափի տրամադրության տակ մասցած] 2000-անց գորքի հետ ... բասարացից միևնույն կեսօր և [օսմանյան] բազմաքանակ գորքին դիմադրություն ցոյց տալիս»¹⁶: Հետագայում իրենց մատուցած ծառայությունների դիմաց Մելիք Հայկազին է հանձնվում «Քաշարադի կառավարում», իսկ Օղլան թեշիշն՝ «Զալբերդի (կամ Շելերերդ, Զրաբերդ) Հասակիք (Հարերը) գլուխի թիուղարությունը»¹⁷, իսկ վերոհիշյալի որդիներ Սարուխանին ու Յավրիին, որոնք տիրապետում էին խալամական գրչությանը, դարձնում է շահի դուզաներից»¹⁸:

Իրանցի պատմագրի վերոհիշյալ հաղորդումը փաստում է այն մասին, որ Մելիքական դիրքում հաստատվել էր դեռևս հիջրայի 1014 (1605/6) թ., թեև պահպանվել են նրա մելիքական ու կալվածատիրական իրավունքների հաստատման կապակցությամբ

¹⁶ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 357:

¹⁷ Թիուղար (أوغلو) - Այսպես էին կոչվում այն բարձրաստիճան զինվորականները, պետական պաշտոնյաներն ու ամիրները, որուր ոճմիկի դիմաց առանում էին շրջանից գյուղերից կամ առանձին գյուղից գանձվու ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի զամանակ իրավունքը, որպես «քիուլ: Խոչոր թիուղարներն իրենց տրված օրիենտների թիսկության նկատմամբ, թիուղարության ժամանակաշրջանում հաճախ ունենում էին նաև վարչական ու դատական իրավունք» (Փափազյան 1959, էջ 218):

¹⁸ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 416:

հրապարակված շահ Աբբաս Ա-ի միայն 1609 և 1620 թվականների հրովարտակները¹⁹:

Նույնագույն մասին մատուցած կապակցում է անվան հետ կապված տարրերում ու շփոթություն է տեղի ունեցել: «Թեշիշ»-ը հայերներին «քահանան» է, իսկ «Օղլան» որ գրվում է ՀՀԱ ձևով, ձեռագրի ընթերցման ժամանակ հեշտությամբ կարելի է շփոթել Օհանի հետ, որը գրվում է այսպէս՝ Հարերը գյուղի գերեզմանցի խաչարձանների վրա Ս. Բարիսուդարյանցը ժամանակին ընթերցել է. «Կաման Ասոտուծոյ պարու տէր Ոհանես կանգնեցի սուրբ խաչերս. քազարը Շահ Արազն. Երկրիս պարու տէր Ոհանես»²⁰: Մեկ այլ խաչարձանի վրա Ս. Բարիսուդարյանցը նեթերցել է նաև հետևյալը. «Կաման Ասոտուծոյ ես Ղալաբեկի Ո... հար եղբայր իմ պարու տէր Ոհանես Ղա...»: Խոկ «Օղլան թեշիշին և նրա եղբայր Ղալաբեկին» ինչպես վերև արդեն նշել ենք, հիշատակում է նաև Ասորել Դավթիթեղին, որը հնարավոր է, որ իր պատմության մեջ օգուազրծած լինի պարսկական սկզբանադրյուրներ, որոնցում հայ քահանայի անունը նշված լիներ այդպես: Ուստի խորը թերեւ իշխանական ծագում ունեցող «Ոհանես քահանայի» մասին է, որին շահ Աբբաս իր մատուցած ծառայությունների դիմաց շնորհում է Հարերը գյուղը որպես թիուղ և այդպիսով դարձնում «պարուտէր»:

Քաշարադի «թիսկության Մելիք Աղաջանի և Զրաբերդի Օղլան Յուսուֆի» անուններն են նշվում հետազոտում

¹⁹ Փափազյան 1959, վայ. 9 և 15:

²⁰ Բարիսուտարեան 1999, էջ 264:

Զոխուր Սահմանի (Երևանի նահանգի) Թահմասայ Ղուկի Բեկ խան Ղաջարին ենթակա ազդեցիկ գինովրականների և ուներ անձանց քվում, որոնք իրենց հարյուրականներով մասմակցում էին Սեֆյանների ռազմական ձեռնարկումներին²¹: Հիշենք, որ Թահմասայ Ղուկի Խանը Զոխուր Սահմանի բեկարքեկն էր 1625-1635 թթ.²², ուստի այս տեղեկությունը վերաբերում է վերը նկարագրված իրադարձություններից 20 տարի անց ժամանակահատվածի և այդ անձինք թերևս հանդիսացել են Քաջարանի Սելիր Հայկացի և Զրաբերդի Օղլան քահանայի որդիները կամ այլ ազգականներ:

Վերը ներկայացված հատվածում տեղեկություն կա «Օղլան կամ Օհան» քահանայի որդիների հետագա ճակատագրի վերաբերյալ, որոնք համալրում են շահ Արքասի դուռամների շարքերը: Ղուկաս (ՔՆ) կամ պարզապես «ղուլ» ծագումով արաբերեն բարը բառացի նշանակում է «ստրուկ»: Սեփյան շրջանում այսպես էին կոչվում այլադապներից հավաքարված գերիները, որոնք մահմեդականացվում ու ստրկացվում էին: Շահ Արքա Ա-ի օրոք ըստ խոտանացի ճանապարհորդ Դիետրո Հելլա Կալեի Իրանում կային շուրջ 30000 դրամեր, որոնցից 15000-ը գինովրականներ էին՝ ընդգրկված ռազմական բարեկիոխման արդյունքում ստեղծված հեծյալ գնդերի մեջ²³: Սրանք փաստորեն կազմում էին շահի անձնական թիկնապահների գլարոխան՝ «ղուլլար - Ջ»: Շահի օրինակով, դու-

լամների հասուկ ջոկատներ ունեին նաև վիլայեթներում և սահմանամերձ կուսակալություններում իշխող բնելարքեկերը²⁴: Ոչ զինովրական դուռամներն իրենց հերթին երկու տեսակի էին՝ ներքինի (խասսեին պատկանող դուռամներ) և ոչ ներքինի (սատե- սովորական)²⁵:

Ֆազլի Խափահանիի վերը նշված հաղորդումը նկարագրում է Սեփյան իշխանությունների կողմից Կովկասի այլադապների նկատմամբ իրականացվող վերինիշյալ քաղաքավանության մի դրամագը: Տեղինակը որպես շահնական բարեհաճության դրսերում է ներկայացնում Օղլան (Օհան) քահանայի «փալամական գրջությանը ծանոթ» գավակների փաստացի ստրկացումն ու մահմեդականացումը:

Ըստ Ֆազլի Խափահանիի, 1013 (1604/5) թ. Գանձակի մոտ գտնվող պարսից գորակայան են ներկայանում «Զայթենի» (Գետաշեն) Սելիր Յաղգարն ու Շամբորի մելիքները և ծառայություններ մատուցում²⁶: Այս տեղեկությունը Հյուսիսային Արցախի հայ մելիքների մասին նրանց վերաբերող հազվագյուտ տվյալներից է, որում առկա Սելիր Յաղգարի (Եսուկեարի) անունը նշվում է նաև այդ շրջանի Սուլուր (Ազատ) գյուղի Ս. Հովհաննես եկեղեցու արձանագրության մեջ²⁷: Հյուսիսային Արցախի Ռոկանա-

²¹ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 1003:

²² Փափազյան 1977, էջ 33:

²³ Tadhkirat al-muluk 1943, էջ 127:

²⁴ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 360:

²⁵ Քարիստաքանաց 1999, էջ 299: Այս արձանագրությունը 1980 թ. տվյալներով արդեն պահպանված չէր (Կարապետյան 2004, էջ 312):

²⁶ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 1003:

²⁷ Փափազյան 1977, էջ 33:

պատի մելիքներ Նազարն ու Սարսևանն այն հայ մելիքներից էին, որոնք բառ Առաքել Դավիթիցն այցելու են շահ Արքա Ա-ին Սպահանում ու պատրաստակամուրուն հայտնում ծառայելու և աջակցելու նրան իր հակասամայան ձեռնարկումներում²⁸: Ըստ ամենային, հիշյալ մելիքները իրոք շահ Արքափի աջակցում են, որի դիմաց պետք է, որ շահ Արքա Ա-ը հաստատած լիներ նրանց իրավունքները հրօվարտակով: Պահպանվել է շահ Արքա Ա-ի 1607 թ. հրամանագիրը, որով քրիստոնյա Մելիք Նազարը նշանակվում է Ղարաբաղի «Սոնդորաբաղի (Ռոկանապատ) մելիք և առաջնորդ»²⁹:

Իրանցի պատմագիրը ևս մեկ անգամ հիշատակում է Գետաշենի Մելիք Յաղգարի անունը 1625 թ. զարնանը Գեղրդի Սաակաձենի զյասպորտքամբ վրացիների կողմից պարսկական զորքի ջախչախման³⁰ ու Գանձակի գրավմանը վերաբերող Նկարագրության մեջ: Ըստ պատմագրի, երբ վրացական զորքը զյասպիրող «ուրացալ մովրով» (Գեղրդի Սաակաձեն) անցնում է Կուր գետը՝ Ղարաբաղն ասպատակելու նպատակով... Խաները մայիսին հեռանում են Արարլի մոտ ափը», որից հետո վրացիները Գանձակը գրավում են, շրջակայի ցեղերի բնակիչներից: «Ումար [ապատանեցին] Զայքենի Մելիք Յաղգարի մոտ, որև այս [Գետաշենը] ամրացրել և պաշտպանում էր, լավ հրացանակիրներ ուներ»³¹: Իսֆահանին նկարագրում

²⁸ Առաքել Դավիթիցի 1990, էջ 63:

²⁹ Ст'я Тбилисская коллекция персидских фирмансов 1995, էջ 20:

³⁰ Այս մասին տե՛ս Չորակյան 2016, էջ 352:

³¹ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 908:

է նաև, որ վրաց մովրովը փորձում է գրավել Գետաշենը, սակայն «Մելիք Յաղգարը այնտեղի մահմեղականների ու քրիստոնյանների բազմությամբ կրվի է ենում նրա դեմ և չորս օր նրան սղնախի ու ամրության ստորոտում պահում: Քանի որ [մովրովը] ներբռաստ գցում էր իր դժվարին կացությունը, այլև չի շարունակում կովկել ու վերադառնում է»³²:

Առավել հարուստ են իրանցի պատմագրի տեղեկությունները Գեղարքունիքի Մելիք Շահնազարի և նրա որդի Մելիք Յաղիրի վերաբերյալ: Դեռևս արշավանքի սկզբում՝ «Հիջրայի 1012 (1603/4) թ., երբ Զու-լ-Ֆիղար խանը մտնում է Զոխուր Սա'ադի վիլայետ (Երևանի նահանգ), Գյորջայի (Գեղարքունիքի) ու այս շրջանի քրիստոնյանների քալանքար Մելիք Շահնազարի որդի Մելիք Յաղիրին այնտեղի հայերից 300 հոգով նրա բանակին միացավ, հնազանդություն հայունեց ու պարտավորվեց հնարավորինս ջանք թափել (Երևանի) բերդը գրավելու համար: Նա մարդ ուղարկեց Առանի հայկական մահմեները երիտասարդ հրացանակիրների գորք հավաքագրելու»³³: Հեղինակը նաև մատնաեցաւ է Զոխուր Սա'ադի հայության դերը բերդը պաշարած պարսկական բանակը պարենով ապահովելու գործում³⁴:

Մելիք Շահնազար Ա-ը Գեղարքունիքի Մելիք Շահնազարյանների տոհմի նշանավոր ներկայացուցիչն էր, որին շահ Արքա Ա-ը իր Ղարավ Կովկասյան արշավանքի

³² Նոյն տեղում, էջ 909:

³³ Նոյն տեղում, էջ 340:

³⁴ Նոյն տեղում, էջ 342:

սկզբում հրամանագիր է հղում՝ պահանջելով նրա աջակցությունը: Պահպաննել է հիջրայի 1012 թ. ջումադի առաջին ամսին (1604թ. Ասպուտեմբերի 25 – Ինկուտեմբերի 25) հրապարակված այդ հրամանագիր պատճենը, որով Սեֆյան շահը պահանջում է Մելիք Շահնազարից և վիրկածություն ցուցաբերել իրեն ծառայելու հարցում քանի որ նա գրաված լինելով Ասրապատականը և նրա կենտրոն Թավլիզը, մտադիր էր արշավաերով և վաճառքում ու վախճանանքում, որից հետո խոստանում էր հավատարմության դիմաց նրան արքայական առատաձեռնությամբ վարձատրել³⁵:

Վերջին հնագանդվում է շահ Աքքա Ա-ի հրամակին և իր մատուցած հավատարիմ ծառայությունների դիմաց վերահաստատվում Գեղարքունիքի մելիքի դիրքում: Խուզանին նաև հետևյալ հետաքրքրական տեղեկությունն է հաղորդում Գեղարքունիքի Մելիք Շահնազարի երածշտական ունակությունների մասին. «Մելիք Շահնազարը, որի տանը համախ է հանգուցյալ շահը կանգ առել ու նվերներ ընծայել, հարուստ ու շնորհաշտ մարդ էր, լավ սազ էր նվազում ու հմուտ երաժիշտ էր»³⁶: Առաքել Դավթիթեցին անդրադառնալով Մելիք Շահնազարի կողմից շահ Աքքա ի հուրընկարմանը, նշում է, որ դա տեղի է ունեցել 1606 թ.³⁷: Մելիք Շահնազար Ա-ը այս շրջանում արդեն ծեր լինելով մահացել է 1606 թ.: Այդ (ոճե) թվականն է նշված նրա

տապանագիրն ընթերցած և առաջին անգամ հրատարակած Ս. Զալայանի կողմից³⁸, ինչպես նաև Մելիք Շահնազարի պատվերով գրված մի Ավետարանի հիշատակարանում³⁹: Նրա տապանաքարը չի պահպանվել, և հետագա ուսումնասիրող Ս. Բարիստարյանը ամենայն հավանականությամբ հենվելով Ս. Միքայելնի հաղորդման վրիփակի վրա⁴⁰, նշում է ՈԾ (1608 թ.)⁴¹:

Ինչ վերաբերում է Մելիք Շահնազարի որդի Յավլի Բեկի մասին Խափահանիի հաղորդմանը, ապա հայկական աղբյուրներում ևս տեղեկություններ կան այս անգամ մեծ բանագրից հետո, մասնավորապես 1605 թ. Արարատյան երկրում թուրքական զորքի դեմ կոփվերում նրա մորած խիզախի մարտերի մասին. «Դարձեալ յոթամ Այրարատեան երկիրի անտիբացավ, գունդ մի երլուզակաց, զոր ջալախ ասեն, ի Տաճկաց կողմանէն եկեալ բնակեցան անդ և բազում ոճիրս չարեաց զործեցին ի սակա մնացեալս. զիշերազնաց եղեալ գննեին, եթէ ուր ուրեք զոտահի մարդ, ի վերայ հասեալ մինչև զուվն ի յերկիր ձգեցին... Դարձեալ զօրքն Տաճկաց որ ի յԱրարատ, կամեցան զիշերազնաց լինել և յաւարի առնուլ գերկին Գեղամայ և կոտորել զորդիս մելիք Շահնազարին, զոր իմացեալ ծերն Շահնազար զորդին իր զԱրիբեկն քրի-

³⁵ Զալայան 1858, էջ 111:

³⁶ Հակոբյան/Հավիանիսիսյան 1974, էջ 219:

³⁷ Ս. Միքայելնի մոտ առկա է վիճակ, որտեղ ՈԾ-ն թվականը համապատասխանեցված է 1606-ին (Միքայելն 1895, էջ 610): Ս. Միքայելնը տապանագիր տեքստը և թվականը վերցրել է Ս. Զալայանցից, ուստի պետք է ՈԾ-ն:

³⁸ Դիմիան հայ վիմագրության 1973, էջ 342:

³⁹ ԱՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոն, թոր. 241, գործ 1, վավ. 23:

⁴⁰ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 340:

⁴¹ Առաքել Դավթիթեցի 1990, էջ 114-115:

տոնեայ գօրօք ի վերայ նոցա, և կոստորեաց զնոսա մեծաւ քաջութեամբ. և տարեալ զգլուխս նոցա եղ առաջի Պարսից արքային, յորմէ ուրախացաւ արքայն, և ես նմա իշխանութիւն տիրել ի վերայ զաւարին իւրոյ»⁴²:

Մելիք Շահնազարի որդիներից Ցավկըն շահ Արքասին ցուցաբերած գործուն աջակցության համար մեր հեղինակի հավատմամբ հիշքայի 1013 (1604/5) թ. Երևանի հայկական մահալի բալանթար է Նշանակվում⁴³. Բնշպես վերը նշեցինք, այդ պաշտոնը ըստ Իսֆահանի բալանթարի պաշտոն էր վարում նաև նրա հայր Մելիք Շահնազարը:

Քալանթար (աճակ) էին կոչվում բաղարեների կամ բաղարային խոշոր թաղամասերի աշխարհիկ դեկապարեները, որոնք զբաղվում էին բնակչության բաղաքացիական հարցերով և հետևում բաղարի հասարակական գործերին: Մրանք ստվարաբար ընտրվում էին բաղարի մեծահարուստ վաճառականներից (խոշանելք)⁴⁴, բայց որոշ դեպքերում այդ պաշտոնը համատեղում էին նաև մելիքները, ինչպես օրինակ Ազգուիսի և Դաշտի մելիքների դեպքում⁴⁵: Քալանթարներն էին նշանակում բայտողաներին⁴⁶, և

⁴² Հայոքան/Հնդկանիսխան 1974, էջ 288:

⁴³ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 356:

⁴⁴ Փափազան 1956, էջ 122:

⁴⁵ Հնդկանիսխան 2017, էջ 73:

⁴⁶ Քայակարա (աճակ) - Այսպես էին կոչվում զուրական ավագները: Սակայն չպետք է հասկանալ միայն զույգի «զեղափազք», «տանուտերք» կամ «ուեխ» իմաստով. մի զուրում կարող էին ինեւ մի բանի բայտությաներ դրանք փաստորոնն զույրի ավագների կամ «աղասինկալների» (պարսկ. - «աղչսեֆիր») խորհրդի անդամներն էին, որոնք այդ անունը ստացել էին երբենք զույրի տանուտեր եղած ժամանակ: Այդ պաշտո-

որոշակի դերակատարություն ունենում համբարությունների հարկերի բաշխման գործում⁴⁷: Նրանց էին ենթարկվում տեղի դագին⁴⁸, ավագները, արհեստավորներն ու մյուս բնակչները⁴⁹:

Տապի Իսֆահանի այս հայոքանը, որի հավաստիությունը պատճառ չունենք կասկածի տակ առնելու, մատնանշում է Մելիք Շահնազարի «Գյորչայի (Գեղարքունիքի) հայկական մահալի բալանթարը» և ապա նաև նրա որդի Մելիք Եավրիի՝ Երևանի բալանթարը եղած լինելու կարևոր իրողությունը, որի մասին որեւ այլ աղբուրում տեղեկություն չկա:

Հայունի է, նաև, որ Մելիք-Շահնազարյանների տոհմից ևս մեկ անձ է հետազայտմ հիշատակվում Երևանի բալանթարի պաշտոնում, դա Նադիր Հակի Ժամանակ Երևանի հայերի բալանթար նշանակված Մելիքքան. Մելիք Շահնազարյանն էր: Թեև Արքահամ Կրետացին քազիցու հիշատակելով Մելիքքանի անունը, չկ նշում, որ նա Մելիք Շահնազարի տոհմից էր⁵⁰, սակայն այդ մասին հավա-

նից ազատվելուց հետո կ նրանք շարունակում էին կոչվել բայտուղաներ ու մասնակցում էին ավագների խորհրդին (Փափազան 1956, էջ 122):

⁴⁷ Միջազ Սամիթ 2019, էջ 155:

⁴⁸ Ղազի (պահապահ) - Հաստակոր, շարի դատական ատյանի պետը, որը նշանակվում էր բարձրաստիճան հոգևորականության շարքերից, որը շարիաթի օրենքով ընտում էր բաղաքացիական ու բրեական գործերը (Փափազան 1959, էջ 222):

⁴⁹ Մեջքաբերքան 2016, էջ 270:

⁵⁰ Արքահամ Կրետացի 1973, էջ 49, 80, 128:

տում է Հովհաննես Մելիք-Մելիմյանց Զմյուռնացին իր «Համատուութիւն Պատմութեան Հայկացանց» երկուց⁵¹:

Քաիի որ Սելյաների վարչադարական համակարգը Նադիր շահի օրոք շարունակում էր գործել աննշան փոփոխություններով⁵², ուստի Երևանի քաղաքարի դիրքը և պաշտոնական գործառույթները բարեներու համար օգտակար է նաև Արքահամ Կրետացու հաղորդումները, ըստ որի Երևանի նահանջի հայության անմիջական դեկանար քաղաքար Մելիքշան էր, իսկ այլազգիներինը՝ Ալիդովին. «Երևան թ (9) միավ⁵³ գոլով թ մելիք կան այժմ: Թեկիս հնազանդ են քաղաքարին և դողան առաջն, իբրև զնորքար (ծառա), բայց Երևանայ մելիքներացն որք են այսոքին. նախ մելիք Յակոբշան և մելիք Սկրտումն, Կարբու և Ղրիմականու, Շոռակալու, Իկտիբու, Գառնու, Շաղկեանձորու, Գեղարքունոյ, Ապարանու, Շիրակուանու...»⁵⁴:

Արքահամ Կրետացու այս տեղեկության համաձայն քաղաքարի դիրքը ավելի բարձր էր մելիքի դիրքից: Քաղաքարի պարտականությունն էր «ռայաքթ⁵⁵ շահերը պաշտպանել և եթե հնարավոր է, վերականգնել լոյարի

⁵¹ Այս մասին տե՛ս Փափազյան 1972, էջ 76, 78, հրում՝ ՍՍ, ձեռ. 2888, էջ 341ա:

⁵² Այս մասին տե՛ս՝ .646-645, 581. Հայութ, 1388:

⁵³ Սահան (ծառ) - Ծրջան, զափու ԺԷ-ԺԹ քարերու Ալղրկովկասի վարչական բաժանման միավորներից է:

⁵⁴ Արքահամ Կրետացի 1973, էջ 128:

⁵⁵ Ռայար, ճիշտը՝ ռայիայր (Ծայ.) Սկզբանդրություններում գործ է ածվում հսկառակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստալյաց, հողագործ գյուղացիության իմաստով (Փափազյան 1956, էջ 118-9):

իրավունքները], այլապես գեկուցել դիվանի վարիներին՝ թոյլ շտալով, որ ուժեղների կողմից թույլերի նկատմամբ բռնություն գործադրվի և անեծքի պատճառ լինի»⁵⁶: Այս առումով հատկանշական է նաև այն, որ Գեղարքունիքի վերոհիշյալ մելիքների անունների հետ վիմագիր արձանագրության մեջ և ձեռագրերի հիշատակարաններում օգտագործվում է «պարուաց պարոն» տիտղոսը, որը մատնանշում է նրանց գերակա դիրքը մյուս պարոնների կամ մելիքների նկատմամբ⁵⁷:

Այս իրողությունը, որ Մելիք Շահնազարի որդի Մելիք Յավրին արժանացել էր շահ Արքա Ա-ի վստահությանը և որոշակի դերականարություն ուներ Արևելյան Հայաստանում տվյալ ժամանակահատվածում զարգացող իրադարձություններում, հաստատվում է նաև Խաֆահանի հետագա հաղորդումներով ու այդ շրջանի այլ աղբյուրներում առկա տվյալներով:

Խաֆահանին նշում է, որ հիջրայի 1013 (1604/5) թ. «Գանձակի... շրջակայրն ասսպատակելով և հայերից ու մահմետականներից վերիներ վերջներով [պարսկական] զորք մեծ քազմությամբ Արասար վերադարձավ», բայց շտառով կարգարվում է «Ղարաբաղի հայերից և մահմետականներից [վերցված] գերիներին իրենց տերերին վերադարձնել»⁵⁸: Թերևս այս իրադարձությունների հետ անմիջական կապ ունի նաև Մատենադարանի Մելիք Շահնազարյան-

⁵⁶ Միջազ Սամի՛ 2019, էջ 156:

⁵⁷ Դիվան հայ վիմագրության 1973, էջ 341: Հակոբյան/Հովհաննեսիս 1974, էջ 217:

⁵⁸ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 360:

Ների ֆունդում պահվող շահ Աբրաս Ա-ի հիջրայի 1014 թ. ջումայի առաջին ամսի (1605թ. սեպտեմբերի 14 - հոկտեմբերի 14-ը) հրամանազիքը, որով կարգարվում է շահական բոլոր պաշտոնյաներին Գեղարքունիքից բերված գերիներին հանձնել Յավրի Բեկին, որովհետև այստեղի բոլոր գերիներին ներում է շնորհվում և հրամանի կատարման պատասխանատվությունը դրվում է Մելիջ Դուկի Բեկ Նորջիի վրա⁵⁹:

Հետագա դեպքերի շարադրանքում ևս երկու անգամ Խուզանին հիշատակում է Մելիջ Յավրիի անունը. Մեկը 1015 (1606/7) թ. Վրաստանի կողմերում կատարված ռազմարշալի նկարագրությունից հետո, այն, որ երր պարսից գործը զայիս է Գեղարքունիքի կողմեր՝ այստեղ ամսան անցկացնելու, Մելիջ Յավրին ներկայանում է և իր ծառայությունն առաջարկում⁶⁰: Խաքանդար Բեկ Սունշին այս շրջանի դեպքերը նկարագրելիս ևս առանց հիշատակելու Յավրի բեկի մասին, նշում է շահի Գեղարքունիքի շրջանում իջևանելու և այստեղ նրա գորակայան բանակի մեծ ամիրների ու գորավաներ ներկայանալու մասին⁶¹. Այս իրադարձությունները բավականին մանրամասն նկարագրվում են նաև վերը նշված Մելիջ Շահնազարի պատվերով գրված Ավետարանի հիշատակարանում⁶².

⁵⁹ ՍՍ, Մելիջ-Շահնազարյանների ֆուն, թղթ. 241, գործ 1, վավ. 29:

⁶⁰ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 428:

⁶¹ اسکندر بیگ ترکمان، 1343، ص. 720.

⁶² Հակոբյան/Հովհաննեսյան 1974, էջ 219:

Մելիջ Յավրիի անունը Խուզանին ևս մեկ անգամ հիշատակում է Կարսի մոռակայրում գտնվող 1016 (1607/8) թ. Մաղաքերից բնակչությանը վերաբերող իր շարադրանքում, որտեղ 2Եշովում է վերջինիս որպես ինապես յանացած կարսոր դերը: 1607 թ. Ամիր Գունա խանը շահի բոլոյտվությամբ սկսում է բնակեցնել ու բարեկարգել իրեն հանձնված Երևանի նահանգը, այնտեղ սկսում են հողագործությամբ զբաղվել, որը մինչ այդ պատերազմական պայմաններում արգելված էր շահի հրամանով⁶³: «Երևանի և Կարսի միջև գտնվող Մաղաքերից բնակչները, երբ իմաստում են Երևանում [հողագործության] վերսկսման մասին, մարդ են ուղարկում Ամիր Գունա խանի մոտ, որ եթե բերի պատասխանառու Այի Բեկի հետ բանակցեն և նա իրենց խստանա չկատել, իրենք բերդը կիանձնեն: Այդ նպատակով նրա ապահովությունն ու անվտանգությունը երաշխավորող հրամանազրով Այի Բեկի մոտ է ուղարկվում Մելիջ Շահնազարի որդի բրիտունյա Մելիջ Յավրին, որին Մաղաքերից բնակչները ճանաչում էին ու վստահում: Այի Բեկը տեսներով, որ իր հպատակները իրեն չեն ենթարկվում, ապահովության երաշխիք ստանայով, անձնառությունը է լինում»⁶⁴:

Այսուամենային Մելիջ Յավրին երկար ժամանակ չի վարում Գեղարքունիքի մելիքությունն ու Երևանի քաղաքացիությունը, որովհետու արդեն 1019 թ. ուսմազան ամսին (1610 թ. նոյեմբերի 17 - դեկտեմբերի 17-ը) հրապարակված շահ Աբրաս Ա-ի հրովարտակում նշվում է, որ նա մահացել է և այդ պատճառով մելիքությունը փոխանցվում

⁶³ Փախազյան 1977, էջ 31:

⁶⁴ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 444:

Է նրա եղբորը՝ Մելիք Քյամալին⁶⁵: Ըստ ամենային միևնույն այդ Մելիք Յավիկին սպանվել էր ինչ-ինչ հանգամանքներում, որի մասին հետևյալ գրությունն է նրա տապանաքարին. «ԱՅՍ Է ՀԱՇԳԻՍ ՊԱՐՈՆԱՑ ՊԱՐՈՆ ԵԱՎՐԻ ՊԵԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ, ԱԽՈՂՈՐՄ ՍԱՀՆՈՒՄ ՓՈԽԵՑՄԱՌ ԱՌ ՔՐԻՍՏՈՆՅ ԵՒ ԵԹՈՌ ԴԱՌՈՆ ՍՈՒԻՔ»⁶⁶: Իսկ նրա դիմաց կանգնեցված խաչքարին, որը կանգնեցվել էր հետազոտում նրան և կնոջ՝ Գուլսարի հիշատակին՝ նրաց զավակների կողմից, եշված է նրա կնոջ մահվան թվականը՝ 1656 թ.⁶⁷:

Ֆաջի Խաֆահանիի երկուում անդրադարձ շահ Արքասի 1604 թ. ձեռնարկած հայության բռնագաղթին, որն ուղեկցվում է Հին Չուղայի և Արևելյան Հայաստակի բազմաթիվ բնակավայրերի ավերմամբ ու միտումնավոր ոչչացմամբ, գրեթե նույնությամբ կրկնում է Խարսեղար Սունչու պատմության շարադրանքը⁶⁸: Լա նշում է, որ Արարատյան նահանգի ավերումն ու նրա բնակչության փոխադրումը Արաքսի մուս ափը հանձնարարվում է՝ Ամբր Գունա խանին, իսկ Նախիջևանինը, Խոյինն ու Սալմաստինը՝ Մաղսաւուց Սուլթանին, ջուղայեցիներին զադրեցնելու հանձնարարականը տրվում է Թահմասայ Ղուլի Բեկին և դրա համար նաև որոշակի գումար է տրամադրվում նրան⁶⁹:

⁶⁵ ՍՍ, Մելիք-Շահնազարյանների ֆոլու, թղթ. 241, գործ 1, վավ. 25:

⁶⁶ Դիվան հայ վիմագրության 1973, էջ 341:

⁶⁷ Նոյն տեղում, էջ 340:

⁶⁸ Համեմատի թ. 668 . ս. 1343:

⁶⁹ Fazl Beg Khuzani Isfahani 2015, էջ 370:

Արարատյան նահանգի ու Զուղայի հայության մի մասի փոխադրումը շարունակվում է 1605 թ. գարնանը նովուողից հետո⁷⁰: Բացի այս Ֆաջի Խաֆահանին նշում է նաև թուրք-իրանական ընդհարումների հետ կապված հետագա բռնագաղթերի մասին եւ, օրինակ, որ 1615 թ. նորից Նախիջևան բաղադր ավերվում է, իսկ նրա բնակչությունը գաղթեցվում Ֆարրահարայի⁷¹, նաև հիջրայի (1617/8) 1027 թ., Խալիլ փաշայի զիխավորությամբ հարձակման ժամանակ Չոխուր Սասադի ու Նախիջևանի բնակչությանը նոր բռնագաղթի ննիքը կելու մասին, որի ժամանակ նրանց տեղափոխում են Արաքսի մյուս կողմը, որից հետո ցրվում են «ումակը՝ դեպի Օրդուբադ, ումակը՝ դեպի Ղափանար ու Ղարաբաղ»⁷²:

Հիջրայի 1013 (1604/5) թ. շահ Արքասի կողմից օսմանյան գորքերի դեմ ձեռնարկած ուզմական գրծողությունների նկարագրության մեջ ակնհայտ են զանում նաև տեղի հայության ու հայկական սրբավայրերի նկատմամբ միատեսակ դաժանության դրսուրումները նաև շահական գորքերի կողմից: Շորագյալի բերդում ամրացած թուրքական գորքի դեմ ուղարկված պարսկական գրագունդը հայազգի մահմետականացած գորավար Ղարջայ խանի զիխավորությամբ գրավում են Շորագյալի բերդը⁷³, ապա

⁷⁰ Նոյն տեղում, էջ 372:

⁷¹ Նոյն տեղում, էջ 697:

⁷² Նոյն տեղում, էջ 753:

⁷³ Խոսքը թելևս վերաբերում է Բաշ-Շորագյալի բերդին, որը հայոց Շիրակավանը կամ Երազզավորսն է (Ալիշան 1881, էջ 8):

նաև մոտակայրում գտընվող Ուշ Թիլսա եկեղեցին⁷⁴, որտեղ ամրացած մարդկանց մի խումբ 20 օր դիմադրություն է ցուց տալիս: Եկեղեցին, որը իրանցի պատմագի խոսքերով «քրիստոնյաների համար Սեքրան էր, և մարգարեի հայտնությունից 700 տարի առաջ էր կառուցվել», գրավվում է և նրա պաշտպանները ոչնչացվում են⁷⁵:

Իրանցի պատմագիրը 1605-թ. ձմռանը Գանձակի մոտ գտնվող պարսից գորակայանը նկարագրելիս հավաստում է, որ Ղարաբաղի հայերն ու Շադրուտանի մելիքները այլրան «շատ հացահատիկի, բրինձ ու կերակուր էին մատակարարել, որ երբեք նման էժանություն ու առառություն Նորին Սեծության ձմեռանցում չեր ենի»⁷⁶:

Ֆազլի Խաֆահամի այս և վերը նշված մի քանի այլ հաղորդումները հայ մելիքների կողմից շահ Արան Ա-ին ցուցաբերված աշակցության, հետազոտում իրենց պաշտոններում նրանց հաստատումն, ինչպես նաև Արցախի հայության կողմից նրա բանակը պարենով ապահովելու հարցում խաղացած կարևոր դերի վերաբերյալ լիովին պարզում են Սեֆյան շահի Այսրիովկասյան շրջաններում իրականացրած ռազմարշավի ու տեղի բնակչության բոնագաղթից հետո ստեղծված իրադրության վերաբերյալ:

⁷⁴ Ամենայն հավասարականությամբ ի նկատի ունի Շիրակավանի Ս. Ամենափրկիչ եկեղեցին, որը բավական մասքարամասն նկարագրում է Պողոս Վարդապետ Պետրոսյանը՝ գրատելով նաև պարսիկների կողմից նրա գրավման մասին մի ավելացրուց (Պետրոսյան 1872, էջ 182-184):

⁷⁵ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 369:

⁷⁶ Նոյն տեղում, էջ 418:

Ամենայն հավանականությամբ մելիքներին պատկանող հայկական գյուղերը չեն ենթարկվել բնականորդի, որը հիմնականում իրականացվել էր Արարատյան դաշտի ու Նախիջևանի բնակչության նկատմամբ, որոնց տարածքով էր անցնում բուրքական գորքի դեպի Իրան առաջնադաշտման ճանապարհը: Ակնհայտ է նաև այն, որ նստակյաց հայ բնակչությունից լրված լինելու դեպքում Ղարաբաղը չեր կարող պարենով ապահովել Գանձակի մոտ գտնվող պարսից գորաբանակը, այնպես, որ «նման էժանություն ու առառություն լիներ Նորին Սեծության ձմեռանցում»:

Հարկ է նշել նաև, որ դեռ իլինանության շրջանից տարածաշրջանն իրենց իշխանության տակ առած տիրակալները Ղարաբաղում էին հաստատում իրենց ձմեռանցները ու որսորդության հարմար վայրերը: Շահ Արցախի կողմից Արցախ-Ղարաբաղի տարածքում կազմակերպված որսորդությունների մասին մի քանի անգամ հիշատակում է նաև Ֆազլի Խաֆահամին⁷⁷: Մասնավորապես, անդրադառնալով 1014 (1605/6) թ. Թարբաթ գետի ափին շահական բանակի կանգ առնելուն ու որսորդության կազմակերպմանը՝ նշում է, որ «այն Իրանի և անգամ աշխարհի ամենալավ շրջաններից է, որտեղ զվարճական համար վարդերից, կականերից, ուկան ու մանուշակից ազատ հող դաշտերում ու տափաստաններում չես գտնի»⁷⁸: Արցախի հայությունը կարևոր դեր էր

⁷⁷ Fazli Beg Khuzani Isfahani 2015, էջ 21, 418, 626:

⁷⁸ Նոյն տեղում, էջ 418:

խաղում կազմակերպվող որսորդությունների ժամանակ որսի թոշուններ մատուկարարելու գործում⁷⁹: Արցախահայուրյան գրադմոնիքների մեջ իրանցի պատմագիրը կարևորում է որսի թոշունների բուծումն ու բազմացումը՝ նշելով, որ ողջ Ղարաբաղից որսորդական թոշունների բուծումից զանձվող հարկը, որը 1616 թ. տվյալներով կազմում էր 150 թուման, որպես թիուլ տրամադրվում էր Փերար Սուլթանին⁸⁰: Որսի թոշունների բուծման գործի մեջ մասնակիությամբ լինելու մասին են փասումն նաև մի շարք տեղանունները (հայտնի են մի քանի Դուշի անվամբ, նաև Սունդրաբար-Ռևանապատ գյուղերը), որ ցրված են պատմական Հայաստանի ու հատկապես Արցախի շրջաններում⁸¹:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Ֆազլի Խոչզանի Խուզանի «Աֆզալ ալ-Բավարիխ» վերնագիրը կրող աշխատությունը մեկն է այս եզակի պարսկական պատմագրական երկերից, որոնք բացի պալատական պատմագրությունները բնորոշ Իրանի շահերի գործերը պաթեթիկ ոճով նկարագրելոց, բովանդակում է հակիմա անդադարձներ նաև հայոց աշխարհին վերաբերող որոշ հարցերին՝ ինչպես ներկայացնելով դրանք պատմական դեպքերի ընդհանուր զարգացման շարադրանքում: Այդ հայորդումները, չնայած իրենց համառությանը, բովանդակում են կարևոր տեղեկություններ ու տվյալներ, որոնք օգնում են հայոց պատմության որոշ հարցերի հստա-

կեցմանը, լրացնում ու ճշգրտում հայ մելիքների կենսագրական ու սոցիալ-քաղաքական գործունեության մասնակիությունը:

**The information on account of some issues of 17th
century history of Eastern Armenia in the Chronicle of
Fazli Beg Isfahani**

Kristine Kostikyan

Summary

The published volume of Fazli Beg Isfahani Khuzani's "Afzal al-Tavarikh" is an important source of the history of Shah 'Abbas I Safavid. The author being one of the high officials of Safavid administration in Karabagh and Eastern Georgia was well aware of social economic and political events in the period of Shah Abbas's rule and has recorded detailed information about some matters connected to the history of local Armenian people and its meliks. The article considers the information of the source on the assistance of the Armenian meliks rendered to the Persian troops during Shah 'Abbas's campaigns in Caucasian regions, the details about the services and administrative offices held by the Armenians, the forced migrations of local population from Yerevan and Nakhichevan provinces. The information of the source reveals the major assistance of the Armenians of Karabagh to the Safavid army during its military campaigns and shows that the major part of local population, especially those under the rule of Armenian meliks were left free from forced migration to the inner regions of Iran and continued assisting the Persian troops during their later campaigns in 1605-6. Besides, many of the Armenian settlements of Karabagh specialized in breeding of the hunting birds, were left free in order to supply birds for royal huntings organized very often in its territory.

ՄԱՍԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արքահան Կրկոնոցի 1973 - Պատմություն, թիվ. թազիր, ուսուարզ, առաջ. թարգմ. Ն. Վ. Նորդանյանի, Երևան, ՀՀՍՀ ԳԱ հրատ.:

Ավիշան 1881 - Ավիշան Ն. , Ժիրակ, Վենետիկ, Ա. Ղազար: Առաքել Ղավիթմեջի 1990 - Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Ա. Խանելարյանի, Երևան, ՀՀՍՀ ԳԱ հրատ.:

⁷⁹ Նոյն տեղում, էջ 416, 417, 432:

⁸⁰ Նոյն տեղում, էջ 742:

⁸¹ Այս մասին տես Կոստիկյան 2017, էջ 142-143:

Դիմումը հայ վիմագրության, հ. IV 1973, կազմեց Ս. Բարիստ-դարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ իրատ:

Կարապետյան 2004 - Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իռադի:

Կոստիկյան 2017 - Կոստիկյան Ք., Հայոց վանքերի ու բնակավայրերի անուանումները պարսկերեն վաւերագրերում, Հայկագետների համար, 37, Բերդութ:

Հակոբյան/Հովհաննեսիսյան 1974 - Հակոբյան Վ., Հովհաննեսիսյան Ա., Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, ՀԱԱՀ ԳԱ հրատ.:

Հովհաննեսյան 2017 - Հովհաննեսյան Ա., Զարարիա Ագուլեցին և իր ժամանակը, Երևան, ԵՊՀ հրատ. :

Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), Սելիք-Շահնազարյանների փունք, թղթ. 241, գործ 1, վայ. 25, 29:

Օչքամարյան 2016 - Մեջքակարգյան ժ., Վեցիրի և քաղաքացի պատուները Անքան Իրավի վարչական համակարգուն, Անտունյան և Մշակույթի Հայագիտական հանելսոն, էջ 263-273: Դորական 2016 - Ծրագրան Պ., Ըստ Արքա Ա-ի արշավակերպության և պարականի միաբանության ամբարձության Արևելյան Վրաստանում, Հայաստանի հարավից Երկրների պատուներն, ի. Ա. Միջին դարեր, Երևան, Զանական հոպան:

Անտրոսեան 1872 - Անտրոսեան Դ., Տեղագրութիւն Շիրակայ, Արարատ, թիւ Ե, էջ 181-185:

Միքայ Սահմի 2019 - Թաղթիրաք ալ-Մուլուք, Օսար աղջուրները Հայաստանի և հայերի մասին, 18, Պարսկական սպայուրներ, Ա, Երևան, հեղինակային հրատ. :

Զալայսան 1858 - Զալայսան Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հյաստան, մասն Բ, Տիֆլիս:

Մարտենաց 1895 - Մարտենաց Ս., Տեղազիր Գեղարքունիք ծովագրի գալարի, որ այժմ Նոր Բայազիտ գտնատ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Փափազյան 1956 - Փափազյան Հ., Սատենադարձակի պարսկերեն վավերացրեք, 1, Հրովարտակներ, պրակ 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Փափազյան 1959 - Փափազյան Հ., Մատէնադարակի պարսկերեւ վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Փափազյան 1972 - Փափազյան Հ., Հայ-իրաևական գիեսկցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական

իրավիճակը Նայիր շահի օրոք, Բաւերը Երևանի Համալսարանի, հ. 2, էջ 72-85:

Գալուստյան 1977 - Գալուստյան Հ., Ծաղի սրբագրությանը Արարատյան երկրում (ԺԷ դ.), Լրաբեր Հասարակ. զիս., հ. 1, էջ 29-44:

Папазян 1972 - Папазян А., Аграрные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, изд. АН АрмССР.

Тбилисская коллекция персидских фирмансов, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, 1995.
Fazli Beg Khuzani Isfahani 2015 - A Chronicle of the Reign of Shah Abbas, vol. I, edited by K. Ghereghlu, Gibb memorial trust.

Maeda 2012 - Maeda H., Exploitation of the Frontier: The Caucasian Policy of Shah 'Abbas I, Iran and the World in the Safavid Age, New York, pp. 471-489.

Maeda 2015 - Maeda H., New Information on the History of the

²⁴ See also Naghibi, 'New Information on the History of the Caucasus in the Third volume of Afzal al-tavarikh, Studies on Iran and the Caucasus, Brill, Leiden/Boston, pp. 109-110.

Tadhkirat al-muluk 1943 - A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, printed by W. Heffer and sons LTD.

شعبانی رصان 1388، تاریخ ایران در عصر اسلامی، جلد 2، نهان، خلیفه پناه
اسنکندر بیگ ترکمن 1343، تاریخ علم آرای عباسی، نیمه دوم جلد دوم، تهران چاپخانه
موسوی.

Գեղրդի Միրզաքելյան
ՀՀ ԳԱԱ ԱԻ

ԿԱՐՔԻ ՔԱՂԱՔԻ 1728 թ. ՕՍՄԱՆՑԱՆ
ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ՄՎԶԲՆԱՐԵՑՈՒՄ

Բանալի բառեր. Օսմանյան կայսրություն, օսմանյան ընդարձակ հարկամատյան, աշխարհագիր մատյան, ժողովրդագրական պատկեր. Արևելյան Հայաստան, Կարքի, հարկեր:

1728 թ. Երևանի լիվայի¹ օսմանյան ընդարձակ հարկամատյանում² (աշխարհագիր մատյան) կարևոր մաս է կազմել Կարքին: Նախ և առաջ այս ունեցել է բազայի կարգավիճակ, որին պատկանել են 174 գորդ և հարակից ոչ մշտական բնակության մի քանի բնակավայրեր՝: Գյուղերի բանակները ամբողջ լիվայում անենախանեան է եղել, որի արդյունքում Կարքիի բազան լիվայի ամենամեծ վարչա-քաղաքական և վարչա-տնտեսական միավորն էր: Սակայն ուշագրավ է, որ Կարքիի բազան, բացի գյուղերից, բաղկացած է եղել նաև համանուն բաղադրից կենտրոնից³, ինչի գոյուրյունը առավել մեծ նշանակություն է հաղորդել վերոհիշյալ վարչա-քաղաքական միավորին:

¹ Լիվա (լր.) - վարչական բաժանման երկրորդ միավորը՝ կամ վիլայեթից հետո: Լիվան կոչվում էր նաև սահշար (Միրզաքելյան 2019, էջ 156): Լիվայի հայերեն համարժեք զալանն է (Մելքոնյան 2003, էջ 66):

² Tarihi Tahrir Defteri, 0901, s. 1-585 (այսուհետև՝ BOA).

³ Նոյն տեղում, էջ 106-215:

⁴ Օսմաներեն բնագործ՝ “مکر سف” – «Կարքիի բնակություն»: Սովորաբար օսմանյան իշխանություններն ընդարձակ հարկամատյանում այս եղբայրն են օգոստոբրծել պայմանագրերուն որևէ վարչա-քաղաքական միավորի բաղադր-կենտրոնը:

Կարքի բաղադրի (այսուհետև՝ Կարքի) 1728 թ. Օսմանյան հարկացուցակը⁵, որն ընկած է մեր այս ուսումնասիրության առանցքում, աղյուրագիտական մեծ արժեք է ներկայացնում, բայի որ հնարավորություն կա առաջին անգամ հետազոտել մասնավորապես բաղադրի երեխի կազմը, ժողովրդագրական պատկերը և բնակչությունից օսմանյան իշխանությունների զանձած հարկերն ու դրույթաշխիքը, որոնք մեծ ճշգրտությամբ կարող են պատկերել բաղադրի սոցիալ-տնտեսական դրությունը:

Կարքիի օսմանյան աշխարհագիր մատյանից պարզ է դատնում, որ օսմանցիները, սովորույթի համաձայն, դրա կազմումը մկնել են տվյալ բնակավայրում ապրող բնուր արական սեղի հարկատունների արձանագրումից, որի համար կազմել են անվանացանկ: Դրա ուսումնասիրության համաձայն, Կարքիում 1728 թ. եղել է 476 հարկասունություն, որոնք, դատելով անձնանուններից, հայազգի էին: Բացի դա, հարկացուցակի բնակչությունը ցույց է տալիս, որ 476 հարկատուններից 62-ը եղել են ամուրի: Հետևաբար Կարքի բնագործում բնակվել է 414 ընտանիք⁶:

Հարկ է նշել, որ բաղադր 1728 թ.-ին բաղկացած է եղել «Չալը» կոչվող բաղամասից⁷, որտեղ ապրել է բաղադրի բնակության գլուխ կեսը: Այստեղ կարենի է հաշվել 205 ընտանիք, որոնց շրջանում եղել է 14 ամուրի⁸: Հարկացուցակի հաջորդ հասվածը վերաբերում է բաղադրի այգիներին և պարտեզներին: Դատելով դրանց ընդհանուր տվյալներից Կարքիում եղել է 59 այգի և 68 պարտեզ, որոնք տարբեր հարկատունների շահագործմանն են հանձնված:

⁵ Նոյն տեղում, էջ 106-114:

⁶ Նոյն տեղում, էջ 106-111:

⁷ Նոյն տեղում, էջ 109:

⁸ Նոյն տեղում, էջ 109-111:

Նվաճ⁹: Այսպէս օրինակ՝ հարկացուցակից կարելի է տեղեկանալ, որ ոսմ Բանուսի որդի՝ Սովունը, լինելով Երևանի բերդի բնակչի, 1 աջի է ունեցել Կարբիում¹⁰:

Կարբի քաղաքի հարկացուցակի վերջին հաստածն առնչվում է հարկացածնին, որտեղ առաջին հերթին առանձին-առանձին ամփոփված լինելով ընտանիքների և ամուրիների թիվը, ներկայացվել են քաղաքից սահմանաված հարկերն իրենց դրամաշահերով¹¹:

Սակայն մինչև ունի հարկացածներին անդրադառնալը, հարկ ենք համարում նշել, որ հարկացածնում՝ անվանացանկի տվյալների համեմատությամբ, ընտանիքների թիվ հարցում նկատելի է հակասություն կամ տարերություն: Խոյիքն այս է, որ օսմանցիները հարկացածնում, իրն վերջնաարդյունք, 414-ի փոխարեն 410 ընտանիք են արձանագրել, փոխարենը՝ ամուրիների թիվը գրանցելով նույնը, ինչ անվանացանկում: Ավելին, հարկաշատիերը զանձվել են ըստ վերջնաարդյունքի համապատասխանարա 410 ընտանիք և 62 ամուրիք համար: Այսպիսով, կարելի է փաստել, որ անվանացանկի և հարկացածի տվյալների միջև կա 4 հարկացանուի կամ այս պարագայում նույնար ընտանիք տարբերություն: Տեսաբար է, որ դա տեղի է ունեցել օսմանյան իշխանությունների անփոխության հետևանքով: Այստաենայիկ, 1728 թ. Կարբի քաղաքի ընտանիքների թիվը առաջարկում ենք հիմք ընդունել կամ 410-ը կամ 414-ը:

⁹ Նոյն տեղում, էջ 111-113:

¹⁰ Նոյն տեղում, էջ 111: [Հայերեն վիմագիր արձանագրություններում բազմաթիվ վկայություններ են պահպանվել նոյն անձնակորուրյան կողմից տարբեր թակավայրերում ունեցած հոդակորությունների վերաբերյալ և այլ ունեցվածքների մասին - խմբ.]:

¹¹ BOA, էջ 113-114:

1728 թ. օսմանյան իշխանությունները Կարբիում տուրքար են սահմանել յոհոնումի¹², ցորենի, զարու, կորեկի, կոտավտի, պատու, ոսպի, բանջարանցների, մրգի և այգիների տասանորդների, խսի, անասունների, ոչյարների, հարկանուրյան, հողի քափուի, ացրալուսանիր հարկերի դիմաց: Դրանց կողքին հարկվել է 15 շրադաց, 2 ձիան: Հարկացածնում տուրքեր են սահմանվել նաև ներկատան, օճառատան և շուկայի պահպանման համար, ինչպես նաև՝ հանցանիք և ոճիք, բաղիավայի¹³, ընդհանուրի և խասիք բեյթ-ուլ մայի¹⁴, բացախայր և կորած ապրանքների, դաշտապահության, փախած ծառաների և աղախիների զերի, կենանիների ձիռ ու կովի, ինչպես նաև ծիխ, բաղ-նիքի և այլին համար¹⁵:

Կարբի քաղաքում ի թիվս այլ հարկերի, ներկատան, օճառատան, շուկայի առկայությունը, անշուշտ բարձր է խոսում քաղաքի տնտեսական ներուժի մասին: Դրանց շահագործումն առաջին հերթին վկայում է, որ քաղաքը

¹² Դարձի հարկ:

¹³ Բաղիավա (թագ): Էկամսի լրացուցիչ աղյուսների հետամուս լինելով՝ օսմանցի կառավարչները տուգանում էին զուրացիներին: Բայիիկան զանձվող տուգաների և հարկանուսակի ընդհանուր անունը է (Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 128):

¹⁴ Բեյթ-ուլ մայ (Ամա շա): Բառացի նշանակում է «զանձատուն»: Այս եզրույթի տակ հասկացվում էին պետական հարկերը, ինչ ավելի ուշ հարցումին գրավիլու և պետական սեփականությունն դարձվու անեն ինչ: Կենարուական իշխանությունների կողմից տարբեր նախանձերում նշանակվում էին «բեյթ-ուլ մայի» հատուկ գործակալներ, որոնք զանձում էին գրավվում էին անժամանակ մահացած բաղադրայիների ունեցվածքի և կալվածքների բնականական և երանցից ստացվող եկամուսների տնօրինման գործերով» (Փափազյան, 1956 էջ 505):

¹⁵ Նոյն տեղում:

իրավմամբ համապատասխանել է ժամանակի կենտրոնի կամ քաղաքի կարգավիճակին:

Ինչպես երևում է 1728 թ. օսմանյան հարկամատյանի ընթացականից Կարբի քաղաքի տնտեսությունում մեծ տեղ էին զբաղեցնում ցորենի և զարու մշակությունները, որուցից էլ սահմանվել էին ամենաբարձր դրույքաշիքը: Սյստեմ օրինակ ցորենի 270 թիվ¹⁶ բերքի դիմաց սահմանվել է 8100 արշէ¹⁷, իսկ զարու 550 թիվ բերքից 11000 արշէ: Ստացված տվյալները, վերածելով զանգվածի միավորի, կարելի է եղակացնել, որ 1728 թ. Կարբի քաղաքում ստացվել է մոտավորապես 6.925 կգ ցորենի և 12.237 կգ զարու բերք: Բացի այդ, պարզ է դառնում, որ նոյն թվականին օսմանցիները ցորենի ուրաքանչյուր թիվն զնաւուել են 30, իսկ զարունը՝ 20 արշէ:

Կարբի օսմանյան աշխարհազիր մատյանում կա նաև մեկ անձնություն, որը վերաբերում է ընդհանուր դրույքաշին: Հաշվելով բոլոր հարկերի դիմաց արձանագրված զնային արժեքները, նկատում ենք, որ դրանց ընդհանուր գումարը կազմում է 48.140 և ոչ թե 51.000 արշէ ինչպես նշված է վերջում: Այս անձնությունը կարող է պայմանավորված թիվով 2 հիմնական գործոնով. կամ դա տեղի է ունեցել օսմանյան իշխանությունների դիմումությալ սիսայի արդյունքում, որի պարագայում ցանկացել են մի փոքր քարձր հարկաշափ արձանագրել, կամ էլ 2860 արշէի

¹⁶ Թիվ - կշոր չափման միավոր: Օսմանյան կայսրությունում ցորենի և այսորի 1 թիվն ստվարաբար հավասար էր 25.65 կգ: Տարբերվում էր զարու և բընձի մեկական թիվի չափը, որը համապատասխանաբար կազմում է 22.25 և 12.8 կգ (Hinz 1990, էջ 51):

¹⁷ Արշէ (աշէ)- Արծաթե դրամի միավոր: Օսմանյան արշէները հավասար մեկ քառորդ դիմեն արծաթի, իսկ դիմենը հավասար էր 3.06 գրամի (Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 128):

անձնությունը վերաբերել է այդիների տասանորդի հարկացափին, որի դիմաց օսմանցի հարկամատյանուր անհականալի պատճառներով որևէ դրամաշափ չեն արձանագրել¹⁸:

Այսպիսով, Կարբի քաղաքի 1728 թ. օսմանյան հարկացուցակի ուսումնասիրության շնորհիվ հաջողվեց վերանել քաղաքի ժողովրդագրական պատկերը ըստ ընտանիքների ու ամուրիների թվի, այժմների ու պարտեզների առկայությունը, ինչպես նաև հարկերի ու դրույքաշափերի միջոցով տեղեկանալ Կարբի տղիալ-տնտեսական ներուժին: Օսմանյան սկզբանաբրուրի ուսումնասիրությունը հնարավորություն կրաքաջանում Արևելյան Հայաստանի պատմության առավել խորը ուսումնասիրությունների:

Ստորև ներկայացնում ենք օսմաներներ բնագրի վերծանությունն ու դրա հայերեն թարգմանությունը, որն առավել պատկերավոր կյարձնի խնդրո առարկա հարկացուցակի մեր հետագործությունը: Հարկ է նկատել, որ բնագրի թարգմանության գործում հավասարին ենք մեացել օսմանյան հնարականական համակարգին:

¹⁸ BOA, էջ 114:

Կարքի քազա, որը պատկանում է Ռենակի (իմա՝ Երևան) լիվային

Կարքի բնակչությունը, որը ենթակա է հիշյալին

1. Սաղոս որդի
թէշիշ¹⁹ Գրիգորի
2. Անարոն որդի
թէշիշ Քարափերի
3. Սարգսոն որդի
թէշիշ Միջոցայի
4. Բեղոսոն որդի
Բեղոսի
5. Սքրդոն որդի
6. Սարուք որդի
Աշլարիայի
7. Սարոս որդի
Սարուքի (ա²⁰)
8. Յաղոս որդի
Արգուրարի
9. Նազարափեք որդի
Ղազարի
10. Սարդոս որդի
թէշիշ Արութինի
11. Աղամ որդի
Արութինի
12. Աղաման որդի
Ախուցանի
13. Խաչում որդի
Աղամանի (ա)
14. Սալաքիա որդի
Գրիգորի (ա)
15. Արութին որդի
Ցաղուրի
16. Արութին որդի
Եղիսանի
17. Թորոս որդի
Բեղրոսի
18. Փափ որդի
Բեղրոսի (ա)
19. Դահիկ որդի
Ղազարի
20. Թորոս որդի
Ղավինի
21. Ռազոն որդի
Ավազանի
22. Թորոս որդի
Գրիգորի
23. Թորոս որդի
Գրիգորի (ա)

¹⁹ Օսմաներենում «شیخ» -

«թէշիշ» կշանակել է

քահանա:

²⁰ Օսմանեան հարկամատյաների անվանացմանում առանձնացվել են ամուրիները, որոնց դիմաց արձանագրվել է արքաստան “Հ” և “Ա” տառը, որը “ՀՅԱ”-ամուրին բանի կրծաս տարբերակն է Ենթելու կոյս օրինաշափությունից, մենք նույնական կիրառել ենք “ամուրին” բանի կրծաս ձևը:

24. Ավագ որդի
Գիրումի
25. Բողոս որդի
Ավաղի (ա)
26. որդի Գիրումի
27. Սաղայ որդի
Ավաղի (ա)
28. Սարգիզ որդի
Սաղոսի
29. Մարգարետ որդի
Մքրդիչի
30. Մինոս որդի
Արութինի
31. Ավագ որդի
Սամուլայի
32. Միհար որդի
Թամումի (Ը)
33. Բալասան որդի
Մելքոնի
34. Աղուս որդի
Բալասանի (ա)
35. Արութին որդի
Դիգրանի
36. Ամանիյա որդի
Արութինի
37. Թարափեք որդի
Անվանի
38. Բուրի որդի
Անվանի (ա)
39. Միհաս որդի
Ղավինի
40. Ասաքել որդի
Սաղոսի
41. Բեղոսոն որդի
Առաքելի (ա)
42. Օհան որդի
Սաղոսի
43. Սանազարուն որդի
Օհանի (ա)
44. Բանաս որդի
Սուարելի
45. Օհանես որդի
Սուարելի
46. Բույշ որդի
Սուարելի (ա)
47. Խաչում որդի
Սալիսանի
48. Ավազան որդի
Սալիսանի
49. Գրիգոր որդի
Սաղոսի
50. Աքաւես որդի
Սաղոսի
51. Գրիգոր որդի
Ավազի
52. Բարարա որդի
Ավազի (ա)
53. Ակերասն որդի
Գրիգորի
54. Բարորա որդի
Գրիգորի (ա)
55. Ավագ որդի
Բուրջանի
56. Գրիգոր որդի
Ավազի (ա)
57. Սալեսոս որդի
Բեղարի
58. Ակերասն որդի
Ցաղուրի
59. Արութին որդի
Ուսիրի

60. Ավանես՝ որդի
Արմաթինի
61. Դավիթ որդի
Իբրահիմ
62. Օհան որդի
Սարգսքեն
63. Մաքրափեր՝ որդի
Քուրքարի (ա)՝
64. Գրիգոր որդի
Ղազարի
65. Սարգիս որդի
Ղազարի
66. որդի Սարգիսի
67. Բաևոս որդի
Քարափերի
68. Բարուխա որդի
Գիրարդի
69. Աղաման որդի
Բաևոսի (ա)՝
70. Սամի որդի
Ավանեսի
71. Աղաման որդի
Խաչոսի
72. Բաևոս որդի
Գիրարդի
73. Աջրապեր (՝) որդի
Բաևոսի
74. Սուրարեր՝ որդի
Բաևոսի
75. Մըրլուն որդի
Ավանեսի
76. Գնորդ որդի
Գիրարդի
77. Խաչոտր որդի
Քէշիշ Գիրարդի

78. Ռւլուքեր՝ որդի
Ավագի
79. Գալուս (թ)՝ որդի
Յ. Գերբերն առանձին բաժնով անդրադասում է նաև հրեաներին, որոնք ցրված էին Շիրվանի տարբեր գավառներում (Շամախիում, Ղայրաղում, Ռուսառում, Նորպայում⁶⁰ և այլն): Նրանք ապրում էին համայնքներով՝ սեփական գյուղերում, որոնք նեկավարում էին ավագները: Ըստ ապրուիք՝ հրեաները խոսում էին այն նահանջի լեզվով, որում ապրում էին և միայն բավիներն էին օգտագործում մայրենի լեզուն⁶¹:

Շամախիում հրեաներն առներով էին գրադիմում, իսկ գյուղերում՝ հողագործությամբ և անասնապահությամբ: Յ. Գերբերի ուսումնասիրություններից հայտնի է դաշնում, որ շահական կառավարման ժամանակաշրջանում հրեաները հայ և վրացի գերիների վաճառքով էին գրադիմում:

⁵⁸ Նոյն տեղում, էջ 305:

⁵⁹ *Путешественники об Азербайджане*, 1961, с. 375:

⁶⁰ Դուրս քաղաքի դիմաց գումարու էր հրեական Կուլգատ գյուղը (200 ծովական), որտեղ ջրու սինազոր էր գործում: (Серебров 1958, էջ 205; Հմմ. Երոնեսկի 1823, էջ 384):

⁶¹ Գերբեր 1760, էջ 305-306.

կան տիրապետության ընթացքում այն խստիվ արգելված էր⁶²:

Յ. Գերբերը նշում է, որ Ղայրաղում ապրող հրեաները պարտավոր էին «մյուս ժողովուրդների հետ միասին» զինուրական ծառայություն կատարել: Յ. Գերբերի հաղորդմամբ՝ հրեաների ստիլա-իրավական կարգավիճակը չափազանց ծանր էր Շիրվանում: Այսպես, հրեաները Շիրվանում «ամեն տեսակի դժվար ու ծանր աշխատանքներ էին կատարում», որոնք մերժում էին «մահմեդականները»⁶³: Ինչպես հայերը, այսպես էլ հրեաները պարտավոր էին խարաց վճարել: Մյուս կողմից, հրեաները զանազան նվաստացումներ էին ներարկվում մահմեդականներից:

Արաբները Շիրվանում

Ըստ աղյուսիք՝ Շիրվանում ապրող արաբները այդտեղ էին եկել իրենց անաստաներով ու հաստատվել էին այդտեղ պատմական նախորդ Ժամանակաշրջաններում: ԺԼ դարի սկզբին Արևելյան Այսրկովկան այցելած հոլանդացի Ճանապարհորդ Կ. դը Բրունինը նշում էր, որ արաբներն իրենց ուղտերով ու ձիերով Նիշարադ էին գալիս և Շամախի մեկնելու համար ուղեկցող վենորում այստեղ⁶⁴: Յ. Գերբերը նշում է, որ արաբները առնենի սինահապական էին և խոսում էին բուրբերեն, քարաբերեն, արաբերեն լեզվուների խառնություն⁶⁵:

Արաբներն ապրում էին վրաներում մեծ համայնքով՝ մի քանի հարյուր մարդ միասին և ընտրում էին յուրաշի: Ամ-

⁶² Նոյն տեղում, էջ 306:

⁶³ Նոյն տեղում:

⁶⁴ *Путешествие через Московию Корнилия де Бруина*, 1873, с. 211:

⁶⁵ Գերբեր 1760, էջ 307.

თასიც წოდის ხენ ჰერინერე՝ յალაღნერე, ირჩ ქუმაგ ჩოლე ან-
ფალანასთერებრი იორგალი კორმარ ხენ ვდარის: უალას
ამთითი ხენ ძოტეს მოთ, ყორებ აფხინ ზელანერის ა არ-
თავალერებრი იისტელი ხამარ იორგალი ხარე ხენ ვდარის: აერ
მასის ჩხალასალირებულნერ է წოზე სას ც. იყ ჩოლის: ლის
სას სას, ჩხას არაპნერი ხენ წორებრი ჩხა მრასის ზელა-
რის ჩხალასაგნის აავრანერებრი ჩხისალისალირე-
ბრი⁶⁶:

3. Գերբեր խոսოւ է Շիրվანის აავრო არაპნერი ჩ-
გენერის დამას სას სას ლიზელი «քარի» և არასა-
დროს, ირ «ოჯ მეტენ ქსას ჯენ აფასდაონის», ხსկ ქხერ კა-
რო ხენ იისტავორდეს «ფაგოთას აავაზუასალას სასა-
თასენეროվ»⁶⁷: არაპნერ ხელებნსალირებულ მასის თხენ-
ლირებულნერ ხენ ხასიათის ც. იყ ჩოლის იუნედირებულ-
ნერის⁶⁸:

Անփոփում

Ամփոփելով სეირ სეის, ირ ԺԸ դարի սկզբին Շիրվაն
իր վրա է կրե օთარ სასაძონერի քაղաքალა լიბრ և ნ-
թაրկվել է թეն-մշაկութայի ქისას կეրպის მეტე: Երկրա-
մასի է թეն-դასალა պատմირյան ուսումნასիրებუ-
նը սերտորե կապված է տაրածաշրջանի ժողովուրդնეրի
ճაկատագրերի ჩხა: Հեղիსაլը მასრაմას շარაդրու է
1720-ական թվակანებრი Շիրվაնის ծალალი քაղաք-
ალა ჩხამარალირებულ ათასასაგნელով ზაվու թხე
Սուշկուრցու և Սուრխա խას ზაფիրուმისցու զլխավորո-

⁶⁶ Путешествие через Московию Корнилия де Бруйна, 1873, с. 212.

⁶⁷ Նոյն տեղում:

⁶⁸ Նոյն տեղում, էջ 216:

թյամբ բարձրացված ապստամբությունը, որոնք թեմայից
շեղվելու պատճառով հորվածից դուրս են մնացել:

Շիրվանի է թეն-քաղաքալա պատկերը 1720-ական թվա-
կանեბրի փոփոխվել է ոչ միայն երկրամասում ծագած ա-
պստամբության հետևանքով, այլև ժողովուրդների քոնի տե-
ղահանության արյունուրում: Արևելյան Այսրկովկասի նկատ-
մամբ Օսմանյան կայսրության ակտիվ քաղաքականության
իրականացման և Շիրվանի ներքին գործերին ուղղակի մի-
շամության հետևանքով այստեղ էթն-դասականական իրա-
վակալը արվել էր սաս մասհեղականների համար: 3. Գերբե-
րի պատմագրական էրկի վերլուծությունը թույ է տալիս եւ-
թաղբեր, որ ապստամբ խաները տունի լեզգիներ ხեն, որոնք
քաղաքական աջակցություն էին ստացել օսմանյան սուլթա-
նից և Շիրվանում իրականացնում էին շիաների (իմա՞ իրա-
նական ժողովուրդների) էթնիկ զուսմներ: Դանով Օսման-
յան կայսրությունն Արևելյան Այսրկովկասը բակեցնում էր
իր համար նախընտրելի էթնիկ տարրերով՝ նույնադաշտան
սունեներով: Ուստի, 3. Գերբերի վկայությունները փաստու
մ են, որ նշված ժամանակաշրջանում Շիրվանում ժողո-
վուրդների քոնի տեղաշարժը ոչ միայն էթնիկ, այլև դասակա-
նական թույր էր կրու:

Այսպիսով, 3. Գերբերի պատմագրական էրկը հանդիսա-
նում է Շիրվանի ԺԸ դարի քաղաքական պատմության կարև-
որագոյն սկզբնաղյուր, որտեղ հեղինակը ոչ միայն ժամա-
նական իրադարձությունների ականատեսն է, այլև ակտիվ դե-
րակատարը: Հետևաբար, նշված սկզբնաղյուրը ընթերցողին
է ներկայանում իրք տարածաշրջանի էթն-քաղաքական,
էթն-դասականական համալիր ուսումնասիրություն, որտեղ

հեղինակը փոխանցում է Այսրկովկասում իր ուղևորության հարուստ փորձի խճանկարը:

ԺԸ դարի առաջին քառորդի պատմության ուսումնասիրության առումով Յ. Գերբերի պատմագրական երկը կարող զիտական նշանակություն ունի Շիրվանի առավել խորը և համալողմանի ընկալման ու ժամանակակից խեղաթյուրումների բացահայտման տեսանկյունից:

The Ethno-Political Description of Shirvan according to the J. Gerber's historiographical work

Gohar Mkhitarian

Summary

The historical composition of J. Gerber is one of the most important sources of the Eastern Transcaucasia in the first quarter of the 18th century. Based on his own observations, the author gives an objective report on the political events in the Caspian region, the administrative-political structure of Shirvan in the Safavid state, the socio-economic situation, the ethno-religious structure and dynamics the legal status of its population.

ՍԱՏԵԼԱԳԻՑՈՒԹՅՈՒՆ

Քարիստարեաց 1893 - Քարիստարեաց Ա., Աղուակից երկիր և դրացից (Միջին Հայաստան), Թիֆլիս, տպ. Ա. Շարամէ:

Միրզա Սամի՞ն 2019 - Թագրիրաք ալ-մուլուք, Օսմար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 18, Պարսկական աղբյուրներ, Ա. Երևան, հեղինակային հրատակ:

Օսմար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4 - 1967, Թուրքական աղբյուրներ, Գ. Էվլիյա Զելիքի, Թարգմանությունների թիզգրից, առաջարկած և հանրագրություններ Ա. Սաֆրասյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ իրավունք:

Английские путешественники в Московском государстве в XVI веке, 1937 - Пер. с англ. Ю. В. Готье, Ленинград, Соцзгиз.

Броневский 1823 - Броневский С., Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским, ч. II, Москва, Университетская типография.

Гаджинев 1979 - Гаджинев В., Сочинение И. Гербера „Описание стран и народов между Астраханью и рекою Курой находящихся“ как исторический источник по истории народов Кавказа, Москва.

Георгий 1776 - Георгий М., Описание всех в Российском государстве обитающих народов, ч. II, СПб.

Гербер 1760 - Гербер И., Известия о находящихся с западной стороны Каспийского моря между Астраханью и рекой Курой народах и землях и о их состоянии в 1728 г., - Сочинения и переводы к пользе и увеселению служащие. т. II, июль-октябрь, СПб, 1760.

Гербер 1958 - Гербер И., Описание стран и народов западного берега Каспийского моря. 1728 г., - История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М.О. Косвеня и Х.-М. Хашаева, Москва.

Գյուլդենշտեդ 1809 - Գյուլդենշտեդ И., Географическое и статистическое описание Грузии и Кавказа, из путешествия через Россию и по Кавказским горам в 1770-1773. СПб., Типография императорской академии наук.

Беляй 1776 - Дж. Белл, Путешествия через Россию в разные азиатские земли, а именно: Испаган, в Пекин, в Дербент и Константинополь, перевед с французского Михаило Попов, ч. I, СПб.

Договоры России с Востоком, политические и торговые, 1869 - собрал и издал, Юзефович Т., СПб., СПб., Типография О. И. Бакста.

Известия англичан о России во второй половине XVI века, 1884 - Чтения в московском обществе истории и древностей российских при Московском университете, Москва, октябрь-ноябрь, кн. 4.

Иоганиն Շիլլերգեր 2010 - Путешествие Иоганина Шилльбергера по Европе, Азии и Африке с 1394-го по 1427 год, - Кавказ: европейские дневники XIII-XVIII веков, Сост. В. Аталиков, Нальчик, вып. III.

Կասумով 2010 - Կասумով Р., Константинопольский русско-турецкий договор 1724 года, - Известия Дагестанского государственного педагогического университета. Общественные и гуманитарные науки, Махачкала, (<https://cyberleninka.ru/article/n/konstantinopolskiy-russko-turetskiy-dogovor-1724-godaKasumov>).

Մագոմեդօվ 1999 - Մագոմեդօվ Ն., Дербент и Дербентское владение в XVIII – первой половине XIX в.: проблемы политического развития, автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Махачкала.

Описание событий в Грузии и Черкесии по отношению к Отоманској империи от 1192 по 1202 г. Խիջրի (1774-1784), 1888, Сочинение Джевдета-паши, Пер. с турецкого с предисловием и примечаниями

М.А. Гамазова, – «Русский архив», т. III, Москва, Университетская типография.

Письма и донесения иезуитов о России конца XVII и начала XVIII века, 1904, СПб.

Путешественники об Азербайджане, 1961 - Сборник, Под ред. Э. М. Шахмалиева, т. I, Сост. и автор вступ. статьи З. И. Ямпольский, Баку, Изд-во АН Азерб. ССР.

Путешествие через Московию Корнелия де Бруина, 1873 - Пер. с фр. / [соч.] Корнелия де Бруина; пер. [и предисл.]. П. П. Барсова, провер. по гол. подлиннику О. М. Бодинским, Москва.

РГАДА, ф. Ермоловых, д. 315, лл. 1-88. - Описание стран и народов западного берега Каспийского моря. 1728 г.

Серебров 1958 - Серебров А., Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., - История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. Коссена и Х. Кашаева, Москва, Изд-во «Восточная литература».

Сойманов 1763 - Сойманов Ф., Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, яко часть истории государя императора Петра Великого, СПб.

Courte description des peuples et de provinces situées à l'occident de la mer Caspienne, depuis Astracan jusqu'au fleuve Kura, telles, qu'elles se trouvaient en 1728, 1756.

Gaerber 1728 - Gaerber J., Nachrichten von denen an der westlichen Seite der Caspischen See zwischen Astrachan und dem Flusse Kur befindlichen Völkern und Landschaften, und von derselben Zustande in dem Jahre - Summlung, IV, St., 1-2, SPb.

Գևորգ Ղազարյան
Արենի համալսարան
ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐքՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԵՐԸ
(Ե - ԻԱ ԴՌ.)

Բանալի բատեր. Անտիոքի պատրիարքության Եկեղեցական և վրասպառություն Եկեղեցական թեմեր, Խափոխիլու Ծոփք Զորոյաց Հայոց Ամիդ Կարին Զավախը, հայ հոռոմներ:

Ավագ Անտիոքը, ինեկով Քրիստոնեության հևազոյն օջախներից մեկը¹ և Հռոմեական կայսրության Արևելյ դիոցեզի մայարաքարք, Դ - Ե ՊՊ. հոչակվում է պատրիարքական Առող գրավելով Տիեզերական Եկեղեցու ղեկավարման հնագավառական համակարգի (քետարգիա) չորրորդ տեղը (Ավագ և Նոր Հռոմեական, Ակերասանդրիայից հետո): Անտիոքի հայրապետությունն այսպիսով դատում է Առաջավոր Ասիայի կարևորագույն Եկեղեցական կենտրոնը, որի իր հոգևոր իշխանությունն էր տարածել ընդարձակ տարածքների², այդ

¹ Անտիոքի Եկեղեցու սկզբանակորության պատմությունը մեզ է ավանդել Դուկաս Ավելասարակիշը, որի հասածայն շորջ 37 թ., երբ Երոսագելմում համածար է սկսվում Եկեղեցու հանդեպ, Հիսոսի հետորոշերից շատեր ապաստառում են Անտիոքում, որտեղ և առաջի անգամ հեթանոսները նրաց «քրիստոնյան են անվանում: Այսուեւ Ավելասարի բարոգակարան գրքում մեծ դերակատարություն են ունենում Պոլոս և Բանակարա առարյաները (Գործք ԺԱ, 19-30, ԺՎ, 1-3): Հետազոյն Անտիոք է համանում Պետրոս առարյանը (Գաղ. Բ, 11-15), որին և Անտիոքի Եկեղեցին համարում է իր բուժ հիմնադիրն ու առաջին եպիսկոպոսը: Փաստորեն, արդեն առարյաների օրոք Անտիոքը դատում է Քրիստոնեության երկրորդ օրակար Երևանիցից հետո:

² Դ. դ. Արևելյ դիոցեզն ուներ հետևյալ մասրոպայտական այտուները: Անտիոք, Կիլիկիոյ Տարսոս, Եսավիխայի Մելքիշա, Կիլյոսի Սալամիս, Ա. Փուսիկիսիյի Տյուրոս, Պահանիի Կեսարիա, Արաբիայի Բոստրա, Եփրատեսիայի Հերապոլիս, Օսրոյեսէի Եկեղիս, Միջագետքի Ամիդ, Ասորիքի Ապամեյա, Կիլիկիայի Անազարվա,

թվում՝ պատմական Հայաստանի հարավ-արևմտյան շրջանների վրա:

Սէճ Հայքի ամենահին քրիստոնեական շրջաններից էին Ծոփքն ու դրանից հարավ ընկած տարածքները՝ Ամիր (Դի-արքերի) և Մարտիրոսապղիս (Տիգրանակերտ) քաղաքներով։ Այս շրջանները, որտեղ հայերի հետ կար նաև ատորի բնակչություն, սկզբում քաղաքականապես կապված էին Արշակունյաց տերությանը⁵, իսկ եկեղեցական առումով Ծոփք ենթակա էր Վաղարշապատի կաթողիկոսությանը։ Վերջինին հետ հայկանարար որոշակի կապեր ուներ նաև Ամիր։ Համենայն ժեպս Ազգարանեղուն ու դրա հունարեն քարզմանությունը (Զ.դ.) Ամիրի տարածաշրջանը Գրիգոր Լուսավորչի քարոզության տարածք է հայունուն։ Այս առումով հետաքրքրական է, որ 325 թ. Նեկին առաջին Տիեզերածորվին հայկական տարածներից մասնակցած եպիսկոպոսների մեջ է նշված Արիատակեսը, որը Ծոփքի եպիսկոպոսն էր, ինչպես

Բ. Փյունիկայի Դամասկոս, Պաղեստինի Սլյուտրապղիս, Արաբիայի Պելլա։ Ե. դ. առաջն կեսում մետրոպոլիտական արքուներ նև դատում նաև Ասորիի Լավոդիկայի, Եփրատեսխայի Կյուրոս և Ասմասոս, Ա. Փյունիկի Քերուտոս և Բ. Փյունիկայի Եմեսա քաղաքների եպիսկոպոսությունները։ Անախորի հայուսնորդ որպես զահերեց եպիսկոպոս, ձևնադրում էր տեղական ժողովներում ընթրված քեմակա եպիսկոպոսներին, իրավունք ուներ դատել նրանց։ Բացի այդ, պատրիարքը նախագահում էր դիոցեզի «Մեծ», այսինքն՝ ընդհանուր եկեղեցական ժողովը (տե՛ս Փօւձան 1969, էջ 206):

³ Ք. թ. 297 թ. հոումեա-պարտկական խաղաղ պայմանագրի համաձայն՝ Հայաստանի հարավ-արևմտյան ծայրամասերը՝ Անգեղ Տիեզ Միջև Ծոփք, ինչպես նաև՝ Աղձնիքը, Կորդուքը, Ծավդերն անցան Հռոմին։ 363 թ. Հռվիանոս կայսրն (363-364 թթ.) այս տարածքները՝ այլ ամրոցներով ու Մերկուրի հանդերձ, հանձնեց պարսիկներին (տե՛ս Ալզօսան 1950, էջ 16, 59-58):

⁴ Տե՛ս Ազգարանեղուն 2003, էջ 468. Lafontaine 1973, էջ 323:

նաև հոումեական Միջագետք նախանգից՝ ի թիվս այլոց՝ Ամիրի Սիստեն և Մարտիրոսապղիս Մարութեա եպիսկոպոսները⁵։ Ամիրի Մարաս եպիսկոպոսը մասնակցել է 381 թ. Կուտանշուապղոսում գումարված երկրորդ Տիեզերաժողովին, որի նախաձեռնողն ու նախագահն էր Փոքր Հայքի Գետա զյուղում ծնված Անտիոքի հայրապետ Մելետիոսը (361-381 թթ.):

Ե դ. Անտիոքի պատրիարքության հայկական տարածքների ձգրանման համար կարևոր էն 451 թ. Քաղկեդոնի Տիեզերաժողովի արձաւագրությունները։ Դրանցից իմանում ենք, որ ի թիվս Անտիոքի եպիսկոպոսաթյունների, ժողովական հայերի մեջ էր Ամիրի (Վեցերորդ Միջագետք նախանց) Սիստեն մետրոպղությը՝ իրեն ենթակա Մարտիրոսապղի Զնկենուն, Ծոփքի Նոյ, Անձնիք Մարաս, Մարունուապղի Եղերինս, Վաղարշակուպղուն (Անգեղի) Կայումաս, ուն Սիրիկինս (ըստ Աղոնցի՝ Տիրիկ) եպիսկոպոսների և Պետրոս քահանայի հետո⁶:

Զ դ. սկզբին Ամիրին ուներ ույը եպիսկոպոսություններ՝ Մարտիրոսապղոսում, Անգեղ Տաեր, Բալշանվիսում, Արշամաշասում, Ծոփրում, Կիրառիձում, Կեփասում և Զեզմայում⁷։ Ամիրին ենթակա եպիսկոպոսություն էր նաև Դադիմը:

⁵ Στ' ο Καλλίνικος 1997, էջ 148-149։ Հմատ. Ζωδιαρյան 2016, էջ 21։

⁶ Στ' ο ACO, t. II, vol. 1, pars II, էջ 142, 145, 153, t. V, vol. 2, pars II, էջ 69։ Պետք է նշել, որ Ն. Աղոնցի կարծիքով՝ Մարունուապղին ու Վաղարշակուպղից ձեռագրային աղավաղման պատճառով տեղաւուներ դարձած անձնանուններ են։ Այդ պարագայում Վեցերորդ Միջագետք նախանգից Տիեզերաժողովին մասնակցած եպիսկոպոսներին կապեանան ևս երկուաը՝ անհայտ թեմերի առաջնորդներ Մարուն ու Վաղարշակը (տե՛ս Ածոն 1908, էջ 39. հիմն. Adontz 1970, էջ 390-391):

⁷ Στ' ο Παπαδόπουλος 1951, էջ 876. Honigmann 1925, էջ 75։ Պետք է ասել, որ այս տեղեկությունները հիմնված են հայունի մի կարգագործության վրա, որը շարադրվել է զ. դ., սակայն վերամշակվել է ժ

553 թ. Կոստանդնուպոլսում կայացած հինգերորդ Տիեզերաժողովի մասնակիցների մեջ նշված են Ամբիղջ՝ Վիրիակոս, Դադեմի Վիրիոն և Անձեղ Տաճ Թեղողորս Կափակոպոսները⁹: Հուստինիանու Ա կայսեր (527-565 թթ.) հորմեական Հայրում իրականացրած վարչական վերաձևումների ընթացքում այս տարածաշրջանները միավորվեցին «Զորրորդ Հայք» կոչված նահանգի մեջ, որի մետրոպոլիան էր Ամֆիդը: 591 թ. վարչական նոր փոփոխությունների արդյունքում ստեղծվեց մեկ այլ նահանգ ևս «Մյուս Զորրորդ Հայք» անվանումով: Այս նահանգի մետրոպոլիան է Հադեմը, սակայն պարզ չէ արդյունքում առանձին մետրոպոլիտուրյուն է հիմնվել, թե այդ մետրոպոլիան որպես Եպիսկոպոսություն ենթարկվել է Ամֆիդ առաջնորդին¹⁰: Վեցերորդ Տիեզերաժողովին (680 թ., Կոստանդնուպոլիս) մասնացել է Դադեմի Եղիս Եպիսկոպոսը¹¹, իսկ Տրուլոսի ժողովի (692 թ.) հայրերի մեջ է եղել Վիրատիքի առաջնորդ Մարիանոսը¹²:

Ե դ. սկիզբ առաջ արարական նվաճումները, որոնց արդյունքում քրիստոնյա Արքեպիս ընկնում է մահմերականների գերիշխանության տակ, մեծապես խաթարում են ընկնող շրջանների բնականուն Եկեղեցական կյանքը, և դա է հիմնա-

դ. ինչի պատճառով դյուրին չէ տարբերել, թե միշտարակական շրջանուն ո՞ն է եղել իրական պատկերը:

⁸ Սեղ են հայտի Դ - Թ դդ. Ամիդի օրթոդոքս արքուն գրադերած ինն առաջնորդների անունները (տե՛ս Fedalto 1988, էջ 822):

⁹ Σε՝ u Μελέτιος 1985, էջ 154, 159:

¹⁰ Σε՝ u Αδոնց 1908, էջ 234-235. հմտ. Adontz 1970, էջ 439: Դադեմը հետազոտում հայտնի էր որպես Խարբերդի զավանի զուտերից մեկը:

¹¹ Σε՝ u Mansi XI, 992. հմտ. Αδονց 1908, էջ 234-235. Adontz 1970, էջ 116-117, 284-285:

¹² Σε՝ u Mansi XI, 1005: հմտ. Αδοնց 1908, էջ 364. Adontz 1970, էջ 284-285:

կան պատճառը, որ քննվող խնդրի վերաբերյալ արարական ժամանակաշրջանի տեղեկությունները խիստ տուղ են:

Թ դ. եկեղեցը կեսից Հոռոմց կայսրությունն ակուս է արարական նվաճումների արդյունքում կորսակած արևելյան տարածքների վերանակաման գործընթացը, որը մեծ հաջողությունների է հասնում հաջորդ դարի կեսերին, եթե 943 թ. գորավար Հովհաննես Կուրկուար գրավում է Սարտիրուպոլիսը, Ամֆիդ, Դարան, Մծրինը, պաշարում Եղիսիան: Վեց տարի անց՝ 949 թ., Կարդաս Փոկասը (ապագա կայսր Միկելի վոր Փոկասի հայրը) գրավում է Գերմանիկիան (Մարաշը), իսկ 952 թ. բյուզանդական գործերն արդեն հասում են Եփրատը: 960-ական թթ. Միկելի վոր Բ Փոկաս կայսեր (963-969 թթ.) մզած մարտերի շնորհիկ ազատազրկումն են Կրետեն, Կիպրոսն ու Կիլիկիան, իսկ 969 թ. երեքտարյան գերությունից հետո վերջապատ ազատազրկումն է Անտիոքը: Նվաճվում է եսա արաբների մայրաքաղաք Հալեպը¹³: Միկելի վոր Փոկասին հաջորդած Հովհաննես Ա Զմշկիկ կայսը (969-976 թթ.) վերանվաճում է Ամֆիդ, Ֆիզրանակերտը, Մծրինը, Աստրիքուս Հերապոլիսը, Ապամեյան, Եմեսասա, Տելիուպոլիսն ու Բեյրութը¹⁴: 970 թ. Զմշկիկ կայսեր ցուցումով Պոլիս պատրիարքը Անտիոքի հայրապետ է ձեռնադրում Փոքր Հայքի Կողևիայից սերող Թեղողորս շղայակիր ու խարպանազեսա ճգնավորին, որի հովանականությունը տևում է վեց տարի¹⁵:

Ժ - ԺԱ դդ. ազատազրկած հայկական տարածքների մի մասի վրա կազմվում են «հայկական փոքր բանակեթեմեր» անվանումով հայտնի վարչական միավորները: Ահա սրացից էր եսա Թեղողորսապոլիսի բանակարեմը, որտեղ առանձին մետրոպոլիսություն է հիմնվում:

¹³ Σε՝ u Φειδάς 1997, էջ 103-105:

¹⁴ Ժ.-ԺԱ. դդ. Անտիոքի թեմերի մասին տե՛ս Todt 1995, էջ 173-184:

¹⁵ Σε՝ u Leonis Diaconi 1828, էջ 100-101: Հմտ. Լև Հնակոն 1988, էջ 54, 196:

Մեծ Հայրի Կարինը եպիսկոպոսանիստ էր դարձել հավանաբար Ե դ. Ակգրում՝ Հռոմեական կայսրության անցնելուց և Վերակառուցվելուց հետո, երբ ի պատիվ Թեոդոս Բ կայսեր (408-450 թթ.) այն վերանվանվեց «Թեոդոսուպոյիս»։ Այս ժամանակ հայունի էր հռոմեական Հայրի արքեպիսկոպոս Հայունկ Կուկայարիոհեցին, որն ամենայն հավանականությամբ Թեոդոսուպոյիս եպիսկոպոսն էր։ Ըստ Պատմահոր Վկայության՝ շուրջ 432 թ. Հավունը, փորձելով օգնել պարսից իշխանության տակ հայունված Մեծն Սահակին (387-439 թթ.) ջանուս է Իրան կարողիկոսական աթոռով տեղափոխել Կարին¹⁶։ Ե դ. առաջին կեսին Կարն հովվայեներից հայունի են Պետրոս և Սահակն եպիսկոպոսների առուները. Առաջինը մասնակցել է 448 թ. Կոստանդնուպոլիսի արքային վարչությանը (447-449 թթ.) գումարած ժողովին, որը դատապարտել է Եվտիքիսին¹⁷, իսկ Սահակն 451 թ. մասնակցել է Քաղկեդոնի Տիեզերաժողովին¹⁸:

Թեոդոսուպոյիս եպիսկոպոսության հեղինակությունն առավել մեծանում է Զ դ., երբ քաղաքը դատում է Հայաստանի քաղկեդոնականների կենտրոնը։ Կարինուս էին ընթանում քաղաքականապես ու դպավանապես երկատված Հայաստանյաց Եկեղեցու երկու մեծ հաստվածների՝ հռոմեականակ քաղկեդոնականների և պարսկահպատակ հակարաղկեդոնականների միջև ծալվալած աստվածաբանական քննարկումների կենտրոնը։ Երբ երկու կողմերի միջև բանակցությունները ձախողվում են՝ Մովսես Բ Եղիշարդեցի կաթողիկո-

¹⁶ Սովուէ Խորենացի 2003, էջ 2105. Օրմանեան 2001, հ. Ա., ս. 350-351;

¹⁷Տե՛ս ACO, տ. II, vol. I, pars I, էջ 149;

¹⁸Տե՛ս ACO, տ. II, vol. I, pars III, էջ 94:

սի (574-604 թթ.) որդեգրած խիստ հակարաղկեդոնական կեցվածքի պատճառով, Կարն Թեոդոսու Փիլիստիվայապետ¹⁹ Եպիսկոպոսի և աշխաճեռնությամբ քաղկեդոնականներն իրենց կաթողիկուն են ձեռնադրում Հովհաննես Բարձրանդեցուն (591-610 թթ.)²⁰. Այս այս համատեքստում լրիվ հասկանալի է դատում այն, թե այս ընթացքում Կարն Եկեղեցուն ինչո՞ւ է առաքելական ծագում վերագրվել Քրիստոնեության քարոզչությունն այստեղ կապելով Բարդողումեսու առարյալի հետ. «...Թեոդոսուպոյիսը, որը նախկինում զյուղ էր և կոչվում էր Կալէ Արին այն պատճառով, որ երբ մեծ առարյալ Բարձրությանունը Պարքեստան գլախ Եփրատ գետում մկրտեց Պարսից արքայի եղբարդուն և նրա մետ միասին երեք հազար մարդ, այսուղեան կառուցեց ամենասրբուհի Սատվածածնի անվան (Ավիրված) տաճար. և այդ վայրում գտնվող զյուղն անվանեց Կալէ Արին (Բարի սկիզբ)»²¹:

Ինչպես երևում է բյուզանդական թեմական ցուցակներից՝ կարգագրություններից (Տառակա), Թեոդոսուպոյիս եպիսկոպոսությունը մինչև արաբական արշավանքներ կցված է եղել Կոստանդնուպոլիսի պատրիարքությանը եկեղեց կապադովկյան Կեսարիայի մետրոպոլիտությանը²²: 949 թ. ազատագրվելուց հետո Թեոդոսուպոյիսն անցնում է Անտիոքի

¹⁹ Ար. Թեոդոսու Թեոդոսուպոյիսու հիշատակն առկա է օրեղորու տոնացուցում և կցվում է Տոյեմերի 28-ին (տե՛ս Մայօս 2002, էջ 496):

²⁰Տե՛ս Սովուէ Կաղանակառուացի 2010, էջ 336, 340:

²¹ Բարբիկյան 1962, էջ 461: Այս ավելանության թվականը գրադարձ է Ա. Տեր-Ղևոնյանը, սակայն նա չի ասությանը դրա պատմաստվածքանական եկանողին (ուն և Տեր-Ղևոնյան 1971, էջ 63-67):

²² Տե՛ս Darrouzès 1981, էջ 206, 219, 233, 251, 274:

պատրիարքությանը՝ գրավելով Դարայի մետրոպոլիտության տէղը²³: Ցավոր, այս գործընթացի մակրամասնությունները մեզ չեն հասել, միայն հայտնի է, որ մոռովորապես ԺԱ դ. Թեոդորոսապոլի մետրոպոլիտությունն ուներ 10 եպիսկոպոսական թեմեր²⁴:

Ինչ վերաբերում է Անտիոքի պատրիարքության հայկական տարածքների այլ արողութերին, ապա հայտնի է, որ Ժ. Անտիոքի հայրապետության «Աէծ», այսինքն՝ եպիսկոպոսությունները ունեցող 13 մետրոպոլիտություններից մեկն էր Ամինջի և Սամոսատի («Ամիձէս և Սամօսատօն») մետրոպոլիաը՝ ենթակա 8 եպիսկոպոսական արողութերով, ինչպես նաև Մարտիրոսությունի մետրոպոլիտությունը: Վերջինս, Ամինջի անշատվելով, այս 9 մետրոպոլիտությունների մեջ էր, որոնք ստորադաս եպիսկոպոսություններ չունեին²⁵: Պետք է նշել նաև, որ որոշ տարածքներ, որոնք նախքան ա-

րաբական ժամանակաշրջանը ենթարկվում էին Անտիոքի հայրապետությանը, Ժ - ԺԱ դր. անցնում են տիեզերական պատրիարքության իրավասությունը²⁶: Այդպիսին էր օրինակ՝ Արշամուշատի արքեպիսկոպոսությունը²⁷:

ԺԱ դ. Ամինջի մետրոպոլիտությունը հայտնի էր որպես «ծայդյ» հայերի հիմնական եկեղեցական կենտրոններից մեկը ինչպես որ դրա մասին վկայում է Նիկոն Սկլետնեցին (շուրջ 1025-1100 թթ.)²⁷, իսկ նաև կին չորրորդիայրյան տարածքներում «ծայդերի» ներկայությունը դեռևս բավականին զգալի էր²⁸:

Անտիոքի պատրիարքությունն իր պատմության նոր շրջափուկ է մնում ԺԱ դ. վերջում. 1084 թ. Անտիոքի ընկնում է Մելիք Շահի հարվածների տակ, իսկ 1098 թ. քաղաքը գրավվում են խաչակիրները, որոնք երկու տարի անց Անտիոքի կաթոլիկ պատրիարք են ձեռնադրում Բերնարդին (1100-1132

²³ Տե՛ս Παπαδόπουλος 1951, էջ 876-878: Եմբարդուած է, որ Թ. դ. Կարինի անցումը Կոստանդնուպոլիսից Անտիոքի պատրիարքության տէղի է Ուսեցել հետո այս պատմառով, որ Հայոց Մեծաց Թեոդորոսապոլիսը հայրէ է Հյուսիսային (Հայոց) Միջազգայի Մետրոպոլիտությունների հետ (տե՛ս Vailhé 1999, էջ 1366):

²⁴ Տե՛ս Gelzer 1892, էջ 249. Παπαδόπουλος-Կερաμεύς 1884, էջ 70: Թեոդորոսապոլիսի մետրոպոլիտության եպիսկոպոսությունների ճըշգրիտ տեղագրությունը բարդ խնդիր է կարգագրություններում առկա տեղականների ազգամաս պատմառով: Այս հարցով գրադիւ է բազմահմտու Է. Հոնիգմանը (տե՛ս Honigmann 1935, էջ 211-222): Նրան հետևել, որպէս տեղերում փորձել է ուղղել Վ. Հասությունսկա-Ֆեդորան (տե՛ս Արցունուս-Փանան 1994, էջ 31): Խնդիրը թերևն ուղարկության կարիք ունի, և մենք մտադիր ենք այդ խորին անդադանաւ առանձին հրապարակմամբ:

²⁵ Տե՛ս Παπαδόπουλος-Կερամεύς 1884, էջ 66-67. Παπαδόπουλος 1951, էջ 877-878:

²⁶ Տե՛ս Gelzer 1892, էջ 570. Ακριτίδης 2009, էջ 123:

²⁷ Տե՛ս Βενεσεսի 1911, էջ 588: Հ. Քարթիկանը, անդրադառնալով Նիկոնի այս տեղեկությանը, թե Անտիոքի պատրիարքի հոռով կազմությունը հայեր բանակում էին Միջագետքի շրջանում, այս վերջին նույնացնում է Միջագետք բանականին (տե՛ս Բարտիսան 1987, էջ 191): Սակայն կարգագրություններից հայունի է, որ հիշված բանականի եկեղեցական կառույցը Կամախի մետրոպոլիտությունը, Կոստանդնուպոլիսի տիեզերական պատրիարքության կազմի մեջ էր, և ոչ թե Անտիոքի (տե՛ս Darrouzès 1981, էջ 287): Դրանից պարզորդ երևում է, որ Նիկոնը նկատի ուներ այսինքն հոգևանական Միջագետք ենահանքը որի եկեղեցական կենտրոնը հետո Ամինջի մետրոպոլիտությունն էր:

²⁸ Տե՛ս Τιառա Տարանան 2016, էջ 522: «Փիլիփոնիա», այսինքն՝ բարձրագույն ուսումնական հաստատության ուսուցիչ Թեոպիստունն իր երկու գրել է 1101 թ. Խովանագավառի և Սեծերտի հշիսան Անարունի հանձնաբարությամբ:

թթ.): Այս ամենից առաջ սելցուկյան արշավանքների արդյունքում հայուրյան հոծ զանգվածներ էին զարթել ու հաստատվել Կիլիկիայում, որը հնուց ի վեր Աստիրիք պատրիարքության վիճակն էր: Կիլիկյան Հայաստանում, այսպիսով, կողք կողքի դրակցում էին զուգահեռ եկեղեցական և վկրապեսություններ՝ Աստիրիք պատրիարքության և Հայոց կաթողիկոսության, ընդ որում, Աստիրիք ուղղափառ պատրիարքները, հայածված ինեւով կարողիկ խաչակիրներից, երբեմն ասպասություն էին Կիլիկիայում²⁹: Ավելին, ԺԲ - ԺԳ դր.

²⁹ Այսպես, շորջ 1210 թ. Աստիրիք Սիմեոն Բ պատրիարքը (1206-1242 թթ.), հեռաւաղով Աստիրիք, մի քանի տարով ապաստանում է Կիլիկյան Հայաստանում վայելելով Լուս Ա քաջավորի (1187-1219 թթ.) հովանավորությունը և հետագայում էլ իր մասնակցությամբ քերելով Կիլիկիայի պատական անցքերին (տե՛ս Երօն 2015, էջ 371-426, 374, 391, 422-426): Կիլիկիայում ապաստանած Աստիրիք հաջորդ հայաստանու Նվիրիտու Ա-ն է (մոտ. 1258-1275 թթ.), որը 1263 թ. քարտավիրով Աստիրիք, համբաւում է Կիլիկիայում: 1272 թ. ևա խառնվում է Լուս Բ քաջավորի (1269-1289 թթ.) դեմ կազմվելով պատամբությամբ: «Քերշինի մերժմանց հետո, պատմից խուսափելով՝ Նվիրիտու փախտասի է դիմում Պղիս (նոյն տեղում, էջ 444-452): Սայրաբաղքում սակայն, լուրեր էին պատվիրած այն մասին, որ Նվիրիմիոս հայոց հետ եղող հասորության մեջ է եղել (տե՛ս Ա Պատաճառուած 1951, էջ 951): Նմանադիմի մը պատմություն կրկնելով է Աստիրիք Արսեն պատրիարքի հետ, որը հավանաբար ձեռնադրվել է հետո Կիլիկիայում, շորջ 1283-84 թթ.: Նրա մասին լոր է տարածվում, թե հայորդիկել է հայոց քաջավորի և հոգևորականների հետ կամ է նրանց հետ է կիսել եղող հասույթները: Իմանալով այդ մասին առաջ որևէ քննության, Կոստանդնուպոլսում Արսեն պատրիարքի անունը շնորհ էն դիմադիմներից (տե՛ս Երօն 2015, էջ 458-459): Հայրապետի հրաժարականից հետո նոր պատրիարքի երկու քեկանուներ են առաջարկվում. Կիլիկիայի հոգևորականությունը սատարում է Պոմպեյոպոլիսի մետրոպոլիտ Հինոնիսիոսին, իսկ Աստիրիք

հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ժամանակ հայկական կողմը ցանկանում էր իրականացնել Աստիրիք պատրիարքության ու Հայոց կաթողիկոսության միաձուլումը ինչի արդյունքում Ամենայն Հայոց հովվագետը կզբանեցեր Աստիրիք պատրիարքի գահը: Այդ ծրագիրը սակայն, իրականություն չդարձավ³⁰:

Աստիրիք պատրիարքության ԺԲ դ. ունեցած թեմերի մասին մեծարժեք են վանահայր Նեղոս Դոքանապատրիսի հայորդած տեղեկությունները: 1143 թ. Նեղոսը Սիցիլիայի Ռոնցեր Բ. արքայի (1101-1145 թթ.) պատվերով կազմել է ինեզ պատրիարքությունների ամբողջական կարգագրությունը³¹: Նեղոսը նշում է, որ հնում Աստիրիք պատրիարքը ձեռնադրել է երեք կաթողիկոս Նորմանակի (Ոռմողիբիսի), Պարսից և Իրինուպոլիսի (Բարեկնիա կամ Բաղդայի)³², Աստիրիք հայ-

եկեղեցականները՝ Տուրոսի մետրոպոլիտ Կյուրեկին: Ըստուրմ է վերջինը, սակայն Հինկելսիսի աշխարհու շարունակում է պայքարը, այսպես որ Կյուրեկը պատրիարքը ձեռնադրված միայն ուղ տարի անց, ըստ ձեռնորդած ավանդույթի՝ Շուշում: Ըստ որում, ձեռնադրվելուց առաջ նա խոսուում է տայիս առ այն, որ հայերի հետ կապ չի ունենա (տե՛ս Երօն 2015, էջ 459-461): Անհարակ, այս ժամանակաշրջանում Աստիրիք պատրիարքության գոտունան համար նշանակալիք էր Կիլիկյան Հայաստանի հովանակորությունը (տե՛ս Երօն 2015, էջ 468-470. Brun 2016, էջ 42-43):

³⁰ Տէ ս Թոգորան 1995, էջ 202-205:

³¹ Հունարեն բնագիրը տե՛ս Parthey 1967, էջ 265-308: Հայունի է նաև Նեղոսի երկի հայերէն քարզանաւությունը, որի հելթիսակն է Ներսէս Լամբրուսացին (տե՛ս Նեղոս Դոքանապատրի 1902):

³² Օռմագիրիսի կաթողիկոսությունն սկզբանապես գումակել է Տիգրենից ոչ հեռու Զ. դ. կառուցված Խոսրովի Անսիոր քաղաքում, ապա՝ Հ. դ. արքսենք այդ քաղաքի բնակչությունը կարողիկոսի հետ զարդեցրել էն Միջին Ասիա այժմյան Տաշքենից ոչ հեռու: Ժ

բապետության են ենթարկվել Հայքը, Աբասզիան (Աբխազիան), Ռէերիան, Մեղիան, Քաղդեացիք, Ելամացիք ու Միջազգետը³³: Գայով իր օրերի իրականությանը՝ Նեղոսը տեղեկացնում է, որ Անտիոքի պատրիարքությունն ունի 13 մետրով պղիսություն՝ ենթակա 139 եպիսկոպոսություններ՝ Այս մետրոպոլիտություններից Տարսոն ունի 6 եպիսկոպոսություն, Անազարքան՝ 9, Ամիղը՝ 8, իսկ Դարան՝ 10³⁴: Բացի սրանցից, Դորսապատրիաց նշում է նաև 8 «ինքնազլուխ» մետրոպոլիտություն, որոնք իրենց ենթակա եպիսկոպոսական թեմեր չունեն, քանի որ նախապես պարզ եպիսկոպոսու-

դ. առանձին կարողիկություն է հիմնվում նաև Բարդարում: Չոյզ կարողիկություններն իրենց գոյությունը պահպանել են ընդուած ժ՞ո՞ դ? (տե՛ս Երևոն 2015, էջ 82-95):

³³ Տե՛ս Parthey 1967, էջ 271-272: Նեղոսի հայերեն քարգմանությունը երեք կարողիկուների հարցում համաձայն է հունարեն թագրին, սակայն առաջարկում է երկրների հետևյալ ցուցակը. «...Յաշխարի Հայոց, յԱրտաս և ի Վիրո, ի Միհիա և ի Բաղդաշին և ի Պարքը և յԵղամաց և ի Միջազես» (Նեղոս Դորսապատրիա 1902, էջ 5-6): Հարուելակությունն մեջ, կրկին թվարկելով հետևյալ Աստիճանի ենթակա երած տարածքները, Նեղոսը Միջազնորը նույնացնում է Շորորոյ Հարին («ῆς Θεοδωρίδος ἑτού Στροφῆς τῆς Μεσοποταμίας ἥσιο Τεάρητη Ἀρμενία» (Parthey 1967, էջ 274)), մինչդեռ հայերենում նոյն հասվածքը քարգմանված է այսպես. «...Սիցազեր, սուրբ քաղաք Եղեսիա, և յորրորդ Հայը և յեռակություննեա» (Նեղոս Դորսապատրիա 1902, էջ 7):

³⁴ Նեղոսի հայերեն քարգմանությունը վերօնչալ 13 մետրոպոլիտություններին հասկացնում է 125 եպիսկոպոսություն: Այս հետաքրքրող մետրոպոլիտություններից Տարսոն ունի 13, Անազարքան՝ 9, Ամիղը՝ 8, իսկ Դարան՝ 3 եպիսկոպոսություններ (տե՛ս Նեղոս Դորսապատրիա 1902, էջ 6):

³⁵ Տե՛ս Parthey 1967, էջ 272: Հմանում. Նեղոս Դորսապատրիա 1902, էջ 6-7:

թյուններ լինելով, պատվիրել են մետրոպոլիտության տիտղոսով՝ չփոխելով հանդերձ իրենց կարգավիճակը: Այս 8 առողջ ներից էին Մարտիրոսուպոլիսը, Սուպունեսիան և Աղանանան³⁶:

1268 թ. մամյուրենքը գրավում են Անտիոքը, և այսուել վերջ է դրվագ խաչակիրների իշխանությանը: Երբեմնի փառական մայրաքարտ ավերվելուց հետո վերածվում է զուղի, իսկ Անտոքի Եկեղեցին ընդունվում է մահմետական իշխանության ներք³⁷: Ժ՞ դ. վերջում պատրիարքության արոտականը վճռականապես հաստատվում է Դամասկոսում, իսկ 1517 թ. ողջ Ասորիքն ընկնում է օսմանցիների գերիշխանության տակ³⁸: Դեռևս ԺՄ դ. Կովկասու ո. Փոքր Ասիան ողողած սեղուլյան արշավարներով սկիզբ է դրվագ քրիստոնյա թագավորության աստիճանական վերացմանը, ինչի պատճառով երբեմնի քրիստոնեացան տարածքներն սկսում են զգայիրքն փոխել իրենց երևա-կրթական դիմագիծը: Արյունաբառն կարուկ կրածովում են Եկեղեցական թեմերը, այնպես որ ուշ Միջնադարում Անտիոքի պատրիարքության

³⁶ Տե՛ս Parthey 1967, էջ 273: Խրիստոնում արք. Պապադրպալոսը նկատում է, որ Նեղոսի տվյալները կրկնում են իրն կարգադրությունները: Այս առումով հարց է ծագում, աղյոց Դորսապատրիայի տեղեկությունները ճշգիլ արտացոլում են ԺՄ դ. պատկերը, թե ոչ: Ուշագրավ է, որ Նեղոսի հայերեն քարգմանության համաձայն՝ Ամիղն ուներ 8, իսկ Դարան՝ 3 եպիսկոպոսություն (տե՛ս Նեղոս Դորսապատրիա 1902, էջ 6): Ըստ որում, եթե հաշվի առնենք, որ Դարանի արտօնությունը միացված է Թեոդորոսպոլիսին, ապա ակնհայտ է, որ Նեղոսի երկու ժամանակավերակ տեղեկություններն են:

³⁷ Տե՛ս ՈՊատճուծուն 1951, էջ 949:

³⁸ Նոյն տեղում, էջ 974:

հայկական թեմերից մոտու են միայն Թեոդոսուապոլսի³⁹ և Ամբի մտորապոյտությունները:

Նոր ժամանակներում Թեոդոսուապոլսի առաջնորդներից հայտնի են պոլտոսյան Պերիստերա վանքի միարան Անանիա (1520-1532 թթ.), որին հաջորդել է Երեմիան՝ նախկինում Պոլսոսյի մեկ այլ վանքի՝ Վագելոնի միարան ապա և Պերիստերայի վանահայր, ինչպես նաև Գերասիմոսը (1545-1580 թթ.)՝ ծննդով Պոլսոսյի Ֆիտիխան զյուղի⁴⁰: Հաջորդ առաջնորդներն են եղել Սոփորնիոսը, Նիկողայոսը, Դավիթը (1593/1603-⁷) և Սակար Կամախեցին (1635/47-1658 թթ.)⁴¹, որոնք ընութագրվում են այսպես. «Եվ այս չորս հովվապետներն

³⁹ Մեր կարծիք՝ կարենեց օքողորս հայոց շրջանակների հետ կարող է աղուստը 1230/1232 թ. գրքած Թեոդոսուապոլսի Ավետարանը (Վենետիկի մատունադարան, թիվ 129): Այդ ենթադրության օգոին կարող են խոսել հետևյալ համականչները. ձեռագրության համարության մեջ Արամայ արտարաման, փրկչական և հայկական տունարկեց, հայերէն մանազորություններից գտած կամ հուարձնի և արաբէրներ գրություններ, ինչ գրիչը հիշառակառ է «այսոցիկ որք միարանեան են ընդ մեզ հոգու», ինչը միշոցն ականքին է դաշտանակիցներին (տե՛ս Սարգսիան 1914, էջ 567-574. Կորյանցան 2015, էջ 39-45):

⁴⁰ Տե՛ս և Գեօրգիանձ 2007, էջ 747:

⁴¹ 1647 թ. դրույսամբ Անտոնիի պատրիարքությունն ուներ ընդամենը 9 մտորապոյտություն, որոնցից մեկն էր Զվշչածագը, և որա առաջնորդն էր Սակար Կամախեցին (տե՛ս և Պանչենկո 2012, էջ 130): Ըստ Կ. Պալսէննիջ՝ սա Կարևո մտորապոյնան էր, որի առաջնորդական ժամանակաշրջանը տեղադրվել էր Զվշչածագ (Անյն տեղում, էջ 146): Այս ժամանակ ի դեպ, արդին մարած էին Անտոնիի հայրապետության հետպայն արռոնների մեծագոյն մասը: Այսին, Սարտիրոսուապոլս վերջին եախկուպարս հավանացար Դանիելը էր ճենապահության մեջ, որուած էր Սակար Կամախեցին (Պանչենկո 2012, էջ 1522-1540 թթ.) կողմից: Նոյն ժամանակ Սծիբին առաջնորդն էր Արքես մտորապոյնութը (Անյն տեղում, էջ 143):

այն երկրի մարդկանցից էին ու չունեին ձգտում՝ իրենց հոգիները, նմանապես իրենց համայնքի փրկության համար»⁴²:

Օսմանյան տիրապետության շրջանում ուժ է առնում քրիստոնյաների հյալամացնան գործնքացը, որը հարվածում է նաև Արևմտյան Հայաստանի՝ Անտոնիի պատրիարքության վիճակ հանդիսացող զավառներին: Այսպէս, ժօ՞ դ. Վերջին տասնամյակում Կամախի ու Զվշչածագի անտերունք վիճակը պարարտ հոր է դասում յարեւան բախտավաննիդրների համար. դամասկացի երկու արար մեկը մտորապոյիտ, յուրու սարկավագ ձևանալորդ, ժամանում են վերջ եղած շրջաները, որտեղ դեռևս ստվար ուղղափառ ազգաբնակչություն կար: Հովի կարու հավասարացները մեծ ուրախությամբ ու պատիվներով են ընդունում «եպիկոպոսին»: Խարեւաները, ձեռնախրություններ և այլ ծիսակատարություններ կատարելով, մեծ գումար են շարում ծղովլոյից: Որոշ ժամանակ անց կեղծիք բացահատվում է, սուս եպիսկոպոսը տարվում է Բարձր Դուռ և իր կյանքը փրկելու համար խալամ է ընդունում: Պոյս ու Անտոնիի պատրիարքները սինոդով հանդերձ ընելով հարցը, որոշում են կայացնում անվաներ ճանաչել խարեւաների կատարած ծեսներ և նորից ձեռնախրություն կամաց «ձեռնախրած» անձանեած: Այս տիսոր իրադարձություններն այնպիսի զայտակղություն ու հիասաբանություն են առաջացնում կամախեցի ու Զվշչածագի հավասարացների մեջ, որ նրանց մեծ մասն ուրանում է քրիստոնեական հավատքը և խալամ է ընդունում⁴³:

1665-66 թթ. հովվապետական այցելությամբ Արևմտյան Հայաստան ու Ջավախիր է ժամանում Անտոնիի Սակար Գ

⁴² Տե՛ս և Պանչենկո 2012, էջ 142:

⁴³ Նոյն տեղում, էջ 131, 147-148: Փաստորեն, խոսք եթէ ոչ ամբողջությամբ, ապա զուտ մասամբ այսպես կոչված «Ներսիմի» հյամացած հայության մասին է:

պատրիարքը (1647-1672 թթ.)⁴⁴, որը բռնել է իր հոտի ողբայի վիճակի նկարագրությունը: Հայրապետին առաջնորդաց տեղացի մի քանայի պատմածով՝ նրա երիտասարդ տարիներին միայն Զմիկանագում ու շրանում եղել է 48 օրոքորս քահանա, մինչեւ Սակարի այցելության պահին այսուղ կար ընդուներ 12 ուղափար ընտանիք: Մասցայները հովի շունենալու պատճառով դավանափոխ էին եղել դառնա-

⁴⁴ Սակար պատրիարքը (աշխարհիկ անվամբ՝ Հովհաննես իր առ Զահը) սկզբնապես եղել է ամուսնացայ քահանա, սակայն կոչ մահվանից հետո ընդունել է քահանակի հերակտորություն: Լինելով ընդունակ և գործույա ամձնավորություն՝ նա 1635 ձեռնադրվում է Հայկակ մերժություն, ապա սուսանով՝ «կարողինա տիտղոսը, դանումը է Արմին տարածաշրջակի պատրիարքական փխանորդ՝ 1647 թ. ընտրվում է Անտոնիք պատրիարք: Հայութի է Սակար հայրապետի մեծ ճամփորդությունը՝ Պոլսի, Մոլդավա, Փոքր և Մեծ Ռուսիա (1652-1659 թթ.), որը մասքանասերնեն նկարագրել է նրա որդին՝ Պոլոս սրկ. Հայտացին (տե՛ս Պավել Ալեքսեևի 2012): Սովոր կատարած իր երկրորդ ճանապարհորդությունը նա հայրապետն սկսել է Արևմտյան Հայաստանից անցել Զավախով ու Վիրով, այսուհետ Կասպից ծովով և անվակեր է Աստրախան, Վոլգայով բարձրացել Սիմբիրսկ ու 1666 թ. նոյեմբերի համեմ է Սովորվա: Վերաբարձին նա կրկն անցել է Վաստանով (հայօսնահակություն համարելով), որտեղ նրա որդին մահացել է 1669 թ.: Հայվանարար, պատրիարքը նորից անցել է Կարինու, որտեղ ընկել է շատ խոշոր պատրիարքի տակ: Ռուսիա կատարած իր երկրորդ ճամփորդությունից հետո Սակար պատրիարքը հակնել է դեսի Հռոմի Կաթոլիկ Եկեղեցի հետ մարտահռությունը: Այդ ուղղությամբ համագործակցելով «Հայոց պատրիարք» (Հակոբ Դ Չուռայեցու՝ 1655-1680 թթ.) հետ՝ Սակարն օժանակել է ասորի կաթոլիկներին ու ևսանյ գրել Ֆրանսիայի թագավորին: Երախտաշատ պատրիարքը բռնել է քավականին հետաքրիդ և արժեքավոր մատենագրական ժամանակությունը: Նրա մասին նորագոյն հետազոտությունների վերլուծությունը տե՛ս Պանченко 2017, էջ 282-293:

լով հայ առաքելական, նեստորական, ասորի-հակորիկ ևն⁴⁵: Դրույթունը միսիքարական չդր նաև Կարինի թեմում: Մակար պատրիարքը փորձառ է շուկել որությունը, որն առաջացել էր հովհակերի բացակայության և անտարբերության պատճառով: Նա Կարն եպիսկոպոս է ձեռնադրում Անոնց անունով մի արեղայի ծնունդով Հարգուս, ավելի սուուց հայ հոռոմների Հորուս գյուղից⁴⁶: 1670 թ. դրույթամբ Կարն թեմը հանձնված էր Կամասի Լավրենտիոս մետրոպոլիտի (մահ.՝ 1680 թ.) խամրին: Վերջին փորձում էր իր իշխանությունը տարածել Տրապիզոնի մետրոպոլիտությանը ելքակա տարածեների վրա, սակայն այդ ջանքերը կանխվում են Կոստանդնուպոլիսի պատրիարքի և սիլոսի կողմից⁴⁷:

Արևմտյան Հայաստանի ու Զավախութի ուղղափառ համայնքների հոգևոր իրավակար բարելավելու հետամուռ էր նաև Մակար Գ-ի բռն ու հաջորդ Կյուրեկ Ե. հայրապետը (1672-1720 թթ.), որը 1682 թ. ուն Պարբենիսոսի ձեռնադրում է Ախալցխայի ասացնորդ Նշալ թեմը կցելով Կարինի մետրոպոլիտությանը⁴⁸: Պատրիարքը Կարն առաջնորդ է ձեռնադ-

⁴⁵ Տե՛ս Պանченко 2012, էջ 141: Սիմեոն Լեհացին 1613 թ. լինելով Խարբերում, գրում է, որ «Կայոր ի միջի նոցս և Հռոմի (sic) զեղորայք որ եւ նորա աղջիկ տային և անունին. եւ նորա մեծ սեր ունեն ըն Հայու և մարտակություն, և Հայոց լեզուա խօսին. եւ չես ճահանի, հայ է թէ հոռու և ո թէ ասորի. զի չիր խորի առ լուս և ո մի ինչ» (Սիմեոն Լեհացի 1936, էջ 192): Սիմեոնի տևած հոռոմներն ամենայն հայուսականությամբ հայ հոռոմներն էին:

⁴⁶ Տե՛ս Պանченко 2012, էջ 142:

⁴⁷ Տե՛ս Երանտափուլձիչ 1870, էջ 140: Չի բացակայում, որ եպիսկոպոսական ձեռնադրության ժամանակ Անոնց ստացել էր Լավրենտիոս անուն, և հետաքար նոսք միևնույն անձի մասին է, որը հովհում էր Կամասի Կարինի թեմերը:

⁴⁸ Օսմանցիների գերիշխանությունը Զավախորում հաստատվել էր դեռևս 1578 թ., այդ ժամանակականից երկարամաս դրվել էր Անտոնիության պատրիարքության իշխանության ներք: ԺՀ - ԺԹ դ. սկզբի

բում Ֆարաջալլահ անունով ոմն արար քահանայի՝ Վերան-վանեկով կրած Գրիգոր, սակայն վերջինս հակառակ թեմից շրացակայելու իր խոստմանը, երկու ամիս անց հեռանում է Կրաստան՝ «ըսպելիքի և ձիավարության համար»⁴⁹: Ապարդյուն ողբուսներից հետո պատրիարքն աթոռագործ է անում անարժան մետրոպոլիտին և 1690 թ. կրա փոխարքն ձեռնադրում է պրիուսան Սուլմելա Ար. Աստվածածին վանքի մի վանականի կրած վերավանելով Եվգենիոս⁵⁰: Վերջինս Թեոդորոսապոլի արքոփին մնում է 18 տարի: 1708 թ. կրա մահիանից հետո ժողովրդի կամոր նոր առաջնորդ է դառնում ոմն արքանավոր քահանա Ամբրակում, որն իր թեմի հովվում է չորս տարի: 1712 թ. ժողովրդի ընտրությամբ նոր առաջնորդ է ձեռնադրվում ծնունդով Արքիուսուսից ուսայլ քահանա Ազգարիա (Ծայի): Գրիգորանտիսից Վազերին՝ վանքի միաբան⁵¹: Սակայն նոյն քվականին ևս վախճանվում է, և Կարպեն առաջնորդ է ձեռնադրվում Հակոբոս Խրիստովիչը (1712-1749 թթ.): Նրանից հետո Թեոդորոսապոլի թեմի առաջնորդների են Սակարը (1749-1772 թթ.), Պարքենինը (1772-1792 թթ.) և Ֆիլարետոսը (1798-1802 թթ.)⁵²: Ժթ դ. սկզբին Թեոդորոսապոլի արքոփին հաջորդաբար բազմում են Բանեարաս

Քահանաթղթերում Ախայցիսան նշվում է որպես Անտիոքի թեմ: Հայունի է օրինակ, որ 1737 թ. Անտիոքի Սեղենարոս պատրիարքը (1724-1766 թթ.) Խաղոսիի ու Տրավիզոնի մետրոպոլիտների հետ միասին ձեռնադրել է Ախայցիսայի մետրոպոլիտին: 1829 թ. հետո Ախայցիսայի թեմն անցնում է Ռուսական Եկեղեցու իրավատելիք, իսկ կայսրությունը դրա դիմաց դրամական փոխառությունը կը վճարում Կարլոս մետրոպոլիտությանը (տե՛ս Պանченկո 2012, էջ 142, 156. Պալածովունու 1951, էջ 1032. Կանջլալտէ-Կառու 2006, էջ 90):

⁴⁹ Տե՛ս Պանченկո 2012, էջ 142:

⁵⁰ Նոյն տեղում, էջ 142:

⁵¹ Նոյն տեղում, էջ 142, 156:

⁵² Տե՛ս Գեօրգիան 2007, էջ 747:

(1802-1819 թթ.) և Թեոդորոս (1819-1824 թթ.) մետրոպոլիտներ⁵³: Թեոդորոսապոլի մետրոպոլիտի հոգոր կազմում էին Կարպինի⁵⁴, Զավախորի, Ակնի ու Զմշկածագի օրթոդոքս համայնքները:

1829-1830 թթ., երբ Կարապետ եպս. Բագրատունու (1779-1856 թթ.) զինավորությամբ բազմահազար կարնեցիներ Զավախոր են զարթում, կրանց մեջ էին նաև տարածաշրջանի օրթոդոքսները⁵⁵: Այդ զարթի պատճառով է, որ Թեոդորոսապոլի աքոռո բան տարի բափուր է մնում⁵⁶:

⁵³ Նոյն տեղում: Համաձայն մեկ այլ տեղեկության՝ 1811 թ. Թեոդորոսապոլի արքաներին եր ոմն Անդրեանու (տե՛ս Փօրձովուն 1901, էջ 52):

⁵⁴ Կարինի քրիստոնյա բնակչության մասին թվերը խիստ հայասակած են: 1769 թ. Երանում այցելած Ա. Ֆ. Բյուջինի տվյալներով՝ բաղարում ապրում էին մոտ 6000 հայեր՝ երկու եկեղեցին ու եպիսկոպոսով, 400 հոգևոր՝ մեկ եկեղեցինը ու եպիսկոպոսով (տե՛ս Բանս 2010, էջ 41): Ներկա Պատրիարքի (Հունաստան) մետրոպոլիտ Խրիստոսուի տեղեկություններով՝ 1785 թ. Կարինում բնակչություն էին շուրջ 20 000 հայ (առաքելական) և շուրջ 5000 ուղարկան ընտանիքներ: Որուր սիրահի և ազգակցական կասեր ունեին միջնաց հետ (տե՛ս Պուտեշտիվ 1995, էջ 272): Խակ Ա. Պերաերյանի տվյալները՝ 1829 թ. զարդից առաջ կարեւի հայոց թիվը հասնում էր 10 000-ի (տե՛ս Անդրադեյան 2009, էջ 209): Այլ տեղեկությունների համաձայն՝ ժթ. դ. 20-ական թթ. Կարինում կար 100 000 բնակիչ, որոնցից շուրջ 72 000-ը հայ, իսկ 1809 թ. հոյները կազմում էին ընդամենը 100 ընտանիք (800 շուրջ) (տե՛ս Մելքոնյան 1994, էջ 37-41): Խակ Վերաբերում է 1829-1830 թթ., զարդին, ապա Արքանական, Կարինի, Բատումի, Խուտի և մասամբ Ներքանի շրջաններից Զավախոր զարթած հայերի թիվը կազմել է 58 000 (տե՛ս Մելքոնյան 1999, էջ 15-16):

⁵⁵ Ուշագրավ է, որ 1841-1843 թթ. գրությամբ Զավախորում կար ընդամենը 102 հոգի հոյս (տե՛ս Մելքոնյան 1999, էջ 17): Դրանից կարեւի է ենթադրել, որ հայ հոգուներն առանձին գյուղեր չեն հիմնել, այլ բնակվել են մասցայ հայերի հետ: Ըստիարապես, Զավախորի

Գալով Ամիրի մետրոպոլիտությանը, հայտնի է, որ ժ՛ գ-20-ական թթ. Ամիրի մետրոպոլիտն է ձեռնադրված Եպիփան Թեսաղոնիկեցին, որը սակայն զժովնու է իր հոտի հետ և, Պոլսի հետանալով՝ կապահովված Կեսարիայի մետրոպոլիտն է Նշանակվում: 1635-1647 թթ. Ամիրի առաջնորդն էր ուստի Փիլիպոս, իսկ նրա մահից հետո 1649 թ., նոր մետրոպոլիտն է ձեռնադրված արքա քահանա («խուրի») Աթբաղը՝ վերանվանվելով Թեոդորոս⁵⁷: Պետք է նշել, որ մինչև 1710 թ. Ամիրի հոգևոր իրավասության մեջ էին մնանամ Արևմտյան Հայաստանում հաստատված հոյել մետաղագործ-հանրավորների համայնքները:

Ժ՛ դ. առաջին կետում Ամիրում սրբում են օթքողոքների և կարողիկների հարաբերությունները, քանի որ 1827 թ. Ամիրի մետրոպոլիտությունը Հոռոմի հետ ունիայի մեջ էր մտնէ⁵⁸:

հոյսները լեզվական առումով քաժանիում են հունախոսների և թուրքախոսների: Վերջիններս «ուսում» են կոչվում: Հավանաբար, հետեւ այս ուսումների մեջ պետք է փնտրել հայ հոռոմների հետքը (իջեն Ուսումնա ազգանունը): Հայութի է, օրինակ, որ գաղողներն մեջ են եղած Կառան Հոռոմ գրուի «հայ բաշեկորնականները» (տե՛ս ՀՀՀՏԲ, հ. 9, էջ 437): Այս ուսումն ուշարավ են նաև Սալյանի շրջանի Կյարակ, Սանամեր և Այսպես, Տետրիկ Կարոյի շրջանի Գումբեր: Այս խոնդրի համեմատ հրայիրում ենք շավախահյության պատության ուսումնասիրությամբ գրավող մասնագետների ուշադրությունը:

⁵⁶ Կարիկի օրթոդոքտ քանչախության մասին այս և այլ արժեքավոր տեկեկություններ աթենքան Փոքրասիական հետազոտությունների լինսորուի աշխատակիցները անցած դարի կեսին գրի են առնել Հունաստան զարդար էլեգումից հոյսներից: Արիմիվային այդ փաստաթղթերն ամփոփված են հատուկ ծրարում (տե՛ս Կենտրո Միքրատիկոն Տոսուն/Արքեօ քրօֆորιկής ու պարածութեա/Փակելօս «Հարա Եսթրատ-Հ»):

⁵⁷ Տե՛ս Պանչենկո 2012, էջ 132-133, 149:

⁵⁸ 1717 թ. ունիայի մեջ էր մտել Ամիրի Պարբեսիոս մետրոպոլիտը՝ հետևելով անշուշու Կյուրեղ Ե-ի օրինակին (տե՛ս Պառածուուծուս:

1845 թ. Ամիրի հոռոմ-կաթոլիկների առաջնորդ Սակարը ցանկալիցյուն է հայունամ անցնել Օրթոդոքս Եկեղեցու գիր՝ կը⁵⁹: Մեկամայ ընտուրյունից հետո Սակարը պարզ աբեղայի աստիճանով, ընդունելի է լինում և 1846 թ. ընդուվամ է Ամիրի ուղղափառ մետրոպոլիտ: Նրա օրինակին է հետևում նաև հոռոմ-կաթոլիկ համայնքը⁶⁰: Սակարն տեղի պանտացի մետաղագործները իրաժարվում են ճանաչել նորազարձ առաջնորդի իրավասությունն ու նրան հանձնել եկեղեցական գույքը⁶¹: Թնօսվել հանդարտվում է Պոլսի պատրիարքության գործադրած ջանքերով: Տիեզերական պատրիարքի ցուցումով Սակարը բարի հարաբերություններ է հաստատում Ամիրի հայ առարեկան առաջնորդարանի հետ, իսկ 1849 թ. աղոթատուն է բացվու Խարբերդում⁶²: Սակարն Սակարի առաջնորդությունը հասկարա չէր. այսպէս, 1855 թ. դրույթամբ նա գտնվում էր Հայեպում, որտեղից տիեզերական պատրիարքը պահանջում էր, որ նա վերադառնա իր աթոռը և իր հոտի համար ուսուցիչ գունի⁶³: Ամիրում դպրոց բացելու համար տիեզերական պատրիարքությունը հասկացրել էր 18 000 դուռուշ, մինչդեռ եկեղեցին շարունակում էր մաս կարողիկների ձեռում⁶⁴: 1858 թ. ավելի քան հարյուր ամիրեցի կաթոլիկ ընտանիք ուղղափառություն է ընդունում, հաջողվում է բացել դպրոց և նրանց համար քահանա գործադրանքը:

⁵⁹ 1951, էջ ծ՝ թ): 1836 թ. կաթոլիկները փորձում են գրավել Ամիրի Սր. Անաքարենի օրթոդոքս Եկեղեցին, սակայն տիեզերական պատրիարքության շնորհիվ նրանց ջանքերն ապարդյուն են անցնում (տե՛ս Առևտնական 1904, էջ 255-258):

⁶⁰ Տե՛ս Առևտնական 1904, էջ 273-275:

⁶¹ Նոյն տեղում, էջ 281-282:

⁶² Նոյն տեղում, էջ 292-293:

⁶³ Նոյն տեղում, էջ 296, 311:

⁶⁴ Նոյն տեղում, էջ 319:

⁶⁵ Նոյն տեղում, էջ 320:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 321:

հայտ պատճառով սակայն, 1860 թ. Ամիենի դրությամբ Մակարն արդեն 2,5 տարի բացակայում էր Ամիենի, ինչի պատճառով պատրիարքարանը հրահանգում էր Կան շուապ վերադառնալ իր արօնը, բանի որ Ամիենի միակ քահանայի հիվանդության դեպքում ժողովուրդին առանց պատարագի էր մնում, ուստից էլ չկար⁶⁶:

Ամիենի քրիստոնեաների մասին ուշագրավ տեղեկություններ է հայորդում Գարեգին եպս. Սրբանաւոյացը (1840-1892 թթ.) Աշեղով, որ 1878 թ. դրությամբ բաղարձում բնակում էին ամենասորբեր քրիստոնյաներ հայեր «ըստ Հայաստաննեայց Եկեղեցյոց», տարբեր խմբավորումների կարողիկ և բողոքական հայեր, ասորիներ՝ հայորիկ, կաթոլիկ ու բողոքական, քիլաքիներ (Աստորականներ), հոյսներ ու հայ հոռոմներ. «Բոյզը այդ Քրիստոնեայ տարք հայերէն կը խօսին, և զիրեկը Հայ կանուանեն. Եթէ հարկ իինի ցեղի մը կամ ազգի մը վրայ խօսի, կրտեն՝ Ասորի հայ, Քիլաքի Հայ, Էրմանի Հայ եւ այլն: Եւ ամէն աեզան եթէ Քրիստոնեից հանուրին վերաբերեալ խնդիր մը ծագէր, միւսները կը հասարուէին Հայոց Առաջնորդարանն. Ինն կը խորհիմ, որոշում կուտային եւ անոր միջոցան. կը բանակցէին կառավարութեան: Խոկ հոգեւոր պէտքեր եւ պաշտամունքներ իշրաբանչիրին հովիսն ըստ իւր ծիսի կը կատարէ: Թէակտ այսքան բաժին բաժանեալ էին ի կրօնն, բայց գրեթէ չկար հակառակութիւն կամ չարախօսութիւն իրարու դէմ»⁶⁷:

Ժթ դ. Երկրորդ կեսին որոշ ջանքեր են գործադրվում՝ արծաթելու համար Թեղորոտապղի մետրոպոլիտության կյանքը. 1848 թ. բանամյա դադարից հետո, Կարին առաջնորդ է Նշանակում Տիմոթեոս մետրոպղիս⁶⁸: Նրա գործունեութ-

⁶⁶ Նոյն տեղում, էջ 328:

⁶⁷ Սրուանաւուաց 1884, էջ 213:

⁶⁸ Ժթ. դ. կեսերին Թեղորոտապղի առաջնորդն ուներ «Մեծ Հայրի գերապատիկ և փոխանորդ» իտէ Ամիենի կամ Եղեսիայի մետրո-

